



«ՆՈՐԱՎԱՆՔ»  
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Երևան  
2018

**ՀՏԴ 32.001 : 316**

**ԳՄԴ 66.0 + 60.5**

**Կ 856**

*Գիրքը հրատարակվում է  
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի  
որոշման հիման վրա*

*Նախագծի հեղինակ և գլխավոր խմբագիր՝  
Գագիկ Հարությունյան*

**Կ 856**

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԱԶ-  
ԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ - Եր.: «Նորավանք»  
ԳԿՀ, 2018. - 402 էջ:

Գրքում ներկայացված են «Նորավանք» հիմնարրամի փորձագետների ուսումնասիրությունները, որոնցում վերհանվել և վերլուծվել են Հայաստանի որոշ կրիտիկական ոլորտներին և ենթակառուցվածքներին ուղղված մարտահրավերները և հնարավոր սպառնալիքներն ազգային անվտանգության տեսանկյունից: Միջդիսցիպլինար մեթոդաբանության կիրառմամբ ուսումնասիրվել են գիտական, կրթական, գաղափարախոսական, հասարակական, տեղեկատվական, ժողովրդագրական և տնտեսական ոլորտների կրիտիկական ենթակառուցվածքները, առաջարկվել են դրանց անվտանգության բարձրացման հնարավոր ուղիները:

Նախատեսված է պետական (ռազմական) քաղաքականություն իրականացնողների, փորձագետների, ուսանողների և հասարակության՝ անվտանգության խնդիրներով շահագրգիռ լայն շերտերի համար:

**ՀՏԴ 32.001 : 316**

**ԳՄԴ 66.0 + 60.5**

**ISBN 978-9939-825-37-3**

© «Նորավանք» ԳԿՀ, 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
Հեղինակային խումբ	12
<b>1. ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ, «ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ», ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ «ՏՐԻԱՆԱՆԵՐ» (Գ.Հարությունյան)</b>	14
1.1 Իրողությունների աղեկվատ ընկալումը և ժամանակային «տրիադա»	15
1.2 Կրիտիկական ենթակառուցվածքներ և ոլորտներ	17
1.3 Ֆրազմենտացված աշխարհակարգ և հասկացությունների փոփոխում	19
1.4 «Գաղափարախոսական տրիադան» որպես ազգային անվտանգության նախապայման	26
1.5 Ազգային-պահպանողական գաղափարախոսության առանցքային նշանակությունը	38
<b>2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼՔԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐՈՒՄԻ ԽՍԴԻՐՆԵՐԸ</b>	44
2.1 Տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակություններ (Գ.Հարությունյան)	45
2.2 ՀՀ հասարակություններ՝ «դեհնդուստրիալիզացված»	50
2.3 Հզգեսոր-գիտատեխնոլոգիական ռեսուրսների միասնությունը որպես զարգացման նախապայման (Գ.Հարությունյան, Ա.Մարգանյան)	57
2.4 Մարդկային և մտավոր կապիտալը որպես զարգացման ցուցիչ	65
(Կ.Վերանյան)	
2.5 «Գլոբալ նորարարության ինդեքսը» 2014-2017թթ.	
(Կ.Վերանյան)	83
2.6 Գիտատեխնոլոգիական ոլորտի գործընթացների գնահատումը ԱՄՆ փորձագիտական կառույցների կողմից (Կ.Վերանյան)	90
2.7 Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեության վիճակագրությունը (Կ.Վերանյան)	98
2.8 ԳՀՓԿՄ ծախսները Հարավկովկասյան հանրապետություններում (ՀՆԱ %) (Ա.Մարգանյան, Գ.Հարությունյան)	117
2.9 Տարածաշրջանի երկրների համալսարանների վարկանիշները (Տ.Քարաուլյանյան)	121

<b>2.10 Գիտակրթական համակարգը որպես կրիտիկական ոլորտ Հայաստան - Սփյուռք հարաբերություններում</b>	127
<b>(Ա. Միմավորյան, Վ. Հովհան)</b> .....	141
<b>3. ՀՀ ՈՐՈՇ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (Ա. Մարջանյան)</b> .....	163
<b>3.1. Կրիտիկական ենթակառուցվածքներ և համակարգեր</b> .....	163
<b>3.2. Առաջին մարտահրավեր. «նոր թվային խզում»</b> .....	167
<b>3.3. Հայաստանն առաջին մարտահրավերի պայմաններում</b> .....	173
<b>3.4 Արրանջակային ունակություններ</b> .....	183
<b>3.5 Ինստիտուցիոնալ կայացում</b> .....	190
<b>3.6 Երկրորդ մարտահրավեր. թվային խզումից իմաստավորման խզում</b> .....	195
<b>3.7. Տվյալների շտեմարաններ և կենտրոններ</b> .....	199
<b>3.8. Օպտիկամալուխային տարածաշրջանային մայրուղիներ</b> .....	200
<b>3.9. «Հետաքրքրասիրությունը» և Վիքիպեդիան</b> .....	203
<b>Հավելված 1</b> .....	214
<b>Հավելված 2</b> .....	215
<b>4. ԱԶԳԱՅԻՆ ԶԳՈՐՈՒԹՅՈՒՆ, ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԱԱԽԱԳԾԵՐ</b> .....	216
<b>4.1 Պետության «հավաքական ազգային հզորությունը» (Վ. Վերանյան)</b> .....	217
<b>4.2 ՀՀ դաշնակցային հարաբերությունները հիբրիդային իրողություններում (Ա. Մարջանյան, Գ. Հարությունյան)</b> .....	225
<b>4.3 «Եվրասիա» ջրանցքի ուազմավարական առանձնահատկությունները տարածաշրջանային անվտանգության շրջանակներում (Ա. Հովհաննիսյան)</b> .....	237
<b>5. ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ</b> .....	245
<b>5.1 Տեղեկատվական դաշտի բովանդակային բնույթի ինդիքները (Ա. Մանուկյան, Դ. Գալստյան, Լ. Հակոբյան)</b> .....	245
<b>5.2 Կրիտիկական ենթակառուցվածքները կիրեռանվտանգության տեսանկյունից (Ա. Մարտիրոսյան)</b> .....	262
<b>6. ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ (Ա. Մանուկյան)</b> .....	281
<b>6.1 Համակարգերի տեսություն և ժողովրդագրություն</b> .....	281

6.2 Ժողովրդագրական վիճակը որպես կրիտիկական ոլորտ .....	283
6.3 Բնակչության արտահոսքը և տնտեսական վիճակը .....	287
6.4 Բնակչության արտահոսքի սոցիալ-հոգեբանական և մշակութային գործոնները .....	294
6.5 Տեխնոլոգիական զարգացումը որպես ժողովրդագրական վիճակի շտկման հիմնարար գործոն .....	300
6.6 Եզրակացություններ և առաջարկներ .....	304
<b>7. ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ.</b>	
<b>ՈՐՈՇ ԵՐԿՐՄԵՐԻ ՓՈՐՁԸ</b> .....	308
7.1 Ենթակառուցվածք. հասկացությունը, սահմանումները և տիպերը (Վ. Ազյան) .....	308
7.2 Կրիտիկական ենթակառուցվածքները ԱՄՆ ազգային անվտանգության և համաշխարհային ռիսկերի գնահատման գեկույցներում (Վ. Ազյան) .....	316
7.3 Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության և անվտանգության ապահովման առանձնահատկությունները Գերմանիայում (Վ. Ազյան) .....	319
7.4 Կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման ուսուաստանյան փորձը (Վ. Ազյան) .....	325
7.5 Խորայելի գիտատեխնոլոգիական ոլորտի կրիտիկական ենթակառուցվածքները (Վ. Վերանյան) .....	330
7.6 Կրիտիկական ենթակառուցվածքների նկատմամբ մոտեցումները Թուրքիայում (Ա. Սիմավորյան) .....	341
<b>8. ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	
<b>ՈՐՊԵՍ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ</b> .....	353
8.1 Հայաստանի առջև ծառացած խնդիրները (Ա. Թեկիլյան) .....	354
8.2 Կրիտիկական ենթակառուցվածքի կոնտենտը (Ա. Թեկիլյան) .....	359
8.3 Կրիտիկական ենթակառուցվածքի անվտանգության և կայունության ստեղծման և սատարման տեսլականը, նպատակները և խնդիրները (Ա. Թեկիլյան) .....	370
8.4 Ուսուաստանի հետ համագործակցության քաղաքականությունը և տեխնոլոգիական կոռպերացիան (Ա. Թեկիլյան) .....	392
8.5 Տնտեսական զարախարախություն և տնտեսական զարգացում (Ա. Մանուկյան) .....	395

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, արդի բազմաթերթում աշխարհակարգի ձևավորումն ուղեկցվում է շարունակական ռազմաքաղաքական, հիբրիդային բնույթի գործողություններով: Ստեղծված իրավիճակում գործնականում վերացել են պատերազմի և խաղաղության միջև եղած սահմանները, արժեզրկվել են միջազգային հարաբերությունները կարգավորող նորմերը, վերափոխվել նախկինում հաստատուն թվացող մի շարք հասկացություններ: Այս ամենը թելադրում է ընդլայնել Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) ազգային անվտանգության (ԱԱ) վերաբերյալ պատկերացումները և փորձել նորովի գնահատել մեր դեմ ուղղված միանգամայն իրատեսական սպառնալիքները: Ակնհայտ է, որ նման մտադրությունը ենթադրում է ծավալուն աշխատանք, որը պետք է իրագործեն Հայկական հանրության՝ Հայաստանի և Սփյուռքի, հոգևոր - մտավոր ու քաղաքական կարող ուժերը: Միևնույն ժամանակ, առկա են հրատապ ինտիրներ և մարտահրավերներ, որոնք, ցավոք, միշտ չեն, որ լիարժեք են ընկալվում մեր հանրության կողմից, և որոնց քննարկումը կարող է հետազայում պահանջված լինել: Նման խնդիրներից է ՀՀ կրիտիկական ենթակառուցվածքների և ոլորտների վերհանումն ու դրանց դիտարկումը ազգային անվտանգության տեսանկյունից:

Վերոնշյալ ուղղությամբ աշխատանքները, փոքր-ինչ ուշացումով, «Նորավանք»-ում սկսվել են 2014-ից: Այդ հետազոտություններում, կիրառելով Հիմնադրամում ընդունված միջդիսցիպ-

լինար մոտեցումների մեթոդաբանությունը, փորձ է կատարվել ուսումնասիրել տարբեր ոլորտների (գիտակրթական, տեղեկատվական, աշխարհաքաղաքական, տնտեսական և ժողովրդագրական) կրիտիկական նշանակություն ունեցող խնդիրները։ Դրանց արդյունքները զեկուցվել են տարբեր ձևաչափերի գիտաժողովներում, սեմինարներում և դրվել տպագիր - էլեկտրոնային շրջանառության մեջ։ Ընթերցողին ներկայացվող կոլեկտիվ աշխատությունում ձգտել ենք հնարավորինս ընդհանրացնել և թարմացնել «Նորավանքի» փորձագետների կատարած վերլուծությունների մի մասը և ներկայացնել դրանք այսպես կոչված «մեկ փաթեթով»։

Նշենք, որ զրքում կարելի է հանդիպել տարբեր հեղինակների ինչպես միմյանց փոքր-ինչ հակասող նկատառումներ, այնպես էլ այս կամ այն խնդրի վերաբերյալ շատ մոտ շեշտադրումներ։ Հեղինակային խումբը խմբագրական խորհրդի հետ համատեղ նպատակահարմար է գտել չանդրադառնալ նշված հանգամանքներին և այդպիսով պահպանել հեղինակների մոտեցումներն ու նրանց՝ նյութի ներկայացման առանձնահատկությունները։

Ստորև ներկայացնում ենք ժողովածուի բովանդակության համառոտ նկարագրությունը։

**Գլուխ 1-ում ԱԱ** տեսանկյունից դիտարկվում է արդի «բարդությունների» և կրիտիկական ենթակառուցվածքների - ոլորտների աղեկվատ ընկալման կարևորությունը։ Որպես խնդրի լուծման հետազոտական մեթոդաբանություն առաջարկվում է վերլուծաբանական (և հանրային) հստակ պատկերացումներ կազմել անցյալի, ներկայի և ապագայի («ժամանակային տրիս-

դայի») վերաբերյալ: Շեշտվում է, որ ԱԱ համատեքստում հասարակության պատրաստվածությունը հնարավոր է բարձրացնել միայն ունիվերսալ և պահպանողական գաղափարախոսությունների՝ «զաղափարախոսական տրիադայի» ձևավորման պարագայում, և վերջինս նույնպես հարկ է ընդունել որպես կրիտիկական ոլորտ:

**Գլուխ 2-ում տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակությունների վերաբերյալ ընդունված տեսության շրջանակներում քննարկվում է ՀՀ արդի հասարակության կարգավիճակը, փաստվում է, որ վերջինս 2-րդ Հանրապետության համեմատ զգալի նահանջ է ապրել և հայտնվել դեինդուստրիալիզացված հասարակությունների շարքում: Դիտարկվում է նաև հոգևոր և մտավոր ռեսուրսների ներդաշնակության անհրաժեշտությունը, ինչը նույնպես պետք ընդունել որպես կրիտիկական գործոն: Վարկանիշային տվյալների հիման վրա վերլուծվում են ՀՀ մարդկային կապիտալի և գիտակրթական ներուժի ոչ այնքան միիթարական ցուցիչները տարածաշրջանում և գլոբալ հարթությունում: Գիտակրթական գործոնի անբավարարության տեսանկյունից քննարկվել են նաև Հայաստան - Միջուռք հարաբերություններում առկա թերացումները:**

**Գլուխ 3-ում** ներկայացված են ՀՀ որոշ կրիտիկական ենթակառուցվածքները՝ աշխարհաքաղաքական և գիտատեխնոլոգիական ներկա մարտահրավերների պայմաններում: Մասնավորապես, քննարկվում են «նոր թվային խօման» երևույթը և դրա առանձնահատկությունները, դիտարկվում են ՀՀ ինֆորմացիայի և կապի տեխնոլոգիական (ԻԿՏ) ոլորտի որոշ հիմնախնդիրները (ֆիքսված լայնաշերտ կապ, ինտերնետ, արբանյակային տեխնո-

լոգիաներ, ինստիտուցիոնալ կայացում) «նոր թվային խզման» մարտահրավերի պայմաններում: Սահմանվում է նաև «թվային խզումից՝ իմաստավորման խզում» անցման դրույթը, որն առավել ամբողջական բնութագրում է արդի գիտատեխնոլոգիական հեղափոխության ընթացքն ու «լեզվա-թվային անհավասարության» խորացման ներկայիս միտումները: Դիտարկվում են ՀՀ որոշ նյութական (տվյալների մեծ կենտրոններ, շտեմարաններ, օպտիկամալուխային տարածաշրջանային ցանց) և ոչ նյութական («հետաքրքրասիրություն») կրիտիկական ենթակառուցվածքները արդի մարտահրավերների պայմաններում:

**Գլուխ 4-ում** շարադրված են «ազգային հզորության» (ԱՀ) գնահատման չափանիշները, մեթոդաբանությունը, վերլուծվում են միջազգային վարկանիշային համակարգերում տարբեր երկրների գրաված դիրքերն ըստ ԱՀ-ի: Այդ ցուցչի և նախորդ բաժիններում ներկայացված գիտելիքային ներուժի ու քաղաքակրթական ընդհանրությունների վերաբերյալ իրատեսական գնահատականները թույլ են տալիս ավելի հիմնավորված և արդյունավետ մոտեցումներ ցուցաբերել Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակիցների ընտրության հարցում: Դիտարկվում են նաև կրիտիկական նշանակություն ունեցող այն նախագծերը (մասնավորապես՝ «Եվրասիա» ջրանցքի կառուցումը), որոնք կարող են էապես փոխել աշխարհաքաղաքական իրողությունները եվրասիական տարածքում և մեր տարածաշրջանում:

**Գլուխ 5-ում** ներկայացված են արդի հիբրիդային իրողություններում կարևորագույն նշանակություն ձեռք բերած տեղեկատվական անվտանգության խնդիրները բովանդակային և կիբեռտարածքներում: Մասնավորապես, կատարվել է ՀՀ և Աղրբե-

ջանի գերակայող դիրքեր գրավող հեռուստաալիքների կողմից սփռվող հաղորդումների բովանդակությունների համեմատական վերլուծություն: Ստացված արդյունքները վկայում են, որ այս ոլորտում հայկական մեղիա քաղաքականությունում առկա են լուրջ համակարգային թերացումներ: Խիստ մտահոգիչ են նաև ՀՀ կիբեռանվտանգության հետ կապված կազմակերպչական և տեխնիկական հարցերը, որոնց առայսօր բավարար ուշադրություն չի դարձվում:

**Գլուխ 6-ում** վիճակագրական և սոցիոլոգիական տվյալների մեծ զանգվածի վերլուծության հիման վրա քննարկվում են Հայաստանի համար կենսական - կրիտիկական նշանակություն ունեցող ժողովրդագրական խնդիրները: Վերհանվել են այդ քննագավառի առկա միտումները և քաղաքական, տնտեսական, գիտակրթական ու սոցիալական արդարության գործոնների դերակատարումը տիրող իրավիճակում: Մասնավորապես, փաստարկվում են նախորդ բաժիններում ներկայացված այն նկատառումները, որ ժողովրդագրական ոլորտի կրիտիկականությունը պայմանավորված է ոչ միայն մարդկային ռեսուրսների նվազումով, այլև մտավոր ներուժի անկմամբ, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում ոլորտի վերաբերյալ որոշումների ընդունման մեխանիզմի վրա: Ներկայացված են այն դրույթները, որոնք թույլ կտային շտկել ստեղծված իրավիճակը:

**Գլուխ 7-ում** դիտարկվում են կրիտիկական ենթակառուցվածքների նկատմամբ տեսական և գործնական մոտեցումները Միացյալ Նահանգներում, Գերմանիայում, Ռուսաստանում և Իսրայելում: Այդ երկրներում, մասնավորապես, ընդունվել են բազմաթիվ օրենսդրական ակտեր և որոշումներ, որոնք միտ-

ված են ապահովելու կրիտիկական ոլորտների անվտանգությունը և զարգացումը: Հայաստանի համար, թերևս, առավել ուսանելի է իսրայելական փորձը, որտեղ, բացի նյութական բնույթի ենթակառուցվածքներից, առանձնակի ուշադրություն է հատկացվում ոչ նյութական՝ հոգևոր և մտավոր բնույթի ենթակառուցվածքների անվտանգության խնդիրներին:

**Գլուխ 8-ում** ՀՀ քաղաքական և տնտեսական իրադրությանը տրված ընդհանուրական գնահատականների հիման վրա համակարգվում են այն սպառնալիքները, որոնք ուղղված են Հայաստանի կրիտիկական նշանակություն ունեցող տնտեսական ռեսուրսների դեմ: Շեշտվում են տնտեսությունում ռազմավարական պլանավորման բացակայության բացասական ազդեցությունը, զարգացման ոչ արդյունավետ մոդելների ընտրությունը և «ստեղծագործ» տնտեսության ու համապատասխան կլաստերների ձևավորման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում արհեստական ինտելեկտի և ռոբոտատեխնիկայի ոլորտներին, որտեղ կատարվող ներդրումներն առաջնային նշանակություն պետք է ունենան: Կարևորվում է նաև ներդրումային քաղաքականությունում հասարակության արժեքային համակարգի առանձնահատկությունները հաշվի առնելը:

**Գ. Հարությունյան**

## **Հեղինակային խումբ**

**Գաղիկ Հարությունյան** («Նորավանք» ԳՎՀ գործադիր տնօրեն, Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ք.գ.թ.) – 1-ին գլուխ, 2-րդ գլխի 2.1, 2.2, 2.3, 2.8 (Ա.Մարջանյանի հետ) ենթագլուխներ, 4-րդ գլխի 4.2 ենթագլուխ (Ա.Մարջանյանի հետ);

**Արա Մարջանյան** («Նորավանք» ԳՎՀ փոխտնօրեն, տ.գ.թ.) – 2-րդ գլխի 2.3, 2.8 ենթագլուխներ (Գ.Հարությունյանի հետ), 3-րդ գլուխ, 4-րդ գլխի 4.2 ենթագլուխ (Գ.Հարությունյանի հետ);

**Կարեն Վերանյան** («Նորավանք» ԳՎՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար) – 2-րդ գլխի 2.4, 2.5, 2.6, 2.7 ենթագլուխներ, 4-րդ գլխի 4.1 ենթագլուխ, 7-րդ գլխի 7.5 ենթագլուխ;

**Տաթևիկ Քարառողյանյան** («Նորավանք» ԳՎՀ Ուսումնական կենտրոնի նախկին ղեկավար) – 2-րդ գլխի 2.9 ենթագլուխ;

**Արեստակես Միմավորյան** («Նորավանք» ԳՎՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար) – 2-րդ գլխի 2.10 ենթագլուխ (Վ. Հովյանի հետ); 7-րդ գլխի 7.6 ենթագլուխ;

**Վահրամ Հովյան** («Նորավանք» ԳՎՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ) – 2-րդ գլխի 2.10 ենթագլուխ (Ա.Միմավորյանի հետ);

**Սամվել Մանուկյան** («Նորավանք» ԳՎՀ Ուսումնական կենտրոնի ղեկավար) – 2-րդ գլխի 2.11 ենթագլուխ, 5-րդ գլխի 5.1

ենթագլուխ (Դ.Գալստյանի, Լ.Հակոբյանի հետ), 6-րդ գլուխ, 8-րդ գլխի 8.5 ենթագլուխ;

**Անդրանիկ Հովհաննիսյան** («Նորավանք» ԳՎՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ) – 4-րդ գլխի 4.3 ենթագլուխ;

**Դիանա Գալստյան** («Նորավանք» ԳՎՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի դեկավարի տեղակալ) – 5-րդ գլխի 5.1 ենթագլուխ (Ս.Մանուկյանի և Լ.Հակոբյանի հետ);

**Լիլիթ Հակոբյան** («Նորավանք» ԳՎՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ) – 5-րդ գլխի 5.1 ենթագլուխ (Ս.Մանուկյանի և Դ.Գալստյանի հետ);

**Սամվել Մարտիրոսյան** («Նորավանք» ԳՎՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ) – 5-րդ գլխի 5.2 ենթագլուխ;

**Վահագն Ազյան** («Նորավանք» ԳՎՀ խորհրդական) – 7-րդ գլխի 7.1, 7.2, 7.3, 7.4 ենթագլուխներ;

**Աշոտ Թեհիկյան** («Նորավանք» ԳՎՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ) – 8-րդ գլխի 8.1, 8.2, 8.3, 8.4 ենթագլուխներ:

# 1. ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ, «ՔԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ», ԺԱՍԱՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ «ՏՐԻԱԴԱՆԵՐ»

Ներկայիս հիբրիդային իրողություններում, երբ տոտալ հակամարտություններն ընթանում են մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում (ռազմական, դիվանագիտական, գիտակրթական, մշակութային և այլն), գլոբալ հարթությունում գրեթե վերացել են միջազգային հարաբերությունների վերաբերյալ նախկինում եղած պատկերացումները։ Ըստ ամենայնի, ստեղծված իրավիճակը հիշեցնում է 1618-1648թթ. Եվրոպայում ընթացող Երեսնամյա պատերազմի ժամանակաշրջանը<sup>1</sup> [1]: Միանգամայն հիմնավորված է նաև այն տեսակետը, համաձայն որի՝ «կառավարվող քառսի» տեխնոլոգիաների<sup>2</sup> կիրառմամբ ընթացող ներկայիս քաղաքականությունը նպաստում է «գլոբալ կիրառիկականության» ձևավորմանը, որն էապես վերափոխում է գոյություն ունեցող աշխարհակարգի հիմքերը

<sup>1</sup> Г.Арутюнян, Фрагментированный или «довестфальский» миропорядок, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=16546](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=16546),

Т.Бордачев, Третья тридцатилетняя война, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=17368&phrase\\_id=67565](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=17368&phrase_id=67565)

<sup>2</sup> Այդ տեխնոլոգիաները մշակվել են ամերիկյան Սանտա Ֆե քաղաքում 1984թ. հիմնադրված Միջդիսցիպլինար հետազոտությունների ինստիտուտում, որի նպատակներից էր քառսի վերաբերյալ տեսական ֆիզիկայի դրույթները կիրառական աշխարհաքաղաքական նպատակներին «հարմարեցնելը»։ Այդ մշակումները լայնորեն կիրառվեցին «Արաբական զարուն» նախագիծը «Մեծ Մերձավոր Արևելքում» իրագործելիս (ավելի մանրամասն տե՛ս [3]):

[2, 3]: Նման հայեցակարգի տեսական հիմնավորումն է «ինքնակազմակերպված կրիտիկականության» տեսությունը, համաձայն որի՝ ոչ գծային օրինաշափություններին ենթարկվող համակարգն իր զարգացման ընթացքում անխուսափելիորեն մոտենում է այսպես կոչված «բիֆուրկացիայի» կետին կամ, այլ կերպ, այն կետին, երբ փոխվում է համակարգի գործելու նախկին ռեժիմը: Դա նվազեցնում է համակարգի կայունությունը, և արդյունքում՝ անզամ աննշան փոփոխությունները կարող են հրահրել անկանխատեսելի հետևանքներով բուռն պրոցեսներ, որոնք փոխում են ողջ համակարգի պատկերն ու բովանդակությունը: Հատկանշական է, որ նման իրավիճակում անզամ կոնկրետ վտանգների վերացումը կարող է հանգեցնել այլ անցանկալի տարբերակների գոյացման հավանականության մեծացմանը [2]: Հարկ է նաև շեշտել, որ համակարգի «կայունություն» հասկացությունը պետք է ձգտել գնահատել հնարավորինս օբյեկտիվ, քանի որ երբեմն այս կամ այն երկրում իշխող քաղաքական ընտրանու շրջանում ձևավորվում են թվացյալ կայունության վերաբերյալ կարծրատիպեր, որոնք, երբեմն սկզբունքորեն, տարբերվում են սոցիալ-տնտեսական ցուցիչներին հետևող փորձագետների գնահատականներից:

### **1.1 Իրողությունների աղեկվատ ընկալումը և ժամանակային «որիադա»**

Ինչպես հետևում է վերոնշյալից, արդի ոչ գծային օրինաշափություններին ենթարկվող տուրբուլիզացված աշխարհակարգը գտնվում է որակական փոփոխությունների փուլում: Դա վկայում է այն մասին, որ ստեղծված իրավիճակում, առավել քան երբնիցեւ, ազգային անվտանգության համատեքստում անհրա-

Ժեշտ է կարևորել ստեղծված իրողությունների աղեկվատ ընկալումը և դրանց նույնքան աղեկվատ արձագանքելու կարողությունը: Նման մոտեցումը ենթադրում է խոր, համակարգված գիտելիքներ և իմացություններ ինչպես սեփական, այնպես էլ տարածաշրջանային ու գլոբալ ակտորների ոչ նյութական և նյութական ռեսուրսների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա աննախադեպ զարգացման ժամանակաշրջանում հանրությունում արտաքին աշխարհի հանդեպ ձևավորվել են նաև գուտ վիրտուալ պատկերացումներ, որոնցում նա «ապրում ու գործում է» (կամ, ինչպես դիպուկ նկատել է Գ.Պոչեպցովը, եթե «իրական աշխարհը գոյություն ունի անկախ մարդու պատկերացումներից, ապա վիրտուալ աշխարհը կառուցվում է համաձայն մարդու պատկերացումների»)<sup>3</sup>:

Հարկ է հատուկ նշել, որ ներկայի ոչ գծային բնույթի հիմնախնդիրների և պրոցեսների, սեփական և այլոց հոգևոր-գիտելիքային, ռազմաքաղաքական, սոցիալական և այլ կրիտիկական ենթակառուցվածքների ու ոլորտների կոռորդինատների աղեկվատ պատկերացումը հնարավոր է միայն ժամանակային գործոնը հաշվի առնելու պարագայում: Դա նշանակում է, որ այս կամ այն երևույթն աղեկվատ ընկալելու համար բավական չէ սահմանափակվել կոնկրետ դիտարկման ժամանակահատվածով և անզամ համարելով ստացված արդյունքներն անցյալի նախադեպների հետ: Արդի մոտեցումները պահանջում են, որպեսզի երևույթները և գործնթացները քննարկվեն նաև ապա-

---

<sup>3</sup> Г.Почепцов, Виртуальность не знает поражения от реальности, только другая виртуальность может ее победить, <http://hvlyla.net/analytics/society/virtualnost-ne-znaet-porazheniy-ot-realnosti-tolko-drugaya-virtualnost-mozhet-ee-pobedit.html>

գայում դրանց զարգացումների և փոխակերպումների վերաբերյալ փորձագիտական հնարավորինս հիմնավորված պատկերացումների հիման վրա: Անցյալի, ներկայի և հնարավոր ապագայի կամ այսպես կոչված «ժամանակային տրիադայի» համատեքստում փոխապակցված մոտեցումների ձևավորումն էապես մեծացնում է ոչ գծային զարգացումներն աղեկված ընկալելու հավանականությունը և այդպիսով նպաստում դրանց առավել իմաստավորված արձագանքելու կարողությանը<sup>4</sup>: Այս առիթով նկատենք, որ ՀՀ-ում չկան անգամ կարձաժամկետ կանխատեսման խնդիրներով զբաղվող կառուցներ:

## 1.2 Կրիտիկական ենթակառուցվածքներ և ոլորտներ

Ակնհայտ է, որ միայն վերոնշյալ բոլոր գործոնները հաշվի առնելու պարագայում է հնարավոր ամրագրել սեփական հոգևորմտավոր (հոգևոր, մտավոր, կազմակերպչական և այլն) և նյութական (ռազմաքաղաքական, տնտեսական և այլն) ոլորտների «կոռորդինատները» գլոբալ հարթությունում և մշակել համապատասխան ռազմավարություն ներքին հիմնախնդիրների վերհանման և լուծման ուղղությամբ: Այս վերջին խնդրի պարագայում անհրաժեշտ է խիստ կարևորել ինչպես սեփական, այնպես էլ այլոց համակարգային նշանակություն ունեցող ենթակառուցվածքների կամ, այլ խոսքերով՝ կրիտիկական ենթակառուցվածքների վերհանումը, որոնց խոցումը կարող է հան-

<sup>4</sup> Բնորոշ է, որ ԱՄՆ-ում, որտեղ ընթացիկ գործընթացների վերլուծությունը և կանխատեսման մշակույթը, շնորհիվ բազմաթիվ «ուղեալին կենտրոնների» կատարած մշակումների, գոնվում է բարձր մակարդակի վրա (*տե՛ս՝ օրինակ, [4]*), ձևավորվել է նաև հատուկ հանձնաժողով, որն ուսումնասիրում է Հռոմեական կայսրության վլուզման պատճառները: Այդ փորձագիտական խմբի ուսումնասիրությունների արդյունքներն օգտագործվում են սեփական գերտերության կայունությունը պահպանելու նպատակով:

գեցնել անդառնալի կորուստների և անգամ ողջ համակարգի փլուզման: Միևնույն ժամանակ, կրիտիկական նշանակություն կարող էն ունենալ ոչ միայն առանձին կառույցները կամ կառույցների համախումբը, այլ նաև ամբողջ ոլորտներ, որոնցում տիրող իրավիճակը և զարգացման մակարդակը պայմանավորում են այլ ոլորտների անվտանգությունը և արդյունավետությունը (*տե՛ս, մասնավորապես, [5]*): Ավելին, համաձայն մեր մոտեցումների, անգամ նման ընդհանրացված դասակարգման պարագայում կարելի է վերհանել այնպիսի ոլորտ, որի զարգացնության մակարդակը հանդիսանում է մնացյալ բոլոր ոլորտների անվտանգության և զարգացման նախապայմանը, և նման ոլորտը կարելի է պայմանականորեն անվանել «կրիտիկական ոլորտների կրիտիկական ոլորտ»: Ըստ ամենայնի, նման ձևակերպմանը լիարժեքորեն հավակնում է *հոգևոր-զիտելիքային* ոլորտը, որի կատարելության և զարգացման աստիճանն ուղղակի կամ անուղղակի թելադրում է այլ բնագավառներում ընթացող զարգացումների արդյունավետությունը և այդպիսով իսկ ապահովում է ողջ համակարգի կայունությունը [6]:

Վերը ներկայացված խիստ համառոտ նկատառումներն առավել ակտուալ են այն երկրների և հանրությունների համար, որոնք այս կամ այն պատճառներով արդի աշխարհաքաղաքական-աշխարհագաղափարախոսական հակամարտությունների մասն են հանդիսանում: Ակնհայտ է, որ Հայաստանը (ՀՀ և Արցախի Հանրապետություն) և Հայկական հանրությունը (արդի, պատմական Հայաստանում և այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցները), գտնվելով Աղրբեջանի հետ պատերազմական իրավիճակում և Թուրքիայի հանդեպ պահանջատիրության դիրքերում, դասվում են նման երկրների և հանրություննե-

րի շարքին: Ակնհայտ է նաև, որ մեր հիմնախնդիրների լուծման ալգորիթմների ձևավորումը և դրանց իրագործումը ենթադրում են Հայկական հանրության հոգևոր-մտավոր ներուժի թերևս անգամ տուտալ մոբիլիզացիա:

Միևնույն ժամանակ, վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է մեկնարկել աշխատանքները, թեկուզ և առաջին մոտավարությամբ, և ստորև կներկայացվեն որոշ նախնական նկատառումներ հիբրիդային իրողություններում հայտնված աշխարհակարգի վերաբերյալ:

### *1.3 Ֆրազմենտացված աշխարհակարգ և հասկացությունների փոփոխում*

Հայտնի է, որ համեմատաբար վերջերս աշխարհում տիրող միաբներ աշխարհակարգի պայմաններում ամեն ինչ ենթարկվում էր մեկ կենտրոնի, որն էլ թելադրում էր խաղի կանոնները՝ իր գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական պատկերացումներին համապատասխան: Բնականաբար, նման իրադրությունում գրեթե լիովին անտեսվում էին այլ երկրների շահերը, ինչը հանգեցնում էր ծանր հետևանքների: Հետևաբար, որոշ այլախոն վերլուծաբաններ անհամբերությամբ սպասում էին այն ժամանակներին, երբ աշխարհը վերջապես կդառնա քազմաքեր և ժողովուրդները կսկսեն զարգանալ ըստ իրենց քաղաքակրթական և գաղափարախոսական ավանդույթների [7, 8]: Մինչդեռ զլորակ հարթությունում երկար սպասված քազմաբներ կարգի հաստատման զարգացումներն ընդունեցին անկանոն, տուրքուլիզացված բնույթ, ինչն էապես ցրեց «լուսավոր ապագայի» վերաբերյալ հույսերը: Սկզբում թվում էր, թե տեղի

ունեցողն «անցումային շրջանի» հետևանք է, բայց այդ գործընթացը խիստ ձգձգվեց, և ամեն ինչ վկայում է այն մասին, որ ներկա քաղաքական բարքերը դեռևս բավական երկար են գերիշխելու: Արդի իրողությունների բարդությունն, իր հերթին, նկատելիորեն դժվարացնում է այն հասարակարգի հիմնական բնութագրերի կանխատեսումը, որը հաստատվելու է աշխարհում ներկայիս քառտիկ իրավիճակից հետո: Որպեսզի նմանատիպ պրատումները գոնե ինչ-որ բանական արդյունք տան, հարկ է ձգտել ոչ միայն աղեկված ընկալել տեղի ունեցող իրողությունները, այլև վերիմաստավորել ինչպես որոշ «կարծրացած» տերմիններ, այնպես էլ հասկացություններ:

Հնարավոր է՝ փոքր-ինչ պարզունակ է հնչում պնդումը, որ այսօր աշխարհում ընթանում է պերմանենտ և կոշտ առձակատում: Բնավ պատահական չէ, որ առաջատար մի շարք «ուղեղային կենտրոններ» արդարացիորեն կարծում են, թե ներկայիս՝ արդեն Երկրորդ սառը պատերազմն արդի պայմաններում շատ ավելի դաժան ռեժիսով է ընթանում, քան Առաջինը: Ներկա դիմակայությունն անվանում են նաև «հիբրիդային» կամ էլ «հինգերորդ սերնդի», իսկ երբեմն էլ՝ այլ կերպ, կախված կոնկրետ մեկնաբանի նախասիրություններից: Նման առձակատման զիսավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանում գրեթե ջնջված են բոլոր սահմանները պատերազմի և խաղաղության միջև<sup>5</sup>: Միանգամայն բնական է, որ նման պայմաններում վերջնականապես արժեզրկվում է միջազգային իրավունքը: Որոշ վերլուծաբաններ ստեղծված իրավիճակը բնութագրում են որպես «պայքար բոլորը բոլորի դեմ», և այդ համատեքստում աշխարհն այսօր

<sup>5</sup> Զ.Օրուելի «պատերազմը խաղաղություն է» հիանալի արտահայտության այսօր տեղին է հավելել նաև «խաղաղությունը պատերազմ է» արտահայտությունը:

ասոցացվում է արդեն ոչ թե «մեծ շախմատի տախտակի», այլ ավելի շուտ, «քիքքոքսինզի» մրցասպարեզի հետ: Ակնհայտ է, որ այս ռեժիմով քաղաքականություն վարելու համար նույնպես անհրաժեշտ է ունենալ զգալի մտավոր և այլ ռեսուրսներ, բայց և, միևնույն ժամանակ, կապահանջվեն մի փոքր այլ կարողություններ և մտածելակերպ, քան շախմատիստներինն է:

Ստեղծված իրադրությունը շատ բանով կանխորոշվում է նոր տեղեկատվական-թվային տեխնոլոգիաների ստեղծմամբ, որոնք հաճախ թույլ են տալիս հաջողությամբ փոխարինել այն, ինչը կոչվում էր «մտքի փայլատակում»: Միևնույն ժամանակ, այս համատեքստում երբեմն տպավորություն է ստեղծվում, որ եթե նախկինում տեխնոլոգիաների զիսավոր դերը մարդկանց սպասարկելն էր, ապա այսօր մարդկանց վարքը հաճախ թելադրվում է հենց տեխնոլոգիաներով: Ակնհայտ է, որ նման երկվատությունը միշտ չէ, որ նպաստում է ձիշտ որոշումների կայացմանը, և սա վերաբերում է ոչ միայն քաղաքական գործիչներին:

Իսկ եթե փորձենք գտնել պատմական անալոգներ և քաղաքական տերվիններով ձևակերպել ներկա աշխարհակարգը, ապա տեղին է, ինչպես արդեն նշել ենք, զուգահեռ անցկացնել Երեսնամյա պատերազմի ժամանակաշրջանի մինչվեստֆայյան Եվրոպայի հետ, երբ բոլորը գործում էին *ad hoc*, այսինքն՝ հատուկ դեպքի ռեժիմով, ելնելով կոնկրետ իրավիճակից: Իսկ 17-րդ դարի Եվրոպայի հետ անալոգիան արդիականացնում է ներքաղաքակրթական ֆրազմենտավորման (հատվածայնացման) հարցերը, և այստեղ տեղին է սկսել հենց Արևմուտքից, որտեղ այդ գործընթացներն այսօր արդեն ընթանում են, և դրանց զուգահեռ՝ փոխվում են նաև նախկինում ընդունված պատկերացումները նույն Արևմուտքի վերաբերյալ:

Օրինակ, գլոբալ տեղեկատվական դաշտում լայնորեն ընդունված «Արևմուտք» հասկացությունը մինչև վերջերս ասուցվում էր միասնական գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական համակարգի հետ, որի հիմքը կազմում էին ԱՄՆ-ը և ԵՄ-ը: Սակայն երկու շրջադարձային իրադարձություն՝ Մեծ Բրիտանիայի դուրս գալը ԵՄ-ից և Դ.Թրամփի նախագահ ընտրվելը (ինչն արդարացիորեն անվանել են «Բրեքսիթ-2»), նկատելիորեն փոխել են նման ընկալումը: Պարզվեց, որ բրիտանացիները բնավ չեն պատրաստվում իրենց եվրոպացի դաշնակիցների հետ կիսել գաղափարախոսական և միզրացիոն ձգնաժամի (որը, ըստ կանխատեսումների, տեսանելի ապագայում կարող է հանգեցնել մայրցամաքային Եվրոպայի կրոնականիկական, հետևաբար և քաղաքական կերպարի փոփոխության<sup>6</sup>) հետևանքները: Բրիտանիայից հետո նոր իրողություններին արձագանքեցին նաև ամերիկացիները: Հատկապես ակտիվ էր գործում ամերիկյան քաղաքական ընտրանու այն մասը, որը միշտ այս կամ այն կերպ պայքարում էր ամերիկակենտրոն, երբեմն՝ մեկուսացման հասնող քաղաքականության համար: Արդյունքում՝ նախագահ ընտրվեց Դոնալդ Թրամփը, որը, հաղթահարելով (երբեմն՝ ոչ այնքան հաջող) բազմաթիվ ընդդիմախոսների համառ դիմադրությունը, ձգուում է իրականացնել իր քաղաքական գիծը<sup>7</sup>: Ի թիվս այս ամենի, Թրամփն իր քաղաքականության մեջ տուտալի-

<sup>6</sup>Տե՛ս, օրինակ, <http://forum.syntone.ru/index.php?showtopic=14159>, [http://rusplt.ru/fact/facts\\_8512.html](http://rusplt.ru/fact/facts_8512.html), <https://pravoslavie.fm/science/uchyonye-k-2050-godu-evropo-mozhet-stat-celei/>. Այս հարցի առնչությամբ նկատենք, որ երբեմն գեղարվեստական երևակայությունը նկատելիորեն առաջ է անցնում փորձագետների գիտականութեն հիմնավորված կանխատեսումներից: Նման երևույթի օրինակ է Ելենա Չուդինովա, «Мечтать о Парижской Богоматерии», *М., Язва, Эксмо, Лепта - Пресс, 2005*:

<sup>7</sup>Տե՛ս, օրինակ, *Barry R. Posen, The Rise of Illiberal Hegemony (Trump's Surprising Grand Strategy)*. <https://www.foreignaffairs.com/articles/2018-02-13/rise-illiberal-hegemony>.

տար-լիբերալ ռեժիսուսից հեռանում է դեպի կառավարման ավելի ավտորիտար ձևը<sup>8</sup>: Կարելի է փաստել, որ անզլոսաքսոնական հանրությունն իր պատմության ընթացքում հերթական անգամ բավական աղեկված է ընկալում աշխարհում ի հայտ եկած նոր միտումները, դրանցից բխող մարտահրավերները և ձգտում է համապատասխան կերպով արձագանքել դրանց:

Սրա հետ մեկտեղ, մայրցամաքային եվրոպացիների շրջանում աճել է թերահավատությունն անզլոսաքսերի և, մասնավորապես, ԱՄՆ վարած գլոբալ ռազմավարության նկատմամբ: Չե՞ որ Մերձավոր Արևելքում այսպես կոչված «կառավարելի քառսի» ստեղծման հետևանքով է<sup>9</sup>, որ ԵՄ-ում առաջ եկավ միզրացիոն խնդիրը, որը Եվրոպայում (որտեղ առայժմ իշխում են ուլտրալիբերալ դրզմաները) առաջ բերեց դիմակայություն տարբեր կողմնորոշումներ ունեցող քաղաքական և հասարակական ուժերի միջև: Իսկ այդ նույն ամերիկացիների կողմից Ռւկրախնայի վերածումը «սև խոռոչի», ի թիվս այլ գործոնների, հետապնդում էր նաև ԵՄ-ի և Ռուսաստանի միջև հավելյալ պատնեշ ձևավորելու ոչ այնքան քողարկված նպատակ: Այսօր այս բոլոր զարգացումներն ուղեկցվում են ԱՄՆ-ի կողմից հնչող կշտամբանքներով (ԱՄՆ-ում եվրոպացիների ֆինանսական համեստ մուծումների առումով) և խորանում Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցների քաղաքականությամբ, որոնք բումերան-

<sup>8</sup>Գուցել այստեղ տեղին է զուգահեռներ անցկացնել ներկայիս ամերիկյան նախագահի և խորիրդային առաջնորդ Ն.Ս. Խրուչչովի միջև, որը ժամանակին վերակառուցեց տոտալիտար ստալինյան ռեժիմը՝ այն վերածելով ավտորիտարի: Հետաքրքիր է, որ այս քաղաքական գործիքների հոգերանական կերտվածքում ևս կարծես որոշակի նմանություն կա, ինչը թույլ է տալիս որոշ վերլուծաբանների ԱՄՆ նախագահին անվանել Նիկիտա Սերգեևիչ Թրամփ:

<sup>9</sup>Արյուտյոնյան Դ., Мультиполлярные реалии, Ближний Восток и геноцид в режиме «бегущей строки», [http://noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=12307](http://noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12307).

զի պես հարվածում են նաև եվրոպացիների շահերին: Հայտնի է նաև, որ պատժամիջոցներով տարված ամերիկացիներն այսօր առևտրային պատերազմ են հայտարարել նաև եվրոպացիներին՝ զգալիորեն բարձրացնելով, մասնավորապես, ԵՄ-ից մատակարարվող պողպատի և այլումինիումի մաքսատուրքերը:

Բնականաբար, այս բոլոր գործողությունները չեն առաջացնում եվրոպական ընտրանու ներկայացուցիչների հիացմունքը: Չէ՞ որ դեռևս 2003թ. նրանք դժգոհություն էին հայտնում ԱՄՆ իրաքյան քաղաքականությունից, ինչը հիմք էր տվել պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսին իրապարակավ խոստանալ «պատժել Ֆրանսիային և անտեսել Գերմանիային...»: Սակայն դժգոհության նման դրսնորումներն անցյալում իրական քաղաքական ուրվագծեր չեն ստանում: Իսկ այսօր, թերևս առաջին անգամ դր Գոլի ժամանակներից ի վեր, ի հայտ են եկել ոչ թե թույլ ընդվզումներ, այլ միանգամայն իրական տարածայնություններ եվրոպացիների և անզլուաքսոնական հանրության միջև: Այդ տարակարծությունն անթաքույց դրսնորվում է, օրինակ, Իրանի նկատմամբ քաղաքականությունում և մի փոքր ավելի «պոլիտկոռեկտ» ձևով՝ մի ամբողջ շարք այլ հարցերում: Այլ խոսքերով՝ արևմտյան հանրությունն արդեն բոլորովին էլ միահամուռ չէ, ինչպես նախկինում էր, և քաղաքական-տնտեսական անտագոնիզմը նրա առանձին հատվածների միջև ձեռք է բերում միանգամայն շոշափելի բնույթ: Այս համատեքստում հարկ է նաև հաշվի առնել, որ այս ամենին զուգահեռ՝ հենց բուն Եվրոպայում հաստնանում են անջատողական տրամադրություններ (Կատալոնիա, Կորսիկա և անգամ Խոտալիայի մարզերը): Տեղի է ունենում նաև սահմանազատում Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Ուստի, զարմանալի չէ, որ գեր-

մանացի ռազմական փորձագետներն այսօր լրջորեն դիտարկում են ԵՄ փլուզման տարբեր սցենարներ, որոնցից մի քանիսն անգամ աղետալի երանգներ են պարունակում<sup>10</sup>: Այս բոլոր միտումներն իրենց ամբողջության մեջ թույլ են տալիս ենթադրել, որ ֆրազմենտացման «մինչվեստֆայյան» ախտանիշի դրսերումները չեն շրջանցել Եվրոպան և, ինչպես ժամանակին ասում էր համակարգերի փլուզման գծով խոշոր մասնագետ պրն Գորբաչովը, «գործընթացն ընթանում է» (*process пошел*)...

Արդի «բարդություններն» աղեկվատ ընկալելը և դրանց համապատասխան արձագանքելը ենթադրում են կոնկրետ հանրության ազգային անվտանգության համակարգի բարձր մակարդակ: Նման համակարգն, իր հերթին, ենթադրում է ունենալ առաջին հերթին անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, ինչը հնարավոր է միայն հանրությունում ստեղծագործ, կառուցողական հոգևոր և մտավոր դաշտի հաստատման պարագայում: Ինչպես հետևում է անցյալի և ներկայի զարգացումների օրինաշափություններից, նման գերինդրի լուծմանն էապես կարող է նպաստել համալիր գաղափարախոսական համակարգի ձևավորումը, որին կանդրադառնանք հաջորդ ենթագլուխներում:

<sup>10</sup>Տե՛ս, օրինակ, *C.Деображен*, Ենդեսվեր: Евросоюз - не жилец, США идут к упадку, <https://svpressa.ru/politic/article/185646/>.

#### **1.4. «Գաղափարախոսական տրիադան» որպես ազգային անվտանգության նախապայման**

Արդի հիբրիդային իրողություններից բխող մարտահրավերներն ուղղված են ինչպես ռազմական-տեխնոլոգիական համակարգերի, այնպես էլ անհատի, ազգի և հասարակության հոգևորի, մտավորի և հոգեկանի դեմ: Հետևաբար, տրամաբանական է, որպեսզի պաշտպանության մեխանիզմներ մշակվեն նաև այն ոլորտների և կառույցների համար, որոնք ապահովում են մարդկային գործունեության անվտանգությունը և հոգեմտավոր բնականոն զարգացումը: Այստեղ նույնպես պետք է որոշվեն, թե որ ոլորտները և կառույցներն են կարևորագույնը, որպեսզի ստանան «կրիտիկականի» կարգավիճակ: Դա դյուրին խնդիր չէ, քանի որ եթե տեխնիկական համակարգերը ենթարկվում են որոշակի օրենքների կամ բանաձևերի, ապա ոչ նյութական ռեսուրսների պարագայում պետք է հաշվի առնել ինչպես հասարակության առանձին ներկայացուցիչների, այնպես էլ ողջ հասարակության ազգային-քաղաքակրթական առանձնահատկությունները, արժեհամակարգը, հոգեկերտվածքը և խորքային յուրահատկությունները՝ միաժամանակ նկատի ունենալով այլ հասարակությունների հետ ունեցած ընդհանուրությունները: Այս համատեքստում, թերևս, պատահական չէ, որ ամերիկյան փորձագետներն ազգային անվտանգության հիմնական խնդիրն են համարում ամերիկյան արժեքների պաշտպանությունը:

Այլ խոսքով՝ «մարդկային-հասարակական» ոլորտում չեն կարող լինել ընդհանրական դեղատումներ. ամեն մի հանրություն ինքը պետք է ձգտի իմանալ և որոշել, թե որոնք են իր կրիտիկական ենթակառուցվածքները և ինչպես պետք է ապահովել դրանց անվտանգությունը: Նման մոտեցումներն այսօր տարա-

ծում են գտնում. օրինակ, Խրայելի ռազմական դոկտրինում որպես անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքներ են ընդունվել ազգային խորհրդանշական համարվող կառուցները, մասնավորապես՝ Հոլոքոստի թանգարանը՝ Յադ Վաշեմը, հոգևոր տաճարները և այլն<sup>11</sup>:

Նկատենք, որ եթե վերոնշյալ հարցերի հատակեցումների անհրաժեշտությունը վերաբերում է հանրության պաշտպանական համակարգին, ապա պատերազմները ենթադրում են նաև հարձակողական գործողություններ: Այս դեպքում անհրաժեշտություն է ծագում բազմակողմանի գիտելիքներ և պատկերացումներ ունենալ նաև պայմանական հակառակորդի հասարակության անհրաժեշտ ցուցանիշների վերաբերյալ: Տեղին է վերիիշել չինացի ստրատեգ Սուն Ցզիի հայտնի դրույթն այն մասին, թե հաղթանակի համար «պետք է իմանաս ինչպես քեզ, այնպես էլ թշնամուն»:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ արդի հիբրիդային հակամարտություններն ընդունել են շարունակական բնույթ, ինչը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում ինչպես պաշտպանվող, այնպես էլ հարձակվող կողմերի համար: Մասնավորապես, պաշտպանվող կողմից, նման պատերազմում արդյունավետ դիմակայելու համար, այսօր պահանջվում է վարել տեղեկատվական-հասարակական բնույթի մոբիլիզացիոն քաղաքականություն, ինչը հնարավոր է հասարակությունում կուռ և միաժամանակ արդիական ու ձկուն զաղափարախոսական համակարգի ձևավորման պարագայում: Այս խնդրում ելման կետ կարելի է ընդունել զաղափա-

<sup>11</sup> Гриняев С., О взгляде на проблему безопасности критической инфраструктуры в государстве Израиль,  
<http://www.csef.ru/index.php/ru/component/csef/project/-/-/?id=3229>.

բախոսությանը տրված Վյաշելավ Յանկոյի դինամիկ, ալգորիթմ հանդիսացող սահմանումը, համաձայն որի՝ այն «*հրահանգների համալիր է, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»<sup>12</sup>:*

Վերոնշյալ հարցերն առավել հստակ քննարկելու համար անհրաժեշտ է համառոտ էքսկուրս կատարել, թե ինչ դերակատարում ունեն զաղափարախոսական հիմնարրույթները տարբեր երկրներում, և ինչպես են դրանք առնչվում տվյալ հանրությունների ազգային անվտանգության խնդիրներին:

**Բազմազաղափարախոսության ձևավորում.** Գաղափարախոսություն եզրը 19-րդ դարի սկզբին շրջանառության մեջ է դրել փարիզյան Էլիտար գիտական կենտրոնին՝ *Ինստիտուտին*<sup>13</sup> անդամակցող Ամստուան Դեստյուտ դը Տրասին: Հստ դասական պատկերացումների՝ այդ եզրը սահմանվում է որպես «հասարակությանը, անձին և մեզ շրջապատող աշխարհին ուղղված հայացքների համակարգ»: Նման ձևակերպումը կարելի է համարել տեսական հենք վերը նշված Վ.Յանկոյի գործողություններ ենթադրող ալգորիթմի համար՝ «հրահանգների համալիր, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»:

Ընդունված է համարել, որ գոյություն ունեն հիմնարար երկու ունիվերսալ գաղափարախոսություններ՝ սոցիալիստական (գլխավոր դրույթը հասարակությունում սոցիալական հավասարության սկզբունքների գերակայությունն է) և ազատական (հենքում ընկած է անձի ազատության գերակայությունը): Նման դասակարգումը պայմանավորված է նրանով, որ այդ

<sup>12</sup> ՅԱԿՈ B.A., <http://yanko.lib.ru>

<sup>13</sup> *Ինստիտուտ* եզրն առաջացել է նշված ժամանակաշրջանում: Ի դեպ, փարիզյան *Ինստիտուտի* անդամ էր նաև Նապոլեոն Բոնապարտը:

երկու գաղափարախոսությունների բովանդակությունը կազմող սկզբունքներն այս կամ այն չափով կարող են օգտագործվել գրեթե բոլոր հանրությունների կողմից, անկախ նրանց էթնիկական, կրոնադավանական կամ, եթե ավելի ընդհանրական՝ քաղաքակրթական պատկանելությունից: Ի տարբերություն նշված երկուսի, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները հենվում են կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական արժեքային համակարգի, ինքնության վերաբերյալ պատկերացումների և ավանդույթների վրա: Նկատենք, որ առաջանում են նաև այսպես կոչված «հիբրիդային» գաղափարախոսություններ, որի օրինակ կարելի է համարել ծայրահեղականացված ազգային-պահպանողական և սոցիալիստական մոտեցումների միաձուլում հանդիսացող գերմանական նացիոնալ-սոցիալիզմը Յ-րդ Ռեյխում:

Ժամանակի ընթացքում գաղափարախոսությունները, չնայած դրանց հիմնարար դրույթների հարաբերական անվտանգությանը, որոշակի զարգացումների են ենթարկվում: Երբեմն դա տալիս է դրական արդյունքներ, երբեմն՝ ոչ այնքան: Սակայն ամենամեծ փորձությունները սկիզբ են առնում այն ժամանակ, երբ հանրությունում որևէ գաղափարախոսություն երկարատև մենաշնորհ և բացարձակ գերակայություն է ձեռք բերում: Որպես կանոն, դա ծանր հետևանքներ է ունենում տվյալ երկրի համար: Այդ երևույթի դասական օրինակներն են վերը նշված նացիոնալ-սոցիալիզմի բացարձակ գերիշխումը Երրորդ ռեյխում կամ սոցիալիզմի մենատիրական-բյուրոկրատական մոդիֆիկացիայի հաստատումը Խորհրդային Միությունում: Հատկանշական է նաև, որ համաձայն Դանիել Բեկի (ուշ՝ 2.1 ենթագլուխը), «շուկա-

յի» տոտալ հաղթանակն ավելի վտանգավոր է, քան սոցիալիստական մենատիրական գաղափարախոսության հաստատումը, և «շուկայի» տրամաբանության ընդունումը մարդկային կենսագործունեության այլ բնագավառներում (քաղաքականություն, մշակույթ և այլն) կարող է կործանարար լինել ողջ կապիտալիստական համակարգի համար: Բելի այդ կանխատեսումն իրականանում է, և այսօր արևմտյան «սպառողական» հասարակություններում ձևավորվում են այլախոհական շարժումներ «տոտալիստար լիբերալիզմի» դեմ (*տէ՛ս, օրինակ, [9]*):

Մինչդեռ պատմական փորձը վկայում է, որ այն հանրությունները, որոնք կարողանում են մտածված չափաբաժիններով համատեղ կիրառել ազատական, սոցիալիստական և ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները, շարունակական զարգացում և առաջընթաց են ցուցաբերում: Այս օրինաչափությանը ենթարկվող «քաղմազաղափարախոսական» համակարգը ստացել է «զաղափարախոսական տրիադա» անվանումը [3, 4]: Նման համալիր համակարգը մեծացնում է հանրության տարաբնույթ և, առաջին հերթին, հոգևոր ու մտավոր ռեսուրսները, իսկ քաղաքական համակարգը դարձնում է ավելի ճկուն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարաբերություններում: Բնականաբար, այս հանգամանքները բարձրացնում են ազգային և, մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգության մակարդակը: Հայտնի է նաև, որ գաղափարների վերածումը քաղաքական գաղափարախոսությունների գրեթե անհնար է առանց տեղեկատվական համալիր գործողությունների: Իրենց հերթին, գաղափարախոսական դրույթները զգալիորեն պայմանավորում են հանրությունների տեղեկատվական տարածքի բն-

վանդակությունը և այդպիսով իսկ՝ նրա պաշտպանվածությունն արտաքին տեղեկատվական միջամտություններից:

Վերոնշյալի համատեքստում փորձենք համառոտակի համեմատել ու գնահատել որոշ հանրությունների գործունեության արդյունավետությունը՝ կախված այդ հանրությունների գաղափարախոսական-տեղեկատվական դաշտի բնութագրերից:

**Անզլոսաքսոնյան տեխնոլոգիաներ.** Արդյունավետ և մրցունակ «բազմազաղափարախոսական» համակարգի դասական արտահայտություն է բրիտանական մոդելը, որն այս կամ այն ձևաչափով ներդրվել է նաև մնացյալ անզլիախոս երկրներում: Այդ երկրների հանրություններին բնորոշ է գաղափարախոսական լայնախոհություն. կոնսերվատիվ (ազգային-պահպանողական) և լեյքորիստական (սոցիալիստական ուղղվածություն) գաղափարները կրողները մշակել են միմյանց փոխլրացնող մեխանիզմներ և համատեղ գործում են ազատական գաղափարախոսական դաշտում, որը հարազատ է անզլոսաքսոնյան հոգեկերտվածքին: Այս գործոնով է, որ պետք է պայմանավորել «անզլոսաքսոնյան աշխարհի» (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և Նոր Զելանդիա) աշխարհաքաղաքական ձեռքբերումները և այն փաստը, որ վերջին մի քանի հարյուր տարում այդ հանրությունը ուազմաքաղաքական և գիտատեխնոլոգիական ոլորտներում առաջատար դիրքեր է գրավում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, ընդհանուր առմամբ փոխառելով բրիտանական քաղաքական տրամաբանությունը, թերևս իր պատմական զարգացման յուրահատկության պատճառով, անտեսել է սոցիալիստական տիպի գաղափարախոսություն ունեցող քաղաքական ուժի կարևորությունը: Արդյունքում՝ այդ

երկրում ազատականության և սպառողականության բացարձակացումը լուրջ խնդիրներ է առաջացրել, որի հետևանքով էլ ԱՄՆ-ը սկսել է կորցնել գոլֆալ առաջատարի կարգավիճակը: Գաղափարախոսական թերացումների առկայությունը կարծես թե ընկալվել է ամերիկյան ընտրանու կողմից, և դրանով պետք է պայմանավորել, օրինակ, 2016թ. նախագահական ընտրությունների նախնական փուլում սոցիալիստական կողմնորոշումներ ունեցող Բերնի Սանդերսի մասնակցությունը: Ավելին, տպավորություն է ձևավորվում, որ այդ ընտրություններում հաղթած Դոնալդ Թրամփը սկսել է պայքարել ազատականության ծայրահեղականացված դրույթների դեմ և այդ համատեքստում փոքր-ինչ հիշեցնում է խորհրդային առաջնորդ Նիկիտա Խրուչովին, որը ժամանակին էապես բարեփոխեց տոտալիտար բնույթ ընդունած ստալինյան համակարգը:

**Չինական ռազմավարություն.** Գաղափարախոսական տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի «չինական հրաշքի» երևույթը: Ըստամենը երեք տասնամյակ առաջ միազգաղափարախոսական կոմունիստական Չինաստանը բոլոր չափանիշներով հեռու էր առաջատար երկրներից: Իրավիճակը կտրուկ փոխվեց, եթե Մատ Ցզե Դունի նախկին համախոհ Դեն Սյան Պինը, դառնալով ՉԺՀ վաստացի դեկավարը, միակուսակցական համակարգում ներդրեց ազատականության և ազգային պահպանողական (կոնֆուցիոնիստական) գաղափարախոսությունների տարրերը: Հատկանշական է, որ այդ ամենին զուգահեռ՝ պահպանվեցին «դեկավար» սոցիալիստական գաղափարախոսությունից բխող բոլոր առավելությունները: Սակայն անգամ այդ ունիվերսալ ուսմունքում օգտագործվում են մ.թ.ա. V դարի փիլի-

սովա և մտածող Մո Ցզիի դրույթները, որը համարվում է շինական սոցիալիզմի հիմնադիրը: Այլ խոսքով՝ սոցիալիզմն աղապտացվեց ինչպես շինական ավանդույթներին և հոգեկերտվածքին, այնպես էլ զլոբալ տնտեսական հարթությունում տիրող կանոններին: Արդյունքում՝ Չինաստանը դարձավ գերտերություն և առաջատար ինչպես տնտեսական, ռազմական, այնպես էլ տեխնոլոգիաների ոլորտներում: ՉԺՀ ձեռքբերումները պայմանավորված են նաև նրանով, որ վարչաքաղաքական համակարգում գործում են մերիտոլիրատիայի<sup>14</sup> սկզբունքները, համաձայն որոնց՝ դեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ և պատրաստված անձինք:

**Իսլամ և ազատականություն.** Իսլամական աշխարհում նկատվում է կրոնական պահպանողական գաղափարների գարգացման միտում, որի ծայրահեղական արտահայտությունը հանդիսացավ *Իսլամական պետությունը*: Միևնույն ժամանակ, այն խլամական երկրները, որոնք կարողացել են համատեղել կրոնական ավանդականությունը (որը պարունակում է նաև սոցիալական արդարության վերաբերյալ պատկերացումներ) և ազատական ու զրու ազգային մոտեցումները, էապես բարելավել են իրենց կարգավիճակը միջազգային հանրությունում: Նման պետությունների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի Իրանը, որտեղ հաջողվել է որոշակի համամասնությամբ ինտեգրել արմատական խլամը, պարսկական ազգային-քաղաքակրթական ավանդույթները և ժողովրդավարության ու տնտեսական ազատականության տարրերը: Ար-

<sup>14</sup> *Մերիտոլիրատիա* (լատ. *meritus*՝ արժանապատիվ) – արժանապատիվների իշխանություն:

դյունքում՝ Իրանը վերածվել է տարածաշրջանային առաջատարի և համակողմանի զարգացող երկրից մեկն է միջազգային ասպարեզում։ Նկատենք, որ իսլամական որոշ երկրների անբավարար մրցունակությունը պայմանավորում են մտավոր (ինտելեկտուալ) ռեսուրսների որոշակի պակասով։ Մինչդեռ Իրանն իրականացնում է սեփական տիեզերական և միջուկային ծրագրերը, իսկ նանոտեխնոլոգիաների ոլորտում հասել է տպավորիչ արդյունքների։ Այս երկրում նույնպես փոքր-ինչ յուրովի կիրառվում են *մերիտոկրատիկ* սկզբունքները։ Մասնավորապես, պետական համակարգում կարևոր դերակատարում ունեն Փորձագետների խորհուրդը և Քաղաքական նպատակահարմարությունը որոշող խորհուրդը։ Նման բազմազաղափարախոսական համակարգը թույլ տվեց Իրանին դիմակայել արևմտյան բազմամյա պատժամիջոցներին (որոնք միայն 2015թ. փոքր-ինչ մեղմվեցին և ԱՄՆ-ի կողմից նորից վերսկսվեցին 2018-ին) և «գունավոր հեղափոխություններ» իրագործելու փորձերին։

**Մայրամաքային Եվրոպա.** Եվրոպայում ավանդաբար կարևորվում են ազատական և սոցիալիստական կուսակցությունները։ Վերջինների թիվն անցնում է մի քանի տասնյակից, նրանց հաջողվել է հասնել սոցիալական բարեկեցության տպավորիչ արդյունքների։ Միևնույն ժամանակ, *ԵՄ*-ում, հատկապես միզրանտների խնդրի հետ կապված ճգնաժամի պայմաններում, առանձին Եվրոպական երկրներում նկատելիորեն աճում է ազգային-պահպանողական մոտեցումներ դավանող կուսակցությունների դերակատարումը։ Ավելին, նման կուսակցությունները հատկապես հաճախ հանդես են գալիս *ԵՄ* ինտերպացիոն նախագծերի դեմ։ Համենայնդեպս, պետք է արձանա-

գրել, որ չնայած ընդհանրական մշակութային դաշտի ստեղծման և «փափուկ ուժի» կիրառման ոլորտներում ձեռք բերված հաջողություններին, ԵՄ-ում, թերևս հասկանալի պատճառներով, դեռևս չի ձևավորվել համաեվրոպական ազգային-պահպանողական գաղափարախոսություն։ Այս հանգամանքը, մասնավորապես, խոչընդոտում է սեփական եվրոպական անվտանգության հայեցակարգի ստեղծմանը, և այդ խնդրում եվրոպացիներն ապավինում են ԱԱԾՕ-ին, որտեղ գլխավոր դերակատարն է ԱՄՆ-ը։ Մինչդեռ վերջինիս շահերը, հատկապես Մեծ Բրիտանիայի «բրեքսիթի» և Դ.Թրամփի նախագահության ժամանակաշրջանում, միշտ չէ, որ համընկնում են մայրցամաքային Եվրոպայի երկրների ռազմաքաղաքական և տնտեսական շահերի հետ [1]։ Հստ ամենայնի, այս հիմնախնդիրներով է պայմանավորված այն հանգամանքը, որ ԵՄ-ը, ունենալով նույնքան տնտեսական ներուժ, որքան և ԱՄՆ-ը, իր ռազմաքաղաքական հզորությամբ ու աշխարհաքաղաքական ազդեցությամբ զգալի զիջում է վերջինիս։

**Գաղափարախոսական հեղափոխություններ Ռուսաստանում.** Ազգայնական և ազատական գաղափարներ կրողների հետ միասին՝ ռուսական հանրության մի զգալի հատվածի հոգեկերտվածքին հարազատ են սոցիալիստական պատկերացումները, որի պատմական հենքն ընդունված է համարել ռուսական գյուղական համայնքների ավանդական կացութաձևը։ Ինչպես հայտնի է, ռուսաստանյան իրականությունում գաղափարական հակասությունները հանգեցրել են հեղափոխությունների (1917թ.՝ սոցիալիստական, 1991թ.՝ ազատական), դրանցից բխող հետևանքներով և հաղթած գաղափարախոսու-

թյան գերակայության հաստատումով։ Արդյունքում՝ համաշխարհային առաջատար լինելու նախապայմաններ և հավակնություններ ունեցող Ռուսաստանը վերջին հարյուրամյակում պարբերաբար հայտնվում է բարդ աշխարհաքաղական և աշխարհատնտեսական իրավակիրառում։ Ենելով այդ նկատառումներից՝ *ЛД* արդի իշխանությունները փորձում են համատեղել տարբեր զաղափարական հոսանքները։ Այդ երկրում, ազատական կառավարման և տնտեսական համակարգի պարագայում, բացի պահպանված կոմունիստական կուսակցությունից, գործում է նաև սոցիալիստական կողմնորոշումներ ունեցող «Արդարացի Ռուսաստան» (*Справедливая Россия*) կուսակցությունը, իսկ «Միասնական Ռուսաստան» (*Единая Россия*) կուսակցությունն իրեն համարում է պահպանողական։ Սակայն ակնհայտ է, որ արդյունավետ զաղափարախոսական համակարգ այդ երկրում դեռևս չի հաստատվել։

Բոլոր պարագաներում, պետք է փաստել, որ զաղափարախոսական ոլորտի անբարենպաստ իրողություններն էական ազդեցություն են թողել ոռոսական և այդ համատեքստում՝ անզամ ողջ սլավոնական հանրության զարգացման վրա։

**Խորայելյան փորձը.** «Գաղափարախոսական տրիադան» արդյունավետ է գործում ոչ միայն խոշոր պետություններում։ Օրինակ, շարունակական պատերազմական իրավակիրառում գտնվող Խորայելը, որի քաղաքական համակարգում «զաղափարախոսական տրիադան» ներկայացված է մտածված համամասնությամբ, իր ստեղծման առաջին տարիներին սահմանամերձ շրջաններում հիմնել է մոտ 200 կիրուց, որոնք գործում են առ այսօր։ Դրանք գյուղատնտեսական կոմունաներ են,

որոնք կատարում են նաև մարտական սահմանապահ գորքերի գործառույթներ: Միևնույն ժամանակ, կիբուցներում ունեցվածքն ընդհանուր է, կոլեկտիվ աշխատանքի արդյունքները բաշխվում են հավասարաչափ, ինչը հիշեցնում է խորհրդային ժամանակաշրջանի կոլտնտեսությունները: Կիբուցները ստեղծվել են ազգային պահպանողական (Երբեմն՝ օրթոդոքսալ բնութի) և սոցիալիստական ուղղվածություն ունեցող գաղափարախոսությունների յուրատեսակ միասնության արդյունքում: Նման սիմբիոզն ապահովում է սահմանների պաշտպանների հայրենասիրական բարձր ոգին, որին մեծ չափով նպաստում է բոլորի հավասարության (այդ թվում՝ նյութական) սոցիալիստական սկզբունքը, որն, ի լրումն, պարունակում է նաև կազմակերպչական-մորիլիզացիոն գործոն:

Վերը բերված օրինակներից հետևում է, որ գաղափարախոսական դաշտի հնարավորինս ներդաշնակությունը և համաշխափությունը կանխորոշում են հանրության ազգային ռազմավարության արդյունավետությունը: Դա հիմք է տալիս համարելու, որ տվյալ երկրի գաղափարախոսական դաշտը և նրա ցուցանիշներն ազգային ու տեղեկատվական անվտանգության համատեքստում անհրաժեշտ է ընդունել որպես առաջնային կրիտիկական ոլորտ:

Սակայն անվտանգությունը, ինչպես գիտենք, ստատիկ պաշտպանություն չէ, այլ ենթադրում է կառուցողական գործողությունների ռազմավարություն: Հետևաբար, եթե այս կամ այն հանրության գաղափարախոսական դաշտը չի համապատասխանում անվտանգության պահանջներին և այդպիսով չի խթանում հասարակության հոգևոր-մտավոր և սոցիալ-տնտեսական

զարգացումը, ապա պաշտպանության միակ ձանապարհը տեղեկատվական-հասարակական տեխնոլոգիաների միջոցով լիարժեք գաղափարախոսական դաշտի ձևավորումն է:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ունիվերսալ գաղափարախոսությունների տեսական և գործնական կոնցեպտները զարգանում են միջազգային հանրության մի լայն հատվածում, ինչը թույլ է տալիս դրանց արդյունքներից օգտվել անզամ համապատասխան ռեսուրսներ չունեցող հասարակություններին։ Մինչդեռ այլ իրադրություն է տիրում ազգային-պահպանողական գաղափարախոսության ոլորտում, քանի որ տեսական և բովանդակային հարցերի լուծումը հիմնականում կոնկրետ հասարակության խնդիրն է։

### ***1.5 Ազգային-պահպանողական գաղափարախոսության առանցքային նշանակությունը***

Ինչպես արդեն նշել ենք, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունը (այսուհետ՝ *ԱՊԳ*) հենվում է կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական-կրոնական արժեքային համակարգի, ինքնության վերաբերյալ պատկերացումների և պատմական ավանդույթների վրա։ *ԱՊԳ-ն*, ինչպես և մնացյալ գաղափարախոսական ուղղությունները, վերածվում է ազդեցիկ գործոնի, երբ դառնում է հանրային գիտակցության բաղադրամաս, իսկ դա հնարավոր է իրազործել միայն տեղեկատվական միջոցներով։ Անշուշտ, այս հարցում առաջնային խնդիրը նման գաղափարախոսության հիմնական դրույթների մշակումն է։ Սակայն դա չի նշանակում, թե համապատասխան համակարգի ձևավորումը պետք է իրազործվի միայն *ԱՊԳ* հիմնադրույթների վերջնական հստակեցումից հետո։ Նման

հիմնադրույթների ձևավորումը և զարգացումը ենթադրում են մշտական կատարելագործում և գործնականում դրանց արդյունավետության փորձարկում: Այդպիսի մոտեցման պարագայում ներքին դաշտում տեղեկատվական-հոգեբանական գործողությունների հիմնական խնդիրները կարող են լինել.

- *ԱՊԳ* առանձին դրույթների ներդրումը հասարակության տեղեկատվական տարածքում,
- *ԱՊԳ* հիմնադրույթների պաշտպանությունն արտաքին և ներքին խեղաթյուրումներից,
- ազգային շահերի համատեքստում *ԱՊԳ* կոնցեպտների տարածումն արտաքին տեղեկատվական դաշտում:

Միևնույն ժամանակ, *ԱՊԳ-ն*, լինելով *ազգային անվտանգության* կրիտիկական ոլորտ հանդիսացող «գաղափարախոսական տրիադայի» բաղադրիչ, իր հերթին, պետք է ընկալվի որպես «կրիտիկական ենթակառուցվածք», քանի որ իրականացնում է ազգային ինքնության և արժեքային համակարգի զարգացման ու պահպանման գործառույթներ: Պատահական չե, որ ինչպես նշեցինք վերը, ամենամրցունակ երկրներից մեկի՝ ԱՄՆ-ի փորձագետները համարում են, որ ազգային անվտանգության գլխավոր խնդիրը սեփական արժեհամակարգի պահպանումն է: Նման մոտեցումները հատուկ են նաև Խորայելի և Չինաստանի պարագայում:

Սակայն հայտնի է, որ հանրության արժեքային համակարգը ստատիկ կատեգորիա չէ. այն փոփոխվում է՝ կախված պատմառազմաքաղաքական, ինչպես նաև հասարակության էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացումներից: Այսօր ցանկացած հասարակության արժեհամակարգի վրա էապես ներ-

գործում են տեղեկատվական ինչպես նպատակառուղյած, այնպես էլ քառտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք նկատելի չափով ձևավորում են գլոբալ հանրության մտածելակերպը, հոգեկերտվածքը և այդպիսով՝ նաև՝ արժեքային համակարգը։ Այդ իրողությունները բնորոշ են նաև Հայկական հանրությանը։

**Գաղափարախոսական խնդիրները Հայկական հանրությունում.** Ակնհայտ է, որ ուրույն քաղաքակրթական հատկանիշներով օժտված հայկական արժեհամակարգն այն հիմնայուններից է, որոնց շնորհիկ պահպանվել է մեր ազգայինպատմական շարունակականությունը։ Միևնույն ժամանակ, վերջին երկու հարյուրամյակում տեղի ունեցած աշխարհաքաղաքական և հեղափոխական գործընթացների հետևանքով Հայկական հանրությունը մի քանի անգամ փոխվել է իր կեցության հասարակական-գաղափարախոսական միջավայրը։ Բավական է հիշատակել պարսկական տիրապետությունը, Շուսական կայսրությունը, Առաջին, Երկրորդ և վերջապես Երրորդ հանրապետությունները։ Արդյունքում՝ հանրության արժեհամակարգում կատարվել են զգալի, երբեմն՝ հակասական, բովանդակային փոխակերպումներ։

Միևնույն ժամանակ, նախորդ դարի 20-30-ական թվականների Երկրորդ Հանրապետության հանրությանը պարտադրված կոմունիստական հիմնադրույթները ժամանակի ընթացքում նկատելիորեն փոխակերպվեցին և որքան հնարավոր է համատեղվեցին ազգային արժեհամակարգին հատուկ պատկերացումների հետ։ Սակայն ներկայում դրանց մի զգալի մասը հակասության մեջ է գտնվում մեր իրողություններում պարզունակացված ազատական գաղափարախոսության դրույթների հետ։

Նկատենք, որ հանրության արժեհամակարգի ուսումնասիրությունը համարվում է հրատապ խնդիր: Այդ համատեքստում միջազգային որոշ կազմակերպություններ լայնածավալ հետազոտություններ են իրականացնում ողջ աշխարհում: Օրինակ, Աշխարհի արժեքների ուսումնասիրություն (*World Values Survey*)<sup>15</sup> կազմակերպության կատարած ուսումնասիրությունների համաձայն՝ ՀՀ բնակչությունը գտնվում է Հարավային Ասիայի և հետխորհրդային երկրների մշակութային տիրութում, որտեղ գերակայում են ավանդական և գոյապահպանական տիպի արժեքները: Եվ այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Հայկական հանրության արժեհամակարգի վերաբերյալ պատկերացումները փոքր-ինչ ընդհանրական-զգացական բնույթ են կրում և միշտ չեն գիտականորեն հիմնավորված:

Ակնհայտ է, որ *ԱԳՊ* և քաղաքականության առնչությունների սերտացումն ու դրանք կիրառական հարթություն փոխադրելն անհնար է պատկերացնել առանց համապատասխան տեղեկատվական քաղաքականության, և սա վերաբերում է ոչ միայն արժեհամակարգի հետ կապված խնդիրներին: Հատուկ շեշտենք, որ *ԱՊԳ կայացման և զարգացման տեսանկյունից* լրջագույն թերացում է մեր պատմության խորհրդային շրջանը մոռացության մատնելը (*տե՛ս 2.2 ենթագլուխը*): Միանգամայն ճշմարտացի էր փիլիսոփա Կառլ Շմիդտը, երբ պնդում էր, որ «Մարքսիստական և ազատական գաղափարախոսական/տնտեսական դիվականացման (դեմոնիզմի) փիլիսոփայական պարադիգմերը նույնն են»: Մեկ այլ ականավոր մտավորական՝ խորհրդային շրջանի հայտնի այլախոհ Բորիս Կագարլիցլին (որն, ի դեպ, անցել է բռնաձնշումների բռվով), բավական դի-

<sup>15</sup> See [worldvaluessurvey.org](http://worldvaluessurvey.org)

պուկ նկատել է, որ խորհրդային պատմության թերազնահատումն առաջին հերթին դավաճանություն է խորհրդային համակարգի զոհերի հանդեպ [10]: Հայտնի է նաև, որ այն հանրությունները, որոնք կորցնում են պատմական հենքը, առավել շատ են ենթակա տեղեկատվա-հոգեբանական ազդեցություններին և այդպիսով ավելի խոցելի են արդի հիբրիդային իրողություններում: Թերևս, այս առիթով տեղին է հիշել չինական «պատմությունը մոռանալը դավաճանություն է» ասացվածքը:

Պետք է, թերևս, հստակ գիտակցել, որ ցանկացած երկրի պատմություն ոչ միայն նրա քաղաքական վարչակարգի, այլև, առաջին հերթին, այդ երկրի հասարակության և ժողովրդի պատմությունն է: Այդ համատեքստում մենք պարտավոր ենք արձանագրել, որ հայաստանյան հանրությունն ավելի քան արժանապատիվ կերպով է տարել իրեն բաժին հասած քաղաքական-ռազմական և հեղափոխական փորձությունները:

Վերոնշյալ հանգամանքների և նկատառումների աղեկվատ ընկալումն ազգային անվտանգության կայացման երաշխիքներից է: Հարկ է ևս մեկ անգամ շեշտել, որ ԱՊԳ-ն տվյալ հանրության հոգևոր-մշակութային ռեսուրսների արտահայտությունն է, իսկ վերջինս էլ, իր հերթին, պայմանավորում է գիտելիքային ոլորտի ուղղվածությունը և զարգացածությունը: Նման համամասնության կայացման մակարդակը հաճախ թելադրում է նաև աշխարհաքաղաքական կողմնորոշումներ, ինչին կանդրադառնանք հաջորդ գլխում:

\*\*\*

Ինչպես հիբրիդային իրողությունների աղեկվատ ընկալումը, այնպես էլ արդյունավետ գաղափարախոսական դաշտի ձևա-

վորումը ենթադրում են, որ տվյալ հասարակությունը պետք է ունենա համապատասխան գիտելիքային ներուժ: Այս համատեքատում կարևորագույն խնդիրներից է հնարավորինս ճշգրտել Հայկական հանրության գիտակրթական ոլորտում տիրող օբյեկտիվ իրավիճակը: Այդ խնդիրներին կանդրադառնանք հաջորդ գլխում:

### Գրականություն

1. *Գ.Հարությունյան*, Ֆրազմենտացված կամ «մինչվեստֆալյան» աշխարհակարգ, Գլոբուս, #2(91), 5, 2018:
2. *Ա.Բարտօշ*, Агрессия нового типа, HBO, #18, (996), 2018.
3. «Տեղեկատվական անվտանգություն» (նախազծի ղեկավար և զիս. իսլամազիր Գ.Հարությունյան), 317 էջ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2017:
4. *Г.Арутюняն*, Распад «системы» и формирование будущего, НОФ «Нораванк», Ереван, 2011.
5. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն (հետազոտական ծրագրի համակարգողներ Ս.Մանուկյան, Գ.Հարությունյան), «Նորավանք» ԳԿՀ, 218 էջ, 2015, [http://www.noravank.am/arm/books/details.php?ELEMENT\\_ID=1326023.03.2015](http://www.noravank.am/arm/books/details.php?ELEMENT_ID=1326023.03.2015)
6. *Г.Арутюнян, А.Мардженян*, Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных войнах // 21-й Век, 4 (45), 2017.
7. *Г. Тер-Арутюняնц*, «Холодная война – 2» с геоидеологической перспективой, Голос Армении, 04.12.2003.
8. *Г. Тер-Арутюняնц*, Многополярная и ассиметричная Холодная война, Вестник Академии военных наук, М., #4(21), с. 23, 2007.
9. *Арутюнян Г., Гриняев С.*, Можно ли захватить Уолл Стрит?, 21-й Век, #1(21), с. 3, 2012.
10. *Кагарлицкий Б.*, Политология революции, Москва, Алгоритм, 2007.

## **2. ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐՈՒԺԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Տեղեկատվական հեղափոխությունների և մարդկային հասարակության պատմական զարգացման միջև գործում է «հակադադրական» կապ: Միևնույն ժամանակ, եթե գրերի ստեղծումից (առաջին տեղեկատվական հեղափոխություն) մինչև տեխնոլոգացված տպագրության (երկրորդ տեղեկատվական հեղափոխություն) ժամանակաշրջանը տևել է 30 հարյուրամյակ, ապա հեռագրի, հեռախոսի և ռադիոյի գյուտերը (երրորդ տեղեկատվական հեղափոխություն) կատարվեցին Գուտենբերգի հայտնագործությունից ընդամենը 4 դար հետո: 19-րդ դարից զարգացումներն ավելի սրբնթաց քնույթ են ընդունում. Ա.Պոպովի և Գ.Մարկոնիի հայտնագործություններից հետո հասարակությունը համակարգչային-համացանցային դարաշրջան (չորրորդ և հինգերորդ տեղեկատվական հեղափոխություններ) թևակոնից ընդամենը մեկ դարի ընթացքում: Կարելի է ամրագրել, որ մինչև 15-րդ դարը մարդկության տեխնոլոգիական առումով առաջատար հատվածն արդեն կուտակել էր գիտելիքների կրիտիկական կոնցենտրացիա, ինչն էլ թույլ տվեց, որպեսզի հետազայում հասարակությունների զարգացումը սկսի ընթանալ արագացումով՝ ենթարկվելով ոչ գծային օրինաչափությունների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների նման ոչ գծային զարգացումը գուգորդվում էր գիտական մտքի առաջընթացի հետ, և

ձևավորվում էին ոչ միայն նոր բնագիտական-տեխնիկական, այլև հասարակագիտական-քաղաքական ուղղություններ՝ գաղափարախոսություն, սոցիոլոգիա և այլն: Այդ համատեքստում, մասնավորապես, փորձեր էին արվում մարդկային պատմության տարբեր փուլերում հասարակությունները դասակարգել համաձայն դրանց ամենաբնորոշ հատկանիշների: Թերևս, տրամաբանական էր, որ 20-րդ դարի երկրորդ կեսին գիտական-հասարակագիտական հանրությունը, տպավորված տեղեկատվական հեղափոխությունների արդյունքում կատարված փոփոխություններով, փորձեց բնութագրել հասարակությունները՝ շափանիշ ընդունելով դրանցում տեղեկատվական բաղադրիչի գարգացման աստիճանը: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաները լավագույն ձևով ստեղծող, մշակող և լայնորեն կիրառող հասարակություններն ստացան «տեղեկատվական»<sup>1</sup> և «հետինդուստրիալ» անվանումները:

## *2.1 Տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակություններ*

Տեղեկատվական հասարակություն հասկացությունն առաջինը կիրառել և շրջանառության մեջ է դրել Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Յու. Հայաշին 1969թ. «Ճապոնական տեղեկատվական հասարակություն. թեմաներ և մոտեցումներ» աշխատությունում<sup>2</sup>: Ճապոնիայի կառավարության պատվիրած այդ հետազոտության նպատակն էր ուսումնասիրել նոր գարգացող համակարգային տեխնոլոգիաների ազդեցությունը հաս-

<sup>1</sup> Լատիներեն *informare* - ինֆորմացիա - տեղեկատվություն հասկացությունը թարգմանվում է նաև սովորեցնել, մտածել և անգամ երևակայել: Պատահական չէ, որ առայսօր ինֆորմացիա հասկացության մեկնաբանությունները բազմաթիվ են և գիտական վիճաբանությունների պատճառ են հանդիսանում (*տե՛ս օրինակ, [1]*):

<sup>2</sup> В.Федотова, Информационное общество, <https://iphras.ru/page46589323.htm>

բակության վրա: Հայաշին տեղեկատվական հասարակությունը բնութագրում էր որպես մի հասարակություն, որտեղ համակարգչայնացումը հնարավորություն է ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, ձերբազատել նրանց տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր մակարդակ: Նման պայմաններում անխուսափելիորեն պետք է փոխվի նաև բուն արտադրական պրոցեսը. նրա արգասիքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն»: Այդպիսով ենթադրվում էր, որ ապրանքի արժեքի և գնազոյացման մեջ պետք է աճեն նորարարության, ինչպես նաև դիզայնի ու մարքեթինգի մասնաբաժինները:

Համաձայն «տեղեկատվական հասարակության» հայեցակարգի մեկ այլ ջատագովի՝ Յ.Մասուդայի, «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի՝ ապրանքի ստեղծումը»: Հստ Մասուդայի, ի տարբերություն ինդուստրիալ հասարակության, որի բնորոշ արժեքն ապրանքների սպառումն է, տեղեկատվական հասարակությունում առաջնային նշանակություն է ձեռք բերում ժամանակի գործոնը: Մասնավորապես, ենթադրվում էր, որ նման հասարակությունում բնակչությունը, ծանրաբեռնված չլինելով տաղտակալի աշխատանքով, բավականաշափ ժամանակ է ունենալու առնչվել մշակութային արժեքների հետ և այդպիսով հարստացնելու է իր հոգևոր աշխարհը: Ավելին, «տեղեկատվական հասարակության» հայեցակարգի հիմնադիր հայրերը համոզված էին, որ նման հասարակությունում չեն լինելու դասակարգեր և հակասություններ, տիրելու է համերաշխություն, իսկ պետական մարմինները պետք է լինեն «սակավաթիվ և ունենան խիստ փոքր աշխատակազմ»: Հատկանշական է, որ նման մոտեցումները բնորոշ են նաև այլ

հետազոտողների: Օրինակ, համաձայն ֆրանսիացի սոցիոլոգ Ժ.Էյուլի՝ տեղեկատվական հասարակությունում պետք է հաստատվեն սոցիալիստական, անարխիստական և պացիֆիստական գաղափարներ, և կենտրոնացված բյուրոկրատական պետությունը պետք է վերանա, իսկ ըստ այլոց՝ սոցիալական ցանցերի հիման վրա ապագայում ձևավորվելու է այսպես կոչված ինտելեկտուալ *net*-վերնախավ, որն էլ պետք է իրականում դեկավարի գլոբալ հանրությունը [2]:

«Տեղեկատվական հասարակության» հայեցակարգի ստեղծմանը գրեթե զուգահեռ՝ 20-րդ դարի 70-ական թվականներին շրջանառության մեջ մտավ նաև «հետինդուստրիալիզմի» կոնցեպտը, որի հիմնադրույթները համահունչ էին Հայաշինի և Մասուդայի գաղափարներին: Այդ հայեցակարգի հեղինակ է համարվում ամերիկյան սոցիոլոգ Դանիել Բելը, որը 1973թ. հրատարակեց «Հետինդուստրիալ հասարակության գալիքը. սոցիալական կանխատեսման փորձ» աշխատությունը, որում ներկայացված էին նման հասարակության հատկանիշները և դրանց գարգացման հեռանկարները [3]:

Դ.Բելը, մարդկային հասարակության պատմությունը բաժանելով երեք մասի՝ ազրարային, ինդուստրիալ և հետինդուստրիալ, ինդուստրիալ հասարակությունը մեկնաբանում էր որպես մի հասարակություն, որը կազմակերպվում է ապրանքարտադրության և արտադրամիջոցների շուրջ: Բելը շեշտում է, որ ինդուստրիալ հասարակությունն ընդգրկում է երկրներ, որոնք կարող են ունենալ տարբեր անցյալ ու ներկա և անզամ հակառակիր քաղաքական համակարգեր: Սակայն, անկախ այս հանգամանքներից, առաջնայինը հասարակության ինդուստրիալ բնույթն է, որը կանխորոշում է նրա սոցիալական կառուցվածքը,

ներառյալ սոցիալական շերտերը: Սոցիալական կառուցվածքն, իր հերթին, ըստ Բելի, հանդիսանում է առաջնային գործոն, այն «վերլուծաբանորեն տարանջատվում» է հասարակության քաղաքական ու մշակութային չափումներից և հարթություններից:

Միևնույն ժամանակ, ըստ Բելի, գիտելիքները հետինդուստրիալ հասարակությունում որոշումների ընդունման և փոփոխությունների ուղղորդման գործում որոշիչ են դառնում հատկապես տեսական գիտելիքները: Համարվում է, որ հասարակություններում զարգացումն անհնար է պատկերացնել առանց կանխատեսումներ կատարելու, ապագայի հնարավոր սցենարներ մշակելու և սպասվող գործընթացները նախապես պլանավորելու: Այդ ամենի համատեքստում խիստ կարևորվում է նաև կանխատեսման մեթոդների և մոդելների ստեղծումը:

Համաձայն Բելի մոտեցումների, «Չուկայի» տուտալ հաղթանակն ավելի վտանգավոր է, քան սոցիալիստական մենատիրական գաղափարախոսության հաստատումը, և «Չուկայի» տրամաբանության ընդունումը մարդկային կենսագործունեության այլ բնագավառներում (քաղաքականություն, մշակույթ և այլն) կարող է կործանարար լինել ողջ կապիտալիստական համակարգի համար: Այդ համատեքստում Բելի վրա մեծ տպավորություն էր գործել անզինացի ականավոր տնտեսագետ Զ.Ս. Քեյնսի այն տեսակետը, համաձայն որի՝ անհրաժեշտ է, որպեսզի կառավարությունը, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, ակտիվ մասնակցություն ունենա տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում: Ի դեպ, Քեյնսի մոտեցումների հիմնավորված լինելու վկայությունն են այն գործնական միջոցառումները և դրանց արդյունքները, որոնք 20-րդ դարի երեսնական թվականներին իրագործեց ԱՄՆ նախագահ Ֆ.Ռուզվելտը տնտե-

սությունը դեպքեսիայից դուրս բերելու նպատակով: Այդ և նմանատիպ այլ գործառույթներն ապացուցում են Բելի այն թեզը, որ հետինդուստրիալ հասարակությունում հիմնական որոշումները պետք է ընդունի կառավարությունը, սակայն դրանք պետք է հիմնվեն պետության կողմից հովանավորվող գիտական հետազոտությունների, մշակումների և վերլուծությունների վրա:

Ըստ Բելի, 20-րդ դարի կեսերին սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները վկայում են այն մասին, որ ինդուստրիալ հասարակությունն էվոլյուցիոն կարգով ձգուում է հետինդուստրիալի, որն էլ պետք է դառնա որոշիչ սոցիալական ձև 21-րդ դարի համար, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, ԽՍՀՄ-ում և Արևմտյան Եվրոպայում: Այդ կանխատեսումները լիովին իրականացան, և, օրինակ, Միացյալ Նահանգներում քաղաքական և տնտեսական որոշումները հիմնականում ընդունվում են փորձագիտական եզրակացությունների հիման վրա: Վերջիններս իրենց հերթին մշակվում են այսպես կոչված «ուղեղային կենտրոններում» (ՈւԿ), որոնց թիվն ԱՄՆ-ում կազմում է մոտ 2000 (տե՛ս, օրինակ՝ [4-7]: Նկատենք նաև, որ այսօր առաջատար երկրներում կիրառվում են կանխատեսման տասնյակ մեթոդներ, որոնք կարևորագույն գործնական նշանակություն ունեն ռազմաքաղաքական, տնտեսական, հասարակական և այլ ոլորտներում ընթացող զարգացումների պլանավորման համար: Դրանցից շատերը մշակվել են վերոհիշյալ ՈւԿ-ներում: Կանխատեսումների այն մեթոդները, որոնք հենված են փորձագետների հարցումների վրա, ենթադրում են տարբեր ոլորտների բազմաթիվ մասնագետների առկայություն, ինչը հնարավոր է միայն գիտելիքահեն տեղեկատվական հասարակություններում: Օրինակ, Հարավային Կորեայում պարբերաբար իրականացվում են

հետազոտություններ գիտատեխնոլոգիական զարգացման հեռանկարները պարզելու ուղղությամբ: Այդ հետազոտությունները կատարվում են այսպէս կոչված *Foresight* (կանխատեսում) մեթոդի միջոցով, դրանց մասնակցում է տարբեր բնագավառների ավելի քան 10 հազար մասնագետ [5]:

## **2.2ՀՀ հասարակությունը՝ «դեխնդուստրիալիզացված»**

Հասարակությունների վերաբերյալ վերը ներկայացված պատկերացումների համատեքստում փորձենք գնահատել նաև արդի Հայաստանի գիտելիքային ներուժը: Հայտնի է, որ տեղեկատվական տարածքում մեր հասարակությունը գլխավորապես բնութագրում է որպես «քաղաքացիական» կամ առնվազն նման կարգավիճակի ձգտող: Նկատենք, որ նման բնութագրումը բավական անորոշ է և որոշակի առումով հիշեցնում է խորհրդային ժամանակաշրջանի «կոմունիստական հասարակության» վերաբերյալ շրջանառվող գաղափարախոսական կարծրատիպը: Նման իրողությունը կարելի է ընդունել նաև որպես խորհրդային ժամանակաշրջանից եկող ժառանգություն: Միևնույն ժամանակ, ելնելով 1.1 ենթագլխում ներկայացված «ժամանակային տրիադայի» դրույթից, հարկ է ամրագրել, որ ԽՍՀՄ-ում, չնայած բազում գաղափարախոսական դրույթների առկայությանը, բնագիտական և տեխնոլոգիական բնագավառներում ձևավորվել էր բավական զարգացած գիտակրթական ոլորտ: Ինչպես վերը նշեցինք, Դանիել Բելը միանգամայն հիմնավորված էր կանխատեսում, որ այդ երկրում (և նրա մաս հանդիսացող Հայաստանի Երկրորդ Հանրապետությունում) հաստատվելու են հետինդուստրիալ իրողություններ: Հաշվի առնելով այս հանգամանքները, հենվելով Բելի մոտեցումների և եզրաբանություն-

ների, ինչպես նաև պատմական փաստերի վրա՝ փորձենք բնութագրել նաև մեր այսօրվա հասարակության կարգավիճակը:

Հայտնի է, որ գիտակրթական ոլորտը խորհրդային համակարգում հանդիսացել է պետական քաղաքականության կարևորագույն բաղադրամաս: Հատկանշական է, որ հեղափոխությունից անմիջապես հետո սկսեց գործել այսպես կոչված «լիկրեզի»<sup>3</sup> ծրագիրը, իսկ 1918-1923թթ. քաղաքացիական պատերազմի, ավերածությունների և սովոր պայմաններում Ռուսաստանում հիմնվեցին մի քանի տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ: Այդ ձեռքբերումները, անշուշտ, պայմանավորված էին ցարական Ռուսաստանում ձևավորված գիտական վերնախավի այն մասի ջանքերով, որոնք գտնում էին, որ այդպիսով իրենք ծառայում են ոչ թե տիրող բոլշևիկյան ռեժիմին, այլ իրենց հայրենիքին: Իսկ արդեն 1975թ. ԽՍՀՄ-ում աշխատում էր գիտնականների համաշխարհային ողջ հանրույթի 25%-ը, այսինքն՝ մոտ 1 մլն մարդ: Գիտական մշակումների թվով ԽՍՀՄ-ը երկրորդն էր աշխարհում, իսկ մի շարք բնագավառներում առաջ էր Արևմուտքից: Գիտաշխատողների համար ստեղծված էին հնարավորինս բարենպատ պայմաններ, և նրանց կարգավիճակը հասարակությունում չափազանց բարձր էր: Նման գիտական քաղաքականության կարևորությունը լավագույնս ըմբռնեցին նաև 2-րդ Հանրապետության դեկավարները:

Արդեն նախորդ դարի 20-ական թվականներին Հայաստանի կառավարության նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը կազմակերպեց հայկական ծագում ունեցող շատ հեղինակավոր գիտնականների և արվեստի գործիչների վերադարձը հայրենիք: Նրանց համար ստեղծվեցին հատուկ պայմաններ՝ ստեղծագործ աշխատանքի համար: Այդ ավանդույթները հետագա-

<sup>3</sup> Լիկրեզ (ликвидация безграмотности) – անգրագիտության վերացում:

յում շարունակվեցին՝ 1935թ. Երևանում ձևավորվեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, իսկ Հայրենական պատերազմի ծանր տարիներին՝ 1943թ., Ա.Միկոյանի և հանրապետության կոմունիստական կուսակցության ղեկավար Գ.Հարությունովի աջակցությամբ հիմնադրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան, որն առաջավոր դիրքեր գրավեց և՝ խորհրդային, և՝ համաշխարհային գիտական համակարգում։ Հանրապետության գիտական հաստատություններում են աշխատել բազմաթիվ տաղանդավոր գիտնականներ՝ ֆիզիկոսներ Արտեմ Ալիխանյանը, Անդրանիկ Իոսիֆյանը, Պարիս Հերունին, Լևոն Տեր-Միքայելյանը, աստղաֆիզիկոսներ Վիկտոր Համբարձումյանը, Բենիամին Մարգարյանն ու Գրիգոր Գուրգանյանը, մաթեմատիկոսներ Արտաշես Շահինյանը, Սերգեյ Մերգելյանը, քիմիկոսներ Արմենակ Մնջոյանը, Արամ Նալբանդյանը և բազմաթիվ այլ աշխարհահոչակ գիտնականներ։

Վերոնշյալի համատեքստում պետք է ևս մեկ անգամ փաստել, որ Երկրորդ Հանրապետության պատմությունն այսօր խիստ միակողմանի է մատուցվում Հայկական հանրությանը։ Պատմական հիշողության խեղաթյուրման նման քաղաքականությունը գրեթե նույն է, ինչ խորհրդային ժամանակաշրջանի վաղ փուլում, երբ Առաջին Հանրապետության հետ կապված զարգացումները և գործիչները հիշատակվում էին միայն բացասական համատեքստում։ «Հիշողության» նման քաղաքականություն վարելը և այդպիսով «ժամանակային տրիադայի» սկզբունքների խախտումը խիստ բացասաբար են ազդում իրողությունների «աղեկվատ ընկալման» վրա և այդպիսով իսկ վտանգում Հայաստանի և Հայկական հանրության անվտանգությունն արդի հիբրիդային իրողություններում։ Նույն «ժամանակային» մոտեցումների համատեքստում պետք է նաև հաշվի

առնել, որ չնայած խորհրդային հասարակությունն իրոք «զիտելիքներ արտադրող» էր և գուցե այդ շափանիշով կարող էր համարվել «տեղեկատվական», սակայն այդ տերությունում հասարակական գիտությունները և տեղեկատվության աղբյուրները գտնվում էին վարչական-գաղափարախոսական վերահսկողության տակ: Արդյունքում՝ հասարակական գիտությունների ոլորտն ավելի քան թերզարգացած էր, ինչն էլ ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը դարձավ [6, 7]:

Սակայն բոլոր դեպքերում պետք է փաստել, որ ԽՍՀՄ տրոհումը հետխորհրդային հանրապետություններում (որոշակի չափով բացառություն հանդիսացավ Բելառուսը) հանգեցրեց գիտատեխնոլոգիական և արդյունաբերական ենթակառուցվածքների փլուզմանը, և դա ծանր հետևանքներ ունեցավ. բավական է նշել, որ այդ փուլում Ռուսաստանի կրած տնտեսական կորուստներն ավելին էին, քան Հայրենական պատերազմում ունեցած կորուստները: Կազմալուծվեցին հազարավոր հետազոտական կազմակերպություններ, իսկ երկիրը լքած առաջատար գիտաշխատողների և տեխնոլոգների թիվը կազմեց մի քանի հարյուր հազար: ՀՀ-ում նույնպես փակվեցին բազմաթիվ գործարաններ, կոնստրուկտորական բյուրոներ, կազմալուծվեցին ակադեմիական և գերատեսչական ենթակայություն ունեցող տարաբնույթ հետազոտական կառույցներ, իսկ «ուղեղների» և ընդհանրապես մարդկային ռեսուրսների արտահոսքը դարձավ առաջնային ազգային հիմնախնդիր: Բավական է նշել, որ 3-րդ Հանրապետության գիտաշխատողների և ինժեներների թիվը, 2-րդ Հանրապետության համեմատ, ըստ պաշտոնական տվյալների, նվազել է մոտ 8 անգամ:

Այս ամենի առնչությամբ հիշենք նաև, որ ԽՍՀՄ-ում տնտեսությունը պլանային բնույթ էր կրում: Դրանք ընդունված

Էր անվանել հնգամյա պլաններ, որոնք մշակում էին միութենական և հանրապետական պետպահանները, և կառավարման նման ձևը բավական համահունչ էր տնտեսության կառավարման վերաբերյալ Դանիել Բեկի թեզերին: Միևնույն ժամանակ, միայն մեկ՝ կոմունիստական գաղափարախոսության դրույթների հիման վրա գործող տնտեսությունն անարդյունավետ էր, և այդ հանգամանքը նույնպես ԽՍՀՄ վլուգման պատճառներից մեկը հանդիսացավ: Հետխորհրդային շրջանում չմտածված, այսպես կոչված «վուլգար» ազատականացման արդյունքում պլանավորման մշակույթը դուրս նետվեց՝ համարվելով «սոցիալիզմի ատավիզմ», իսկ մեկ ծայրահեղականացումից մեկ այլին անցնելը, որպես կանոն, ծանր հետևանքներ է ունենում: Մասնավորապես, նման անցումն էապես իջեցրեց գիտակրթական-տեխնոլոգիական համակարգի մակարդակը, քանի որ հատկապես այդ բնագավառում պետական պլանավորումը դեկավարվում է ազգային անվտանգության պահանջներով. օրինակ՝ ԱՄՆ-ում այդ ոլորտի առաջընթացը և աշխարհում առաջատար դիրքեր գրավելը հիմնականում պայմանավորված են պետական պատվերներով և առաջադրանքներով<sup>4</sup>:


Իսկ ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա, համաձայն Գծապատկեր 1-ի<sup>5</sup>, այդ ոլորտի ցուցիչը 2017թ.՝ 1987-ի համեմատ, նվազել է շուրջ 2.5 անգամ, իսկ արտադրությունում

<sup>4</sup> Նկատենք, որ գիտակրթական համակարգի կազմակերպումը ենթադրում է ունենալ նախապես մշակված ռազմավարություն, որտեղ ամրագրված պետք է լինեն տվյալ երկրի ազգային անվտանգությունից բխող նպատակները: Նման տրամաբանությունը թելադրում է առաջին հերթին ստեղծել այն գիտահետազոտական և տեխնոլոգիական կառույցները, որոնք ձգտում են լրացներ գտնել առաջադրված ինտիրների համար: Հենց այդ գործընթացում են ձևավորվում կրթական ոլորտի ուղղվածությունները և նախապատվությունները, որոնք նպաստում են ռազմավարական բնույթի հիմնախնդիրների հաղթահարմանը: Այլ խոսքով՝ արդյունավետ գիտակրթական համակարգի ձևավորումը պահանջում է հիերարխիկ, «վերսից ներքև» կառավարման մեթոդներ:

<sup>5</sup> <http://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/33459>

### Գծապատկեր 1

Հայաստանի արդյունաբերությունը 1970-2017թ.



աշխատողների թիվը նույն ժամանակահատվածում՝ ավելի քան 3 անգամ: Համապատասխանաբար նվազել են նաև էլեկտրաէներգիայի արտադրման ծավալները: Նշենք, որ բացի քանակական ցուցանիշներից, արդյունաբերությունում տեղի են ունեցել նաև որակական փոփոխություններ, քանի որ ներկայում գործնականում չեն գործում ծանր և էլեկտրոնային-էլեկտրատեխնիկական բնագավառի գործարանները: Թերևս, տրամաբանական է, որ Երրորդ Հանրապետության ՀՆԱ-ն դեռևս չի հասել այն մակարդակին, ինչն ուներ Երկրորդ Հանրապետությունը, չնայած անցել է մոտ 30 տարի<sup>6</sup>:

<sup>6</sup> Հատկանշական է, որ առայօր խիստ սակավ են այն հետազոտությունները, որոնք համարում են 2-րդ և 3-րդ Հանրապետությունների տնտեսությունները և, օրինակ, ոուրիշ ու դրամի համեմատական արժույթները: Արդյունքում՝ հանրությունում և որոշումներ ընդունող քաղաքական ընտրանու շրջանում ձևավորվում են թյուր ընկալումներ և ոչ աղեկված պատկերացումներ ինչպես ներկայի տնտեսական, այնպես էլ պատմական իրողությունների վերաբերյալ:

Ըսդհանրացնելով վերոնշյալ դիտարկումները՝ կարելի է արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված 3-րդ Հանրապետության հասարակությունը հարկ է բնութագրել որպես «**ղեկնդուստրիալիզացված»:** Այլ խոսքով՝ նախկինում «ինդուստրիալիզացված», «գիտելիքներ արտադրող» հասարակությունը, որի զարգացման հաջորդ փուլը պետք է լիներ «տեղեկատվականը» և «հետինդուստրիալը», քաղաքական զարգացումների արդյունքում փաստորեն էապես նահանջ է կատարել: Այս տեղ պետք է հատուկ շեշտել, որ այս պարագայում «**ղեկնդուստրիալիզացված»** եզրը կիրառվում է ոչ այն համատեքստում, եթք բնութագրվում է զարգացած երկրների տնտեսությունում ծանր արդյունաբերության մասնաբաժնի նվազման երևույթն ի հաշիվ տեղեկատվական բաղադրիչ ունեցող ճյուղերի զարգացման:

Միևնույն ժամանակ, արդի ժամանակաշրջանում տեղեկատվական հաղորդակցման նոր միջոցները՝ ինտերնետ, սոցիալական ցանցեր և այլն, գրեթե համատարած են դարձել անգամ ոչ բարձրտեխնոլոգիական մակարդակ ունեցող երկրներում: Սակայն նման հասարակությունները, հնարավոր է, բավական «**տեղեկացված»** լինեն, բայց ոչ «**տեղեկատվական»**, քանի որ վերջինի գլխավոր հատկանիշը նոր տեղեկատվության և գիտելիքների արտադրությունն է: Օրինակ, հաղորդակցման նոր միջոցների՝ համացանցի և սոցիալական տարաբնույթ ցանցերի ընձեռած հնարավորություններից լայնորեն օգտվող հայկական հասարակությունը կարծես բավական «**տեղեկացված»** և այդ չափանիշներով համեմատական առումով բարձր դիրքեր է գրավում համապատասխան վարկանիշային ցուցակներում:

Սակայն պետք է նաև հաշվի առնել, որ «**ղեկնդուստրիալիզացված»** հասարակությունում խիստ վիճելի խնդիր է դարձել

նաև «տեղեկացված» լինելու հասկացությունը: Հայտնի է, որ գերակայող դիրք գրաված տեղեկատվության աղբյուրները՝ տարաբնույթ խոշոր մեդիա-միավորումները, իրենց լսարանին տրամադրում են խիստ որոշակի ուղղվածության տեղեկատվություն, որը հանգեցնում է այսպես կոչված «տեղեկատվական տոտալիտարիզմի» ձևավորմանը: Այդ երևույթը խորանում է նաև սոցիալական ցանցերում հատուկ մշակված տեխնոլոգիաներով զանգվածաբար ապատեղեկացնող լուրեր<sup>7</sup> տարածելու շնորհիվ [7]: Այս ամենը, առավել քան նախկինում, նպաստում է իրականությանը չհամապատասխանող թյուր պատկերացումներ կազմել ինչպես ընթացող գործընթացների, այնպես էլ սեփական և այլոց հասարակությունների վերաբերյալ:

Ինչևէ, պետք է արձանագրել, որ հայկական հասարակության դեխնդուստրիալիզացիան էապես նվազեցրեց մեր գիտատեխնոլոգիական ներուժը, ինչը պետք է ընկալել որպես ազգային անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր: Միևնույն ժամանակ, այդ ներուժի նվազումը, որպես կանոն, խաթարում է նաև հասարակության հոգևոր զարգացման գործընթացը:

### **2.3 Հոգևոր-գիտատեխնոլոգիական ռեսուրսների միասնությունը որպես զարգացման նախապայման**

Ներկայացնելով նախորդ ենթագլխում Հայաստանի 2-րդ Հանրապետության գիտատեխնոլոգիական ոլորտի առաջընթացը՝ պետք հատուկ շեշտել, որ բնագիտական և ճշգրիտ գիտություն-

<sup>7</sup>Տե՛ս, օրինակ, *Г.Почепцов*, Новые медиа несут новые контексты дезинформации, [http://ms.detector.media/trends/1411978127/novye\\_media\\_nesut\\_novye\\_konteksty\\_dezinformatsii/](http://ms.detector.media/trends/1411978127/novye_media_nesut_novye_konteksty_dezinformatsii/)

ների զարգացմանը զուգահեռ՝ վերելք էր ապրում նաև մշակութային ոլորտը, ինչն, իր հերթին, նպաստում էր հանրության հոգևոր բովանդակության հարստացմանը: Այս ոլորտների միջև ձևավորվել էր փոխհարստացնող դրական հակադարձ կապ, ինչը նույնպես անհրաժեշտ է դասել կրիտիկական գործոնների շարքին, քանի որ հենց նման կապն է հանդիսանում հասարակության և պետության ներդաշնակ զարգացման գրավականը (տե՛ս [8]): Թերևս, պատահական չէ, որ համաձայն որոշ վերլուծաբանների, կոմունիստական վարչակարգում ապրող և եկեղեցական ծեսերին առանձնապես չհետևող, սակայն հոգևոր և մտավոր բարձր ցենզ ունեցող «*homo sovieticus*»-ը, թերևս, ավելի մոտ էր քրիստոնեական արժեքներին, քան հետագայի սպառողական հասարակությունում կրոնական ազատություններ ունեցող, բայց ոչ բարձր կրթական-մասնագիտական որակավորումների տեր այսպես կոչված «*homo liberalicus*»-ը: Նման իրավիճակը լիովին հաստատում է նախորդ ենթագլխում ներկայացված Դանիել Բելի կանխատեսումն այն մասին, որ ««Չուկայի» տոտալ հաղթանակն ավելի վտանգավոր է, քան սոցիալիստական մենատիրական գաղափարախոսության հաստատումը»:

Հստ ամենանի, մեր հասարակության հոգևոր-գիտակրթական բարձր մակարդակով էր պայմանավորված Ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի տարած հաղթանակն այն պարագայում, երբ հակառակորդը մեծ առավելություններ ուներ կենդանի ուժի և զինտեխնիկայի առումով: Պատահական չէ, որ ղարաբաղյան գործընթացների վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ, բրիտանացի փորձագետ Թոմաս դե Վաալը շեշտում է, որ պատերազմում հայկական կողմի հաղթանակը հետևանք էր վերջինիս «տեխնոլոգիական առավե-

լության» կամ, այլ խոսքով՝ մտավոր գերազանցության:

Հասարակության զարգացման տեսանկյունից հոգևոր և գիտակրթական ոլորտների միասնության անհրաժեշտությունն ընկալվել է դեռևս վաղ անցյալում: Դրա օրինակն է Կառլոս Մեծի կողմից եվրոպական եկեղեցա-համալսարանական համակարգի ձևավորումը, որի կապիտուլյարիայով (կարգադրությամբ) դեռևս 800թ. զանգվածաբար ստեղծվեցին վանական դպրոցներ<sup>8</sup>. այս նախաձեռնությունն արդեն մեր օրերում անվանեցին «եվրոպական քաղաքակրթության մեջ խարտիա»: Նման դպրոցների հիման վրա հետագայում ստեղծվեցին բազմաթիվ համալսարաններ, որոնք դարձան եվրոպական հոգևոր և գիտատեխնոլոգիական առաջնորդացի լոկոմոտիվը:

Այդ նույն եվրոպական պատմությունից երևում է, որ հոգևոր արժեքների ձևախեղման ընթացքում «գիտելիքն ուժի վերածելու» գործելակերպը հաճախ հանգեցնում է տխուր վախճանի ինչպես սեփական պետության և հասարակության, այնպես էլ այլ երկրների ժողովուրդների համար: Անշուշտ, կրոնական-հոգևոր պատկերացումների հետ գիտելիքների փոխհարաբերությունները միշտ չեն, որ հարթ են ընթացել (հիշենք թեկուր ինկվիզիցիայի դարաշրջանը կամ էլ շարունակական միջդավանաբանական պատերազմները), սակայն զարդարախոսական հակադրությունն այդ երկու կատեգորիաների միջև և հոգևոր արժեքների անտեսումն ու արժեզրկումը մշտապես հանգեցրել են ծանր հետևանքների:

Նման սցենար տեղի է ունեցել, օրինակ, Գերմանիայում, որը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը առաջա-

<sup>8</sup>Այս նախաձեռնությունը հիշեցնում է Մաշտոցի գյուտին հաջորդած գործընթացները Հայաստանում:

տար դիրք էր զբաղեցնում գիտատեխնոլոգիական ոլորտում<sup>9</sup>, սակայն նացիստական գաղափարախոսության հաստատումն այդ երկրում համաշխարհային մասշտարի արհավիրքի հանգեցրեց: Այս դեպքն, ի դեպ, մեկ անգամ ևս ցայտուն ցույց է տալիս, որ լոկ մեկ գաղափարախոսության մոնոպոլ գերիշխանությունը՝ անկախ աշխարհայացքային ուղղվածությունից, կարող է հանգեցնել ծանր փորձությունների ինչպես տվյալ երկրի, այնպես էլ առհասարակ համաշխարհային հանրության համար [9]: Սակայն ակնհայտ է նաև, որ հասարակության գիտատեխնոլոգիական, մտավոր աղքատացումը նույնպես բերում է հոգևոր դեզրադացման, ինչն էապես արգելակում, եթե չասենք՝ անհնար է դարձնում տվյալ հասարակության որևէ զարգացում: Կարելի է փաստել, որ մտավոր և հոգևոր ոլորտների միջև գործում է ամուր հակադարձ կապ, և հասարակության կառուցողական զարգացման համատեքստում դրանք հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Ուստի, այս կատեզորիաների միջև անհրաժեշտ ռեսուրսային համամասնությունների պահպանումը հարկ է ընդունել որպես ազգային անվտանգության կարևորագույն խնդիր:

Վերը ներկայացված նկատառումների համատեքստում արդի իրողություններին պետք է վերաբերվել առանձնակի ուշադրությամբ: Երկրներ աշխարհակարգի փլուզումից հետո «ազատ աշխարհի» գաղափարախոսները «հաջողություններից գլխապտույտ ունեցան». նրանք զգալիորեն արագացրին սեփական երկրներում «զարգացած», իսկ այլախոհների կարծիքով՝

<sup>9</sup> Սրա ցայտուն դրսնորում կարող է ծառայել թեկուզ այն փաստը, որ Գերմանիայում 1930-ականների սկզբին ապրում էր նորելյան 32 մրցանակակիր՝ ավելի, քան աշխարհի ցանկացած այլ երկրում:

«տոտալիտար» կամ «իմպերիալիստական» լիբերալիզմի կառուցման տեմպերը, ինչն ուղեկցվում էր այդ ունիվերսալ աշխարհայացքի գաղափարական հիմքերի բացարձակացմամբ և գոեհկացմամբ (ի դեպ, այս գործընթացը նեղլիբերալներին «հարազատացրեց» իրենց իսկ տապալած «սոցճամբարի» բյուրոկրատացված նոմենկլատուրայի ներկայացուցիչների հետ) [10-12]: Ավելին, այդ նույն գաղափարախոսները (որոնց երկրները գիտատեխնոլոգիական բնագավառում աշխարհի առաջատարներն էին և դրա համար էլ հաղթեցին Սառը պատերազմում) սկսեցին արդեն ձևախեղված գաղափարախոսական դոգմաներ սերմանել այն հասարակություններում, որոնց քաղաքակրթական կողը միշտ չէ, որ համատեղվում էր ներդրվող մոդելի հետ: Միևնույն ժամանակ, կիրառվում էր գիտելիքները ոչ կառուցողական ուժի վերածելու ողջ գինանցը, մանավանդ այն դեպքում, եթե հին ձևերով չէին գործում (սովորական՝ ուազմական ներխուժման միջոցով), այլ՝ եթե կիրառում էին նոր տեխնոլոգիաներ՝ «գունավոր հեղափոխությունների» տիպի, որոնք պահանջում էին այն հասարակության բոլոր բնութագրերի հիմնավոր իմացություն, որտեղ կիրառվում էր այդ մեթոդը: Հատկապես նշենք, որ նման գաղափարախոսական ներխուժման ենթարկվող երկրներում երբեմն բավական զգալի գիտատեխնոլոգիական և կրթական ռեսուրսներ կային, որոնք կամ նպատակառուղղված ձևով ոչնչացվում էին, կամ էլ «փափուկ ռեֆորմացվում» էին՝ այդ նույն վերջնարդյունքով<sup>10</sup>: Նման քաղաքականությունը թույլ է տալիս զուգահեռ անցկացնել այս գործընթացների

<sup>10</sup> Համաձայն չինական ուազմավարական-փիլիսոփայական մոտեցումների՝ որևէ երկրի նվաճման համար առավել արդյունավետ միջոց է հանդիսանալում այնտեղ կրթության սեփական համակարգի ներդրումը:

և Երրորդ ռեյխի տիբրահիոչակ «Օստ» պլանի միջև, որը, մասնաւորապես, նախատեսում էր գիտատեխնոլոգիական կառույցների վերացում օկուպացված արևելակաղողական երկրներում<sup>11</sup> [10-12]: Զարմանալի չե, որ «կառավարվող քառսի» տեխնոլոգիաների միջոցով մտավոր հենքի վերացումը Մեծ Մերձավոր Արևելքի երկրներում<sup>12</sup> էապես նպաստեց իալամական արժեքների ձևախեղմանն ու ռադիկալացմանը և այդպիսով «փալամական պետություն» խմբավորման ստեղծմանը:

Գաղափարախոսական առումով իրականացվող ուղտրալիքերալ քաղաքականությունը կարող էր համեմատվել նաև կոմինտերնականի հետ: Սակայն, շնորհիվ այսպես կոչված «փափուկ ուժի», այսօր հասարակությունում գաղափարախոսական պատկերացումների ներդրման գործընթացը տեղի է ունենում շատ ավելի կոշտ ձևով, իսկ երբեմն էլ հանգեցնում է այն երկրների բնակչության զանգվածային ոչնչացման, որոնցում ներդրվում էին «առաջավոր գաղափարները», ինչը հիշեցնում է Պոլ Պոտի հայտնի գործունեությունը Կամբոջայում: «Ներքին գաղափարական թշնամու» դեմ պայքարն այսօր նույնպես ավելի հմուտ է վարվում, քան անցյալի տոտալիտար ռեժիմներում. տեղեկատվա-լրատվական և տնտեսական ազրեցության «փափուկ» տեխնոլոգիաները թույլ են տալիս «լուծել ընդդիմախոսների հարցերը՝ նրանց չուղարկելով (կախված ռեժիմի առանձնահատկությունից) գազախցիկներ կամ «եռյակի» տրիբունալ՝ «գնդակահարել» պարտադիր դատավճռով:

---

<sup>11</sup> *Բագդասարյան Բ.*, Либералы атакуют образование,  
<http://rusrand.ru/tv/globalnyy-process/liberalny-atakuyut-obrazovanie>.

<sup>12</sup> *Արյուճյան Դ.*, Мультиполлярные реалии, Ближний Восток и геноцид в режиме бегущей строки, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=12307](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12307).

Սակայն, ինչպես և բոլոր ժամանակներում, հոգևոր և զիտական ոլորտների ներկայացուցիչները գտնում էին իրենց այլախոհական մտքերը հասարակությանը հասցնելու ձևերը: Եվ եթե առաջինները էսխատողգիական (վախճանաբանական) ժանրում վկայակոչում են ավետարանական ճշմարտությունները (այն ոգով, որ ավելի շատ պետք է վախենալ նրանցից, ովքեր հոգին են սպանում, և ոչ թե նրանցից, ովքեր սպանում են մարմինը), ապա երկրորդները հրապարակում են փաստարկված աշխատություններ «կուսակցության ու կառավարության» ուղեգծի կործանարարության մասին (տե՛ս, օրինակ, [11, 12]): «Հաղթանակած լիբերալիզմի» հասարակություններում այլախոհությանը զուգահեռ՝ գլոբալ հարթությունում խռովություն հասունացավ պարտադրվող դոգմաների դեմ, որոնք հանգեցնում էին ոչ միայն ինքնության կորստի, այլև ուղեկցվում էին քաղաքական թելադրանքով, սոցիալական ոլորտի և տնտեսության այլասերմամբ: Արդյունքում՝ գաղափարախոսական բողոքը ձեռք է բերել նաև աշխարհաքաղաքական չափում, և սկսվել է երկրորդ, այս անգամ՝ բազմաբներ «Սառը պատերազմը» [13]:

Այս դիմակայության արդյունքում գերիշխող համակարգը ցավոտ հարվածներ ստացավ և մի փոքր ընկրկեց իր դիրքերից՝ տեղը զիջելով բազմաբներ իրողություններին: Միևնույն ժամանակ, «հիբրիդային» բնույթ ընդունած առձակատումը տարբեր աշխարհագաղափարախոսական կենտրոնների միջև առայժմ լոկ սկսել է բորբոքվել: Բնական է, որ այս պայքարում առաջնագիծ են դրույթական գիտելիքներն ու տեխնոլոգիաները. իզուր չե, որ ամերիկյան ստրատեգները կարծում են, թե նոր տիպի պատերազմներում գլխավոր գենքը լինելու են դիմակայող կողմերի բանականությունն ու իմացական կարողությունները: Ավելին,

հետևելով ռազմաքաղաքական միտումներին՝ արդիական «հիբրիդային» հարաբերություններ են հաստատվում նաև հասարակությունների ներքին կյանքի բազմաթիվ բնագավառներում:

Հայտնի է, որ հասարակության գիտատեխնոլոգիական ներուժին վերաբերող դիտարկումները միանգամայն չափելի մեծություններ են, և այդ համատեքստում հաջորդ ենթագլուխուններում կդիտարկվեն 2-րդ Հանրապետության դիրքերը «մարդկային կապիտալի», «նորարարության» և այլ նմանատիպ ցուցիչների վարկանիշային համակարգերում, ինչպես նաև հանրապետության գիտակրթական մրցունակության խնդիրները տարածաշրջանում:

## 2.1 - 2.3 Ենթագլուխներում օգտագործված գրականություն

1. *Е.Петриченко*, Информация и философские категории: «явление и сущность», Современные проблемы науки и образования, № 1, 2014.
2. *Берд А., Зондерквист Я.*, Netokratia. Новая правящая элита и жизнь после капитализма, Стокгольмская школа экономики, СПб, 2005.
3. *Белл Д.*, Грядущее постиндустриальное общество, М., 1999.
4. *Диксон П.*, Фабрики мысли, М., ACT, 2004.
5. *Арутюнян Г.*, Распад «системы» и формирование будущего, Ереван, НОФ «Нораванк», 2011.
6. *Տեր-Հարությունյան Գ.*, «Տեղեկատվական հասարակություն. խնդիրներ և հեռանկարներ», Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն, թիվ 3, էջ 3, 2008:
7. *Տեղեկատվական անվտանգություն (նախագծի դեկապար և զիւ. իմրազիր Հարությունյան Գ.)*, «Նորավանք», 2017:
8. *Арутюнян Г., Марджанян А.*, Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных реалиях, 21-й Век, #4 (45), с. 5, 2017; *Арутюнян Г.А.*, Критические инфраструктуры и идеология, «21-й Век», #2 (43), с. 5, 2017.
9. *Арутюнян Г.*, Критические инфраструктуры и идеология, «21-й Век», #2 (43), с. 5, 2017.

10. Տեղեկատվական անվտանգություն (նախազծի դեկավար և զիս. իսմբ.՝ Հարուրյունյան Գ.), Երևան, «Նորավանք», 2017:
11. Krauch K., Постдемократия, М., Изд. дом Гос. ун-та – Высшей школы экономики, 2010.
12. Adrian Pabst, A post-liberal World? Constructive alternatives to liberal globalization amid the threat of neo-fascism. *Special report*, DOC Research Institute, 2017.
13. Тер-Арутюняնց Գ., Многополярная и ассиметричная Холодная война // Вестник Академии военных наук, М., #4(21), с. 23. 2007.

## **2.4 Մարդկային և մտավոր կապիտալը որպես զարգացման ցուցիչ**

Հասարակության բնականոն զարգացման կարևորագույն նախապայմանը նրա մարդկային կապիտալի (*ՄԴԿ*) և մտավոր ներուժի առկայությունն է: Մարդկային կապիտալը (*Human Capital*) հասարակության մտավոր, ֆիզիկական, բնական, առողջապահական և այլ ռեսուրսների հավաքական ամբողջությունն է: Ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից մարդկային ռեսուրսների քանակական ծավալները կարևոր են, սակայն, թերևս, հիմնական գործոնը չեն: Քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, այդ ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով կանգնել են տնտեսական և քաղաքական լուրջ հիմնախնդիրների առջև: Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնությամբ մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԴԿ կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք:

**Մարդկային կապիտալ հասկացության շուրջ.** Առաջին անգամ «մարդկային կապիտալ» եզրը կիրառել է ամերիկացի տնտեսագետ Թեոդոր Շուլցը 1961թ.: Նա ընդգծում էր կրթական կապիտալի՝ որպես *ՄշԿ* առանցքային բաղադրիչի, կարևորությունը երկրի տնտեսության զարգացման գործում: Ամերիկացի տնտեսագետը հետազոտություններ է իրականացրել՝ պարզելու Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսության արագ տեմպերով վերականգնման պատճառահետևանքային կապերը: Նա եկել է այն եզրահանգման, որ Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսությունների արագ վերականգնման հանգամանքը պայմանավորված էր կրթված և առողջ բնակչություն ունենալու իրողությամբ, քանի որ, ըստ նրա, կրթությունը մարդկանց դարձնում է առավել արտադրողական և ստեղծագործ: 1960թ. «Քաղաքական տնտեսության հարցեր» ամսագրում տպագրված «Կապիտալի ստեղծումը կրթության շնորհիվ» (*Capital Formation by Education*) հոդվածում տնտեսագետը ներկայացրել է աշխատուժի արժեքի վերաբերյալ իր գնահատականները, որտեղ հաշվարկվում էին կրթության համար նախատեսվող ծախսերը<sup>13</sup>: Ամերիկացի տնտեսագետ Գարի Բեքերը 1960-ականներին զարգացրեց *ՄշԿ-ի* վերաբերյալ Շուլցի տեսության հիմնադրույթները՝ հիմնավորելով *ՄշԿ*-ում ներդրումների անհրաժեշտությունը հասարակության կենսամակարդակի բարձրացման գործում: 1962թ. լույս տեսավ Բեքերի «Ներդրումները մարդկային կապիտալում. տեսական վերլուծություն» հոդվածը, իսկ 1964թ. նա հրապարակեց «Մարդկային կապիտալ. տեսական և էմպիրիկ վերլուծություն» աշխատությունը, որտեղ կարևորվում էր կրթական կապիտալի բաղադրի-

---

<sup>13</sup> [http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17\\_schultz.pdf](http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17_schultz.pdf)

չը: Բեքերը ԱՄՆ օրինակով հաստատում էր, որ Միացյալ Նահանգներում *ՄղԿ*-ում ներդրումները կարող են ապահովել եկամտաբերության առավել բարձր ցուցանիշներ, քան դա կարելի է ակնկալել արժեթղթերում իրականացվող ներդրումներից<sup>14</sup>: Ըստ նրա տեսության, *ՄղԿ* հաշվարկում գործարարության արդյունավետության ապահովման տեսանկյունից *ՄղԿ* կրթական բաղադրիչն առանձնացվում էր որպես անկյունաքարային դրույթ՝ ընդգծելով տվյալ ձեռնարկության զարգացման համար յուրաքանչյուր աշխատակցի կրթության և մասնագիտական ուսուցման համար ներդրումների իրականացման անհրաժեշտությունը<sup>15</sup>:

**Ազգային մարդկային կապիտալ.** Տեսությունում առանձնացվում է ՄղԿ երկու հիմնական տեսակ՝ անհատական մարդկային կապիտալ և ազգային մարդկային կապիտալ: 1970-80 թվականներից սկսած՝ շեշտակի տեմպերով ընթացող արդյունաբերականացման գործընթացները, որտեղ մարդկային ռեսուրսների հարցում առաջնային էին համարվում բնական, ֆինանսական և նյութական ասպեկտները, փոխակերպվեցին որպակապես առավել բարձր աստիճանակարգի՝ մարդկային ռեսուրսներում առանցքային նշանակություն տալով կրթությանն ու տեղեկատվությանը<sup>16</sup>: Հետագայում *ՄղԿ* հասկացության ձևակերպման շրջանակներն էլ ավելի ընդլայնվեցին: Համաշխարհային բանկի փորձագետները վերջին զեկուցների հաշվարկներում *ՄղԿ* գնահատման հարցում հիմնվում են այնպիսի

---

<sup>14</sup> <http://seinst.ru/page289/>

<sup>15</sup> <https://www.hse.ru/data/2011/04/22/1210713272/Korchagin%20Russian%20Human%20Capital%20Assets.pdf>

<sup>16</sup> [http://gtmarket.ru/files/article/5282/Human\\_Capital\\_The\\_Content\\_and\\_Types\\_Evaluation\\_and\\_Stimulation.pdf](http://gtmarket.ru/files/article/5282/Human_Capital_The_Content_and_Types_Evaluation_and_Stimulation.pdf)

չափորոշիչների վրա, ինչպիսիք են սննդի, բնակավայրի, կրթության, առողջապահության ուղղությամբ ընտանեկան և պետական ծախսերը: Արդյունքում՝ *ՄդԿ*-ն սկսեց ընկալվել որպես պետության նորարարական և գիտելիքահեն տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նախապայման, որտեղ առանձնացվում էր անհատն իր մտավոր և այլ ռեսուրսներով՝ որպես հասարակության *ՄդԿ* զարգացում ապահովող կարևորագույն սուբյեկտ: Այստեղից էլ *ՄդԿ* տեսությունում առաջ եկավ անհատական *ՄդԿ* հասկացությունը:

*ՄդԿ* տեսություններում առանձնացվում էր նաև ազգային *ՄդԿ* հասկացությունը, որը տվյալ հասարակության ազգային հարստության հիմնական բաղկացուցիչն է: Ազգային *ՄդԿ*-ն ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության առավելությունները և ժողովրդի բնական պոտենցիալը: Ազգային *ՄդԿ*-ն հաշվարկվում է նրա արժեքայնության ցուցով: Ազգային *ՄդԿ*-ն կազմում է յուրաքանչյուր զարգացող երկրի ընդհանուր հաշվարկով ազգային հարստության ավելի քան կեսը, իսկ զարգացած երկրների համար՝ վերջիններիս ազգային հարստության ավելի քան 70-75%-ը: Աշխարհի տարբեր երկրների Ազգային *ՄդԿ* արժեքը, ծախսատարության մեթոդաբանության հաշվարկի հիման վրա, գնահատվել է Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Հաշվարկներում օգտագործվում են *ՄդԿ* բաղկացուցիչ մասերի գնահատականներն ըստ պետության, ընտանիքի, գործարանների և այլ ծախսերի հաշվարկների, որոնք հնարավորություն են տալիս սահմանել *ՄդԿ* վերարտադրմանն ուղղված հասարակության տարեկան ընթացիկ ծախսերը: Այդ փորձագի-

տական գնահատականների համաձայն, 20-րդ դարի վերջերին *ՄդԿ* համաշխարհային արժեքը հաշվվում էր \$365 տրլն, ինչը կազմում էր համաշխարհային հարստության 66%-ը: ԱՄՆ *ՄդԿ* արժեքը կազմում էր \$95 տրլն կամ երկրի ազգային հարստության 77%-ը, կամ համաշխարհային *ՄդԿ* արժեքի 26%-ը: Ռուսաստանի *ՄդԿ* արժեքը հաշվարկվում էր \$30 տրլն, ինչը կազմում էր երկրի ազգային հարստության 50%-ը կամ համաշխարհային *ՄդԿ* 8%-ը: Չինաստանի *ՄդԿ* արժեքը հաշվվում էր \$25 տրլն, որը կազմում էր երկրի ազգային հարստության 77%-ը կամ համաշխարհային *ՄդԿ* 7%-ը:

Նշենք, որ *ՄդԿ* ցածր ցուցանիշների պարագայում բարձր տեխնոլոգիաների ոլորտում անհրաժեշտ ներդրումների իրագործումը չի կարող ապահովել հետադարձ դրական արդյունք: Այս պարագայում *ՄդԿ* տեսության մեջ առանձնացվում է բացասական *ՄդԿ* հասկացությունը, եթե *ՄդԿ* ոլորտում իրականացված ներդրումները չեն կարողանում ապահովել ակնկալվող դրական արդյունքները: Բացասական *ՄդԿ* կուտակման գործում զգալի բացասական ազդեցություն ունեն այնպիսի գործուներ, ինչպիսիք են կոռուպցիան, ստվերային տնտեսությունը և այլն: Կարևոր հարցերից մեկն էլ վերաբերում է *ՄդԿ* թիրախավորմանը ներդրումների իրագործման առումով: Բացասական *ՄդԿ* ուղղությամբ իրականացված ներդրումները, եթե փորձ է արվում կրթել այն անհատներին կամ հասարակության այն խմբերին, որոնք ընկալունակ չեն փոփոխությունների նկատմամբ և չեն կարող տալ ակնկալվող կրթական արդյունքներ, ունենում են բացասական և որոշ դեպքերում՝ անդառնալի ազդեցություն ազգային *ՄդԿ* կուտակման գործընթացում:

Մեր ժամանակներում *ՄԴԿ* տեսակներից բավական տարածված է այսպես կոչված պասիվ *ՄԴԿ-ն*, որն անհրաժեշտ ներդրումների պարագայում չի կարող ապահովել ակնկալվող դրական ազդեցություն երկրի տնտեսության զարգացման կամ հասարակության բարեկեցության ապահովման տեսանկյունից, քանի որ ռեսուրսները վատնում է սեփական նյութական պահանջարկը բավարարելու համար:

### ***Մտավոր կապիտալ (ՄոդԿ) և «ուղեղների արտահոսք».***

Աշխարհի առաջատար երկրներում զգալի ֆինանսական միջոցներ են հատկացվում գիտության և կրթության զարգացմանը: *Industrial Research Institute և R&D Magazine* ամսագրի հրապարակած «2016թ. գիտության և հետազոտությունների համաշխարհային կանխատեսումները» (*2016 Global R&D Funding Forecast*) գեկույցում մասնավորապես նշվում է, որ վերջին տարիներին համաշխարհային մակարդակով գիտության և հետազոտությունների ֆինանսավորման ծավալներն աճման միտում ունեն: Զեկույցում ներառված են գիտությանը և հետազոտություններին ֆինանսական հատկացումների հաշվարկով առաջատար 40 երկրները, որոնց ցուցակը գլխավորում է ԱՄՆ-ը: 2014թ. ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը (*GERD-Gross Domestic Expenditure on R&D*) կազմել են \$485 մլրդ (ՀՆԱ 2,78%), 2015թ.՝ \$497 մլրդ: 2016թ. դրությամբ ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը շեշտակի աճել են՝ կազմելով շուրջ \$514 մլրդ: Երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Չինաստանը, որի գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը 2016թ. կազմել են \$396 մլրդ (ՀՆԱ 1,98%): Ի դեպ, Չինաստանի ցուցանիշները շեշտակի աճել են վերջին տարիներին:

2016թ. Ռուսաստանը գտնվում էր ցուցակի 8-րդ հորիզոնականում՝ \$51 մլրդ (ՀՆԱ 1,5%): 2016թ. Թուրքիան զեկույցի 18-րդ հորիզոնականում էր՝ շուրջ \$14 մլրդ (ՀՆԱ 0,86%)<sup>17</sup>:

Գլոբալացման պայմաններում համաշխարհային միզրացիոն գործընթացներն էական ազդեցություն են թողնում ազգային տուրթուններում մարդկային կապիտալի պահպանման և զարգացման հարցերի վրա: Առավել խնդրահարույց է համաշխարհային միզրացիոն հոսքերի ազդեցության համատեքստում երկրների *ՄշԿ* և հատկապես վերջինի մտավոր կապիտալի (*ՄտԿ*) կուտակման ու վերարտադրման հիմնահարցը: Ինչպես ցույց են տալիս միջազգային հետազոտությունները, զարգացող երկրների քաղաքական վերնախավերը, որպես կանոն, լուրջ խնդրի առօս են կանգնում տեղի բնակչության մտավոր կապիտալի կուտակման և զարգացման գործում, քանի որ բարձրորակ մասնագետներից շատերը ձգտում են իրենց մտավոր ռեսուրսները ներդնել առավել զարգացած և բարեկեցիկ միջավայր ունեցող երկրներում: Տվյալ պետության *ՄշԿ* և նրա մտավոր ռեսուրսների վերարտադրողականության ցիկլի պահպանման գործընթացը պայմանավորված է տվյալ երկրի բնակչության բարեկեցության ընդհանուր մակարդակով, առկա քաղաքական ինստիտուտների կայացածությամբ, ինչպես նաև հասարակության ազգային բարոյահոգեոր, արժեքաբանական ընդհանուր ընկալումներով և կողմնորոշումներով:

Մասնագիտական գրականությունում հաճախ հանդիպում է նաև ազգային մտավոր կապիտալ հասկացությունը: Նկատի է առնվում տվյալ ազգ-պետությունում մտավոր ռեսուրսների ամբողջությունը (նյութական և հոգևոր արդյունքնե-

<sup>17</sup> Industrial Research Institute. 2016 Global R&D Funding Forecast, <http://www.iriweb.org>

րը): Նշենք, որ համաշխարհային SS ոլորտի թոփշքածն զարգացման ներկա տեմպերի պայմաններում հատկապես խոցելի են դարձել ազգային մտավոր կապիտալի պահպանումն ու զարգացումն առաջին հերթին փոքր ազգ-պետությունների համար: Զարգացած երկրների պարագայում ազգային մտավոր կապիտալ հասկացության շրջանակներն առավել ընդգրկուն են և ներառում են նաև այլ երկրներում այս կամ այն ոլորտում ներդրված իրենց մտավոր կապիտալի մի հատվածը:

**«Ուղեղների արտահոսքի» պատճառներն ու հետևանքները.** Պետությունից մտավոր կապիտալի «արտագաղթին» կամ, ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում՝ «ուղեղների արտահոսքին» (*brain drain*) կարող են նպաստել միջազգային, ինչպես նաև ներպետական նշանակության քաղաքական կամ տնտեսական կատակլիզմները: Հասարակության մտավոր ներուժի արտահոսքը, որպես կանոն, էական ազդեցություն է ունենում տվյալ երկրի տնտեսության զարգացման, հասարակության բարեկեցության ապահովման հարցերի վրա: Երկրի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ-կրիտիկական մտավոր ռեսուրսների բացակայությունը կարող է երկիրը կանգնեցնել տնտեսական և քաղաքական լուրջ ճգնաժամերի շեմին: Հասարակության մտավոր ներուժը, լինելով պետության տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը, տրամաբանորեն առանցքային դերակատարություն ունի նաև երկրի ֆինանսական կապիտալի ձևավորման և կուտակման գործում: Հետևաբար, երկրից «ուղեղների արտահոսքը» գրկում է տվյալ հասարակությանը ոչ միայն *ՄշԿ*-ից և, առավել ևս, նրա մտավոր ռեսուրսներից, այլև նպաստում է ֆինանսական ազգային կապիտալի դուրսմղմանն արտերկիր և դրա ներդրմանն

այլ երկրներում։ Միջազգային փորձագիտական գնահատականներով, յուրաքանչյուր բարձրորակ մասնագետի արտագաղթի հետևանքով պետության տնտեսության համընդիանուր (մտավոր, նյութական-ֆինանսական), ներառյալ կողմնակի, ածանցյալ կորուստները, կարող են գնահատվել մինչև \$1մլն<sup>18</sup>:

Բնշպես ցույց են տալիս միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) փորձագիտական գնահատականները, «ուղեղների արտահոսքից» զգալիորեն տուժում են հատկապես փոքր տնտեսությամբ զարգացող երկրները։ Լինդսի Լոուելի, Ալան Ֆինուլիի և Էմմա Սթյուարթի 2004թ. հրապարակած հիմնարար հետազոտությունում (*Brain Strain: Optimising Highly Skilled Migration From Developing Countries*) փորձագետները եկել են այն եզրահանգմանը, որ բարձրագույն կրթության դիպլոմ ունեցող գրեթե յուրաքանչյուր 10-րդ անհատ, որպես կանոն, ծնվել է զարգացող երկրում, իսկ զարգացող երկրներում ծնված գիտնականների և ինժեներների 30-50%-ը բնակվում և աշխատում է աշխարհի զարգացած երկրներում<sup>19</sup>։ Այլ տվյալներով, այդ ցուցանիշները, պայմանավորված տարածաշրջանային քաղաքական կամ տնտեսական խոր ճգնաժամերով, հասնում են մինչև 55-60%-ի։

Մասնագիտական գրականությունում ընդունված է նաև կիրառել «ուղեղների վատնում» (*brain waste*) հասկացությունը, որը հատուկ է զարգացող շուկայական հարաբերություններ ունեցող պետություններին։ Այդ հասկացությունը բնութագրում է մի իրավիճակ, երբ երկրի տնտեսությունը չի կարողանում ամ-

<sup>18</sup> <http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653>

<sup>19</sup> <http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653>

բողջությամբ ներզրավել հասարակությունում առկա մտավոր բոլոր ռեսուրսները, ինչի հետևանքով մտավոր ներուժի ձևավորման և զարգացման գործում պետության կողմից իրականացված հսկայածավալ երկարաժամկետ նյութական, ֆինանսական ներդրումների մի հատված ուղղակի «փոշիանում» է: «Ուղեղների վատնման» երևոյթը կարող է պայմանավորված լինել տվյալ պետության աշխատաշուկայի սահմանափակ լինելու հանգամանքով:

**«Ուղեղների արտահոսքի» զայման մեխանիզմները.** Որոշ զարգացող երկրներ ազգային մտավոր ներուժի պահպանման և «ուղեղների արտահոսքի» զայման նպատակով ընդունել են բարձրորակ մասնագետների արտազադրը սահմանափակող իրավական դրույթներ: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման սահմանափակումներն այնքան էլ արդյունավետ չեն «ուղեղների արտահոսքի» կանխման համար և, որպես կանոն, պետություններին կանգնեցնում են տնտեսական ու քաղաքական առավել խորքային խնդիրների առջև: Հարցն այն է, որ «ուղեղների արտահոսքը» միանշանակ չի ենթադրում բարձրորակ մասնագետների ֆիզիկական արտազադր երկրից: Ներկա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մտավոր ռեսուրսները կուտակել կամ ներդնել այլ երկրների տնտեսական միջավայրում՝ առանց մտավոր ներուժի ֆիզիկական արտազադրի: Մյուս կողմից, «ուղեղների արտահոսքի» հետ այս կամ այն չափով բախված զարգացող երկրներից շատերը փորձում են իրավական, տնտեսական բարեփոխումների միջոցով երկրում տնտեսական-քաղաքական բարենպատ միջավայր ապահովել՝ ազգային մտավոր կապիտալի զարգացման նպատակով: Խնդրի կարգավոր-

ման հիմնական տարբերակներից մեկը վերաբերում է այսպես կոչված «ուղեղների փոխանակման» երևույթին, որի համաձայն՝ տվյալ պետությունը փորձում է ոչ թե վերադարձնել ազգային մտավոր կապիտալը, այլ օտար երկրի կամ երկրների հետ իրականացնել մտավոր ռեսուրսների փոխանակման ծրագրեր։ Սակայն, ի տարբերություն ազգային մտավոր կապիտալի, այլ երկրների հետ մտավոր ռեսուրսների փոխանակման ծրագրերը, որպես կանոն, չեն կարողանում ապահովել տնտեսությունում օտարերկրյա մտավոր ներուժի ներգրավումից ակնկալվող արդյունքները, որի հիմնական պատճառներից են օտարերկրյա մտավոր կապիտալի ներդրման բարձր վարձատրության ֆինանսական պահանջները։ Վերջին հանգամանքն առավել բնորոշ է զարգացած երկրներից դեպի զարգացող տնտեսություններ օտարերկրյա մտավոր կապիտալի ներգրավման դեպքերին։

Զարգացող երկրներում հաճախ կարելի է հանդիպել ազգային մտավոր կապիտալի ներդրման մեջ այլ տարածված մոդելի, որը միջազգային պրակտիկայում հայտնի է որպես «ուղեղների արտահանում» (*brain export*) կամ «ուղեղների շրջանառություն» (*brain circulation*)<sup>20</sup>։ Ըստ այդ մոդելի, տվյալ պետությունում ստեղծելով տեղական կրթական հիմնադրամ և ներգրավելով ազգային մասնավոր (հազվադեպ՝ նաև պետական) ֆինանսական զգալի կապիտալ՝ ազգային մտավոր ռեսուրսների մի հատված ուղարկվում է արտերկիր՝ ուսուցման, վերառուակավորման նպատակով։ Մոդելն իր առջև խնդիր է դնում ուսուցման արդյունքում արտերկրից վերադարձնել նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերած, վերապատրաստում անցած ազգային մտավոր ներուժի այդ հատվածը և այն ներդնելով

<sup>20</sup> <http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653>

տեղի տնտեսությունում՝ ստանալ ակնկալվող բարձր արդյունավետություն։ Սակայն զարգացող երկրներում այս մոդելը հիմնականում ձախողվում է, քանի որ այդ մտավոր ներուժի ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, չի վերադառնում հայրենիք, նախընտրում է իր մասնագիտական հնարավորությունները ներդնել առավել բարեկեցիկ երկրում և դրանով իսկ «փոշիացնում» է ազգային մտավոր կապիտալի կրթության ապահովման վրա ներդրված հսկայածավալ ազգային ֆինանսական և նյութական միջոցները։ «Ուղեղների շրջանառության» մոդելը կարող է արդյունավետ լինել զիսավորապես զարգացած տնտեսություններ ունեցող երկրների պարագայում, որոնք, մի կողմից, հնարավորություն են ստանում զարգացնելու արտերկրում իրենց ազգային մտավոր կապիտալը և բարձրացնելու վերջինիս վարկանիշը, մյուս կողմից՝ ամրապնդում են համագործակցությունն արտերկրի մտավոր ներուժի հետ։ Զարգացած երկրները, որտեղ գիտության և հետազոտությունների վրա ծախսվում են զգալի ֆինանսական միջոցներ, կարողանում են գրավիչ միջավայր ապահովել արտերկրից օտարազգի մտավոր կապիտալի ներկրման հարցում, որն առավել հայտնի է այսպես կոչված «ուղեղների ներհոսք» (*brain gain*) հասկացությամբ։ Արտերկրից «ուղեղների ներհոսքի» ապահովման հարցում զգալի հաջողություններ են արձանագրել Միացյալ Նահանգները, Կանադան, Եվրոպական առաջատար երկրները (Գերմանիա, Մեծ Բրիտանիա):

**ՀՀ մարդկային և ազգային մուավոր կապիտալը.** Հայաստանում *ՄԴԿ* հարցի հետ կապված՝ առկա են ինչպես քանակական, այնպես էլ որակական լուրջ խնդիրներ։ Ինչպես հաստատում են վիճակագրական տվյալները, հանրապետությունից

մարդկային ռեսուրսների և հատկապես ուղեղների կայուն արտահոսքի հիմնահարցը կրիտիկական նշանակություն ունի երկրի անվտանգության տեսանկյունից: Միևնույն ժամանակ, երկիրը կանգնած է բարձրորակ կադրային ռեսուրսների թվաքանակի նվազագույն շեմի ապահովման խնդրի առջև: Ունենալով սահմանափակ մտավոր *ՄԴԿ*՝ երկրում շեշտադրումները կատարվում են տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացման վրա, որոնք, որպես կանոն, չեն պահանջում մտավոր-ստեղծագործական ռեսուրսներ: Դա են փաստում միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների փորձագիտական գնահատականները (օրինակ, «Զախողված երկրների ինդեքսը» գեկույցը), որոնց համաձայն՝ Հայաստանում մտավոր ռեսուրսների կայուն արտահոսքին զուգահեռ, զգալի ուշադրություն է դարձվում սպասարկման և ոչ արտադրողական ծառայությունների ոլորտների զարգացմանը: Չունենալով բնական խոշոր և եկամտաբեր ռեսուրսներ՝ ՀՀ-ում էլ ավելի է շեշտադրվում *ՄԴԿ* մտավոր-ստեղծագործական պոտենցիալի զարգացման հարցը՝ որպես երկրի բարեկեցության ապահովման կարևոր երաշխիք: Նման իրավիճակում բավական սուր է դրված *ՄԴԿ* կուտակման և հետագա վերարտադրողականության հարցը, որի ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել հրատապ լուծում պահանջող համարժեք և միևնույն ժամանակ ոչ ստանդարտ կիրառական քայլեր:

Ինչպես վերը նշվեց, «ուղեղների արտահոսքն» առավել խոցելի է հատկապես զարգացող և փոքր ծավալների շուկայական տնտեսությամբ երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանը: Կարելի է ասել, որ խորհրդային կարգերի ժամանակաշրջանում Հայաստանի մտավոր ներուժն իրապես ունեցավ

թոփքային զարգացում, ինչի արդյունքում խորհրդային ամբողջ տարածքում Հայաստանը ԽՍՀՄ մտավոր-գիտական կապիտալի համընդիանուր մասնաբաժնում արձանագրում էր լավագույն ցուցանիշները՝ Ուկրաինայի և Բելառուսի կողքին: Խորհրդային կարգերի վկացումը խորքային ազդեցություն թողեց նաև Հայաստանի ազգային մտավոր կապիտալի պահպանման վրա: Սկիզբ առած դարաբաղյան պատերազմը, Թուրքիայի և Ադրբեյջանի կողմից Հայաստանի քաղաքական և տնտեսական շրջափակումն էապես խթանեցին «ուղեղների արտահոսքը» ՀՀ-ից, ինչը հանգեցրեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի:

Այսօր Հայաստանը կանգնած է ազգային մտավոր կապիտալի կուտակման և վերարտադրման լուրջ խնդրի առջև, որն արգելակում է երկրում իրականացվող քաղաքական, տնտեսական բարեփոխումների գործընթացը: Ի լրումն՝ ՀՀ գիտական ոլորտի պետական և մասնավոր ֆինանսավորման բավական ցածր ցուցանիշներն իրենց հերթին նպաստեցին երկրում մտավոր կապիտալի մեկ այլ կարևոր հատվածի դուրսմղմանը դեպի երկրի տնտեսության ոչ մտավոր-ստեղծագործական գործունեության դաշտ, հիմնականում՝ առևտրի և հանրային ծառայությունների սպասարկման ոլորտներ: Մասնագիտական գրականությունում այս երևույթն առավել հայտնի է որպես «ուղեղների ներքին արտահոսք», երբ փոխվում է ոչ թե երկիրը, այլ գործունեության բնույթը կամ միջավայրը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, երկրում գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը 2015թ. կազմում էր ընդամենը 5044 գիտաշխատող, որից 4164-ը հետազոտողներ և տեխնիկներ էին, մնացածը՝ օժանդակ

անձնակազմ: Դժվար է չհամաձայնել, որ այս ցուցանիշները, մեղմ ասած, բավական համեստ են և, ցավոք, համահունչ են երկրում գիտության զարգացման ներկա տեմպերին: Ինչպես ցույց է տալիս համեմատական վիճակագրությունը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը վերջին տարիներին նվազման միտում է արձանագրել: Եթե 2011թ. ոլորտում ներգրավված էր շուրջ 5718 գիտաշխատող, իսկ 2013թ.<sup>21</sup>՝ 5230, ապա 2015թ., ինչպես արդեն նշվեց, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը հաշվվում էր 5044: Նշենք նաև, որ 2014թ. գրանցվել է ցուցանիշի շեշտակի աճ՝ 5627, որը կտրուկ նվազել է արդեն հաջորդ տարվա արդյունքներում<sup>21</sup>: 2016թ. տվյալներով, նրանց թվաքանակը նվազեց՝ կազմելով 4881 աշխատակից:

2009թ. իրականացված *Gallup* սոցիոլոգիական հարցման արդյունքների համաձայն, արտերկրում ժամանակավոր աշխատանքի, ուսուցման կամ մշտական բնակություն հաստատելու ցանկություն հայտնած քաղաքացիների ամենաբարձր ցուցանիշները ԱՊՀ տարածքում արձանագրվել են Հայաստանի պարագայում: ՀՀ-ի հետ մասսամբ համարելի են Մոլդովայի արդյունքները: Այսպես, արտերկրում ժամանակավոր աշխատանք գտնելու համար արտերկիր տեղափոխվելու պատրաստակամություն է հայտնել Հայաստանի բնակչության 44%-ը, ուսուցման նպատակով՝ բնակչության 39%-ը: Հնարավորության դեպքում արտերկրում մշտապես բնակվելու ցանկություն է հայտնել ՀՀ բնակչության 39%-ը<sup>22</sup>:

<sup>21</sup> <http://armstat.am/file/doc/99499403.pdf>

<sup>22</sup> <http://www.gallup.com/poll/141746/million-cis-migratetemporarily-work-study.aspx>

Տարբեր երկրներ հասարակության մտավոր ռեսուրսների գարգացման գործում ներգրավել են նաև իրենց սփյուռքի մտավոր հնարավորությունները։ Հայաստանն աշխարհի այն քիչ երկրներից է, որն ունի բավական ազդեցիկ սփյուռք։ Խորհրդային կարգերի փլուզումից հետո ՀՀ-ում ազգային մտավոր կապիտալի գարգացման հարցում երկրի իշխանությունները տարբեր ծրագրերի շրջանակներում փորձել են ներդնել նաև հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսները։ Սփյուռքի մտավոր ներուժը նույնպես հայության ազգային մտավոր կապիտալի կարևորագույն բաղկացուցիչ մասն է։ Հայաստանի խնդիրն է՝ կարողանալ երկրում ձևավորել բարենպաստ միջավայր հայության մտավոր կապիտալի ներհոսքի ապահովման և արդյունավետ ներդրման գործընթացի համար։ Մինչև վերջին տասնամյակներն առհասարակ միջազգային պրակտիկայում, որպես կանոն, սփյուռք-պետություն փոխհարաբերությունների համատեքստում առաջնային նշանակություն է տրվել ֆինանսական ազգային կապիտալի կուտակմանը՝ որպես երկրի տնտեսության զարգացման կարևոր նախապայման։ Վերջին տասնամյակներում, պայմանավորված նաև գիտատեխնոլոգիական շեշտակի առաջընթացի տեմպերով, աստիճանաբար առաջնակարգ նշանակություն է ստանում սփյուռքի մտավոր կապիտալը՝ որպես տվյալ պետության զարգացման գրավական։ Այս տեսանկյունից, հայկական սփյուռքը բացառություն չէ, քանի որ դեռևս մեծ նշանակություն ենք տալիս հայկական համայնքների ոչ այնքան մտավոր, որքան ֆինանսական կապիտալի ներգրավմանը Հայաստանի տնտեսության զարգացման գործին։ Պետք է նկատել, որ թեև հայաստանյան իրականությունում հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսների ներդրման գործընթացը ֆինանսական կապի-

տալի համադրությամբ անհամեմատ բարդ է և խորքային, սակայն դրա իրացման պարագայում այն կարող է ենթադրել ակնկալվող արդյունքների բարձր արդյունավետություն և երկարաժամկետ հեռանկարներ:

Հիմնական հարցերից է նաև այն, որ թեև հայկական սփյուռքը տիրապետում է զգալի մտավոր կապիտալի, սակայն այսօր բավական բարդ է սահմանել կամ հստակեցնել՝ այդ մտավոր կապիտալի ո՞ր մասն է համարվում ազգային, որը՝ ոչ Իհարկե, առաջին հայացքից և, թերևս, թյուրիմացաբար կարելի է հաստատել, որ ազգային մտավոր կապիտալի այդ հատվածի կրողները մեր հայրենակիցներն են, հետևաբար՝ կապիտալը նույնպես հայկական է: Այն դեպքում, եթե այստեղ առաջնային խնդիրը պարզելն է, թե որքանով է հայկական սփյուռքի մտավոր կապիտալը մասնակցում Հայաստանի և համայն հայության ազգային մտավոր կապիտալի կուտակման և զարգացման գործին: Ցավոք, պետք է արձանագրել, որ սփյուռքահայության մտավոր կապիտալի մեծ հատվածը ներդրվում է բնակության երկրի տնտեսություններում, և բավական քիչ ծավալն է բաժին հասնում Հայաստանի ու հայության ազգային կապիտալին:

Սակայն այս հարցում կա նաև հուսադրող գործոն, այն է՝ ինչպես արդեն նշեցինք, մերօրյա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացը մեծ հնարավորություններ է տալիս դեպի Հայաստան արտերկրի հայկական համայնքների մտավոր կապիտալի ներհոսքի ապահովման հարցում՝ առանց այդ մտավոր կապիտալը կրողների ֆիզիկական ներգաղթի: Այս ուղղությամբ անհրաժեշտ հնարավոր գործնական քայլերից պետք է համարել հայաստանյան և արտերկրի հայկական համայնքների միջև գիտատեխնոլոգիական, կրթա-

կան համատեղ միջնաժամկետ, երկարաժամկետ ծրագրերի (հեռահար ուսուցում, ներդրումներ SS ոլորտում և այլն) նախաձեռնումը, որը կշահազրպի առաջին հերթին սփյուռքի մեր հայրենակիցներին՝ իրենց գիտական, կրթական կապիտալը մասնակիորեն ուղղել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

*ՄղԿ վերաբերյալ վերոնշյալ կարևոր գործոնների համատեքստում ակտուալ պետք է համարել տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումներում ներգրավված Հայաստանի գիտակրթական համակարգի համապատասխան կոորդինատների հետագա ձշգրտումը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ գլոբալ հարթությունում։ Այդ խնդիրները կդիտարկվեն հաջորդ ենթագլուխներում։*

#### 2.4 Ենթագլուխում օգտագործված աղյուրներ

1. *Теодор Шульц*, [http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17\\_schultz.pdf](http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17_schultz.pdf)
2. *Р.И. Капелюшников*, Теория человеческого капитала, <http://seinst.ru/page289/>
3. *Ю.Корчагин*, Российский человеческий капитал, <https://www.hse.ru/data/2011/04/22/1210713272/Korchagin%20Russian%20Human%20Capital%20Assets.pdf>
4. *В.Т. Смирнов*, Человеческий капитал, [http://gtmarket.ru/files/article/5282/Human\\_Capital\\_The\\_Content\\_and\\_Types\\_Evaluation\\_and\\_Stimulation.pdf](http://gtmarket.ru/files/article/5282/Human_Capital_The_Content_and_Types_Evaluation_and_Stimulation.pdf)
5. Industrial Research Institute. 2016 Global R&D Funding Forecast, <http://www.iriweb.org>
6. Утечка мозгов как глобальное явление, <http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653>
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, <http://armstat.am/file/doc/99499403.pdf>
8. *Neli Esipova and Julie Ray*, <http://www.gallup.com/poll/141746/million-cis-migratetemporarily-work-study.aspx>

## 2.5 «Գլոբալ նորարարության ինդեքսը» 2014-2017թթ.

2014թ. հրապարակվեց Քորնել համալսարանի (*Cornell University*), *INSEAD* գործարարության դպրոցի և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (*The World Intellectual Property Organization*) «Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» գեկույցը: Զեկույցում կարևորվում էն համաշխարհային նորարարության պոտենցիալն ու ընթացիկ ձեռքբերումները՝ որպես տարբեր երկրների տնտեսությունների շարժիչ ուժ և մարդկության բարեկեցության ապահովման գրավական: Ինչպես վստահեցնում են զեկույցի կազմակերպիչներն ու հեղինակները, հետազոտության կանխատեսումները և գնահատականները հնարավորություն են տալիս առավել խորքային մոտեցումներով ընկալել ներկայիս համաշխարհային նորարարության միտումներն ու հեռանկարները: Զեկույցի նպատակն է աջակցել տարբեր երկրների քաղաքական որոշումներ կայացնող գործիչներին և գործարար շրջանակների ղեկավարներին առավել ձկուն և համատեղ քաղաքականություն որդեգրել համաշխարհային նորարարության պոտենցիալի զարգացման ուղղությամբ<sup>23</sup>:

«Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» գեկույցը տալիս է աշխարհի շուրջ 143 երկրների տնտեսությունների նորարարական պոտենցիալի վարկանիշը: Զեկույցի մեթոդաբանությունում կիրառվել է 81 չափորոշիչ: Երկրների նորարարության վարկանիշավորումն իրականացվում է 0-100 միավորների սանդղակի համաձայն, որտեղ բարձրագույն արդյունքը բնորոշում է տվյալ երկրի նորարարության բարձր պոտենցիալը, ցածրագույն միավորը՝ երկրի նորարարական պոտենցիալի ցածր ցուցանիշը:

<sup>23</sup> The Global Innovation Index 2014. <http://wwwuis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>

«Գլոբալ նորարարության ինդեքսը» զեկույցում երկրների վարկանիշավորման համար ընտրված ցուցիչները համախմբված են 7 խմբում, որոնք ներկայացված են ստորև.

1. Ինստիտուտներ
2. Մարդկային կապիտալ և հետազոտություններ
3. Ենթակառուցվածքներ
4. Շուկայի արդյունավետություն
5. Գործարար միջավայրի արդյունավետություն
6. Գիտական և տեխնոլոգիական արտադրանք
7. Ստեղծագործական արտադրանք

«Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.» վարկանիշային հետազոտությունում լավագույն ցուցանիշը Շվեյցարիայինն է՝ 64,78, հաջորդը Մեծ Բրիտանիան և Շվեյցարիան են: Միացյալ Նահանգները զբաղեցնում է 6-րդ հորիզոնականը՝ 1 դիրքային միավորով առաջ անցնելով Սինգապուրից: Լավագույն տասնյակը եզրափակում է Հոնկոնգը՝ 56,82 ամփոփ միավոր:

ԱՊՀ անդամ երկրներից առաջատարը Մոլդովան է՝ 43-րդ հորիզոնական, 40,74 ամփոփ միավոր: Ի դեպ, Մոլդովան նորարարության արդյունավետության ցուցով զեկույցի 143 պետությունների շարքում լավագույն արդյունքն արձանագրած երկիրն է՝ 1,07 միավոր (տե՛ս *Աղյուսակ 1*): ԱՊՀ երկրներից բարձր են նաև Ռուսաստանի (49-րդ դիրք), Բելառուսի (58) և Ուկրաինայի (63) ցուցանիշները: ԱՊՀ տարածքում Հայաստանը զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը, 143 երկրների ցուցակում՝ 65-րդը (36,06 ամփոփ միավոր): Նորարարության արդյունավետության ցուցով Հայաստանն արձանագրել է բավական բարձր արդյունք՝ 0,83 միավոր, 143 երկրների շարքում՝ 28-րդ դիրք: Ի

**Աղյուսակ 1****Գլոբալ նորարարության ինդեքսը 2014թ.<sup>24</sup>**

Դիրքը	Երկիրը	Ամփոփ միավորը (0-100)	Արդյունավետության ցուցիչը
<b>Առաջատար երկրներ</b>			
1	Շվեյցարիա	64,78	0,95
2	Մեծ Բրիտանիա	62,37	0,83
6	ԱՄՆ	60,09	0,77
15	Իսրայել	55,46	0,79
<b>ԱՊՀ երկրներ</b>			
43	Մոլդովա	40,74	1,07
49	Ղուսաստան	39,14	0,79
58	Բելառուս	37,10	0,83
63	Ուկրաինա	36,26	0,90
65	Հայաստան	36,06	0,83
79	Ղազախստան	32,75	0,59
101	Ադրբեյչան	29,60	0,58
112	Ղրղզստան	27,75	0,46
128	Ուզբեկստան	25,20	0,61
137	Տաջիկստան	23,73	0,45
<b>Տարածաշրջանային երկրներ</b>			
54	Թուրքիա	38,20	0,93
74	Վրաստան	34,53	0,68
120	Իրան	26,14	0,57

դեպ, Հայաստանը նորարարության պոտենցիալի վարկանիշով, ըստ գեկույցի զնահատականների, լավագույնն է Հարավային Կովկասի երկրների շարքում: Վրաստանը 34,53 ամփոփ միավորով զբաղեցնում է 74-րդ դիրքը: Տարածաշրջանի երկրներից

<sup>24</sup> <http://www.uis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>

ցածրագույն արդյունքն Աղբբեջանին է՝ 143 պետությունների ցուցակում՝ 101-րդ հորիզոնական: Հնդ որում, նորարարության արդյունավետության ցուցչով նույնպես Հայաստանն առաջատարն է Հարավային Կովկասում<sup>25</sup>:

*Աղյուսակ 2*  
*Գլոբալ նորարարության ինդեքսը 2015-2016թթ.,*  
*Հարավային Կովկաս<sup>26</sup>*

Դիրքը	Երկիրը	Ամփոփ միավորը (0-100)	Արդյունավետ. ցուցիչը
<b>2015թ. (141 երկիր)</b>			
61	Հայաստան	37,31	0,79
93	Աղբբեջան	30,10	0,60
73	Վրաստան	33,83	0,62
Դիրքը	Երկիրը	Ամփոփ միավորը (0-100)	Արդյունավետ. ցուցիչը
<b>2016թ. (128 երկիր)</b>			
60	Հայաստան	35,14	0,83
85	Աղբբեջան	29,64	0,54
64	Վրաստան	33,86	0,65

Գլոբալ նորարարության ինդեքսը 2015-2016թթ. գեկույցներում Հարավային Կովկասի երեք երկրների դեպքում էլ նկատվում է դիրքային վարկանիշային միավորների աստիճանական աճ (*տե՛ս Աղյուսակ 2*): Հայաստանն իր դիրքային միավորով առաջընթաց է ունեցել 2014թ. համեմատ՝ զքաղեցնելով 61 (2015թ.) և 60-րդ (2016թ.) դիրքերը: Դիրքային միավորի ցուցով

<sup>25</sup>The Global Innovation Index 2014. <http://www.uis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>

<sup>26</sup><https://www.globalinnovationindex.org/userfiles/file/reportpdf/gii-2015-v5.pdf>

աստիճանական բարելավում նկատվում է նաև Աղրբեջանի վարկանիշավորման արդյունքներում. եթե 2014թ. Աղրբեջանը գտնվում էր 101-րդ դիրքում, ապա 2015թ. զբաղեցնում էր 93-րդ հորիզոնականը, իսկ 2016թ.՝ 85-րդ դիրքը: Վրաստանը 2014թ. համեմատ 2015թ. զեկույցում ունեցել է 1 դիրքային միավորի աճ (74-ից 73-րդ դիրք), 2016թ. զբաղեցնում էր արդեն 64-րդ դիրքը:

*Աղյուսակ 3  
Գլոբալ նորարարության ինդեքսը 2017թ. (127 երկիր) <sup>27</sup>*

Դիրքը	Երկիրը	Ամփոփ միավորը (0-100)	Արդյունավետու- թյան ցուցիչը
ԱՊՀ երկրներ			
45	Ռուսաստան	38,76	0,61
50	Ուկրաինա	37,62	0,83
54	Մոլդովա	36,84	0,78
59	Հայաստան	35,65	0,80
78	Ղազախստան	31,50	0,46
82	Աղրբեջան	30,58	0,50
88	Բելառուս	29,98	0,39
94	Տաջիկստան	28,16	0,59
95	Ղրղզստան	28,01	0,47
	Ուզբեկստան	-	-
Տարածաշրջանային երկրներ			
43	Թուրքիա	38,90	0,84
68	Վրաստան	34,39	0,63
75	Իրան	32,09	0,80

Ինչպես հետևում է *Աղյուսակ 3*-ից, «Գլոբալ նորարարության ինդեքսը 2017թ.» զեկույցում Հայաստանը բարելավել է իր

<sup>27</sup> <https://www.insead.edu/sites/default/files/assets/dept/globalindices/docs/GII-2017-report.pdf>

վարկանիշային արդյունքը 2016թ. համեմատ՝ 1 դիրքային միավորով զբաղեցնելով 59-րդ դիրքը, Աղբբեջանը նույնպես ունեցել է դիրքային միավորի աճ՝ զբաղեցնելով 82-րդ հորիզոնականը: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 2016թ. համեմատ վերջինս ունեցել է դիրքային միավորի նվազում և զբաղեցրել է 68-րդ վարկանիշային դիրքը՝ 2016թ. գեկույցում 64-րդ դիրքի փոխարեն:

ԱՊՀ երկրների շարքում Հայաստանն ամփոփում է լավագույն քառյակը՝ զիջելով ՌԴ-ին, Ուկրաինային և Մոլդովային:

#### *Աղյուսակ 4*

*Գլորալ նորարարության ինդեքսը 2017թ., Հարավային Կովկասի երկրները՝ ըստ հիմնական ենթացուցային խմբերի հաշվարկի<sup>28</sup>*

Ենթախմբեր	Հայաստան		Աղբբեջան		Վրաստան	
	Ընդունված	ԺմՎՀ	Ընդունված	ԺմՎՀ	Ընդունված	ԺմՎՀ
Ինտիտուտներ	61,9	63	55,9	74	68,6	47
Մարդկ. կապիտալ/ հետազոտություններ	19,4	103	17,9	108	23,6	89
Ենթակառուցվածքներ	39	91	50,5	50	43,8	74
Շուկայի արդյունավետ.	50,5	46	55,3	23	49,2	53
Գործարար միջավայր	27,7	85	23,8	110	25,6	101
Գիտատեխնոլոգիական արտադրանք	25,7	50	15,4	104	23,9	54
Ստեղծագործական արտադրանք	37,5	44	25,5	87	29,3	69

<sup>28</sup>Մեթոդաբանությունը հիմնվում է 0-100 սանդղակի հաշվարկի վրա, որտեղ որքան բարձր է տվյալ պետության վարկանիշային միավորը, այնքան բարձր է դրա ամփոփ վարկանիշը:

Ենթացուցիչների խմբերից (*առ և Աղյուսակ 4*), ըստ զբաղեցրած դիրքի հաշվարկի, 2017թ. գեկույցում Հայաստանը լավագույն արդյունքն արձանագրել է ստեղծագործական արտադրանքի (44-րդ դիրք/37,5 միավոր) և շուկայի արդյունավետության (46-րդ դիրք/50,5 միավոր) ոլորտներում, ցածրագույն միավորը՝ մարդկային կապիտալ/հետազոտություններ խմբով (103-րդ դիրք/19,4 միավոր): Աղբբեջանի պարագայում բարձրագույն վարկանիշը գրանցվել է շուկայի արդյունավետության ոլորտում (23/55,3), ցածրագույն ցուցանիշները՝ գործարար միջավայրի և մարդկային կապիտալ/հետազոտություններ խմբերում: Վրաստանի դեպքում ամենալավ արդյունքը եղել է ինստիտուտների ցուցով (47-րդ դիրք), ցածրագույն արդյունքը՝ գործարար միջավայրի դեպքում:

## 2.5 Էնթազլյում օգտագործված աղյուրներ

1. The Global Innovation Index 2014. <http://www.uis.unesco.org/Library/Documents/global-innovation-index-2014-human-factor-in-innovation-en.pdf>
2. INSEAD The Business School for the World <https://www.insead.edu/sites/default/files/assets/dept/globalindices/docs/GII-2017-report.pdf>

## **2.6 Գիտատեխնոլոգիական ոլորտում ընթացող գործունեության վարկանիշային գեկույցը 2014թ. փորձագիտական կառույցների կողմից**

**ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի գիտատեխնիկական գործունեության վարկանիշային գեկույցը 2014թ.** Այս վարկանիշային ուսումնասիրությունն իրականացրած ԱՄՆ ազգային գիտական հիմնադրամը (*US National Science Foundation*) ամերիկյան կառավարությանն առընթեր անկախ գործակալություն է, որը գործունեություն է ծավալում գիտության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտում՝ ժամանակավոր դրամաշնորհներ հատկացնելով անհատ կամ խմբային հետազոտողներին: Հիմնադրամի բյուջեի զգալի մասը (ավելի քան 75%) ծախսվում է գիտական հետազոտությունների աջակցման վրա: Ազգային հիմնադրամի անմիջական կառավարումն իրականացնում են հիմնադրամի գործադիր դեկավարության անդամները՝ տնօրենի գլխավորությամբ, որոնք նշանակվում են ԱՄՆ նախագահի և տվյալ պաշտոնին են հաստատվում ԱՄՆ Սենատի կողմից: 2014թ. վիճակագրությամբ, հիմնադրամի տարեկան բյուջեն կազմել է \$7,2 մլրդ:

Գիտատեխնիկական գործունեության վարկանիշային գեկույցի (*Scientific and Technical Activity*) մեթոդաբանությունը հիմնվում է գիտական գրախոսվող հրատարակություններում հրապարակված և գիտական հղումների ինդեքսի համակարգում (*Science Citation Index (SCI)* և *Social Sciences Citation Index - SSCI*) ընդգրկված գիտահետազոտական հոդվածների վարկանիշավորման քանակական հաշվարկի վրա: Վարկանիշային գեկույցի պատրաստման վերաբերյալ տեղեկատվությունը վերցվում է *Thomson Reuters* ընկերության, ԱՄՆ ազգային գիտական հիմնա-

դրամի և միջազգային գիտական կազմակերպությունների գիտական վիճակագրության տվյալների շտեմարանից: Աշխարհի տարբեր երկրների գիտահետազոտական ակտիվության վարկանիշավորման արդյունքները հրատարակվում են ԱՄՆ ազգային գիտական հիմնադրամի հատուկ հաշվետվության տեսքով՝ *Science and Engineering Indicators* խորագրով: 2014թ. վարկանիշային զեկույցի տեղեկատվությունը հիմնվում է 2011թ. վիճակագրության վրա, որտեղ դիտարկվել են 195 երկրներ:

**Աղյուսակ 1-ում** ներկայացվում են տվյալներ Հայաստանի և հարակից երկրների, ինչպես նաև մեզ հետաքրքրող երկրների վարկանիշային ցուցանիշների վերաբերյալ: Գիտահետազոտական ակտիվության վարկանիշով աշխարհում լավագույն արդյունքը, ըստ հիմնադրամի զեկույցի տվյալների, ԱՄՆ-ինն է՝ 212.394,2 հոդված: Նրան անմիջապես հաջորդում են Չինաստանն ու Ճապոնիան՝ համապատասխանաբար 89.894,4 և 47.105,7:

ԱՊՀ երկրների ցանկում բարձր ցուցանիշներ են արձանագրել ՌԴ-ն, Ռուսաստանը, որոնց հաջորդում է Հայաստանը: Ի դեպ, վերը հիշատակված երկրների վարկանիշների հետ Հայաստանի վարկանիշը համեմատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, առաջին հերթին, Հայաստանի և այդ երկրների բնակչության թվաքանակների տարբերության հանգամանքը (խոսքը հատկապես վերաբերում է ՌԴ-ին և Ռուսաստանին, որոնց բնակչությունն անհամեմատ գերազանցում է ՀՀ բնակչության թվաքանակը): Ասել է թե՝ այլոց նկատմամբ տվյալ երկրի բնակչության քանակական առավելությունն ուղղակիորեն փոխապայմանավորված է այդ պետության գիտահետազոտական պոտենցիալի քանակական (սակայն ոչ միշտ՝ որակական) բաղադրիչով: Ուստի, եթե հիմնադրամի պատրաստած զեկույցի վարկանիշա-

վորման մեթոդաբանությունում, որը հիմնվում է վարկանիշավորման քանակական գործոնի վրա, առաջնորդվելին առանձնացված երկրների բնակչության թվաքանակների քանակական տարբերությունների հաշվարկով, ապա ՀՀ-ի դեպքում, թերևս, կունենայինք անհամեմատ ավելի բարձր վարկանիշային արդյունք:

### Աղյուսակ 1

#### Վարկանիշավորումն ըստ զիտատեխնիկական գործունեության, 2014թ.<sup>29</sup>

Դիրքը	Երկիրը	Հողվածների քանակը
	Ընդամենը (ողջ աշխարհում)	827 704,9
1.	ԱՄՆ	212 394,2
2.	Չինաստան	89 894,4
3.	Ճապոնիա	47 105,7
4.	Գերմանիա	46 258,8
23.	Իսրայել	6 096,0
Հայաստան և հարակից երկրներ (նաև ԱՊՀ)		
15.	ՈՒ	14 150,9
19.	Թուրքիա	8 328,4
20.	Իրան	8 175,5
42.	Ուկրաինա	1726,9
60.	Բելառուս	341,6
75.	Հայաստան	184,6
80.	Ադրբեյջան	148,7
82.	Ուզբեկստան	140,9
86.	Վրաստան	117,6
91.	Ղազախստան	87,4
94.	Մոլդովա	76,2
128.	Տաջիկստան	18,4
131.	Ղրղզստան	17,2
179.	Թուրքմենստան	0,5


<sup>29</sup> <http://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity/info>

Ինչևէ, Հարավային Կովկասի երկրներից լավագույն արդյունքը Հայաստանին է՝ 184,6 ցուցանիշ, 75-րդ դիրք: Հայաստանին հաջորդում է Աղբքեջանը՝ 80-րդ դիրք (148,7 ցուցանիշ): Վրաստանն արձանագրել է Հարավային Կովկասի ցածրագույն արդյունքը (117,6) և զբաղեցրել 86-րդ հորիզոնականը:

Հայաստանի հարակից երկրներից բավական բարձր են եղել Թուրքիայի և Իրանի ցուցանիշները, որոնք զեկուցում ներառված 195 երկրների շարքում համապատասխանաբար զբաղեցրել են 19 և 20-րդ դիրքերը:

#### *Գծապատկեր 1*

*Հարավային Կովկասի երկրների գիտատեխնիկական գործունեության վարկանիշավորումը 2014թ. ըստ երկրի դիրքի հաշվարկի, որտեղ որքան ցածր է երկրի դիրքը, այնքան բարձր է նրա վարկանիշը*




Ըստ երկրների համեմատության՝ առկա վարկանիշային տեղեկատվությունն առավել մատչելի ընկալելու համար մեր կողմից *US National Science Foundation*-ի տվյալները մշակվել և ներկայացվել են զծապատկերների տեսքով: *Գծապատկեր 1*-ում ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է Հարավային Կովկասի երկրների վարկանիշային համեմատականին, իսկ

**Գծապատկեր 2-ում** ներկայացված է ԱՊՀ անդամ երկրների համապատասխան վիճակագրությունը: Նշենք նաև, որ գրաֆիկական պատկերներում երկրների վարկանիշների համեմատությունն իրականացվել է ըստ զեկույցում տվյալ երկրի գրադեգրած դիրքային միավորի հաշվարկի:

### Գծապատկեր 2

ԱՊՀ երկրների զիտատեխնիկական գործունեության  
վարկանիշավորումը 2014թ., ըստ երկրի դիրքի հաշվարկի, որտեղ  
որքան ցածր է երկրի դիրքը, այնքան բարձր է նրա վարկանիշը



**Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն.** 2006թ. «Ունտ» հեղինակավոր ուղեղային կենտրոնը հրապարակեց «Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն 2020թ.» (*Global Technology Revolution 2020*) հետազոտությունը՝ նվիրված աշխարհում գիտության և տեխնոլոգիաների զարգացումը կանխատեսող հեռանկարներին մինչև 2020թ.<sup>30</sup>: Այս ակտուալ և կարևոր հետազո-

<sup>30</sup> RAND Corporation. [http://www.rand.org/pubs/technical\\_reports/TR303.html](http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html)

տուրքունը հովանավորել է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհուրդը (*Nation Intelligence Council-NIC*), որը միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական հետազոտությունների և վերլուծությունների կենտրոն է և գործում է ԱՄՆ Հետախուզության հանրույթի (*United States Intelligence Community-IC*)<sup>31</sup> ենթակայության ներքո: Հետազոտական նախագծի իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև ԱՄՆ Հետախուզության նորարարական տեխնոլոգիական կենտրոնի (*Intelligence Technology Innovation Center*) և ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի կողմից:

«Ռենդ» կորպորացիայի փորձագետների և վերլուծաբանների գնահատականներով, մինչև 2020թ. առանձնացվել է գիտատեխնոլոգիական զարգացման 16 ուղղություն, որոնցից են՝ մատչելի արևային Էներգետիկա, հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, գենետիկորեն մոդիֆիկացված բույսեր, ջրի մաքրման մեթոդներ, էկոլոգիապես մաքուր սննդի արդյունաբերություն, հիբրիդային ավտոմեքենաներ և այլն<sup>32</sup>:

Փորձագիտական կանխատեսումների համաձայն, մինչև 2020թ. նախատեսվում է համաշխարհային գիտատեխնոլոգիական առաջընթացի տեմպերի աճ, որտեղ աչքի են ընկնելու Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի, ինչպես նաև Արևելյան Ասիայի երկրները: Նշվում է, որ գիտատեխնոլոգիական շոշափելի առաջընթաց են արձանագրելու Չինաստանը, Հնդկաստանը և Արևելյան Եվրոպայի երկրները:

<sup>31</sup> ԱՄՆ Հետախուզության հանրույթը ներառում է տեղեկատվության հավաքմամբ զբաղվող և հետախուզական գործունեություն իրականացնող ԱՄՆ 17 առանձին կառավարական հաստատություն:

<sup>32</sup> RAND Corporation. [http://www.rand.org/pubs/technical\\_reports/TR303.html](http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html)

Կազմվել է նաև աշխարհի երկրների ժամանակակից գիտատեխնոլոգիական պոտենցիալի վարկանիշը՝ 1992-2004թթ. վիճակագրական տեղեկատվության հիման վրա: Վարկանիշային այս հետազոտության (*Index of Science and Technology Capacity*) մեթոդաբանությունում կիրառվել է 7 չափորոշիչ, որոնցից են՝ ՀԱԱ-ն (Համախառն ազգային արդյունք) մեկ շնչի հաշվով, 1 մլն բնակչության հաշվով գիտահետազոտական ոլորտի գիտաշխատողների և ինժեներների թվաքանակը, գիտության և տեխնոլոգիաների թեմայով հրատարակված գիտական հոդվածների քանակը, գիտահետազոտական ոլորտին ֆինանսական հատկացումները ՀԱԱ տոկոսային հարաբերակցությամբ, գիտահետազոտական ինստիտուտների թվաքանակը և այլն:

Վարկանիշային հետազոտությունում լավագույն արդյունքը ԱՄՆ-ին է՝ 5,03 ամփոփ միավոր, հաջորդում են Ճապոնիան (3,08 միավոր) և Գերմանիան (2,12): Լավագույն տասնյակը եղափակում է Իսրայելը՝ 1,53 միավոր: ԱՊՀ երկրներից առաջատարը Ռուսաստանն է, որը 0,89 ամփոփ միավորով զբաղեցնում է վարկանիշային ցուցակի 19-րդ հորիզոնականը: Ռուսաստանին հաջորդում են Ռուսաստան և Բելառուսը, որոնք համապատասխանաբար գտնվում են 29-ի և 30-րդ դիրքերում: Ձեկույցի գնահատականներով, բարձր են եղել նաև Աղրբեջանի ցուցանիշները, որը զբաղեցրել է 37-րդ հորիզոնականը: ԱՊՀ անդամ երկրներից Աղրբեջանին հաջորդում են Ռումինիանը (47), Մոլդովան (52): Հայաստանը զբաղեցրել է 55-րդ դիրքը՝ 1 միավորով զիջելով Թուրքիային (54): Իրանն աղյուսակի 60-րդ դիրքում է: Բավական ցածր էր Ղազախստանի ցուցանիշը՝ 82-րդ դիրքը: Տարածաշրջանի երկրներից ցածրագույն ցուցանիշը Վրաստանին է եղել՝ 97-րդ հորիզոնական:

**Հետևողուններ.** Վերը հիշատակված միջազգային վարկանիշային գեկուցներում և փորձագիտական գնահատականներում Հայաստանն առաջատար դիրքեր է զբաղեցնում ԱՊՀ երկրների շարքում՝ իր արդյունքներով զիսավորելով հարավկովկայան երկրների վարկանիշային ցուցակը։ Եվ նման բարձր ցուցանիշներ Հայաստանը գրանցում է այլ պետությունների հետ (ՌԴ, Ուկրաինա, Աղրբեջան) բնակչության անհամարքելի քանակական տարբերություններով և ֆինանսական կապիտալի անհամեմատ քիչ ծավալներով։ Կարծում ենք, որ Հայաստանն ունի մարդկային-մտավոր կապիտալի ներգրավման և կուտակման բավական լուրջ կարողություններ, սակայն դրանց իրագործման ուղիներն այսօր այնքան էլ արդյունավետ չեն։

## 2.6 Ենթագլխում օգտագործված աղբյուրներ

1. RAND Corporation. The Global Technology Revolution 2020, In-Depth Analyses [http://www.rand.org/pubs/technical\\_reports/TR303.html](http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html)
2. RAND Corporation. The Global Technology Revolution 2020, Executive Summary <http://www.rand.org/pubs/monographs/MG475.html>
3. Рейтинг стран мира по уровню научно-исследовательской активности, <http://gtmarket.ru/ratings/scientific-and-technical-activity/info>

## **2.7 Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեության վիճակագրությունը**

Այս ենթագլխում ներկայացվում են 2002-2018թթ. հարավկովկայան տարածաշրջանի երկրների գիտության ոլորտին առնչվող քանակական վիճակագրության համեմատական վերլուծության արդյունքները, որոնք հիմնվում են գերազանցապես հարավկովկայան երկրների ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների վրա: Ժամանակագրական տեսանկյունից ուսումնասիրությունը բաժանվում է երկու հիմնական մասերի. առաջին հատվածում տեղ են գտել 2002-2007թթ. ժամանակաշրջանին վերաբերող վիճակագրական տվյալները (հարավկովկայան երեք երկրների վիճակագրական համեմատականը), իսկ երկրորդ մասը վերաբերում է վերջին տասը տարիներին (2008-2018թթ.) արձանագրված տեղեկատվությանը (միայն ՀՀ և Ադրբեյջանի վիճակագրական համեմատականը):

Ուսումնասիրության նման ժամանակագրական տարանցատման նպատակահարմարությունը պայմանավորված է առկա տեղեկատվության հասանելիության անլիարժեքությամբ: Խնդիրն այն է, որ ի տարբերություն Հայաստանի և Ադրբեյջանի, Վրաստանի ազգային վիճակագրական բյուրոյի էլեկտրոնային կայքում գրեթե հիմնովին բացակայում են գիտությանը վերաբերող վիճակագրական տվյալները: Մնում է միայն ենթադրել, որ այս միտումը, թերևս, պայմանավորված է Մ.Սահկազիլու իշխանության տարիներին կատարված «բարեփոխումներով»: Չպետք է բացառել, որ Վրաստանի Ազգային վիճակագրական բյուրոյի էլեկտրոնային կայքում գիտության ոլորտին վերաբերող տեղեկատվության բացակայությունը խոսում է արձանագրվող «չարդարացված» ցուցանիշների մասին: Ի դեպ, հավելենք, որ

եթե նախկինում Վրաստանի Ազգային վիճակագրական բյուրոյում գիտակրթական բաժինը ներկայացվում էր «Կրթություն և գիտություն» խորագրի տակ, ինչպես նաև դա պահպանվել է Աղքադաշտի և Հայաստանի համապատասխան վիճակագրական ծառայությունների տարեգրքերի պարագայում, ապա վերջին տարիներին ոլորտը ներկայացվում է «Կրթություն և մշակույթ» խորագրով, որտեղից դուրս է մնացել «գիտություն» հատվածը: Լավագույն դեպքում, «Կրթություն և մշակույթ» բաժնում տվյալներ կան սույն բուհական համակարգում պրոֆեսորադասախոսական կազմի թվաքանակի վերաբերյալ: Մենք, բարեբախտաբար, իրականացրել և պահպանել ենք նմանատիպ հետազոտությունները, որտեղ առկա են Հարավային Կովկասի երկրների, այդ թվում և Վրաստանի՝ 2002-2007թթ. գիտության վերաբերյալ համեմատական վիճակագրական տվյալները: Ուստի, հետազոտությունում առանձնացված երկրների վերաբերյալ ամբողջական պատկեր և համեմատելի տեղեկատվություն ներկայացնելու առումով նպատակահարմար ենք համարել ներառել նշյալ ժամանակահատվածին վերաբերող վիճակագրական տվյալները ևս:

Սույն վիճակագրությունը լուսաբանում է զյուսավորապես քանակական վերլուծության հարցերը և չի արտացոլում նշյալ երկրներում գիտության որակական առանձնահատկությունները:

**Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեության վիճակագրությունը 2003-2007թթ.<sup>33</sup>** Ինչպես վերը նշեցինք, նախ անդրադառնանք 2003-2007թթ. հարավկովկասյան երկրների գիտության քանակական վիճակագրությանը՝ հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակեր-

<sup>33</sup> Վիճակագրությունը իմանված է երեք երկրների ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների վրա:

պուլյունների և դրանցում ներգրավված անձնակազմին, հետագոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերին, գիտատեխնիկական աշխատանքների ծավալին վերաբերող վիճակագրական տվյալներին (*տե՛ս՝ Աղյուսակ 1*).

### Աղյուսակ 1

*Հետազոտություններ և մշակումներ կատարող  
կազմակերպությունների քանակն ըստ երկրների<sup>34</sup>, 2002-2007թթ.*

Երկիրը	2002 <sup>35</sup>	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	96	99	93	102	101	89
Աղրբեջան	131	138	139	146	145	146
Վրաստան	99	97	97	80	-	-

Աղյուսակից հստակ երևում է, որ հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների թվաքանակով հիմնականում համեմատելի են Հայաստանի և Վրաստանի տվյալները, որոնք զիջում են Աղրբեջանի համապատասխան ցուցանիշներին: Նշված ժամանակահատվածում կրկին Հայաստանի և Վրաստանի պարագայում նկատվում է այդ կազմակերպությունների թվաքանակի նվազման միտում: Սակայն, ի տարբերություն Վրաստանի, որտեղ 2002-2005թթ. արձանագրվել է կայուն նվազում, Հայաստանի դեպքում 2002-2004թթ. գրանցված կայուն նվազման միտմանը հաջորդել է 2005թ. արձանագրված թվաքանակի կտրուկ աճը, որը, սակայն, հաջորդ տարիներին

<sup>34</sup> Տվյալներն ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի, Աղրբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի, Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի:

<sup>35</sup> Հայաստանի գիտակրթական վիճակագրության տվյալները վերցված են ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2008թ. տարեգործից, որի յուրաքանչյուր նշված տարվա տեղեկատվությունը վերաբերում է նախորդ տարվան:

Աղյուրը՝ <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php),  
<http://www.geostat.ge/index.php?action=0&lang=eng>

կրկին պահպանել է կայուն նվազման միտում։ Ի տարբերություն այդ երկրների, Աղրբեջանի պարագայում նկատվում է կազմակերպությունների թվաքանակի կայուն աճման միտում, որը որոշակի «լճացման» փուլ է անցել 2006-2007թթ.։

### *Աղյուսակ 2*

#### *Հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց թվաքանակը 2002-2007թթ.<sup>36</sup>*

Երկիրը	2002	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	6737	6277	6685	6892	6723	5669
Աղրբեջան	16019	17190	17712	18164	17973	18079
Վրաստան	15200	16100	13300	9200	-	-

Հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպություններում ներգրավված անձանց թվաքանակում (տե՛ս Աղյուսակ 2) Հայաստանի մասով նկատվել են փոփոխական միտումներ՝ աճի և նվազման դինամիկա։ Նույն միտումները տեսանելի են նաև Վրաստանի վիճակագրությունում, սակայն այն տարբերությամբ, որ այսուհետ թվաքանակի նվազման միտումները բավական կտրուկ են եղել։ Աղրբեջանի հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպություններում ներգրավված անձանց, ինչպես և կազմակերպությունների թվաքանակի վիճակագրությունում արձանագրվել է կայուն աճ, որը «լճացման» փուլ է անցել 2006-2007թթ.։

Հարավային Կովկասի երկրների ազգային վիճակագրական ծառայությունները տվյալներ են պարունակում նաև այդ երկրներում տարեկան հիմունքներով իրականացված գիտա-

<sup>36</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php),  
<http://www.geostat.ge/index.php?action=0&lang=eng>

տեխնիկական աշխատանքների ընդհանուր ծավալների վերաբերյալ (*Աղյուսակ 3*): 2003-2007թթ. Հայաստանում իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալը հիմնականում պահպանել է կայուն զարգացման միտում: Նշյալ ժամանակահատվածում Հայաստանում իրականացված տարեկան գիտատեխնիկական աշխատանքների ծավալով լավագույն ցուցանիշը գրանցվել է 2007թ.՝ մոտ \$18 մլն: Հայաստանի հետ գրեթե համեմատելի են Վրաստանում իրականացված տարեկան գիտատեխնիկական աշխատանքների ծավալների ցուցանիշները: 2003-2005թթ. Վրաստանի բարձրագույն արդյունքն արձանագրվել է 2004թ.՝ շուրջ \$14,9 մլն: Աղրբեջանի պարագայում 2003-2007թթ. նկատվել է իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալի կայուն աճի միտում: Ընդ որում, 2007թ. արձանագրված կտրուկ աճի արդյունքում այդ ցուցանիշը եղել է շուրջ \$55,1 մլն:

### *Աղյուսակ 3*

#### *Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, \$մլն<sup>37</sup>*

Երկիրը	2003 <sup>38</sup>	2004	2005	2006	2007
Հայաստան	≈\$12.8 մլն	≈\$12.7 մլն	≈\$15.1 մլն	\$16,8 մլն	\$18 մլն
Աղրբեջան	≈\$21,6 մլն	≈\$23,7 մլն	≈\$27,8 մլն	\$35,4 մլն	\$55,1 մլն
Վրաստան	≈\$11,6 մլն	≈\$14,9 մլն	≈\$12,8 մլն	-	-

Ուսումնասիրության շրջանակում առանձնացված երկրների վերաբերյալ համեմատականներ անցկացնելիս անհրաժեշտ է խնդիրը ոլիտարկել այդ երկրների ինչպես բնակչության թվաքա-

<sup>37</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php),

<http://www.geostat.ge/index.php?action=0&lang=eng>

<sup>38</sup> 2007թ. տվյալները կազմվել են երեք երկրների ազգային արժույթների՝ 2009թ. սեպտեմբեր-նոյեմբերի փոխարժեքով:

նակի, այնպես էլ ՀՆԱ-ի և բյուջետային եկամուտների հետ հարաբերակցության համատեքստում: Դա վերաբերում է ինչպես հարավկովկայայն երկրներում հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների և դրանցում ներգրավված անձնակազմի թվաքանակների, այնպես էլ ստորև ներկայացված վիճակագրական տվյալներին: Զարցն այն է, որ հետազոտությունում տեղ գտած քանակական վիճակագրության հիման վրա հնարավորինս օբյեկտիվ համեմատականներ անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ երկրների առանձնահատկությունները, որոնք կարող են այս կամ այն չափով, ուղղակի թե անուղղակի ազդեցություն ունենալ տեղեկատվության ձևավորման վրա: Այս իրողությունը շոշափելի է հատկապես քանակական վիճակագրական հետազոտությունների մասսով, ինչն այնքան էլ տեղին չէ որակական վիճակագրության պարագայում: Այդ նկատառումներից ելնելով՝ հարկ ենք համարում տարածաշրջանի երկրների գիտության վերաբերյալ տեղեկատվությունն ուսումնասիրել այդ երկրների ՀՆԱ-ի, բյուջետային եկամուտների տվյալների հետ հարաբերակցության շրջանակում, ինչն առավել հստակ պատկերացում կտա ոլորտի մասին: Ըստ Համաշխարհային բանկի տեղեկատվության՝ 2008-2011թթ. գիտահետազոտական ուսումնասիրությունները (*Research and Development expenditure*), որպես կանոն, տատանվել են ՀՀ ՀՆԱ 0,2-0,3%-ի սահմաններում: Մասնավորապես, 2009թ. գիտահետազոտական աշխատանքներին հատկացված ծախսերը կազմել են ՀՀ ՀՆԱ 0,3%-ը, 2010թ.՝ 0,2%-ը, իսկ 2011թ.՝ կրկին ՀՀ ՀՆԱ 0,3%-ը<sup>39</sup>: 2011թ. դրությամբ, ըստ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) տվյալների, Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է

<sup>39</sup>The World Bank, <http://data.worldbank.org/>

\$18,38 մլրդ<sup>40</sup> (հեղ.` *GDP-purchasing power parity*-գնողունակության հավասարություն, այն է՝ միջազգային շուկայական գնային արժեքով): 2012թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմում էր \$19,7 մլրդ, 2013թ.՝ շուրջ \$20,61 մլրդ: 2006թ. դրությամբ Հայաստանի ՀՆԱ-ն կազմում էր ընդամենը \$6,6 մլրդ:

Ինչ վերաբերում է Աղրբեջանին, ապա, Համաշխարհային բանկի տվյալների համաձայն, 2009-2011թ. այդ երկիրը գիտահետազոտական գործունեությանը տարեկան հատկացրել է իր ՀՆԱ 0,2%-ը<sup>41</sup>: ԱՄՆ ԿՀՎ տվյալներով, 2011թ. Աղրբեջանի ՀՆԱ-ն կազմում էր \$94,98 մլրդ (միջազգային շուկայական գնային արժեքով), 2012թ.՝ \$97,04 մլրդ, իսկ 2013թ.՝ \$102,7 մլրդ<sup>42</sup> (այլ միջազգային տվյալներով՝ 2017թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմում է \$11,5 մլրդ<sup>43</sup>, Աղրբեջանի դեպքում՝ \$40,6, որոնց համադրությամբ ԱՄՆ ԿՀՎ տվյալները բավական ուռճացված են):

Թեմայի շրջանակում կարևոր են նաև առանձնացված երկրներում հետազոտությունների և մշակումների վրա կատարված տարեկան ներքին ծախսերին վերաբերող վիճակագրական տվյալները: Ցավոք, Վրաստանի վերաբերյալ համապատասխան տվյալների բացակայության պատճառով հնարավոր չի եղել համեմատել տարածաշրջանի 3 երկրները, ուստի կսահմանափակվենք Հայաստանի և Աղրբեջանի տվյալները համեմատելով: Հայաստանի համեմատ զգալի բարձր են Աղրբեջանում հետազոտությունների և մշակումների վրա կատարված

<sup>40</sup> U.S. CIA, The World Factbook, <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>

<sup>41</sup> The World Bank, <http://data.worldbank.org/>

<sup>42</sup> U.S. CIA, The World Factbook, <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/aj.html>

<sup>43</sup> <https://knoema.ru/search?query=Армения+Валовой+внутренний+продукт&pageIndex=&scope=&term=&correct=&source=Header>

ծախսերը, որոնք ունեցել են զարգացման կայուն դինամիկա: Եթե 2002թ. այդ երկրի համապատասխան ցուցանիշը կազմում էր մոտ \$22,8 մլն, ապա 2007թ. այն կազմում էր շուրջ \$60,2 մլն: Աղբբեջանի վիճակագրական ծառայությունը տվյալներ է ներկայացնում նաև երկրում գիտությանը հատկացվող բյուջետային միջոցների վերաբերյալ, որոնք ևս ներկայացվում են *Աղյուսակ 4-ում:*

#### *Աղյուսակ 4*

##### *Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսեր, \$մլրդ<sup>44</sup>*

Երկիրը	2002 <sup>45</sup>	2003	2004	2005	2006	2007
Հայաստան, ներքին ծախսեր	≈\$8,9 մլն	≈\$10 մլն	≈\$10,4 մլն	≈\$12,4 մլն	\$14,7 մլն	\$15.5
որից՝ բյուջետային ծախսեր	≈\$4,9	≈\$4,9	≈\$5,4	≈\$6,7	≈\$7,9	≈\$8,6
Աղբբեջան, ներքին ծախսեր	≈\$22,8 մլն	≈\$29 մլն	≈\$31,8 մլն	≈\$34,4 մլն	\$40,2 մլն	\$60,2
Աղբբեջան, գիտությանը հատկացվող բյուջետային միջոցներ	≈\$14,2	≈\$20,7	≈\$25	≈\$36	≈\$40	≈\$54,8
Վրաստան <sup>46</sup>	-	-	-	-	-	

Հարկ է հստակեցնել, որ Աղբբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի տվյալներում, հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերից զատ, ներկայացված է նաև գիտությանը տրվող բյուջետային հատկացնումների մասին տեղեկատվություն: ՀՀ Ազգային վիճակագրա-

<sup>44</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

<sup>45</sup> 2007թ. տվյալները կազմվել են երեք երկրների ազգային արժույթների՝ 2009թ. սեպտեմբեր-նոյեմբերի փոխարժեքով:

<sup>46</sup> Տվյալներ չկան:

կան ծառայության Էլեկտրոնային կայքում հրապարակված տարեգրերի «Գիտություն» բաժնում գիտությանը հատկացված բյուջետային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Այնուհանդերձ, փորձենք զնահատել այդ ծախսերը: 2013թ. հոկտեմբերին Հայաստանի 2014թ. պետական բյուջեի վերաբերյալ կառավարության քննարկումներում առաջարկվում էր նույն տարի բյուջետային միջոցներից գիտությանը հատկացնել շուրջ \$12.789 մլրդ դրամ<sup>47</sup>, ինչը կազմել է շուրջ \$32 մլն (\$1=400 դրամ):

**Հայաստանի և Աղբքեջանի գիտահետազոտական գործունեության վիճակագրությունը 2008-2018թթ.:** ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012թ. գեկույցի վիճակագրական տվյալներով<sup>48</sup>, առանձնացված 91 երկրների շարքում գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ՀԻՈԿԲ) ուղղությամբ կատարվող ծախսերով Հայաստանը զբաղեցրել է 64-րդ դիրքը՝ ՀՆԱ ընդամենը 0,27%-ը: Զեկույցում Աղբքեջանը զբաղեցրել է 66-րդ հորիզոնականը, որի ԳՀՓԿԱ ուղղությամբ հատկացված ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ 0,25%-ը: Սակայն այստեղ մտահոգիչ է ոչ միայն այն, որ Հայաստանում ոլորտին հատկացվող ծախսերն այդպես ել չեն գերազանցում ՀՆԱ նույնիսկ 1%-ը, այլև այն, որ երկու երկրների ՀՆԱ ծավալներն իրապես անհամապելի են: 2010թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմում էր շուրջ \$9,3 մլրդ, այն դեպքում, եթե Աղբքեջանի ՀՆԱ-ն նույն տարում \$53 մլրդ. էր: 2017թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմում է \$11,5 մլրդ<sup>49</sup>,

<sup>47</sup> <http://www.resource.am/arm/69209.html>

<sup>48</sup> UNESCO Institute for Statistics, 2012, <http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info>: Զեկուլի վիճակառական տվյալները վերաբերում են 2010թ.:

<sup>49</sup> <https://knoema.ru/search?query=Армения+Валовой+внутренний+продукт&page=Index=&scope=&term=&correct=&source=Header>

Աղրբեջանի դեպքում՝ \$40,6, սակայն ԳՀՓԿԱ ծախսերը երկու երկրների պարագայում էլ զրեթե պահպանել են ՀՆԱ-ի նկատմամբ իրենց տոլկոսային հարաբերակցության ծավալները։ Իսկ դա նշանակում է, որ թեև թե՛ Հայաստանում, թե՛ Աղրբեջանում ԳՀՓԿԱ ծախսերը ՀՆԱ-ում չեն արձանագրել դրական քանակական (տոլկոսային) տեղաշարժ (այդպես էլ չհատելով 0,5% սահմանը), այդուհանդեռձ, Աղրբեջանի դեպքում ոլորտին հատկացվող ծախսերն ապահովել են «մեխանիկական» աճի դինամիկա՝ ի հաշիվ ՀՆԱ ծավալների շեշտակի աճի<sup>50</sup>: ՀՀ-ի պարագայում ԳՀՓԿԱ ծախսերը կազմել են ՀՆԱ 0,3%-ը, Աղրբեջանում՝ համապատասխանաբար 0,2%-ը<sup>51</sup>: Ավելին, 2017թ. կեսերին պարզ դարձավ, որ ՀՀ կառավարության 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նվազեցվելու է ՀՆԱ-ից կրթության ոլորտին հատկացվող բաժինը. եթե 2017թ. այն կազմում էր 2.34%, 2018թ. նախատեսվում է 2.18%, 2019թ.՝ 1.99%, իսկ արդեն 2020թ.՝ ընդամենը 1.85%:

Համաձայն Հայաստանի Վիճակագրական կոմիտեի տեղեկատվության, 2009թ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերն ընդհանուր առմամբ կազմել են շուրջ \$21.9 մլն (2009թ. 1\$=386 դրամ փոխարժեքով), 2010թ. որոշակի նվազում է արձանագրվել՝ շուրջ \$20.6 մլն: Նշենք նաև, որ 2009թ. ներքին ծախսերից բյուջետային միջոցները կազմել են \$13.1 մլն, իսկ 2010թ. ներքին ծախսերից՝ \$14,4 մլն<sup>52</sup>:

Ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ոլորտում իրականացված ծախսերը դիտարկել Հայաստանում՝

<sup>50</sup> <https://knoema.ru/atlas/Ազերբայդյան/BVP>

<sup>51</sup> [https://knoema.ru/atlas/ranks/Զարգացման նշանակած հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 366,71 դրամ:](https://knoema.ru/atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-BVP#)

<sup>52</sup> 2010թ. օգոստոսին ԱՄՆ դրամի նվազամամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 366,71 դրամ:

տանի ընդհանուր բյուջետային հաշվարկի հետ հարաբերակցության հարթությունում (*Աղյուսակ 5*): Այսպէս, 2009թ. դրությամբ, համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանի համախմբված բյուջեի եկամուտները կազմել են 711 մլրդ դրամ՝ \$1.841 մլրդ: Ինչպես տեսնում ենք, երկրի ընդհանուր բյուջետային եկամուտների համեմատ հետազոտություններին և մշակումներին ուղղված ներքին ծախսերը բավական ցածր են: 2011թ., 2010թ. համեմատ, ոլորտում ներդրված ծախսերը զգալիորեն աճել են՝ կազմելով \$24.2 մլն (1\$=382,98 փոխարժեքով)<sup>53</sup>: 2011թ. գիտությանը հատկացված ներքին ծախսերից բյուջետային միջոցները կազմել են 6.066 մլն դրամ: Մյուս կողմից, Հայաստանում (նաև Աղբբեջանում) հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը կարելի է դիտարկել նաև երկրի ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ, ինչի վերաբերյալ որոշ տվյալներ վերն արդեն ներկայացվեցին:

Ինչ վերաբերում է Աղբբեջանին, նշյալ ժամանակահատվածում վերջինիս ցուցանիշները, որպես կանոն, 2009-2013թթ. կտրվածքով ավելի քան 5 անգամ գերազանցել են Հայաստանի համապատասխան արդյունքները: Աղբբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն, 2009թ. հետազոտություններին և զարգացման աշխատանքներին հատկացված ֆինանսական միջոցներն ընդհանուր առմամբ կազմել են 89 մլն մանաթ՝ \$111 մլն<sup>54</sup>, երկրի ՀՆԱ 0,3%-ը: Եթե համեմատենք 2009թ. ՀՀ ցուցանիշի հետ, ապա վերջինս զիջում է հարեւան երկրի համապատասխան արդյունքին մոտ 5 անգամ: 2010թ. հետազոտությունների և մշակումների վրա ծախսված ֆինանսա-

<sup>53</sup> 2011թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 382,98 դրամ:

<sup>54</sup> 2013թ. դրությամբ՝ 1\$=0.8 մանաթ:

կան միջոցները գնահատվել են \$115 մլն՝ ՀՆԱ 0,2%-ը<sup>55</sup>, 2011թ.՝ \$137,5 մլն: 2012թ. հետազոտություններին և զիտական աշխատանքներին հատկացվել է \$146,6 մլն:

#### Աղյուսակ 5

*Հետազոտությունների և մշակումների վրա կատարված  
ներքին ծախսերն ըստ երկրների, 2009-2012թթ., \$մլն<sup>56</sup>*

Երկիրը	2009	2010	2011	2012 <sup>57</sup>	2013	2014	2015	2016
Հայաստան	21,9	20,6	24,2	24	23 (406 <sup>58</sup> )	26,3 (415)	25,1 (475)	23 (480)
Աղբքեցան	111	115	137,5	146,6	152,5 (0,8 <sup>59</sup> )	115 (1,1)	109 (1,1)	83,1 (1,5)

Ինչ վերաբերում է 2013-2016թթ. ժամանակահատվածին, ապա հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ցուցով Հայաստանն ընդհանուր առմամբ պահպանել է նախորդ տարիների արդյունքները: Նշալ տարիներին Հայաստանի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 2014թ.՝ \$26,3 մլն և 2015թ.՝ \$25,1 մլն:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2013-2016թթ. կտրվածքով Աղբքեցանը հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ցուցով արձանագրել է ցուցանիշների կայուն նվազման միտում: Դա, թերևս, պայմանավորված է ամերիկյան դոլարի նկատմամբ աղբքեցանական մանաթի փոխարժեքի անկմամբ: Եթե 2013թ. Աղբքեցանի հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը կազմել էն \$152,5 մլն, ապա 2015թ. այդ ցուցանիշը \$109 մլն էր, 2016թ.՝ \$83,1 մլն:

<sup>55</sup> The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, <http://www.stat.gov.az/>

<sup>56</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

<sup>57</sup> 2012թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 403,2 դրամ:

<sup>58</sup> Հայկական դրամ-ԱՄՆ դոլար փոխարժեքը:

<sup>59</sup> Աղբքեցանական մանաթ-ԱՄՆ դոլար փոխարժեքը:

Աղրբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի կայքը տվյալներ է ներկայացնում նաև հետազոտությունների ու գիտական աշխատանքների ծախսերի վերաբերյալ՝ ըստ սեկտորների: Նշենք, որ ոլորտին հատկացվող ֆինանսների զգալի հատվածն ուղղվում է պետական սեկտորին: 2010թ. հետազոտություններին ուղղված \$115 մլն-ից պետական սեկտորին հատկացվել է շուրջ \$85 մլն, իսկ 2011թ. \$137,5 մլն-ից՝ \$100 մլն:

Անդրադառնանք 2008-2017թթ. Հայաստանում և Աղրբեջանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների և դրանցում ներգրավված անձնակազմի թվաքանակների համեմատականներին (*տե՛ս Աղյուսակ 6*): Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2008-2013թթ. Հայաստանում գործող նման կազմակերպությունների թվաքանակը կայուն նվազման միտում է արձանագրել: Եթե 2008թ. Հայաստանում գործում էր 83 գիտահետազոտական կազմակերպություն, ապա 2012թ. դրանց թվաքանակը կազմել է 72, 2013թ.՝ 62: 2014-2016թթ. նման կազմակերպությունների թվաքանակն աճել է. 2014թ. դրանք կազմել են 66, 2015թ.՝ 70: Վերջին տասնամյակում Հայաստանի համապատասխան ցուցանիշները լավագույն արդյունքներն ապահովել են 2008-2009թթ.:

Աղրբեջանում գործող գիտահետազոտական կազմակերպությունների թվաքանակը, որը որպես կանոն, գերազանցում է Հայաստանին, նույնպես նվազել է նշյալ ժամանակահատվածում: Եթե 2008թ. դրանց քանակը 146 էր, իսկ 2012թ.՝ 140, ապա 2017թ. արդյունքներով՝ 135: 2008-2017թթ. Աղրբեջանի արձանագրած համապատասխան բարձրագույն ցուցանիշները, ինչպես Հայաստանի պարագայում, եղել են 2008-2009թթ.:

**Աղյուսակ 6**

*Հետազոտություններ և մշակումներ իրականացնող  
կազմակերպությունների քանակը Հայաստանում և Ադրբեյչանում,  
2008-2017թթ.<sup>60</sup>*

Երկիրը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Հայաստան	83	83	81	72	72	62	66	70	69	-
Ադրբեյչան	146	148	145	143	140	140	140	145	141	135

**Աղյուսակ 7**

*Հետազոտություններ և մշակումներ իրականացնող  
կազմակերպություններն ըստ գործունեության տեսակի,  
2009-2012թթ.<sup>61</sup>*

Երկիրը	2000	2005	2009	2010	2011	2012
Ադրբեյչան	137	146	148	145	143	140
որից՝						
գիտահետազոտական	95	97	95	93	92	90
նախագծային	12	6	5	5	5	3
բուհական	25	33	39	37	36	37
այլ	5	10	9	10	10	10

Ադրբեյչանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների մեծ մասը գիտահետազոտական կազմակերպություններ են, գործում են նաև նախագծային և բուհական ինստիտուտներ ու կենտրոններ: 2012թ. այդ երկրում հաշվառված 140 հետազոտական կազմակերպություններից 90-ը գիտահետազոտական է եղել, 3-ը՝ նախագծային, 37-ը՝ բուհական, 10-ը՝ այլ ուղղվածության (տե՛ս և Աղյուսակ 7): Հայաստանի վերաբերյալ մեր երկրի Ազգային վիճակագրական ծառայության կայքում նման տեղեկատվության չենք հանդիպել:

<sup>60</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

<sup>61</sup> [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

Աղբբեջանի Ազգային վիճակագրական ծառայությունը տվյալներ է ներկայացնում նաև այդ կազմակերպությունների գործունեության վերաբերյալ՝ ըստ սեկտորների (*Աղյուսակ 8*): Վիճակագրության համաձայն, դրանց զգալի մասը պետական սեկտորում է, հետո՝ բուհական համակարգում, մնացյալը՝ գործարար շրջանակներում: 2012թ. երկրում գրանցված 140 հետազոտական կազմակերպություններից 90-ը ներգրավված է եղել պետական սեկտորում, 11-ը՝ գործարարության, իսկ 39-ը՝ բուհական համակարգում:

#### *Աղյուսակ 8*

*Հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններն ըստ սեկտորների, 2009-2012թթ.<sup>62</sup>*

Երկիրը	2009թ.	2005թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Աղբբեջան	137	146	148	145	143	140
<b>որից՝</b>						
պետական սեկտոր	90	93	92	93	92	90
գործարարություն	19	17	14	13	13	11
բուհական	28	36	42	39	38	39

Աղբբեջանի Ազգային վիճակագրական ծառայության կայքում տեղեկատվություն կա նաև հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների քանակի վերաբերյալ՝ ըստ դրանց աշխարհագրական տեղակայման: 2005թ. երկրում գործող 146 կազմակերպությունների զգալի մասը՝ 118, գործել է Բարվում, որին հաջորդել է Գանձակ-Ղազախի շրջանը՝ 9, 6-ական կենտրոն՝ Ափշերոնի շրջանում և Նախիջևանում (մնացյալը՝ այլ շրջաններում): 2012թ. պատկերը հետևյալն էր.

<sup>62</sup> [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

ընդհանուր 140 կազմակերպությունից Բարձրում՝ 105, Ափշերոնում՝ 6-ի փոխարեն 11, Գանձակ-Ղազախի շրջանում թիվը պահպանվել է՝ 9, թիվը պահպանվել է նաև Նախիջևանում՝ 6:

2008-2016թթ. Հայաստանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններում ներգրավված անձնակազմի թվաքանակում, բացառությամբ 2009թ. և 2014թ., նվազման կայուն միտում է արձանագրվել: 2009թ. Հայաստանում գործող նման կազմակերպությունների աշխատողների թվաքանակը կազմել է 6926, 2010թ.՝ 6558, 2012թ.՝ 5598 գիտաշխատող: 2008-2016թթ. Հայաստանում գործող նման կազմակերպություններում ներգրավված անձնակազմի թվաքանակում ամենաբարձր արդյունքը գրանցվել է 2009թ.՝ 6926 աշխատակից, իսկ ամենացածր ցուցանիշը՝ 2016թ.՝ 4881 աշխատակից:

2008-2017թթ. Աղբբեջանի հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններում ներգրավված անձնակազմի թվաքանակն առանձնացել է տատանումներով: Եթե 2008թ. հաշվում էր 17942, ապա 2009թ.՝ 17401 գիտաշխատող, իսկ 2010թ.՝ 17924: 2012-ից նման կազմակերպություններում ներգրավված անձնակազմի թվաքանակը կտրուկ աճման դինամիկա է արձանագրել՝ 21573 գիտաշխատող:

Հարկ է նշել, որ 2008-2016թթ. հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններում ներգրավված անձնակազմի թվաքանակի ցուցանիշով Աղբբեջանը, որպես կանոն, մի քանի անգամ գերազանցել է Հայաստանի համապատասխան արդյունքները: Եթե 2008-2010թթ. այդ տարրերությունը կազմում էր միջինը 2,5, ապա հաջորդ տարիներին՝ 3-4,5 անգամ (*Աղյուսակ 9*): Այս ցուցում, թերևս, պետք է հաշվի առնել նաև երկու երկրների բնակչության թվաքանակների միջև տարրերությունը:

*Աղյուսակ 9*

Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց քանակն ըստ երկրների, 2008-2017թթ., հազ. մարդ<sup>63</sup>

Երկիրը	2008	2009	2010	2011	2012
Հայաստան	6899	6926	6558	5718	5598
Աղբքաջան	17942	17401	17924	18687	21573

Երկիրը	2013	2014	2015	2016	2017
Հայաստան	5230	5627	5044	4881	-
Աղբքաջան	22046	22358	23329	23093	22527

*Աղյուսակ 10*

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, \$-ով<sup>64</sup>

Երկիրը	2009	2010	2011	2012
Հայաստան <sup>65</sup>	≈\$24,6մլն	≈\$22,7մլն	≈\$24,1մլն	≈\$25,4մլն
Աղբքաջան <sup>66</sup>	≈\$109մլն	≈\$123,3մլն	≈\$142,9մլն	≈\$160մլն

Երկիրը	2013	2014	2015	2016
Հայաստան	25,2	27,7	26,5	25
Աղբքաջան	-	-	-	-

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2009-2012թթ. Հայաստանում իրականացվող գիտատեխնիկական աշխատանքների տարեկան ծավալները, ինչպես և նախորդ տարիներին, զիջում են Աղբքաջանի համապատասխան ցուցանիշներին: Սակայն այն տարբերությամբ, որ եթե 2003-2007թթ. այդ ցուցանիշները հնարավորինս մոտ էին միմյանց, ապա 2009-2012թթ. Աղբ-

<sup>63</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

<sup>64</sup> <http://www.armstat.am/am/>, [www.stat.gov.az/indexen.php](http://www.stat.gov.az/indexen.php)

<sup>65</sup> Հայկական դրամը դոլարի վերածելու համար ընտրվել է 2011թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը՝ 382,98 դրամ:

<sup>66</sup> Աղբքաջանական մանաթը դոլարի վերածելու համար ընտրվել է օպտիմալ փոխարժեք՝ 2013թ. դրությամբ 1\$=0.8 մանաթ:

բեջանում իրականացվող զիտատեխնիկական աշխատանքների տարեկան ծավալներն անհամեմատ գերազանցում են մեր երկրի ցուցանիշները: 2011թ. Հայաստանում այդ ցուցանիշը կազմել է \$24,1 մլն, Աղրբեջանում՝ \$142,9 մլն, 2012թ. Հայաստանում այն կազմում էր \$25,4 մլն, Աղրբեջանում՝ մոտավոր հաշվարկով \$160 մլն (*տե՛ս Աղյուսակ 10*): 2013-2016թթ. տարիների համար Աղրբեջանի վիճակագրական ծառայության 2017թ. տարեգրում զիտատեխնիկական աշխատանքների ծավալների վերաբերյալ մեզ չի հաջողվել տեղեկատվություն գտնել:

**Հիմնական եզրականգումներ.** Առկա վիճակագրության վերլուծությունից կարելի է կատարել մի քանի հիմնական եզրականգում.

- Վրաստանի պարագայում, թերևս, գործ ունենք զիտության այսպես ասած «Եվրոպականացման» երևույթի զարգացման հետ, ինչը ենթադրում է մարդկային-մտավոր/զիտական կապիտալի արտահոսք («ուղեղների արտահոսք»)՝ երկրում ոչ զիտելիքահեն կամ զիտատար ձյուղերի զարգացմամբ:
- Աղրբեջանում զիտահետազոտական գործունեությունը գտնվում է պետական, իսկ վերջին շրջանում՝ նաև գործարար շրջանակների ուշադրության ներքո: Գիտահետազոտական ոլորտի ֆինանսավորման ծավալներն աճման միտում ունեն՝ զիտականացման պայմանավորված երկրի ՀՆԱ ծավալների աճով:
- Հայաստանում զիտահետազոտական ոլորտի վիճակագրական տվյալները խիստ մտահոգիչ են: Կարևորագույն խնդիրներից մեկը զիտության ֆինանսավորման ցածր ցուցանիշներն են, ինչը երկրից մտավոր/զիտական կապի-

տալի արտահոսքի հիմնական պատճառներից մեկն է:  
Չևավորված չէ զիտություն-գործարար սեկտոր փոխգոր-  
ծակցության ինստիտուտը:

## 2.7 Ենթագլխում օգտագործված աղբյուրներ

1. The World Bank, <http://data.worldbank.org/>
2. U.S. CIA, The World Factbook, <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>
3. <http://www.resource.am/arm/69209.html>
4. UNESCO Institute for Statistics, 2012, <http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info>
5. Армения - Валовой внутренний продукт, <https://knoema.ru/search?query=Армения+Валовой+внутренний+продукт&pageIndex=&scope=&term=&correct=&source=Header>
6. Азербайджан - Валовой внутренний продукт, <https://knoema.ru/atlas/Azerbaijan/BVP>
7. Затраты на НИОКР, <https://knoema.ru/atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-BVPI>,
8. The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, <http://www.stat.gov.az/>
9. ՀՀ վիճակագրական կոմիտե, <http://www.armstat.am/am/>

## 2.8 ԳՀՓԿՄ ծախսերը հարավկովկայան հանրապետություններում

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումների (ԳՀՓԿՄ, *R&D, НИИ и ОКР*) տարեկան ծախսերը որպես % ՀՆԱ-ից, հատկապես դրանց ժամանակային շարքերը մեկ տասնամյակ և ավելի ժամանակահատվածի համար տվյալ երկրում վարվող գիտատեխնոլոգիական քաղաքականությունն առավել ցցուն նկարագրող ցուցիչն են: Գծապատճեր 1-ում բերված են Հարավկովկայան երեք հանրապետություններում ԳՀՓԿՄ տարեկան ծախսերի (որպես % ՀՆԱ-ից) կորերը, 1996-2015թ. ժամանակահատվածի համար<sup>67</sup>: Ինչպես տեսնում ենք, ԳՀՓԿՄ ծախսերի միջին արժեքներն այստեղ բազմիցս զիջում են բոլոր «աշխարհի աշխարհների» միջին ցուցանիշներին<sup>68</sup>, ինչը տարանջատում է այս երեք հանրապետություններն աշխարհի թե՝ *զարգացած* բոլոր երկրներից, թե՝ *զարգացող* երկրների մեծամասնությունից ու տեղակայում է դրանք աշխարհի թերզարգացած երկրների հարևանությամբ [1]: Բացի այս ընդհանրական գնահատականից, բերված կորերն ունեն ուրույն առանձնահատկություններ, որոնց և հակիրճ կանորադարնանք:


Աղբեջանում նավթային ռեսուրսների յուրացման հիմնական փուլի մեկնարկը 2005-06թթ. ամենափոք շաղեց այդ երկրում ՀՆԱ-ի հանդեպ ԳՀՓԿՄ-ին հատկացվող միջոցների տոկոսային աճին: Ավելին, դրանք էապես նվազեցին՝ 1998-ի մոտ 0.42%-ից մինչև 2006-08թթ. 0.16%, ինչը, սակայն, չի նշանակում դրանց բացարձակ արժեքների նվազում, քանի որ ԱՉԳ նավթադաշտի յուրացման հիմնական փուլի մեկնարկից (2005թ.) սկսած՝ էա-

<sup>67</sup> Հաստ Համաշխարհային բանկի (ՀԲ),

<http://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?end=2013&start=1998>.

<sup>68</sup> Առավելագույնը «Հիերողիկիների աշխարհի» համար՝ մոտ 2.7%, նվազագույնը՝ «Կիսալուսնի աշխարհի» համար, մոտ 0.98% (տե՛ս [1]):

կանորեն աճում են Աղբբեջանի ՀՆԱ ծավալները<sup>69</sup>: Դրանք սկսում են աճել միայն 2008-ից՝ ռուս-վրացական «հնգօրյա պատերազմից» հետո՝ մեկ տարում աճելով 0.16%-ից 0.25%՝ 2009-ին, այնուհետև մնալով 0.22% մակարդակին 2010-15թթ.:



Այսպիսով, որպես ՀՆԱ % ԳՀՓԿՄ տարեկան ծախսերի մասնաբաժնի նվազումը 2005-07թթ., երբ ընդունվեց Աղբբեջանի ռազմականացման պետական բազմափուլ ծրագիրը [2], չհանգեցրեց դրանց բացարձակ ծավալների նվազմանը: Դրանք մնացին մոտավորապես նույն բացարձակ արժեքների մակարդակին, թեև ՀՆԱ-ի հանդեպ դրանց մասնաբաժինը նվազում է: Իրադրությունը փոխվում է միայն 2008-ին, երբ ռուս-վրացական

<sup>69</sup> Մանրամասները տե՛ս [2], գլ. 2 և 5:

օգոստոսյան պատերազմի իրողություններն Աղբքեջանի իշխանություններին հանգեցրին ԳՀՓԿՄ ավելի ինտենսիվ խթանման անհրաժեշտության գիտակցմանը: Առաջին հերթին, ռազմադրյունաբերական համալիրի (ՌԱՀ) տիրույթում, օրինակ՝ անօդաչու թռչող սարքերի մշակման և արտադրության և արբանյակային ունակությունների ստեղծման ուղղությամբ: Ցավոք, նմանատիպ գիտակցումը չի փաստվում ՀՀ պարագայում (տե՛ս ստորև և ժողովածուի 3.4, 3.5 ենթագլուխները):

Վրաստանի կորի համար ցցուն է ԳՀՓԿՄ տարեկան ծախսերի մասնաբաժնի դրամատիկ նվազումը. 1998թ. 0.354%-ից մինչև 0.17% 2005-ին, ինչը, կարծում ենք, 2003-05թթ. «Վարդերի հեղափոխության» և այս երկրի «արտաքին կառավարման» անցման միջնորդված հետևանքն է: Բնութագրական է, որ ՀԲ տվյալների շտեմարանում բացակայում է Վրաստանի ԳՀՓԿՄ տարեկան ծախսերին առնչվող որևէ տվյալ 2006-12թթ. համար (տե՛ս վերը, 2.7 ենթագլուխում): Վրացական ԳՀՓԿՄ ծախսերի այս «սև խոռոչի» (տե՛ս Գծ. I) գոյացման պատճառը, անշուշտ, նույնն է, ինչ վերը բերվածը: Այս առումով Վրաստանում իրադրությունը փոխվում է միայն նոր, հետսաակաշվիլիական իշխանությունների հաստատումից հետո: Տպավորիչ է ԳՀՓԿՄ տարեկան հատկացումների թոփշը՝ արձանագրված 2013-15թթ. համար: 2013-ին դրանք կազմել էին ՀՆԱ 0.084%-ը, մինչդեռ 2015-ին դրանք աճել են մոտ 4 անգամ՝ հասնելով 0.32%-ի: Բացարձակ արժեքներով դրանք շարունակում են մնալ չնչին, սակայն ՀՆԱ-ի հանդեպ դրանց սոլիուային մասնաբաժնի աճը վկայում է ԳՀՓԿՄ խթանման հարցում քաղաքականության փոփոխման մասին:

Մեզ համար ամենսին էլ միխթարական չէ, որ համաձայն ՀԲ տվյալների՝ Հայաստանն անդրկովկայացան միակ հանրապե-

տուրքունն է, որի ԳՀՓԿՄ կորը 1997-2015թ. համար ունի թույլ արտահայտված դրական միտում: Իսկ սկսած 2005-14թթ.՝ ՀՆԱ-ի հանդեպ ԳՀՓԿՄ ծախսերի տոկոսային ցուցանիշով՝ Հայաստանն առաջ է անցնում իր հարեաններից (*տե՛ս Գծ. I*): Բոլոր դեպքերում, ՀՆԱ-ի հանդեպ մասնաբաժնով ԳՀՓԿՄ ծախսերը Հայաստանում եղել և շարունակում են մնալ անթույլատրելի փոքր: Ցավոք, առ այսօր Հայաստանում չկա ոլորտի բարելավմանն ուղղված համալիր ռազմավարություն կամ գործողությունների ցանկ: Իսկ առկա միտումները, օրինակ՝ ՀՀ վերջին երկու կառավարությունների մտադրությունը՝ իջեցնել գիտության և կրթության ֆինանսավորման մասնաբաժինը մինչև ՀՆԱ 0.15%, մտահոգիչ են:

Ակնհայտ է, որ գիտական ոլորտում ընթացող զարգացումներն անմիջականորեն առնչվում են կրթության հետ կապված հիմնախնդիրների հետ: Հայտնի է նաև, որ կրթական համակարգի զարգացածության կարևոր ցուցանիշներից է այս կամ այն երկրի համալսարանների դիրքը միջազգային վարկանիշային համակարգում: Հաջորդ ենթագլխում ներկայացված են մեր տարածաշրջանի համալսարաններին տրված գնահատականներն այդ համակարգում:

## 2.8 Ենթագլխում օգտագործված գրականություն

1. *Հարությունյան Գ., Մարգանյան Ա., Բագմակենտրոն աշխարհակարգի գիտատեխնոլոգիական բնապատկերը, «21-րդ ԴԱՐ», #3(73), էջ 2, 2017, [http://www.noravank.am/upload/pdf/21\\_DAR\\_03\\_2017.pdf](http://www.noravank.am/upload/pdf/21_DAR_03_2017.pdf)*
2. *Մարգանյան Ա., Աղրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, «Նորավանք» ԳՎՀ, Երևան, 2013, [http://noravank.am/upload/pdf/Marjanyan\\_book.pdf](http://noravank.am/upload/pdf/Marjanyan_book.pdf), <http://noravank.am/upload/pdf/ANNEXES.pdf>*

## 2.9 Տարածաշրջանի երկրների համալսարանների վարկանիշները

Բրիտանական *Quacquarelli Symonds* և *Times Higher Education* վարկանիշային կազմակերպություններն ուսումնասիրել են աշխարհի տարբեր երկրների բուհական հաստատությունները, և ստորև կդիտարկվեն նրանց ուսումնասիրությունների արդյունքները:

1. *Quacquarelli Symonds* կազմակերպությունը հրապարակել է «զարգացող» Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի *Quacquarelli Symonds Emerging Europe and Central Asia University Rankings (QS EECA University Rankings)* 2018թ. վարկանիշային աղյուսակը, որը ներառում է տարածաշրջանի 300 լավագույն բուհերը: Նշենք, որ *Quacquarelli Symonds*-ը համալսարանների վարկանիշավորման ազդեցիկ համակարգ է, հիմնադրվել է 2004թ. բրիտանական *Times Higher Education* պարբերականի հետ համատեղ: Այդ համագործակցությունը 2010թ. դադարել է, և *Quacquarelli Symonds*-ը սկսել է հրապարակել սեփական հետազոտությունների շարքը:

Վարկանիշավորման համակարգն օգտագործում է *QS World University Rankings* համաշխարհային ինդեքսից փոխ առած գնահատման մեթոդաբանությունը: Ընդհանուր առմամբ՝ գնահատվում է 8 գործոն, ներառյալ համալսարանի առցանց ներկայությունը և գիտական կոչում ունեցող դասախոսական կազմի համամասնությունը: Բացի կրթական բաղադրիչից, գնահատվում են նաև տվյալ համալսարանի շրջանավարտների մասնագիտական որակն ու մրցունակության մակարդակը համաշխարհային աշխատաշուկայում, որը կատարում են շրջանավարտներին գործի ընդունող կազմակերպությունները: Հաշ-

վի են առնվում նաև ուսանող-դասախոս հարաբերակցությունը, հետազոտական աշխատանքներն ըստ ֆակուլտետների (ինստիտուտների), ինչպես նաև աշխատությունների ազդեցության գործոնն ու մեջբերումների միջին քանակը: Ստորև ներկայացնում ենք չափորոշիչներն ըստ տոկոսների<sup>70</sup>:

- Ակադեմիական հեղինակությունը (30%)
- Գործատուի հեղինակությունը (20%)
- Ֆակուլտետ / ուսանող հարաբերակցությունը (15%)
- Հետազոտական աշխատանքներն ըստ ֆակուլտետների (10%)
- Վեբ ազդեցությունը (10%)
- Գիտական կոչում ունեցող աշխատակիցների քանակը (5%)
- Հղումների քանակը (5%)
- Միջազգային ֆակուլտետների (2,5%) և միջազգային ուսանողների քանակը (2,5%):

*QS EECA University Rankings 2018թ. վարկանիշավորմամբ* լավագույն բուհեր են Ճանաչվել Մոսկվայի Մ.Վ. Լոմնոսովի անվան պետական համալսարանը, Նովոսիբիրսկի պետական համալսարանը և Տարտուի համալսարանը: Առաջին տասնյակում տեղ է զբաղեցրել թուրքական Երկու բուհ՝ Բողազիչի համալսարանը և Միջին Արևելքի տեխնիկական համալսարանը: Ընդհանուր առմամբ, այդուսակում ընդգրկված է թուրքական 53 բուհ, որոնցից 13-ը՝ առաջին հարյուրակում (տե՛ս *Աղյուսակ I*).

---

<sup>70</sup> <https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018>

**Աղյուսակ 1**

*Թուրքական բուհերը QS EECA University Rankings 2018թ.  
վարկանիշավորման աղյուսակում<sup>71</sup>.*

Դիրք	Բուհի անվանումը
7	Բողազիչի համալսարան
9	Միջին Արևելքի տեխնիկական համալսարան
12	Բիլքենթ համալսարան
14	Քոչ համալսարան
16	Սարանջը համալսարան
26	Ստամբուլի տեխնիկական համալսարան
31	Ստամբուլի համալսարան
38	Հաչեթեփի համալսարան
61	Անկարա համալսարան
80	Էգե համալսարան
82	Իզմիրի տեխնոլոգիական ինստիտուտ
85	Գագի համալսարան
97	«Դորուց Էլուլ» համալսարան

Հայաստանյան բուհերից ցուցակում ընդգրկվել են Երևանի պետական համալսարանը (181-190 դիրք) և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը (201-250 դիրք): Համեմատության համար նշենք, որ աղյուսակում կա աղբբեջանական 6 և վրացական 1 բուհ (տե՛ս *Աղյուսակ 2*):

2. *Times Higher Education* պարբերականը հետազոտություններ է իրականացնում լրատվության և բարձրագույն կրթության ոլորտում: 2010թ., դադարեցնելով համագործակցությունը *Quacquarelli Symonds*-ի հետ՝ պարբերականը տվյալների ապահովման վերաբերյալ պայմանագիր ստորագրեց *Thomson Reuters* միջազգային մեդիա-կորպորացիայի հետ: Ամենամյա հետազո-

<sup>71</sup> <https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018>

## Աղյուսակ 2

### Հայաստանյան բուհերի գրադեցրած դիրքերը տարածաշրջանի այլ բուհերի շարքում<sup>72</sup>

Դիրք	Բուհի անվանումը	Երկիրը
95	Բարձրի պետական համալսարան	Աղրբեջան
100	Խազար համալսարան	Աղրբեջան
161-170	Աղրբեջանի պետական տնտեսագիտական համալսարան	Աղրբեջան
171-180	Աղրբեջանի ճարտարապետական և շինարարական համալսարան	Աղրբեջան
171-180	Աղրբեջանի լեզվաբանական համալսարան	Աղրբեջան
181-190	Երևանի պետական համալսարան	Հայաստան
201-250	Բարձր Սլավոնական համալսարան	Աղրբեջան
201-250	Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան	Հայաստան
251-300	Վրաստանի տեխնիկական համալսարան	Վրաստան

տուրքան արդյունքներով՝ կազմվում է աշխարհի լավագույն համալսարանների ազատ վարկանիշավորման աղյուսակը: Աղյուսակում չեն ընդգրկվում այն համալսարանները, որոնք գրադկում են միայն հատուկ ոլորտի հետազոտություններով և թողարկում են 200-ից պակաս գիտական հրապարակումներ: Նախագծի հեղինակները նշում են, որ *Times Higher Education*-ի հետազոտական թիմն աշխատում է հնարավորինս օբյեկտիվ, բոլոր տվյալները, մեթոդաբանությունը բաց են և հասանելի բոլորին: Վարկանիշավորման հաշվարկը ստուգվում է *PricewaterhouseCoopers (PwC)* միջազգային առողջապահության ընկերության կողմից:

<sup>72</sup> <https://www.topuniversities.com/university-rankings/eeca-rankings/2018>

Ըստ 2018թ. տվյալների՝ լավագույն տասնյակում բրիտանական և ամերիկյան համալսարաններն են: Որպես կարևոր միտում նկատվում է չինական համալսարանների շարունակական առաջընթացը: Լավագույն 30 համալսարանների ցանկում են հայտնվել Պեկինի (27-րդ դիրք) և Սինհուայի (30-րդ դիրք) համալսարանները<sup>73</sup>: Նշվում է նաև, որ չինական բոլոր համալսարաններն են բարելավել դիրքերը նախորդ տարիների համեմատ: Մուսկվայի Մ.Վ. Լոմոնտոսովի անվան պետական համալսարանը նախորդ տարվա համեմատ նահանջել է 6 հորիզոնականով՝ զբաղեցնելով 194-րդ տեղը: Ընդհանուր առմամբ՝ ցանկում ընդգրկված է ռուսական 27 համալսարան: Մեր տարածաշրջանից ցանկում կա թուրքական 22 և վրացական 1 համալսարան (տե՛ս Աղյուսակ 3): Հայկական և ադրբեջանական և ոչ մի համալսարան այս տարի ևս ցուցակում ընդգրկված չէ<sup>74</sup>:

Ամփոփելով՝ փաստենք, որ Հայաստանը, չնայած նախորդ տարիների համեմատ առաջընթաց է արձանագրել և դիրքեր է զբաղեցրել *QS Eeca University Rankings* 2018թ. վարկանիշային համակարգում, բայց կրթության ոլորտում զիջում է իր հարևաններին:

Նախորդ ենթագլուխներում դիտարկված նյութերը թույլ են տալիս որոշակի պատկերացումներ կազմել ՀՀ գիտակրթական համակարգի իրավիճակի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, այդ պատկերացումները լիաժեք չեն կարող լինել, եթե չքննարկվեն նաև Սփյուռքի համապատասխան ռեսուրսները և Հայկա-

<sup>73</sup> <https://www.timeshighereducation.com/news/world-university-rankings-2018-results-announced>

<sup>74</sup> [https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort\\_by/rank/sort\\_order/asc/cols/stats](https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort_by/rank/sort_order/asc/cols/stats)

կան հանրությունում զիտական համագործակցության հնարավորությունները։ Ստորև համառոտ կքննարկվեն նաև այդ խնդիրները։

### *Աղյուսակ 3*

#### *Աշխարհի բուհերի լավագույն տասնյակը և մեր տարածաշրջանի լավագույն բուհերը<sup>75</sup>*

Դիրք	Բուհի անվանումը	Երկիրը
1	Օրսֆորդի համալսարան	Մեծ Բրիտանիա
2	Քեմբրիջի համալսարան	Մեծ Բրիտանիա
=3	Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ	ԱՄՆ
=3	Սթենֆորդի համալսարան	ԱՄՆ
5	Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ	ԱՄՆ
6	Հարվարդի համալսարան	ԱՄՆ
7	Փրինստոնի համալսարան	ԱՄՆ
8	Լոնդոնի Իմպերիալ քոլեջ	Մեծ Բրիտանիա
9	Չիկագոյի համալսարան	ԱՄՆ
=10	Ցյուրիխի բարձրագույն տեխնիկական դպրոց	Շվեյցարիա
=10	Փենսիլվանիայի համալսարան	ԱՄՆ
194	Մուկվայի Մ.Վ. Լոմնոսովի անվան պետական համալսարան	Ուկրաինա
301-350	Քոչ համալսարան	Թուրքիա
1001+	Թրիլիսիի Ի.Զավալիշիշվիլու անվան պետական համալսարան	Վրաստան

<sup>75</sup> [https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort\\_by/rank/sort\\_order/asc/cols/stats](https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2018/world-ranking#!/page/0/length/-1/sort_by/rank/sort_order/asc/cols/stats)

## **2.10 Գիտակրթական համակարգը որպես կրիտիկական ոլորտ Հայաստան - Միջուռք հարաբերություններում**

Ազգային ներուժի բացահայտման և համախմբման խնդիրը յուրահատուկ բնույթ ունի սփյուռք ունեցող երկրների համար: Այդպիսի պետություններում, բացի ներքին ռեսուրսներից, կարևորվում է նաև արտաքինը՝ ի դեմս սփյուռքյան համայնքների: Վերջիններս ցանկացած երկրի համար կարևոր ներուժ են՝ մարդկային, տնտեսական, քաղաքական (որպես լորրիստական գործունեության միջոց) և այլ առումներով: Սփյուռքի հնարավորություններն օգտագործելու խնդիրը չպետք է դիտարկվի պարզունակ՝ արտերկրի համայնքներից միակողմանի օգնություն ստանալու ձևով, որի հիմքում ընկած են ազգային զգացմունքները, այն է՝ սեփական երկրից հեռու բնակվող մարդկանց՝ հայրենիքին և հայրենակիցներին օգնելու անկեղծ մղումը: Սփյուռքի հետ համագործակցությունն արդյունավետ է այն ժամանակ, եթե խարսխավում է համազգային նպատակներին ծառայող փոխշահավետ գործողությունների վրա:

Քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներից բացի, կարևոր նշանակություն ունի նաև Հայրենիք-Սփյուռք գործակցությունը գիտության և ընդհանրապես մտավոր գործունեության ոլորտում, քանի որ հատկապես ժամանակակից աշխարհում դժվար է գերազնահատել մտավոր ներուժի դերն ազգերի և պետությունների հաջողություններում: Սույն հանգամանքը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պատկան մարմինների համար հրամայական է դարձնում Սփյուռքի մտավոր ռեսուրսների բացահայտման, համախմբման, համագործակցության ուղիների մշակման հարցը:

Գիտության ոլորտի կրիտիկականությունը հայրենիք-սփյուռք կապերում հատկապես այն է, որ կոչված է ապահովելու երկրի զարգացումը: Ցանկացած երկիր առանց զարգացման դատապարտված է լճացման ներքին կյանքում և «գաղութացման» հզոր պետությունների կողմից: Խոսքն առավել ևս վերաբերում է Հայաստանին, որն ունի սահմանափակ տարածք, սահմանափակ բնական հարատություններ և անբարենպաստ քաղաքական միջավայր (շրջափակվածությունը թուրքիայի և Ադրբեյջանի կողմից):

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության անկուսից հետո տնտեսության, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտների հետ միասին ծանր հարված ստացավ նաև գիտությունը: Դա պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

**Գիտության ոլորտի ֆինանսավորման կտրուկ անկուս.** Ընդհանուր տնտեսական գննաժամը հանգեցրեց նաև պետության կողմից գիտության ոլորտի հատկացումների կտրուկ նվազմանը: Եթե խորհրդային տարիներին Հայաստանում գիտության ոլորտին հատկացվող գումարը կազմում էր շուրջ \$600 մլն, ապա այժմ այդ գումարը կազմում է մոտ \$25 մլն:

**Գիտատար արդյունաբերության քայլայում.** Ընդհանուր տնտեսական անկման համապատկերում քայլայվեցին նաև գիտատար արդյունաբերության շատ ձյուղեր, փակվեցին բարձր-տեխնոլոգիական բազմաթիվ գործարաններ: Արդյունքում՝ նվազեց գիտատար արդյունաբերության ձյուղերի համար համապատասխան հետազոտությունների, ինչպես նաև տեխնոլոգիական գործարաններն անհրաժեշտ բարձրորակ կադրերով (ինժեներներ, ծրագրավորողներ և այլն) ապահովելու անհրաժեշտությունը:

**«Ուղեղների արտահոսք».** Գիտության ոլորտում նկատվող լճացման և կազմալուծման միտումները հանգեցրին նաև մեծ թվով գիտաշխատողների արտագաղթին: Նկատենք, որ «ուղեղների արտահոսքը» ենթադրում է նաև գիտաշխատողների մասնագիտական գործունեության դադարեցում և անցում այլ բնույթի գործունեության:

**Նախկին խորհրդային երկրների հետ գիտական կապերի խզումը.** Նախկին խորհրդային երկրներն ինտեգրված էին ոչ միայն տնտեսապես, քաղաքականապես, ռազմապես, այլ նաև գիտատեխնոլոգիական ոլորտում: Հայաստանն իր ուրույն տեղն ուներ ԽՍՀՄ գիտության համակարգում և կոչված էր սպասարկելու այդ հսկա տերության պահանջները: ԽՍՀՄ անկմամբ մի կողմից՝ խզվեցին գիտական կապերը նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ, մյուս կողմից՝ Հայաստանի գիտությունն այլևս չէր սպասարկում Խորհրդային Միության պահանջները և ստանձնում էր նոր առաքելություն՝ սպասարկել միայն ՀՀ պահանջները: Գիտության դերի և առաքելության այս կտրուկ փոփոխությունն էլ դարձավ ճգնաժամային երևույթների պատճառ: Դրա հաղթահարման համար անհրաժեշտ էր որոշակի աղապտացիոն շրջան՝ նոր իրողություններին հարմարվելու համար, որը դեռևս շարունակվում է:

Արտերկրում հայ մտավորականներն իրենց գործունեությունը ծավալում են ինչպես կոնկրետ երկրների ակադեմիական կառույցների և «ուղեղային կենտրոնների», այնպես էլ հայկական կառույցների շրջանակներում: Ըստ այդմ՝ սփյուռքի գիտավերլուծական ներուժը կարելի է բաժանել երկու մակարդակի՝ անհատական և ինստիտուցիոնալ:

**Անհատական մակարդակում առհասարակ դժվար է գե-**

բազնահատել ակադեմիական կառույցների և «ուղեղային կենտրոնների» գիտաշխատողների դերը գործնական քաղաքականության կերտման մեջ: Աշխարհի առաջատար երկրներում պետական քաղաքականություն իրականացնող մարմինները, կուսակցությունները և այլ քաղաքական ակտորները, իրենց գործնական քաղաքականությունն իրականացնելիս, հիմնվում են վերջիններիս իրականացրած մշակումների և վերլուծությունների վրա: Այլ կերպ ասած՝ գիտական և փորձագիտական հանրության մտավոր արտադրանքը հաճախ պայմանավորում է իշխանությունների ընդունած որոշումների բնույթն ու բովանդակությունը:

Բնակվելով աշխարհի տարբեր, այդ թվում նաև առաջատար երկրներում՝ հայազգի մտավորականներն ընդգրկվում են այդ երկրների գիտական և վերլուծական կառույցների գործունեության մեջ: Նրանք կարևոր դերակատարում ունեն ԱՄՆ, ՌԴ, Եվրոպական և ԱՊՀ երկրների հետազոտական և ակադեմիական կառույցներում, ինչպես նաև գործնական քաղաքականության վրա անմիջական ազդեցություն ունեցող վերլուծական կառույցներում<sup>76</sup>:

Արտերկրի հայության մտավոր ներուժը (թե՝ ակադեմիական և թե՝ փորձագիտական ոլորտներում) արդյունավետ օգտագործվելու պարագայում կարող է զգալի օգուտներ բերել թե՝ Հայաստանին, թե՝ Սփյուռքին: Լինելով աշխարհի առաջատար տերությունների գիտական և փորձագիտական հանրությունների մի մասը՝ նրանք ավելի լավ են տեղեկացված իրենց բնակության երկրների քաղաքական իրավիճակին, ներքին և արտաքին

<sup>76</sup> Նրանցից շատերը զգալի հաջողությունների են հասել, օրինակ, կարելի է նշել ԱՄՆ Քարնեգիի հիմնադրամի նախազան Վարդան Գրեգորյանին, Բարուխի Բոլեզի դեկան Երվանդ Աբրահամյանին:

քաղաքական գործընթացներին և դրանց միտումներին, իշխանությունների և ընդդիմության տրամադրություններին: Այս ամենը եթե ոչ անմիջականորեն, ապա միջնորդավորված կերպով անդրադառնում է մեր տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակի, այդ թվում նաև Հայաստանի տարածաշրջանային իրավիճակի վրա: Նրանցից շատերը համաշխարհային գործընթացներից, աշխարհի այս կամ այն տարածաշրջանում կամ երկրում տեղի ունեցող կամ սպասվելիք իրադարձություններից տեղեկացված լինելու ավելի լայն հնարավորություններ և հասանելիություն ունեն, քան հայաստանյան գիտական կամ փորձագիտական շրջանակները: Իսկ զլորալացման ներկա պայմաններում աշխարհի տարբեր կետերում տեղի ունեցող իրադարձությունները, համաշխարհային գործընթացներն առավել ևս չեն կարող չափել ՀՀ քաղաքական, տնտեսական դրության վրա: Սփյուռքահայ գիտնականներն ու փորձագետներն իրենց երկրների գիտական և փորձագիտական մշակույթի ու փորձի (ամերիկյան, ռուսական, եվրոպական և այլն) կրողներն են, ինչի փոխառումը կամ ներմուծումը Հայաստան կարող է զգալիորեն հարստացնել տեղի գիտական և փորձագիտական մշակույթն ու փորձը՝ էապես մեծացնելով հայաստանյան նոր ձևավորվող փորձագիտական դպրոցի մտավոր կարողությունները:

Հայաստանի Հանրապետությունն իր ձևավորումից (1918թ.) ի վեր վարել է հայրենիքի հովանու ներքո Հայության մտավոր ներուժի համախմբման և այն ազգային շահերին ծառայեցնելու քաղաքականություն: Այդ նպատակով են թե՛ Առաջին և թե՛ Երկրորդ հանրապետություններում կազմակերպվել արտերկրում բնակվող հայկական մտավոր, քաղաքական, գինվորական և այլ շրջանակների ներկայացուցիչների «հայրենադարձության»

ծրագրեր: Օրինակ, 1920-ական թթ. Ալ.Մյասնիկյանի իրականացրած արտերկրի հայկական մտավորական ռեսուրսների մի մասի վերադարձը նորաստեղծ Խորհրդային Հայաստան և նրանց մեծ ավանդը վերջինիս զարգացման գործում՝ այդ քաղաքականության ամենավառ դրսւորումներից են:

Մեր օրերում համաշխարհային նոր իրողությունները ենթադրում են Հայության ներուժի համախմբման ավանդական ձևերին և եղանակներին ավելացնել նորերը: Տեղեկատվական և հեռահաղորդակցական միջոցների զարգացմամբ պայմանավորված՝ ցանցային կառուցների հետզհետե աճող դերը հանրային կյանքում հարկադրում է Հայաստանի 3-րդ Հանրապետության պատկան մարմիններին գործնական կյանքում կիրառել Սփյուռքի ներուժի համախմբման և արդյունավետ օգտագործման համապատասխան մեխանիզմներ: Թեև սույն խնդիրը լրջագույն հետազոտություններ և մանրամասն վերլուծություններ է պահանջում, սակայն ներկա պահին կարելի է կատարել որոշ նախնական դիտարկումներ:

Ներկայում արտերկրի հայության մտավոր ներուժը Հայության խնդիրների լուծմանը ծառայեցնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել արդի պայմաններին բնորոշ մի շարք իրողություններ: Օրինակ՝ արտերկրում ինտելեկտուալ ոլորտում բարձր դիրքի հասած հայազգի մտավորականները միշտ չեն, որ մասնակցում են համայնքային կյանքին և հիմնականում ինտեգրված են տվյալ երկրի հասարակությանը: Նրանց մտավոր գործունեության արդյունքները կարծես թե լիովին ի սպաս են դրվում այդ երկրների պետական-քաղաքական կառուցներին՝ ծառայեցվելով վերջիններիս ազգային շահերին: Մեր օրերում նրանց զանգվածային հայրենադարձությունը՝ վերադարձը և բնակությունը

Հայաստանում, իրատեսական չէ՝ հաշվի առնելով, մի կողմից, նրանց խոր ինտեգրվածությունն իրենց երկրների կյանքում, մյուս կողմից՝ ՀՀ ոչ այնքան բարենպաստ պայմանները:

Սույն իրողությունները հաշվի առնելով՝ նպատակահարմար է շեշտը դնել արտերկրի հայ գիտնականների և փորձագետ-վերլուծաբանների հետ հեռավար աշխատանքի վրա, ինչը կարող է ստանալ դրսենորման հետևյալ ձևերը.

**Անհատական հետազոտությունների պատվիրում.** Հայաստանի և Հայկական հանրության համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կարելի է բարձրորակ հետազոտություններ պատվիրել Սփյուռքի ներկայացուցիչ հայ փորձագետներին:

**Կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում.** Նման թեմաներով կարելի է պատվիրել նաև կոլեկտիվ հետազոտություններ, որում ընդգրկված կլինեն Սփյուռքի մեկից ավելի փորձագետներ և գիտնականներ: Այս կերպ, ըստ էության, կձևավորվեն Սփյուռքի հայ փորձագետների աշխատանքային խմբեր:

**Տարրեր ձևաչափերով հանդիպում-քննարկումների կազմակերպում.** Կոնկրետ խնդիրների շուրջ (Ղարաբաղյան հիմնահարց, հայ-թուրքական հարաբերություններ, Հայաստանի գարգացման ռազմավարություն և այլն) կարելի է Հայաստանի և Սփյուռքի գիտնականների ու փորձագետների մասնակցությամբ կազմակերպել պարբերական գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլ ձևաչափերով հանդիպում-քննարկումներ: Նպատակահարմար է լայնորեն կիրառել ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների հնարավորությունները (օրինակ՝ առցանց դասախոսությունների, գիտաժողովների և այլնի կազմակերպում):

Հարկ է նշել, որ 2012թ. ՀՀ Սփյուռքի նախարարության, «Նորավանք» ԳՎՀ-ի և ԵՊՀ-ի կողմից կազմակերպված «Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողովը», թերևս, այս ուղղությամբ առաջին և, ցավոք, առաջմ վերջին քայլն էր<sup>77</sup>: Համաժողովի թեման ընդհանրական էր՝ «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները», ինչն առաջին նմանատիպ համաժողովի համար բնական է: Հետագա նման համաժողովների կազմակերպման ժամանակ, սակայն, թեմատիկայի ընտրության հարցում նպատակահարմար է կենտրոնանալ ավելի կոնկրետ խնդիրների վրա:

Արտերկրի հայ գիտնականների և փորձագիտական հանրության հետ հեռավար աշխատանքի դյուրացումը և արդյունավետության բարձրացումն անխուսափելիորեն ենթադրում են նաև ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում, որոնց ամբողջությունը պետք է ունենա ցանցային նկարագիր: Ըստ այդմ՝ նպատակահարմար է տարբեր երկրներում (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա և այլն) հասարակական կազմակերպությունների կարգավիճակով ստեղծել հայ փորձագետների միություններ: Ակնհայտ է, որ նման կառույցների հետ աշխատանքն ավելի մեծ արդյունավետություն կարող է ունենալ, քան առանձին անհատ փորձագետներինը: Ցանցային կառուցվածքը ենթադրում է, որ առանձին երկրների հայ փորձագետներին միավորող կառույցներն, իրենց հերթին, միավորվեն տարածաշրջանային, իսկ վերջիններս էլ՝ համահայկական միության մեջ: Այս պարագայում,

<sup>77</sup>ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած այլ մասնագիտությունների գծով (քիչկներ, ճարտարապետներ, իրավաբաններ և այլն) համահայկական համաժողովները նույնպես տեղափորվում են անհատական մակարդակով Սփյուռքի ներուժի համախմբման ուղղությամբ իրականացված քայլերի համատեքստում:

բացի այն, որ Սփյուռքի մտավոր ներուժի կազմակերպումը կստանա ցանցային կառույցի տեսք, ևս մեկով կավելանա նաև համազգային կառույցների թիվը: Իսկ համազգային կառույցների հետ աշխատանքը շատ ավելի արդյունավետ է դարձնում Հայաստան-Սփյուռք գործակցությունը:

Հաստատությունների (ինստիտուտների) մակարդակով ազգային մտավոր ներուժի բացահայտումն ու հաշվառումը, Հայրենիք-Սփյուռք գործակցությունն առավել կարևոր են հատկապես այն առումով, որ համակարգային խնդիրներ լուծելիս խմբային աշխատանքն ակնհայտորեն ավելի արդյունավետ է, քան անհատականը: Որպես Սփյուռքի մտավոր գործունեության բնագավառում գործող ինստիտուտներ հիմնականում հանդես են գալիս հայագիտական կենտրոնները, որոնց թիվը ներկայում անցնում է հարյուրից (Զորյան ինստիտուտ, Հայկագյան համալսարան, Վենետիկի Մխիթարյան միաբանություն և այլն): Վերջիններս, միասին վերցրած, կազմում են արտերկրում հայագիտության հիմնական հայկական մտավոր ներուժը<sup>78</sup>:

Սփյուռքի հայագիտական կենտրոնները, ունենալով ընդհանուր հայագիտական թեմատիկ ուղղվածություն, այլ հատկանիշներով տարբերվում են միմյանցից: Օրինակ, ըստ գործունեության ձևի՝ դրանք կարող են ունենալ գիտակրթական, հետազոտական, վերլուծական և այլ բնույթ, կամ տարբեր կարող են լինել դրանց ֆինանսավորման աղյուրներ:

<sup>78</sup> Ինստիտուցիոնալ մակարդակում արտերկրում գործում են նաև գիտատեխնիկական ոլորտում աշխատող հայկական գիտական և մասնագիտական հանրույթները համախմբող, գիտահետազորտական գործունեություն իրականացնող, հայաստանյան գիտական կազմակերպություններին և անհատ գիտնականներին աշակերդ կազմակերպություններ, ինչպիսիք են Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը, Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամը, Հայաստանի համար վերլուծությունների և պլանավորման ARPA ինստիտուտը և այլն:

Ինչ վերաբերում է թեմատիկ ուղղվածությանը, ապա հարկ է նշել, որ հայագիտությունը լայն գիտական բնագավառ է և ունի իր ներքին ուղղություններն ու ճյուղավորումները։ Հետևաբար, ընդհանուր հայագիտական ուղղվածությունը բնավ չի նշանակում միօրինակություն հայագիտական կենտրոնների գործունեության թեմատիկայում։ Որոշ կենտրոններ ունեն քաղաքական թեմատիկ ուղղվածություն, մյուսները՝ ազգագրական, սփյուռքագիտական և այլն։

Գործնական նշանակության առումով Սփյուռքի հայագիտական կենտրոնների հետ համագործակցությունը հանգում է դրանց բացահայտված և գնահատված ներուժն առավել արդյունավետությամբ ՀՀ, Արցախի Հանրապետության և Հայության շահերին համադասելուն։ Այն ենթադրում է։

*Հսու ներուժի՝ հայագիտական կենտրոնների համար նպատակային գործունեության ոլորտների, մակարդակների և խնդիրների նախանշում;*

*Հայագիտական կենտրոնների ներուժի բարձրացման եղանակների մշակում;*

*Համագործակցության ընդհանուր ոլորտների, նպատակների և մեխանիզմների վերհանում։*

Չնայած Սփյուռքի հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացման խիստ գործնական հարցը ենթադրում է լուրջ գիտական հետազոտություններ և մանրամասն վերլուծություններ, սակայն այս պահին արդեն խսկ կարելի է անել մի շարք դատողություններ, որոնք կարող են ուղենիշ դառնալ հետագա ուսումնասիրությունների համար։

Խոսքը վերաբերում է հայագիտական կենտրոնների իրա-

կանացրած հետազոտությունների ոլորտներին։ Այդ հետազոտություններն իրենց բնույթով և նշանակությամբ կարելի է բաժանել երեք մասի՝ ճանաչողական, քարոզական և կիրառական։

*Ճանաչողական բնույթի հետազոտությունները* կենտրոնանում են հիմնականում հայոց պատմության, հայ բանասիրության, հայկական մշակույթի, ազգագրության և այլ գիտական ուղղությունների տարաբնույթ խնդիրների վրա։

*Քարոզական բնույթի հետազոտությունները* հիմնականում կատարվում են ցեղասպանագիտության ոլորտում։ Դրանց նպատակն է ինչպես Հայությանը, այնպես էլ համաշխարհային հանրությանը ծանոթացնել Մեծ եղեռնի արհավիրքներին։ Քարոզական բնույթի հետազոտությունների մեջ, բացի ցեղասպանագիտական հետազոտություններից, որոշակի տեղ ունեն նաև Հայ դատի այլ խնդիրներին նվիրված ուսումնասիրություններ։

*Կիրառական բնույթի հետազոտությունները* միտված են ազդեցություն ունենալու գործնական քաղաքականության վրա՝ նպաստելով գործնական հարթությունում համազգային խնդիրների լուծմանը։

Ճանաչողական և քարոզական բնույթի հետազոտությունները, չնայած անմիջականորեն մեծ ազդեցություն չեն գործում գործնական քաղաքականության վրա, այնուամենայնիվ, լիովին գուրկ չեն կիրառականությունից։ Ճանաչողական բնույթի հետազոտությունների պարագայում կիրառականությունը Սփյուռքում հայ ինքնության, ազգային ինքնազիտակցության ու մշակույթի պահպանման և զարգացման մեջ է։ Քարոզական բնույթի հետազոտությունների կիրառականությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտ-

ման, ինչպես նաև Հայ դատի հիմնախնդիրների լուծման ասպարեզում հնարավորինս բարենպաստ հասարակական կարծիքի ձևավորումն է:

Կարևորելով ճանաչողական և քարոզչական բնույթի հետազոտությունների նշանակությունը, որոնք գերակշռում են Սփյուռքի հայագիտական կենտրոնների գործունեության մեջ, պետք է նշել, որ պակաս կարևոր չեն նաև կիրառական բնույթի հետազոտությունները, որոնց առաջմ բավարար տեղ չի տրվում:

Կարծում ենք, որ կիրառական բնույթի հետազոտությունները նպատակահարմար է կենտրոնացնել այն հրատապ հիմնահարցերի վրա, որոնք ներկայում ծառացած են ինչպես Հայության, այնպես էլ ՀՀ-ի և ԼՂՀ-ի առջև: Այդ հետազոտությունների կիրառականությունը կլինի Հայության, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի առջև ծառացած ժամանակակից հրատապ հիմնախնդիրների լուծման գործնական ուղիների մշակումը՝ նախապես վերհանելով այդ խնդիրների առաջացման պատճառներն ու հանգամանքները:

Որպես Հայկական հանրության առջև ծառացած հիմնահարցեր՝ անհրաժեշտ ենք համարում կենտրոնանալ հետևյալ հիմնական խնդիրների վրա.

**Հայ դատ.** Այս ոլորտում հետազոտությունները նպատակահարմար է կենտրոնացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, պատճառված վնասի վերականգնման, փոխհատուցման և այլ խնդիրների լուծման համար նպաստավոր քաղաքական, իրավական և այլ ուղիների մշակման վրա:

**Հայաստանի ապաշրջափակում.** Այս հարցում նպատակահարմար է հետազոտությունների առարկա դարձնել թուր-

քիայի և Աղրբեջանի կողմից ՀՀ և ԼՂՀ շրջափակման վերացման պայքարում արդյունավետ ռազմավարության ու մարտավարության մշակման, համարժեք մեթոդների ընտրության հարցերը:

*Արցախյան հիմնահարցի հայանպաստ լուծում.* Այս ոլորտում խնդիրները նույնպես ընդգրկում են լայն շրջանակ՝ Աղրբեջանի ռազմատենչ քաղաքականության զապումից մինչև Արցախի անկախության իրավական ձանաչում:

*ՀՀ և ԼՂՀ զարգացման ծրագրերը<sup>79</sup>.* Խոսքը հայկական երկու հանրապետությունների սոցիալ-տնտեսական, գիտամշակութային, կրթական, ռազմական, ժողովրդագրական զարգացման, ինչպես նաև նրանց խոր ինտեգրման մասին է<sup>80</sup>: Այս ոլորտը նույնպես ունի ռազմավարական նշանակություն, քանի որ առանց համապարփակ զարգացման և ինտեգրման՝ մեր ժամանակներում լուրջ սպառնալիքի տակ կդրվի ՀՀ և ԼՂՀ անվտանգությունը:

Առաջին երեք հիմնախնդիրների ուղղությամբ հայագիտական կենտրոնները համագործակցության մեծ դաշտ ունեն Սփյուռքի լոքատական կառույցների հետ: Մինչև այժմ վերջինները Հայոց ցեղասպանության միջազգային ձանաշման և դատապարտման, Հայաստանի ապաշրջափակման, Ղարաբաղյան հակամարտության հայանպաստ կարգավորման համար պայքարում հիմնականում չեն օգտվել հայագիտական կենտրոնների գիտական աջակցությունից: Մինչդեռ այդ աջակցու-

<sup>79</sup> ՀՀ և ԼՂՀ զարգացման հիմնախնդիրներին անդրադարձ կատարելիս չպետք է մոռացնել անտառապահության մատնվի նաև Զավախքը, որը Հայության աշխարհընկալումներում պիտի չտարբերվի Հայաստանի տարածաշրջաններից (Լոռի, Կոտայք, Գեղարքունիք և այլն):

<sup>80</sup> Խոր ինտեգրման վերջնանպատակը ՀՀ և ԼՂՀ միավորումն է մեկ պետական համակարգում, ինչին էլ պետք է միտված լինի մշակվող ծրագրերի տրամադրանությունը:

թյունը կարող է էապես նպաստել նրանց պայքարի արդյունավետության բարձրացմանը: Լոբբիստական կառույցների և հայագիտական կենտրոնների համագործակցության արդյունքում վերջիններս կարող են վերածվել Սփյուռքի յուրահատուկ «ուղեղային կենտրոնների՝ գիտականորեն սպասարկելով լոբբիստական կառույցների գործունեությանը:

Ինչ վերաբերում է ՀՀ և ԼՂՀ զարգացման ծրագրերին, ապա այս հարցում համագործակցության մեծ տեղ կա վերջիններիս իշխանությունների, քաղաքական ուժերի, ինչպես նաև գիտական և վերլուծական կառույցների հետ:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ վերջին տասնամյակներում սփյուռք ունեցող այլ երկրները նույնպես ուշադրության կենտրոնում են պահում արտերկրում բնակվող իրենց հայրենակիցների խնդիրները: Մասնավորապես, գիտական սփյուռքի հետ կայուն և արդյունավետ փոխգործակցության կամուրջներ հիմնելը սփյուռք ունեցող մի շարք պետությունների համար դարձել է հրամայական: Հայրենական գիտակրթական համակարգի բարեփոխման, բարձր տեխնոլոգիաների և այլ գիտաճյուղերում նրանց մասնագիտական կարողությունների ներդրման ու համագործակցության խթանման նպատակով ստեղծվել են սփյուռքում բնակվող գիտնականների վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ, գիտնականներին միավորող համացանցային ռեսուրսներ (համացանցային պորտալներ), քանակական և որակական մակարդակներում գնահատականներ ստանալու համար իրականացվում է մշտադիտարկում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այս հարցի հետ կապված սփյուռքի տեսակետներն ու մտահոգությունները՝ ուսումնասիրվում են գիտական սփյուռք-պետություն համագործակցու-

թյան հնարավոր եղանակներն ու մեխանիզմները, այդ հարաբերությունների ստեղծման ձանապարհին ի հայտ եկող խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ռազմավարական քայլերի ողջ համալիրը, փոխադարձ ակնկալիքները, միջազգային փորձը, հայրենադարձության և այլ հարցեր:

Ուշագրավ է, որ ներկայում համապետական նշանակության տարրեր նախագծերի շրջանակներում սփյուռքի գիտական ներուժին ուղղված քայլեր են ձեռնարկում հետխորհրդային պետություններից՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ադրբեյջանը, Մոլդովան, Բելառուսը, Ղազախստանը, հարևան երկրներից՝ Թուրքիան, Իրանը, ավելի գլոբալ առումով՝ Չինաստանը, Հնդկաստանը, Արգենտինան և այլ պետություններ:

Ըստ եռլթյան, այսպիսի քաղաքականության շնորհիվ դրվում են Սփյուռքի հետ կապերի և համագործակցության նոր ձևաչափի հիմքերը, որի պահպանման համար անհրաժեշտ է գործադրել երկկողմանի ջանքեր:

Հայկական հանրության գիտակրթական համակարգի մշակումը ենթադրում է նաև այլ երկրների փորձի ուսումնասիրություն: Այդ տեսանկյունից ուսուցողական կարելի է համարել Գերմանիայի, ինչպես նաև նախկինում՝ Հայաստանի 2-րդ Հանրապետության գիտական քաղաքականությունները, որոնք և կղիտարկվեն հաջորդ ենթագլխում:

## ***2.11 Գիտական համակարգի մոդելները***

Ինչպես հայտնի է, պետական մասնակցությունը հատկապես նշանակալի է գիտական և տեխնոլոգիական զարգացման, մասնավորապես՝ ռազմարդյունաբերական ոլորտում: Տնտեսու-

թյան, արդյունաբերության, գիտության և տեխնոլոգիաների ռազմավարական պետական պլանավորման մարմիններ կան համարյա բոլոր տեխնոլոգիապես զարգացած պետություններում։ Դիտենք գիտության և տեխնոլոգիաների պետական աջակցության համակարգը Գերմանիայի օրինակով [1]։ Արդի Հայաստանի համար այն ունի առանձնակի հետաքրքրություն այն առումով, որ ԽՍՀՄ-ում և համապատասխանաբար 2-րդ Հանրապետությունում գիտակրթական ոլորտի կառավարման համակարգը շատ մոտ է եղել գերմանական համակարգին։ Գերմանիայի ներկայիս և 2-րդ Հանրապետության փորձի համադրումը կարող է հուշել արդի Հայաստանի գիտական համակարգի զարգացման նոր ուղիներ։

**Գերմանիայի գիտական համակարգը.** Այս երկրում գիտության և տեխնոլոգիաների կառավարումը և պետական ֆինանսավորումն իրականացվում են և՝ դաշնային, և՝ մարզային մակարդակներում։ Գերմանիայի խորհրդարանում՝ Բունդեսթագում, գործում է Կրթության, գիտության և տեխնոլոգիաների գնահատման մշտական հանձնաժողով, իսկ գիտատեխնիկական քաղաքականության հարցերով գրադիվում են Գիտության և կրթության դաշնային նախարարությունը և 16 մարզերի նույնանուն նախարարությունները<sup>81</sup>։ Դաշնային և 16 մարզային էկոնոմիկայի և տեխնոլոգիաների նախարարությունները պատասխանատու են ինովացիոն և տեխնոլոգիական քաղաքականության հարցերում<sup>82</sup>։ Բացի դրանից, Էկոնոմիկայի և տեխնոլոգիաների դաշնային նախարարությունն իրականացնում է

<sup>81</sup>ՀՀ ԱԺ-ում գործում է Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով։

<sup>82</sup>Հայաստանում գործում է Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, որի կազմում կա Էնովացիոն տեխնոլոգիաների զարգացման վարչություն։

զիտական հետազոտությունների և տեխնոլոգիական մշակումների նպատակային ծրագրեր էներգետիկայի, տրանսպորտի, տիեզերական հետազոտությունների ոլորտներում<sup>83</sup>: Դաշնային և մարզային ձյուղային նախարարություններն ունեն իրենց ոլորտների զիտահետազոտական ինստիտուտները: Դաշնային և մարզային զիտական և տեխնոլոգիական հետազոտությունների ու մշակումների համակարգման նպատակով գործում է Միասնական զիտական կոնֆերանս կազմակերպությունը: Իսկ դաշնային կանցլերի աշխատակազմին կից գործում է Գիտական հետազոտությունների և ինովացիաների հարցերով փորձագիտական խորհուրդ:

Գիտության գերմանական խորհուրդը (*WR*) զիտության, հետազոտությունների և բարձրագույն կրթության հարցերով Դաշնային և մարզային կառավարությունների առաջատար խորհրդատվական մարմինն է: Այն զեկույցներ և խորհրդատվություն է մշակում զիտական հիմնարկների կառուցվածքի, գործունեության, զարգացման և ֆինանսավորման, ինչպես նաև զիտության և բարձրագույն կրթության ընդհանուր հարցերով, այդ թվում՝ հետազոտությունների և դասավանդման, կոնկրետ ոլորտների ռազմավարական պլանավորման, գնահատման և կառավարման հարցերով:

Գիտության ֆինանսավորման մարմիններից է Գերմանական հետազոտական հիմնադրամը, որը կարևորագույն դեր ունի Գերմանիայում հիմնարար գիտության ֆինանսավորման հարցում, քանի որ բազային ֆինանսավորումը համալրում է

<sup>83</sup>Օրինակ, 2012-2013թթ. Գերմանիան 1 մլրդ եվրո է հատկացրել կեկտրամոբիլների արտադրության ոլորտում՝ կեկտրաշարժիչների, կեկտրական կուտակիչների և նոր նյութերի մշակումների զիտահետազոտական և նախագծային հետազոտությունների համար:

նպատակային ֆինանսավորմամբ: Դաշնային և մարզային բոլոր նախարարությունները գիտության և տեխնոլոգիական մշակումների համար պետական ֆինանսավորումը հատկացնում են Գիտության ֆինանսավորման գործակալությունների միջնորդ, որոնք, որպես կանոն, գտնվում են խոշոր գիտահետազոտական կենտրոններում: Իսկ անհրաժեշտ ֆինանսական միջոցները հավաքագրվում են *KfW*-պետական բանկում, որի բաժնեմասերի 80%-ը պատկանում է դաշնային, իսկ 20%-ը՝ մարզային կառավարություններին:

Պետական ոչ համալսարանական գիտահետազոտական կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունն աշխատում է հետևյալ չորս ասոցիացիաների հովանու ներքո.

1. Մարս Պլանի ընկերություն. հովանավորում է 80 ինստիտուտ, գիտահետազոտական ստորաբաժանումներ և աշխատանքային խմբեր, որոնք գործում են հիմնականում հիմնարար հետազոտությունների ոլորտում, հատուկ ուշադրություն է հատկացնում կենսաբժշկությանը, ֆիզիկական քիմիային, սոցիալական և հումանիտար գիտություններին:
2. Ֆրաունհոֆերի ընկերություն. հովանավորում է 80-ից ավելի՝ հիմնականում կիրառական գիտությունների ոլորտի կազմակերպությունների: Բացի դրանից, գիտատեխնոլոգիական փորձաքննություններ է իրականացնում միջին և փոքր բիզնեսի կազմակերպությունների համար:
3. Հելմհոլցի ասոցիացիա. Գերմանիայի խոշորագույն գիտական ասոցիացիան է, որի կազմում միավորված է 16 գիտական կենտրոն, որոնք սարքավորումներ են արտադրում տարբեր գիտական կազմակերպությունների հա-

մար: Բայց դրանից, Հելմիոլցի ասոցիացիան համալսարանների, գիտական այլ կազմակերպությունների, հատկապես՝ Լեյբնիցի ասոցիացիայի հետ համատեղ իրականացնում է հետազոտություններ վեց ռազմավարական բարձրտեխնոլոգիական ուղղություններով՝ էներգետիկա, Երկիր և շրջակա միջավայր, առողջապահություն, հանգուցային տեխնոլոգիաներ, նյութի կառուցվածք և աերոնավտիկա:

4. Լեյբնիցի ասոցիացիա. ընդգրկում է 86 գիտահետազոտական կազմակերպություն և ծառայողական կենտրոն: Գործունեության կիզակետերն են պրոբլեմային ուղղվածության հիմնարար և կիրառական հետազոտությունների համակցման ոլորտները:

Նշենք, որ այս ասոցիացիաները տարբերվում են իրենց կենտրոնացվածության աստիճանով: Մաքս Պլանկի և Ֆրաունհոֆերի ասոցիացիաները ինտեգրված և խիստ կենտրոնացված ասոցիացիաներ են, իսկ Հելմիոլցի և Լեյբնիցի ասոցիացիաները հովանոցային կազմակերպություններ են, որոնց անդամակցում են իրավաբանորեն անկախ գիտահետազոտական ինստիտուտներ:

*Գերմանիայի գիտությունների ակադեմիայի<sup>84</sup> հիմնական գործառույթն է խորհրդատվությունը Գերմանիայի կառավարական մարմիններին և գերմանական գիտության ներկայացումը միջազգային ասպարեզում: Ակադեմիան գիտաժողովների և այլ միջոցառումների միջոցով համագործակցում է այլ երկրների գիտությունների ակադեմիաների, գիտնականների և գիտական*

<sup>84</sup> Հիմնադրել է 1652-ին Հռոմեական սրբազն կայսրության Լեոպոլդ I կայսրը, մինչև 2008թ. այն կոչվում էր Գերմանիայի բնագետ-գիտնականների ակադեմիա «Լեոպոլդինա»:

կազմակերպությունների հետ։ Կազմակերպում է բազմաթիվ հանդիպումներ, սիմպոզիումներ, տարեկան համաժողովներ, կոնֆերանսներ, ինչպես նաև պարբերական ամսական դասախոսություններ և գիտապատմական սեմինարներ։ Աջակցում է երիտասարդ գիտնականներին, այդ թվում ֆինանսավորում է նրանց գիտական հետազոտություններն ու գիտական նախագծերը։ Ակադեմիայի բոլոր գիտական միջոցառումները բաց են բոլորի համար, իսկ աշխատանքները հրատարակվում են «*Nova Acta Leopoldina*», «*Acta Historica Leopoldina*» և «*Jahrbuch*» պարբերականներում։

Ակադեմիան ներկայում ունի մոտ 1500 անդամ, որոնց երեք քառորդը գերմանալեզու երկրներից են՝ Գերմանիա, Ավստրիա և Շվեյցարիա։ Ակադեմիայի 58 բաժանմունքները միավորված են չորս ուղղություններում՝ մաթեմատիկա, բնական գիտություններ և տեխնիկա, կյանքին վերաբերող գիտություններ, բժշկական գիտություններ և հումանիտար, սոցիալական, հոգեբանական գիտություններ։

Գերմանիայում գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման մոտ 67%-ը իրականացնում են մասնավոր կազմակերպությունները, մոտ 15%-ը՝ պետական կազմակերպությունները և մոտ 18%-ը՝ համալսարանները (2012թ.՝ 409 համալսարան)։ Գերմանիայում տնտեսության բոլոր ոլորտներում կան մասնավոր գիտահետազոտական և տեխնոլոգիաների մշակմամբ զբաղվող կազմակերպություններ։ Այդ կազմակերպությունների գերակշիռ մասը միավորված է Օտտոն Գերիկեի անվան Արդյունաբերական հետազոտական միավորումների ասոցիացիայում, որն աջակցում է կիրառական հետազոտություններին՝ ի նպաստ փոքր և միջին բիզնեսի։ Այդ ասոցիացիան

ինքը ասոցիացիաների միավորում է, որի կազմում կա 100-ից ավելի արդյունաբերական գիտական միավորում, 50 հազարից ավելի փոքր և միջին բիզնեսի կազմակերպություն և մոտ 700 ասոցացված գիտական կազմակերպություն։ Այդուհանդերձ, Գերմանիայում այդ ասոցիացիայից դուրս կան բազմաթիվ փոքր գիտական և հետազոտական կազմակերպություններ։

Գիտահետազոտական կազմակերպություններ ունեն նաև գործարարների միություններն ու արհմիությունները։ Դրանք զբաղվում են տնտեսական, աշխատանքի և քաղաքականության հետ կապված հարցերով։ Հարկ է նշել, որ բիզնեսը, պետական գիտահետազոտական կազմակերպությունները և համալսարաններն իրականացնում են համատեղ և, որպես կանոն, կիրառական հետազոտություններ, որոնք անմիջապես կիրառություն են ստանում արդյունաբերությունում։

Այսպիսով, Գերմանիայի գիտական համակարգը բազմամակարդակ է և ճյուղավորված։ Ունի ֆինանսավորման լավ զարգացած ենթահամակարգ։ Առկա են զուտ դաշնային, դաշնային և մարզային, դաշնային և ճյուղային, զուտ մարզային, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածներ, ինչպես նաև գիտական հիմնարկների տարաբնույթ կառուցվածքներով ասոցիացիաներ։ Գիտական ասոցիացիաներն ապահովում են այդ հատվածների միջև արդյունավետ համագործակցությունը։ Հատուկ պետք է նշել, որ պետական հատվածում բուն գիտահետազոտական և համալսարանական գիտական համակարգերը միմյանց չեն հակառակում, ունեն մոտավորապես նույն ծավալները, և դրանց միջև արկա է համագործակցություն։

Հույժ կարևոր է, որ այստեղ լավ զարգացած է ոչ միայն գիտական, այլև գիտության սպասարկման համակարգը։ Համա-

կշուկած է հիմնարար և կիրառական գիտությունների համամասնությունը, ավելին՝ առկա է լավ զարգացած ենթակառուցվածք, որը համակցում է հիմնարար և կիրառական գիտությունները, ինչպես նաև ենթակառուցվածք, որը կիրառական գիտական մշակումները փոխադրում է տնտեսության բոլոր ոլորտները: Հիմնարար գիտության ոլորտում նույնականացված են առավել հեռանկարային ռազմավարական ոլորտները, որոնք գտնվում են պետության հատուկ ուշադրության կենտրոնում:

Գիտական համակարգը ծառայություններ է մատուցում և՝ դաշնային ու մարզային կառավարություններին, և՝ բիզնեսին, և՝ բարձրագույն կրթական համակարգին, և՝ ինքն իրեն, և՝ հասարակության տարբեր շերտերին:

**Հայաստանի Երկրորդ Հանրապետության (ՀԽՍՀ) գիտական համակարգը.** ՀԽՍՀ գիտական համակարգի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում: 1985թ. տվյալները թույլ են տալիս պատկերացում կազմել Հայաստանում գիտության զարգացման բարձրակետի, իսկ 1980 և 1985թթ. տվյալների համադրումը՝ ՀԽՍՀ-ում գիտության զարգացման տեմպերի վերաբերյալ: 1990-2005թթ. տվյալները ՀԽՍՀ Պետպլանի Տնտեսության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի կողմից 1988թ. մշակված, Հայաստանի տնտեսության մինչև 2005 թվականը զարգացման պլանի տարբերն են [2, 3]: Դրանք կարևոր են՝ պատկերացում կազմելու համար գիտության և տեխնոլոգիաների հեռանկարային պլանավորման մաշտաբների և բնույթի մասին: Աղյուսակում ներկայացված են նաև Հայաստանի գիտական համակարգի 2016թ. համադրելի ցուցանիշները:

## Աղյուսակ 1

*ՀԽՍՀ գիտական համակարգի ցուցանիշները 1980 և 1985թթ., ՀԽՍՀ գիտական համակարգի պահպանական համակարգի ցուցանիշները 2005-2007թթ. և ՀՀ գիտական համակարգի ցուցանիշները 2016թ.<sup>85</sup>*

	ՀԽՍՀԱՐԿԱՆ	1980	1985	1990	1995	2000	2005	2016
Գիտական հիմնարկների թիվը	250	253	265	281	293	313	313	69
Բուհերի թիվը	13	13	13	13	14	15	15	69
Արտադրական ձեռնարկությունների լարարատորաներ, կոնսուլտատորական և փողձարարական մասնաճյուղեր, ակտոնատաշըման և մեխանիզացման բաժիններ	937	1041	1150	1270	1300	1450	-	
ԿԱՌԵՐ	1980	1985	1990	1995	2000	2005	2016	
Ընդամենը՝՝ Գիտության և գիտության սպասարկման մեջ գրադասներ	47164	53800	58000	64000	70000	75000	5615	
ՀՀ ԳԱԱ	7965	8150	8500	9500	11000	12000	2841	
Բուհեր	13000	14770	15500	1600	16500	17000	1110	
Ոլորտային և միջզերաստեսչական կազմակերպություններում, առևլուստքարական միավորումներում և ձեռնարկություններում	26199	30880	34000	38000	43000	46000	-	

<sup>85</sup> Աղյուսակը՝ Ըստ արտակարգության և առաջարկած գործությունների կազմակերպություններում առաջական առաջարկական ծառայություններում, Երևան, 2017, էջ 204-209.

ՀԻՄԱՐԴԱՐԵՐ	1980	1985	1990	1995	2000	2005	2016
Ընդամենը՝ գիտական աշխատանքներ և սշակումներ կատարողներ	19059	21453	23700	26000	28700	28700	4881
Գիտության դրվագներ	700	753	820	930	1040	1210	436
Գիտության թեկնածուներ	5624	6751	8190	10250	12450	14540	1578
Գիտական կոչում շունեցող հետազոտողներ	-	13910					2867
Օժանքակ անձնակազմ	-	32387					734
ՈՒՍՈՒԹՅԱՆ	1980	1985	1990	1995	2000	2005	2016
Գիտության և գիտության սպասարկման ծախսեր	183.85	220	350	540	750	1100	
Գիտության և գիտության սպասարկման ծախսեր, % ՀՆԱ	-	-	5.0%	6.0%	6.5%	7.0%	0.25%
Գիտության հիմնական ֆոնտերի աճը. Վիլոն ռուբլի	248.2	359	390	470	640	880	-
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	1980	1985	1990	1995	2000	2005	2016
Աշխատանքի՝ արտադրողականության աճը հնգամյակում՝ գիտատեխնիկական միջոցառումների հաշվին	9.3%	9.3%	11.9%	17.0%	20.0%	24.0%	-

ՀԽՍՀ գիտական համակարգը, որի մասն էր կազմում ՀԽՍՀ գիտական համակարգը, շատ նման էր Գերմանիայի գիտական համակարգին: Այն նույնպես ուներ երկմակարդակ կառուցվածք՝ կենտրոնական և հանրապետական (15 հանրապետություններին պատկանող): Անալոգիան շարունակելու դեպքում ՀԽՍՀ գիտական համակարգը կարելի է նույնացնել Գերմանիայի դաշնային մարզերի գիտական համակարգերին: ՀԽՍՀ գիտահետազոտական հիմնարկների 35%-ն ուներ համամիութենական ենթակայություն, իսկ 65%-ը՝ հանրապետական:

Դիտենք ՀԽՍՀ գիտական համակարգը՝ դրա տարրերը համեմատելով Գերմանիայի և, այնքանով, որքանով, որ դա հնարավոր է, ներկայիս Հայաստանի համակարգերի հետ:

**Գիտական հիմնարկներ.** Ինչպես և Գերմանիայում, ՀԽՍՀ գիտական համակարգը կազմված էր երեք հատվածից՝ ակադեմիական և ճյուղային գիտահետազոտական հիմնարկներ, բուհեր և արդյունաբերական ձեռնարկությունների գիտահետազոտական կառույցներ: Ըստ որում, ինչպես Գերմանիայում, այնպես էլ ՀԽՍՀ-ում գիտական հիմնարկների մեծ մասը գտնվում էր արդյունաբերական հիմնարկների գիտահետազոտական կառույցներում և ստանում էր ֆինանսավորման ամենամեծ մասնաբաժինը:

1985թ. Հայաստանի գիտական հիմնարկների քանակը կազմել է 253 առանձնացված կազմակերպություն, այդ թվում 105 գիտական հիմնարկ, 40 ինքնուրույն նախագծային բյուրո, 19 նախագծային և նախագծային-հետազոտական կազմակերպություն, 13 բուհ և 76 գիտատեխնիկական սպասարկման հիմնարկ:

1980թ. համեմատ ՀԽՍՀ-ում գիտական հիմնարկների թիվն աճել էր 3-ով, սակայն 1988թ. ՀԽՍՀ արտադրական ուժերի

մինչև 2005թ. զարգացման և տեղաբաշխման սխեմայով պլանավորվում էր հաջորդական 5-ամյակներում ավելացնել հաջորդաբար՝ 12-ով, 16-ով, 12-ով, 20-ով և 2005թ. ունենալ ընդհանուր հաշվով 313 գիտական հիմնարկ: Սակայն 2016թ. Հայաստանում կար ընդամենը 69 գիտական հիմնարկ:

1985թ. ՀԽՍՀ 105 գիտական հիմնարկները ստորաբաժանված էին ըստ հետևյալ կատեգորիաների՝ գիտահետազոտական ինստիտուտներ և դրանց մասնաճյուղեր՝ 66, կոմպլեքսային գիտական հիմնարկներ, որոնք զուգակցում են գիտական հետազոտություններն այլ աշխատանքների հետ (նախագծում, կառուցում, տեխնոլոգիական մշակումներ և այլն)՝ 13, գիտական հիմնարկներ՝ գիտաարդյունաբերական և արդյունաբերական միավորումների և ձեռնարկությունների կազմում՝ 20, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարող այլ հիմնարկներ՝ 6:

ՀԽՍՀ գիտական համակարգի մաս էին կազմում նաև արտադրական ձեռնարկությունների լաբորատորիաները, կոնստրուկտորական և փորձարարական մասնաճյուղերը, ավտոմատացման և մեխանիզացման բաժինները, որոնց թիվը 1985-ին կազմել է 1041, իսկ մինչև 2005-ը պլանավորվում էր ավելացնել ևս 409-ով և հասցնել 1450-ի: Ներկայում նման գիտական ստորաբաժանումների մասին տեղեկությունները բացակայում են:

ՀԽՍՀ ակադեմիական համակարգում գործում էին 28 գիտահետազոտական ինստիտուտ, 7 հատուկ կոնստրուկտորական բյուրո: Նարկ է հատուկ նշել, որ ներկայում, չնայած ֆինանսավորման կտրուկ կրծատմանը, Հայաստանի ակադեմիական համակարգը պահպանվել է, իսկ գիտահետազոտական ինստիտուտների քանակն աճել է 3-ով: ՀՀ ԳԱԱ-ում 2016-ին գիտական

աշխատանքներով կը զբաղված 2841 մարդ կամ գիտական աշխատանքներ կատարողների լոնդիանուր թվի 58%-ը:

### Աղյուսակ 2

*Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող  
կազմակերպությունների քանակը, աշխատանքների ծավալը,  
համախառն ու ներքին ծախսերն ըստ տնտեսական  
գործունեության հիմնական տեսակների  
(ըստ S4S7 խմբ. 2-ի), 2016թ.<sup>86</sup>*

Պետական կառույց	Կազմ. քանակ	Գիտ.-տէխ. աշխ. ծավալը, մլր. դրամ	Գիտ.-տէխ. աշխ. ծավալը, %	Աշխատողների թիվը	Աշխատողների թիվի, %,
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	6	2500.3	21%	501	10%
ՀՀ առողջապահության նախարարություն	7	137.1	1%	130	3%
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	5	998.3	8%	258	5%
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	12	1982.2	16%	980	20%
ՀՀ զյուղատնտեսության նախարարություն	5	118.2	1%	108	2%
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	31	6316.8	52%	2841	58%
Այլ	3	47.6	0%	63	1%
Ընդամենը	69	12100.5	100%	4881	100%

<sup>86</sup> Աղյուսակ՝ Հայաստանի տցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հուլիսին. Տեղեկատվական ամսական զեկույց, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017, էջ 204 և 207.

**ՀԽՍՀ բուհական համակարգում** կային 66 գիտահետազոտական լաբորատորիա, բաժին, սեկտոր, 19 պրոբլեմային և ձյուլային գիտահետազոտական լաբորատորիա, ամբիոնների 44 մասնաճյուղ, որոնք տեղակայված էին արտադրական ձեռնարկություններում, 2 հաշվողական կենտրոն, ուսանողական 5 նախագծային, կոնստրուկտորային և տեխնոլոգիական բյուրո և այլ գիտական ստորաբաժանումներ: Բուհերն իրենց կազմում ունեին նույնիսկ առանձին գիտահետազոտական ինստիտուտներ, օրինակ՝ ԵՊՀ Կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Հատուկ նախագծային-կոնստրուկտորական բյուրոն և այլն: ՀՀ գիտական համակարգի կառուցվածքը ներկայացված է *Աղյուսակ 2-ում*:

**Գիտական կաղըեր.** ՀԽՍՀ գիտության ոլորտում զբաղվածների կառուցվածքն ըստ պետական գիտահետազոտական, բուհական և արդյունաբերական հատվածների շատ մոտ էր ներկայիս Գերմանիայի գիտական կաղըերի բաշխմանը: ՀԽՍՀ-ում պետական գիտական հիմնարկներում էր աշխատում գիտության մեջ զբաղվածների 15%-ը, բուհերում՝ 27%-ը և արդյունաբերական հատվածում՝ 57%-ը: Ներկայիս Գերմանիայում այդ համամասնությունը կազմում է համապատասխանաբար 16%, 22% և 62%:

ՀԽՍՀ-ում 1985թ. գիտության ոլորտում զբաղվածների թիվը կազմում էր 53800 մարդ, այն 1982թ. համեմատ աճել էր 14%-ով կամ 6636 մարդով: Նախատեսված էր 1990-ին նրանց քանակն ավելացնել մինչև 58000 մարդ կամ 8%-ով, իսկ 2005-ին մինչև՝ 75000 մարդ կամ 1985թ. համեմատ ավելացնել 39%-ով: Սակայն 2016թ. գիտության ոլորտում զբաղվածների քանակը

Հայաստանում կազմել է 5615 մարդ կամ 1985թ. թվաքանակի 10.4%-ը:

Ինչ վերաբերում է բուն գիտությամբ զբաղվողների թվաքանակին, ապա 1985թ. ՀԽՍՀ-ում այդ թիվը կազմել է 21453, 1980թ. համեմատ այն աճել էր 11.2%-ով, հաջորդ հինգ տարվա ընթացքում այդ թիվը նախատեսված էր ավելացնել ևս 10.5%-ով, իսկ մինչև 2005թ. ավելացնել 34%-ով՝ 1985թ. համեմատ: Սակայն 2016թ. Հայաստանում գիտական աշխատանքներ և մշակումներ կատարող անձանց քանակը կազմել է 4881 մարդ կամ 1985թ. 23%-ը:

Համապատասխան դինամիկա է ունեցել նաև գիտական հետազոտություններ կատարողների որակական կազմը: Այսպես, գիտությունների դոկտորների թիվը 1985-ին կազմել է 753 մարդ, ինչը 7%-ով զերազանցում էր 1980թ. ցուցանիշը, 1990-ին պլանավորված էր գիտությունների դոկտորների թվի աճ 9%-ով՝ 1985-ի համեմատ, իսկ 2005-ին պլանավորվել է ունենալ 1210 կամ 61% աճ՝ 1985թ. համեմատ: Սակայն 2016-ին նրանց թիվը կազմել է 436 մարդ կամ 1985թ. ցուցանիշի 58%-ը:

Գիտությունների թեկնածուների թվաքանակը 1985-ին կազմել էր 6751 մարդ և 1980թ. համեմատ աճել էր 16.7%-ով: Պլանավորվել էր 1990-ին նրանց թիվն ավելացնել 21%-ով, իսկ 2005-ին՝ 1985թ. համեմատ 2.2 անգամ, մինչև՝ 14540 մարդ: Սակայն 2016-ին գիտությունների թեկնածուների քանակը ՀՀ-ում կազմել է 1578 մարդ կամ 1985թ. 23.4%-ը:

Այս համատեքստում կարևոր է համեմատել գիտական աշխատանքներ և մշակումներ կատարողների տարիքային կազմը: 1985-ին մինչև 30 տարեկան գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց քանակը կազմել է

16.2%, իսկ 2015-ին՝ 21.9%, այն դեպքում, եթե 1985-ին 60 և ավելի տարեկանները կազմել են 5.6%, իսկ 2015-ին՝ 32.5% կամ համարյա յուրաքանչյուր երրորդը (տե՛ս *Աղյուսակ 3*).

*Աղյուսակ 3*  
**Գիտաշխատողների տարիքային կազմը ՀԽԱՀ-ում  
 1985թ. և ՀՀ-ում 2015թ.<sup>87</sup>**

Գիտաշխատող-ների տարիքային կազմը	< 30	31-39	40-49	50-59	60<
1985թ.	16.2%	36.5%	28.6%	13.6%	5.6%
2015թ.	21.9%	16.0%	12.2%	17.4%	32.5%

Սակայն առավել մեծ փոփոխություն է կրել գիտության ոլորտում զբաղված օժանդակ անձնակազմի թվաքանակը, որը 1985-ին 32387-ից նվազել է մինչև 734 2016թ., որը կազմել է 1985թ. թվաքանակի ընդամենը 2.3%-ը կամ նվազել է մոտ 43 անգամ։ Օժանդակ անձնակազմը գիտական աշխատանքներ կատարողների «մարդկային ենթակառուցվածքն» է, որը նրանց համար անհրաժեշտություն է։ Ընդ որում, արդի գիտական աշխատանքների շրջանակում նորմա է օժանդակ անձնակազմի թվաքանակի մի քանի անգամ գերազանցումը գիտաշխատողների թվաքանակից։ Գիտության ոլորտում զբաղվածների բաշխումն ըստ որակավորման 1985-ին և 2016-ին ներկայացված է *Աղյուսակ 4-ում*.

<sup>87</sup> Աղյուրներ. Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до 2005 года. Часть I. Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования, Ереван, 1988, с. 228: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հուլիսին. Տեղեկատվական ամսական գեկույց: Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017, էջ 208:

**Աղյուսակ 4**

*Գիտական աշխատանքներում զբաղվածների կառուցվածքային  
հարաբերակցությունը ՀԽՍՀ-ում 1985,  
ԽԽՀՄ-ում 1985 և ՀՀ-ում 2016<sup>88</sup>*

Գիտական աշխատանքներում զբաղվածների կառուցվածքային հարաբերակցությունը	ՀԽՍՀ 1985	ԽԽՀՄ 1985	ՀՀ 2016
Դոկտորներ	1	1	1
Թեկնածուներ	9	9	4
Գիտական կոչում չունեցող հետազոտողներ	18	20	7
Օժանդակ անձնակազմ	43	63	2

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀԽՍՀ-ում ամենաբարձր որակավորմամբ մեկ գիտաշխատողը՝ գիտությունների դոկտորը, միջին հաշվով կարող էր ունենալ գիտական խումբ՝ բաղկացած գիտությունների 9 թեկնածուից, 18 գիտական կոչում չունեցող գիտաշխատողից և 43 անձից կազմված օժանդակ անձնակազմ<sup>89</sup>: Նման կառուցվածքը թույլ է տալիս համարել, որ գիտությունների դոկտորը կարող է ունենալ իր լիարժեք գիտական դպրոցը՝ բարձրորակ գիտական անձնակազմով, գիտական երիտասարդ սերնդով և օժանդակ սպասարկող անձնակազմով:

Սակայն 2016թ. Հայաստանում գիտությունների դոկտորի «միջինացված» դպրոցում կարող է լինել գիտությունների 4 թեկ-

<sup>88</sup> Աղյուրներ. Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до 2005 года. Часть I. Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования, Ереван, 1988, с. 228. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հուլիսին. Տեղեկատվական ամսական գեկույց: Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017, էջ 207:

<sup>89</sup> Գիտության տարբեր ոլորտներում և հետազոտական ուղղություններում գիտական խմբի օպտիմալ կառուցվածքը կարող է փոփոխվել շատ մեծ միջակայքում:

նածու, գիտական կոչում չունեցող 7 գիտաշխատող, և այդ խումբը փաստորեն զրկված է գիտության սպասարկող անձնակազմից<sup>90</sup>:

**Գիտության ֆինանսավորում.** Համաշխարհային բանկի 2015թ. տվյալներում առկա է 113 երկրների գիտության ոլորտի ֆինանսավորման մակարդակը՝ որպես տոկոս երկրի ՀՆԱ-ից: Այդ ցանկում Հայաստանը՝ ցուցանիշի 0.25% արժեքով, զրավել է 83-րդ տեղը: Ցանկում առաջատարներն են եղել Իսրայելը (4.18%), Հարավային Կորեան (4.08%): Երրորդ տեղում է Ճապոնիան (3.28%):

Եթե այդ ցանկում տեղադրենք ՀԽՍՀ 1985թ. ցուցանիշը, ապա Հայաստանը գիտության ոլորտի ֆինանսավորման մակարդակով աշխարհում կզրավեր երրորդ տեղը ցուցանիշի 3.94% արժեքով<sup>91</sup> (տե՛ս Գծապատկեր I): ՀԽՍՀ-ում պլանավորված էր այդ ցուցանիշը յուրաքանչյուր հնգամյակ բարձրացնել 1.0-1.5%-ով և 2005թ. ունենալ գիտության ֆինանսավորում ՀՆԱ 7.0%-ի չափով:


Անշուշտ, գիտության ոլորտին տրամադրվող ֆինանսական միջոցների տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ բավարար չէ աղեկված պատկերացում կազմելու և գնահատելու համար գիտության զարգացման հնարավոր շրջանակի մասին: Ավելի կարևոր է այդ ֆինանսական միջոցների բացարձակ արժեքը: Գիտու-

<sup>90</sup> Մասնավորապես, լաբորանտի և տեխնիկի աշխատանքները պետք է կատարեն գիտաշխատողները՝ իրենց գիտական աշխատանքի համար նախատեսված աշխատաժամանակի հաշվին: Հարկ է նշել, որ 1985թ. կարուցվածքը ՀԽՍՀ-ում համարվում էր անբավարար գիտության սպասարկող անձնակազմի քանակի տեսակետից և նախատեսվում էր բարձրացնել այդ ցուցանիշը:

<sup>91</sup> Նշենք, որ ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում կիրառվում էր ներկային ՀՆԱ ցուցանիշի անալոգ՝ ազգային եկամուտը (այն տարրերվում է նաև ներկային ազգային եկամուտ ցուցանիշից): Այստեղ չեն հաշվառվում ծառայությունների ոլորտի տարրեր բաղադրիչները: Մակայն, եթե նույնիսկ ՀՀ ներկային ՀՆԱ կազմից, պարզության համար, հանենք ծառայությունների ամբողջ բաղադրիչը, որը 2016-ին կազմել է Հայաստանի ՀՆԱ մոտ 50%-ը, ապա արդի Հայաստանում գիտության ոլորտի ծախսերի մակարդակը կաճի մինչև 0.50%, որը նորից մոտ 8 անգամ զիջում է ՀԽՍՀ ցուցանիշին:

թյան ֆինանսավորման չափի մեծ բացարձակ արժեքը հնարավորություն է տալիս ֆինանսների կենտրոնացման միջոցով իրականացնել խոշոր գիտական նախագծեր: Օրինակ, Աղրբեջանը 2014թ. գիտության ոլորտին է տրամադրել \$158.0 մլն (2014-ին՝ ՀՆԱ-ն \$75.24 մլրդ, գիտության ոլորտի ծախսերը՝ 0.21%), իսկ Հայաստանը՝ \$29 մլն (2014-ին՝ ՀՆԱ-ն՝ \$11.61 մլրդ, գիտության ոլորտի ծախսերը՝ 0.24%): Տարբերությունը շատ մեծ է՝ Աղրբեջանի գիտության ոլորտի ծախսերը գերազանցել են Հայաստանի ցուցանիշը 5.4 անգամ:

## Գծապատկեր 1



<sup>92</sup>Աղբյուր՝ Համաշխարհային բանկի տվյալների շահեմարքան,  
<https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS>. ՀնUՀ 1985թ. տվյալը տե՛ս  
 Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до  
 2005 года. Часть I. Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования,  
 Ереван, 1988, с. 228.

**Եզրակացություններ.** Գերմանիայի և ՀԽՍՀ գիտական ոլորտների համեմատությունը հանգեցնում է մի քանի սկզբունքային եզրակացությունների: Նախ՝ հնարավոր չէ ունենալ բարձրտեխնոլոգիական արտադրական համակարգ առանց համապատասխան գիտական համակարգի, և հնարավոր չէ ունենալ բարձրակարգ գիտական համակարգ առանց համապատասխան արտադրական համակարգի: Հետևաբար, այդ երկուսի զարգացումը պետք է դիտել որպես միասնական խնդիր: Անհրաժեշտ է զարգացնել գիտաարտադրական համակարգը:

Երկրորդ՝ գիտական ոլորտի զարգացման դիտարկումը «կամ-կամ» սկզբունքով, այն է՝ բացառապես գիտական հետազոտություններով զբաղվող ինստիտուտների կամ համալսարանական համակարգի հետ ինտեգրված գիտության, ընդամենը տեսական դրույթ է, այն միակ հնարավոր չէ և ապացուցված չէ, որ ամենաօպտիմալն է: Մեր պատմական փորձը և Գերմանիայի ներկայիս գիտական շատ բարձր արդյունավետությամբ գիտական համակարգն ապացուցում են, որ գիտական համակարգը պարտավոր է լինել բազմազան:

Դիտարկելով բուհական համակարգը և բուհական գիտությունը՝ պարզ է դառնում, որ դրա կառուցվածքային և բովանդակային զարգացման պլանավորումը պետք է իրականացվի երկրի գիտաարդյունաբերական համալիրի հետ միասնական համալիրում: Այսինքն՝ արդյունաբերական-տեխնոլոգիական, գիտական և բուհական համակարգերի զարգացման պլանավորումը եռմիասնական խնդիր է:

Հայաստանի գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացման ամենածանր խնդիրը ֆինանսավորման խիստ ցածր մակարդակն է: Դրա լուծման առաջին քայլը կարող է լինել Հայաստանի

բյուջետային համակարգի քննական վերլուծությունը՝ ոչ առաջնահերթ ծախսերի վերհանման և դրանք գիտության և բուհական համակարգերին փոխանցելու նպատակով: Ակնհայտ է, որ ցանկացած դեպքում այսօր ՀՀ տնտեսության շատ ցածր արտադրողականությունը չի կարող ապահովել գիտության և բուհական համակարգի բավարար ֆինանսավորման մակարդակ: Ֆինանսավորման բարձրացման երկու հնարավոր ուղղություններից մեկն է Սփյուռքի գիտական, բուհական պրոֆեսորադասախոսական, ձեռնարկությունների կառավարման ոլորտի և բարձրտեխնոլոգիական բիզնեսի ներկայացուցիչների ներգրավումը: Երկրորդ ուղղությունը պետության ուղղակի մասնակցությամբ ռազմարդյունաբերական ոլորտում բարձրտեխնոլոգիական մշակումների խթանումն է՝ համագործակցելով ՌԴ ռազմարդյունաբերական համալիրի հետ: Երկու դեպքում էլ անհրաժեշտ են ձկուն և բազմազան գործիքակազմ և անհատական մուտեցում յուրաքանչյուր կոնկրետ դեպքին:

Հայաստանում գիտության և բարձրտեխնոլոգիական զարգացման ուղղությանը պետք է տալ հատուկ արտոնյալ կարգավիճակ: Այս ոլորտներում ազատական «հավասար պայմանների ստեղծում» կարգախոսը թույլ զարգացած պետությունների համար հավասարազոր է դրանց հարատևմանն ամենացածր տնտեսական և տեխնոլոգիական մակարդակում:

\*\*\*

Վերոնշյալ հարցադրումը առավել հրատապ է հատկապես նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ ձևավորված միջավայրի պարագայում, և այդ խնդիրները կըննարկվեն հաջորդ բաժնում:

### 2.11 Էնթագլիում օգտագործված գրականություն

1. *Бережная Г.*, Организация научных исследований в Германии // Балтийский Регион, 3 (13), 2012, с. 149-160. Изд-во: Балтийский федеральный университет имени Иммануила Канта (Калининград).
2. Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до 2005 года. Часть I. Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования, Ереван, 1988.
3. Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до 2005 года. Часть II (табличный материал). Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования, Ереван, 1988.
4. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հուլիսին. Տեղեկատվական ամսական գեկույց. Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017:
5. Համաշխարհային բանկի տվյալների շտեմարան,  
<https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS>

### Յ. ՀՀ ՈՐՈՇ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

#### 3.1. Կրիտիկական ենթակառուցվածքներ և համակարգեր

Ժողովածուի սույն բաժնում կրիտիկական ենթակառուցվածքները (ԿԵ) դիտարկվում են դրանց ընդլայնված առումով: ԿԵ ասելով նկատի ունենք այն նյութական (օրինակ՝ էեկտրաէներգետիկ կամ իոֆացիոն համակարգեր) և ոչ նյութական (օրինակ՝ հասարակական անդորրը՝ իշխանության ու ժողովրդի միջև կայուն «հասարակական պայմանագրի» օրոք) բնույթի ենթակառուցվածքները, որոնց վրա անզամ փոքրամասշտաբ արտաքին ներազդումը կամ դրանց ներքին դինամիկան (ֆլուկտուացիոն կամ դետերմինիստիկ) կարող են հանգեցնել խոշորամասշտաբ հետևանքների, ընդհուազ մինչև տվյալ ենթակառուցվածքի կամ նույնիսկ ողջ համակարգի (օրինակ՝ էրկրի) կայունության և դեկավարելիության կորստի [1]:

Անհրաժետ է տարբերակել ԿԵ-ները կրիտիկական համակարգերից: Վերջիններս ունեն ավելի լայն ընդգրկում և ներառում են ոչ միայն տվյալ ԿԵ-ն կամ ԿԵ-ների համախումբը, այլև դրանց հաղորդակցման ու համակարգման (*communication, coordination*), դեկավարման (*control*) և վճիռների կայացման (*command*) օլակները, ընդհանրական՝ *C4* ենթակառուցվածք: Հասկանալի է, որ *C4* ենթակառուցվածքն, իր հերթին, հանդիսանում է կրիտիկական:

Տվյալ ենթակառուցվածքը կարող է և ի սկզբանե չլինել կրիտիկական, բայց ժամանակի ընթացքում դառնալ կամ բերվել այս վիճակի՝ արտաքին ներազդումների կամ ներքին դինամիկայի հետևանքով։ Այս դեպքում խոսում են տվյալ ենթակառուցվածքի «կազմակերպված կրիտիկականության»<sup>1</sup> մասին, որով համակարգը դարձել կամ բերվել է կայունության կորստի շեմի։ Օրինակ, ատոմային (էներգետիկ) տեխնոլոգիաների սեգմենտի կորուստը, պայմանավորված այս կամ այն արտաքին ներազդումներով կամ ներքին վճիռների կայացմամբ, կարող է ոչ միայն մեծացնել էներգետիկ համակարգի խոցելիությունը՝ դարձնելով այն կրիտիկական, այլև հանգեցնել ողջ սոցիալ-տնտեսական համակարգի կայունության և կենսունակության կորստի։ Կամ՝ արբանյակային ունակությունների կորուստը (կամ թերզարգացածությունը) կարող է բերել ուղմական ու ենթակառուցվածքային զարգացումների հանդեպ կուրության, հետևաբար և խոցելիության աճի։ Նման օրինակները քիչ չեն թե՝ Հայաստանի, թե՝ մեր տարածաշրջանի շատ երկրների նորագույն պատմությունում։

Այս պրոցեսներում ներքին գործոնների (պարամետրերի) վճռորոշ ազդեցության դեպքում գործ ունենք «ինքնակազմակերպված կրիտիկականության»<sup>2</sup>, իսկ դրանցում (ներքին կամ արտաքին) ստոխաստիկ բնույթի գործոնների գերակայության դեպքում՝ «աղմուկով ինդուկցված կրիտիկականության» հետ<sup>3</sup>։

<sup>1</sup> *Organised criticality* կամ *Forced criticality* (организованная или вынужденная критичность).

<sup>2</sup> *Self-organized criticality, само-организованная критичность.*

<sup>3</sup> Կամ «աղմուկով ինդուկցված քառսի» հետ (*Noise induced chaos, хаос индуцированный шумом*)։ Մեզ հետաքրքրող համատերսում (պատերազմ, նալթ, ուղմարդունաբերական համալիր) հարցերի այս շրջանակի մասին տե՛ս [2], էջ 58-88։

Վերջապես, ԿԵ-ՆԵՐԻ դիտարկումը, լինելով ինքնին կարևոր, այնուամենայնիվ, ինքնանպատակ չէ: Խնդիրն այն է, որ 21-րդ դարի առաջին քանամյակը ունիկալ ժամանակաշրջան է: Այսօր ընթացող տեխնոլոգիական, բնագիտական, ժողովրդագրական, սոցիալական, հումանիտար, քաղաքական և աշխարհաքաղաքական փոփոխություններն իրենց գլոբալ բնույթով և տեկտոնիկ նշանակությամբ ոչ միայն համադրելի են 20-րդ դարի առաջին՝ հեղափոխական<sup>4</sup> քանամյակի հետ, այլև մարդկությանը բերել են որոշակի առումով աննախադեպ վիճակի՝ գոյացնելով նոր մարտահրավերներ: Իսկ դրանց դիմակայումն անհրաժեշտաբար բերելու է նոր կրիտիկական նշանակության ենթակառուցվածքների առաջացմանը և/կամ արդեն գոյություն ունեցողների վերիմաստավորմանը՝ դրանց կրիտիկականության առումով:

Հասկանալի է, որ այս ամենը չէր կարող շրջանցել նաև մեզ: Գլոբալ փոփոխությունների մեր ժամանակաշրջանն ուրույն խնդիրներ դրեց ՀՀ ազգային անվտանգության համակարգի առջև, և դրանցից, թերևս, կարևորագույնն է «իրականության իրական ըմբռնման» համակարգի ստեղծումը [3]: Այս խնդիրն ընկած է ոչ միայն փիլիսոփայության և իմացարանության հիմքում, այլև կազմում է աշխարհաքաղաքականության հենքը: Չէ՝ որ «ինչպիսի՞ն է իրականությունը» հարցի համարժեք պատասխանները պայմանավորում են թե՝ անհատի, թե՝ ազգի անվտանգությունն ու կենսունակությունը: Գլոբալ փոփոխությունների մեր ժամանակում վտանգավոր է անընդհատ զարմանալ և անակնկալի գալ օրինակ, ԱՄՆ-ում աջակողմյան և կոնսերվատիվ ուժերի ամրա-

<sup>4</sup> Հիշենք ոչ միայն Առաջին աշխարհամարտը, Մեծ եղեռնը, սոցիալիստական հեղափոխությունները, ԽՍՀՄ գոյացումը, այլև միջուկային ու քվանտային ֆիզիկայի կամ արդի գենետիկայի ստեղծումը և այլն:

պնդման և «հանկարծակի» հաղթանակի կամ «քրեքսիթի» կապակցությամբ [4-6], մեր հակառակորդի «անակնկալ» հարվածի, անօդաչու թռչող սարքերի և հետախուզական արբանյակային ունակությունների առիթով [7-9], մեր սեփական երկրում «սոցիալական դաշինքի» «անսպասելի» խաթարման փաստով կամ մեր գիտատեխնոլոգիական ուշացման առումով:

Մրանք մարտահրավերներին պատասխանելու, այլ խոսքով՝ իրականությունն իրականորեն ըմբռնելու հարցում համակարգային ճգնաժամի ախտանիշներ են և մատնանշում են մեզանում նոր ԿԵ գոյացման կենսական անհրաժեշտությունը, այն է՝ գիտելիքահեն, համարժեք ըմկալման ու մոդելավորման վրա հիմնված, «ապագայի կերտման» կրիտիկական ենթակառուցվածք, որը կոլիտարկի գիտելիքն ու տվյալները (*ձաւա*) որպես բնական պաշար և հզորության աղբյուր [10, 11]: Այն պետք է ունակ լինի մշակել, վերլուծել և օգտագործել տվյալների մերօյա հոսքերը և հսակայական շտեմարանները՝ չկորցնելով սեփական լեզուն ու լեզվամտածողությունը [12], զլորալ փոփոխություններով պայմանավորված «նոր ռեգիոնալիստիկայի» և դաշինքների նոր համակարգերի ձևավորման պայմաններում ունակ լինի գտնել կայուն հավասարակշռությունը և արդյունավետ կոնֆիգուրացիան [6, 13-16]:

Ընդ որում, այս ամենը մենք ստիպված ենք անել ժամանակի սղության պայմաններում և լրջագույն նոր երեք մարտահրավերների դեմ-հանդիման [5]: Առաջին երկու մարտահրավերները մենք անվանել ենք «նոր թվային խզում» (տե՛ս 3.2.) և «իմաստավորման խզում» (տե՛ս 3.6.): Իսկ 3-րդ մարտահրավերը՝ «քաղաքակրթական խզումը», ՀՀ արդի ժողովրդագրական առանձնահատկությունների համատեքստում դիտարկվում է առանձին [17]:

### **3.2. Առաջին մարտահրապեր. «նոր թվային խզում»**

Արդի ինֆորմացիայի և կապի տեխնոլոգիաների (ԻԿՏ)<sup>5</sup> ոլորտը ներկայում ամենաբուռն զարգացողներից է աշխարհում: Այն մեծապես պայմանավորում է հասարակության «ինֆորմացիոն հասունությունը», նպաստում երկրի տեխնոլոգիական, ցանցային պատրաստվածությանը<sup>6</sup>, փոխում հասարակության տնտեսական ու տեխնոլոգիական կացութաձևեր՝, դրա կառուցվածքն ու զարգացման դինամիկան: Մինչ Հայաստանին վերաբերող մեր բուն դիտարկումները՝ անհրաժեշտ է կանգ առնել այսպես կոչված «թվային խզման» (*digital devide*) երևոյթի վրա: Այս եզրույթը մեծ տարածում գտավ և շրջանառության մեջ դրվեց 20-րդ դարի 90-ականների վերջին, ԽՍՀՄ փլզումից հետո և ԻԿՏ ոլորտի զարգացմանը համընթաց [18]: Այն կոչված էր արտահայտելու «Հյուսիս» (զարգացած) և «Հարավ» (զարգացող) գլոբալ տարածաշրջանների երկրների միջև առկա «թվային անհավասարության» փաստը և դրա խորացման միտումը:

«Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջանների սահմանումը և դրանց միջև տնտեսական խզման փաստումը սկիզբ են առնում անցած դարի 70-ականների վերջից, ՄԱԿ հովանու ներքո գործող Միջազգային զարգացման խնդիրների անկախ հանձնաժողովի (UN ICID) աշխատանքներից [19]: Հանձնաժողովը գլխավորեց Վիլի Բրանդը: «Բրանդի հանձնաժողովի» առաջին գեկույցում (1980թ.) ներմուծվեց այսպես կոչված «Բրանդի գիծ» հասկացությունը՝ հիմնված երկրների տեսակարար ՀՆԱ ցուցանիշի (ԱՄՆ \$/մարդ, ընթացիկ գներ) վրա, որն

<sup>5</sup> Այն մեզանում անվանում են նաև տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտ:

<sup>6</sup> *Networked readiness.*

<sup>7</sup> *Технологический уклад.*

աշխարհը բաժանում էր, այսպես ասած, «զարգացած և հարուստ» Հյուսիսի, և «զարգացող ու աղքատ» Հարավի:

### Քարտեզ 1

Գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» տարածաշրջանները և  
«Բրանդի դասական զիծը», 1980թ.



Քարտեզ 1-ում ներկայացված է Բրանդի «1-ին զեկույցի» դասական քարտեզը, ուր պատկերված է «Բրանդի զիծը»: Խնչպես տեսնում ենք, այն անցնում է մոլորակի հյուսիսային կիսագնդի մոտավորապես  $30^{\circ}$  լայնության երկայնքով, ԽՍՀՄ արևելյան վերջնամասում կտրուկ շրջվում հարավ՝ ներառելով Ճապոնիան ու Ավստրալիան, դուրս թռղնելով «Հյուսիս» տարածաշրջանից Հր.Կորեան ու ողջ Հարավարևելյան Ասիան: Բրանդի «1-ին զեկույցի» եզրակացությունները խորացվեցին 1983-ին՝ «Բրանդի հանձնաժողովի» 2-րդ զեկույցում, և նորացվեցին 2001-ին. կառուցրական քննադատության արդյունքում անհրաժեշտ համարվեց ընդլայնել «Բրանդի զծի» մոնունտեսական սահմանումը և տեսակարար ՀՆԱ ցուցանիշից բացի դիտարկումների մեջ ներառել երկրների սոցիալական և ժողովրդագրական դի-

նամիկայի որոշ ցուցանիշներ [19]: Քննարկումներից հետո, որոնց վրա այստեղ կանգ չենք առնի, «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջանների ավելի համարժեք սահմանման համար նպատակահարմար համարվեց դիտարկել երկրների և երեք ցուցանիշ:

- բնակչության կառուցվածքն ըստ քաղաքային և գյուղական բնակչության,
- բարձրագույն կրթություն ստացած բնակչության մասնաբաժինը,
- բնակչության սեռատարիքային դիագրամը՝ ըստ *կոհորտների* (տարիքային խմբերի):

«Հյուսիս» տարածաշրջանի երկրների համար հատկանշական համարվեցին տեսակարար ՀՆԱ ավելի քան \$10.7 հազ./մարդ արժեքը, քաղաքային բնակչության գերակայումը, բարձրագույն կրթությամբ բնակչության հատվածի շոշափելի մասնաբաժինը և բնակչության այսպես կոչված «շրջված» սեռատարիքային դիագրամը [17]:

Խիստ բնութագրական է այն հանգամանքը, որ այս կերպ ընդլայնված «Բրանդի գիծ» հասկացությունը գրեթե չփոխեց «Հյուսիս» և «Հարավ» տարածաշրջանների գլոբալ կոնֆիգուրացիան, և սահմանված աշխարհի քարտեզը գրեթե չտարբերվեց *Քարտեզ 1-ում* բերվածից: Նկատենք, որ Հայաստանը (ավելի ճիշտ՝ ՀԽՍՀ-ն) ներառված էր «զարգացած և հարուստ» Հյուսիս տարածաշրջանում՝ թե՛ Բրանդի գծի դասական (1977-80թթ.), թե՛ դրա ընդլայնված (1983-85թթ.) սահմանման պարագայում:

21-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում սպառողական տեխնիկայի և հատկապես ԻԿՏ ոլորտի աննախադեպ զարգացումը ստիպեց էլ ավելի ընդլայնել «Բրանդի գծի» սահմանու-

մը՝ դիտարկումների մեջ ներառելով նոր ցուցանիշներ՝ հիմնականում ԻԿՏ ոլորտից: Սկզբնական փուլում դրանք գուտ քանակական էին՝ բնակչության մեկ շնչին ընկնող հեռուստացույցների կամ համակարգիչների թիվ, ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդների թիվ և այլն: Այս ցուցանիշները մենք կանվանենք թվային անհավասարության երևույթի «0-ական մակարդակի» պարամետրեր:

Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ գուտ քանակական այս ցուցանիշները բավարար չեն իրական «թվային խզումը» նկարագրելու համար: Իրոք, եթե 2001-ին *զարգացած և զարգացող երկրների* միջև ֆիքսված լայնաշերտ կապի (ՖԼԿ) բաժանորդների թվի հարաբերությունը կազմում էր 7:1՝ հօգուտ *զարգացած երկրների*, ապա 2010-ին այն արդեն 3.5:1.0 էր: Եվ սա տեղի ունեցավ *զարգացող երկրներում* ՖԼԿ բաժանորդների թվի էական աճի հետևանքով, մինչդեռ *զարգացած երկրներում* այս աճը համեմատաբար դանդաղ էր («հազեցման էֆեկտ»): Այսինքն՝ իրականում տեղի էր ունեցել «թվային խզման» նվազում, թեև «թվային անհավասարությունը» պահպանվել էր: Այսպիսով, ՖԼԿ բաժանորդների թվի առումով, այլ խոսքով՝ երևույթի դիտարկման «0-ական մակարդակում», խոսել «թվային խզման» մասին այլևս կարելի չէր:

Բայց միանգամայն այլ կլինի պատկերը, եթե դիտարկումը հիմնենք այս ցուցանիշի ոչ թե քանակական, այլ *որակական* որևէ պարամետրի, օրինակ՝ ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորություն ցուցանիշի վրա (ՖԼԿ SSՀ, կր/վ/մարդ) [20]: Այլ խոսքով՝ անցում կատարենք «0-ական մակարդակից» երևույթի «առաջին ածանցյալի» մակարդակ: Եվ սա հենց այն էր, ինչն արվեց Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ, ITU)

2012թ. տարեկան հաշվետվությունում [21]: Արդյունքները փաստեցին, 2000-2010թթ. ընթացքում *զարգացած* և *զարգացող* երկրների միջև ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշով տարբերությունը ոչ թե նվազել, այլ աճել էր 117 անգամ: Նույնն էր պատկերը նաև մոբիլ կապի (ՄԿ) ՏՏՀ դեպքում՝ աճ մոտ 22 անգամ:

Ահա սա է իրական, «նոր թվային խզման» երևույթը՝ արձանագրված ՀՄՍ-ի կողմից 21-րդ դարի առաջին տասնամյակի համար: ՀՄՍ 2012թ. այս կարևոր ուսումնասիրությունից հետո, խոսելով «թվային խզման» մասին, առաջին հերթին նկատի ունեն *զարգացած* և *զարգացող* երկրների միջև խզումն ըստ տեսակարար ու որակական պարամետրերի, օրինակ՝ ըստ ՖԼԿ ՏՏՀ-ի կամ ԻԿՏ ոլորտի արբանյակային ունակությունների: Հայաստանի համար այսպիսի դիտարկումներն առաջին անգամ կատարվել են [8, 9, 18, 20, 22]-ում: Դրանց արդյունքներին մենք դեռ կանդրադառնանք ստորև (տե՛ս 3.3): Իսկ այստեղ կցանկանայինք ձևակերպել այն հետևությունները, որոնք թեև նախանշված էին [21]-ում, բայց այդպես էլ մնացին չձևակերպված՝ ոչ 2012-ին, ոչ էլ դրանից հետո.

1. Կայուն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական պայմաններում<sup>8</sup> անհավասարության հիմքում ընկած այս կամ այն պարամետրով խզման երևույթը քանակական մակարդակից արագ տեղափոխվում է որակականի: Այս դեպքում երևույթի համարժեք վերլուծությունը պահանջում է անցում կատարել երևույթի «0-ական մակարդակից»՝ «առաջին ածանցյալի» մակարդակ: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել նոր որակական ու տեսակարար ցուցանիշներ:

<sup>8</sup>Օրինակ, 20-րդ դարի կեսերից՝ երկրներ աշխարհակարգում:

2. Իսկ աշխարհաքաղաքական անկայունության իրավիճակում, օրինակ՝ միաբներ աշխարհակարգից բազմաբներին անցման մեր օրերում, խորացող անհավասարության երևույթների համարժեք քննությունն արդեն պահանջում է դիտարկումներ իրականացնել երևույթի «2-րդ ածանցյալի» մակարդակում, այդ մակարդակին բնորոշ ուրույն պարամետրերի օգտագործումով (տե՛ս 3.6):

Ասվածը պարզաբանենք օրինակով: *Զարգացած և զարգացող երկրների միջև անհավասարությունը ժամանակին ընդունված էր չափել քնակչության 100 ընտանիքի հաշվով սառնարանների քանակով:* Սակայն, տեխնոլոգիաների և միջազգային տնտեսական համակարգի զարգացմանը համընթաց, իրական անհավասարության երևույթն արտահայտելու տեսանկյունից այս քանակական չափանիշը կորցրեց իր համարժեքությունը, քանի որ *զարգացող երկրներում քնակչության մեկ շնչին ընկնող սառնարանների քանակը սկսեց արագ մոտենալ զարգացած երկրների ցուցանիշներին:*

Բայց դա ամեննին էլ չէր նշանակում անհավասարության վերացում կամ անզամ դրա մեղմում, քանի որ ի հայտ են զայս անհավասարության արդեն որակական ցուցանիշներ (անցում «0-ական մակարդակից» «առաջին ածանցյալի» մակարդակ) և զարգացածությունը մարմնավորող միանգամայն նոր չափանիշներ: Օրինակ՝ ավտոմեքենա (մոբիլություն), «Այֆոն» (վիզուալ, տեքստային, նիշային ցանցային կապ) և այլն (անցում «2-րդ ածանցյալի» մակարդակ, տե՛ս 3.6): Պատկերավոր ասած՝ քնակչության 100 ընտանիքի հաշվով սառնարանների քանակից ավելի կարևոր է դառնում այն, թե ինչով են

լցված այս սառնարանները, ինչ դա արժե մեկ բնակչի համար, և արդյոք սառնարանի առկայությունն է, որ բնութագրում է տվյալ փուլի «զարգացածության» աստիճանը<sup>9</sup>:

ԻԿՏ պարագայում գուտ տեխնոլոգիական առումով թվային խզման համարժեք նկարագրությունը պահանջեց դիտարկումների «Օ-ական մակարդակից» (օրինակ՝ ՖԼԿ բաժանորդների թիվ) անցում կատարել երևույթի «առաջին ածանցյալի» մակարդակ, ինչն էլ պահանջեց դիտարկել նոր ցուցանիշներ՝ ՖԼԿ SSՀ, ինտերնետի օգտատերերի (ի.օ.) թիվ<sup>10</sup>, արբանյակային կապի ու հեռահաղորդակցության ցուցանիշներ և այլն: Իսկ ահա այդ պարամետրերի ներառումը Բրանդի «նոր բաժանարար գծում», ի տարբերություն նախորդ դեպքի, արդեն էականորեն փոխեց մեր տարածաշրջանի կոնֆիգուրացիան:

### **3.3. Հայաստանն առաջին մարտահրավերի պայմաններում**

Քարտեզ 2-ում ներկայացված է ՀՍՄ-ի կողմից 2016-ին հրապարակված աշխարհի այսպես ասած «անկապ» (*offline*) բնակչության քարտեզը՝ կառուցված ԻԿՏ ոլորտի ինտեգրալ ցուցանիշների (ի.օ. թիվ, ԻԿՏ արբանյակային բաղադրիչ) հիման վրա [23]: Քարտեզում կառուցվել է Բրանդի նոր «թվային գիծը» (նշված է


<sup>9</sup> Սա համանման է մաթեմատիկական անալիզի կայացմանը, եթե ֆունկցիայի վարքն ուսումնասիրում էին նախ առաջին (*ակորքանն*), իսկ հետո՝ 2-րդ (*հեսխան*) ածանցյալների մակարդակում, իսկ արտապատկերումների հասուլության տեսությունում՝ համակարգի վարքը նկարագրող պոտենցիալ ֆունկցիայի թեյլորի շարքի ընդհատմանը այն անդամի վրա, որը դիտարկումների մեջ է պահում երևույթի բոլոր էական (որակական) առանձնահատկությունները՝ դուրս բռնելով մնացյալ «ոչ էական» մանրամասները:

<sup>10</sup> «Ի.օ. թիվ» ցուցանիշը, կարծես լինելով քանակական, իրականում որակական է, քանի որ ունի ինտեգրալ բնույթ: Այն, ցանցային տեխնոլոգիաների հասունության (*maturity*) ու հասանելիության (*availability*) հետ մեկտեղ, ներառում է նաև ինտերնետի մատչելիության (*affordability*) սոցիալ-տնտեսական, ինչպես նաև երկրում ինտերնետի հանրային վարկի սոցիալ-քաղաքական բաղադրիչները:

կարմիրով՝ հիմք ընդունելով «անկապ» բնակչության ՀՄՍ 25% շեմային արժեքը<sup>11</sup>: Ինչպես տեսնում ենք այս քարտեզից, անցած դարի 80-ականներից ի վեր առաջին անգամ այստեղ խախտված է զարգացած «Հյուսիս» զլորալ տարածաշրջանի տարածքային կապակցվածությունը Եվրասիական մայրցամաքում:

*Քարտեզ 2*

*2016թ. վերջի դրությամբ աշխարհի «անկապ» (offline)  
բնակչությունը, %, ITU 2016:  
«Բրանդի նոր զիծը» նշված է կարմիրով*



Իրոք, արևելակավորապական երկրների «անկապ ելուստի» գոյացումը (Ուկրաինա, Մոլդովա, Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա, Բալկանյան երկրներ, ինչպես նաև Հունաստան և Իտալիա) գատում է զարգացած «Հյուսիս» տարածաշրջանին

<sup>11</sup> Հաստ ՀՄՍ-ի՝ Զարգացած խմբում ներառվում են այն երկրները, ուր ի.օ. ցուցանիշը կազմում է բնակչության 75-ից 100%-ը: Այլ խոսքով, ուր «անկապ» բնակչությունը կազմում է 0-25% [23]:

պատկանող ՌԴ-ն մնացյալ Եվրոպայից: Կարծում ենք, ամենին էլ պատահական զուգադիպություն չէ այն հանգամանքը, որ ԻԿՏ ոլորտի ներառմամբ ի հայտ եկած այս երկատված վիճակը համընկնում է ՌԴ - Արևմտյան Եվրոպա (ընդհանրացված «Արևմուտք») աշխարհաքաղաքական հակամարտության տարածական պատկերի հետ՝ հենց այս երկրների տարածքով:

Մեզ համար, սակայն, առավել մտահոգիչ է այն, որ Հայաստանը (Վրաստանի, Իրանի և Թուրքիայի հետ միասին) դուրս է գտնվում այս կերպ սահմանված զարգացած «Հյուսիս» գլոբալ տարածաշրջանից: Մինչդեռ ՌԴ-ն, Ղազախստանը և Աղրբեջանը գտնվում են այդտեղ (տե՛ս Քարտեզ 2, ուր մեր տարածաշրջանը պատկերված է առանձին):

Ուստի, օգտակար է անդրադառնալ ՀՀ-ում ԻԿՏ ոլորտի որոշ բնութագրական հատվածների զարգացման վերջին քանամյակի դինամիկային: Առավել ես, որ այս հարցին նվիրված հայրենական մասնագիտական գրականությունը բացակայում է: «Այսօր մեզանում բացակայում են ԻԿՏ ոլորտի զարգացմանը նվիրված ոչ միայն վերլուծական ուսումնասիրությունները, այլև նույնիսկ առկա վիճակը համարժեք նկարագրող վիճակագրական և փաստագրական հրապարակումները կամ ոլորտի հիմնախնդիրներին նվիրված պարբերականները: Չկա անգամ մշակված և համարժեք մասնագիտական հայալեզու եզրաբանություն» [22]: Եվ սա՝ Հայաստանում ԻԿՏ ոլորտի նկատմամբ իշխանությունների և բիզնեսի մեծ հետաքրքրվածության, հասարակական մեծ վարկի ու հարգանքի պարագայում:

**Ֆիքսված լայնաշերտ կապ.** Տվյալ երկրում ԻԿՏ զարգացածության աստիճանը բնութագրող կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում լայնաշերտ կապը՝ ընդհանրապես և ֆիքսված


լայնաշերտ կապը (ՖԼԿ)` մասնավորապես<sup>12</sup>: 2010-ին «Հազարամյակի զարգացման մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում հիմնվեց ՀՍՍ և ՄԱԿ թվային զարգացման լայնաշերտ կապի հանձնաժողովը, որն էլ ձեռնամուխ եղավ ոլորտում 4 հիմնական գլոբալ թիրախների ձևակերպմանը, դրանց հասնելու ծրագրերի և ռազմավարությունների խթանմանը» [22]: Այս առումով ՖԼԿ բաժանորդների (ՖԼԿԲ) թիվը և այդ թվի հարաբերությունը բնակչության 100 հոգուն (ՖԼԿԲ/100 հոգի) ունեն կարևորագույն նշանակություն: Դրանք բերվում են երկրների ինֆորմացիոն հասունությունը, ԻԿՏ ոլորտի զարգացածությունը, տեխնոլոգիական պատրաստվածությունը գնահատող գլոբալ տեղեկատուներում և մասնագիտական ուսումնասիրություններում:

Սա իրավացի է հատկապես ՖԼԿԲ/100 հոգի տեսակարար ցուցանիշի համար, քանի որ այն հնարավորություն է ընձեռում ոչ միայն գնահատել ԻԿՏ ոլորտի իրական ներթափանցման աստիճանը տվյալ երկրի հասարակական և տնտեսական կյանք, այլև կատարել համարժեք համեմատական վերլուծություն՝ վերանալով երկրների մասշտաբային էֆեկտներից: Մեզ, սակայն, հետաքրքրում են ոչ թե Հայաստանի և տարածաշրջանի երկրների այս ցուցանիշների տվյալ տարրա մեկուսացված արժեքները, այլ դրանց փոփոխման դինամիկան, դրանց ժամանակային շարքերի կորերի համադրությունը վերջին 15-20 տարիների համար:

*Գծապատկեր 1-ում* ներկայացված են ԱՄՆ, Իսրայելի, Էստոնիայի, Բելառուսի, ՌԴ, Հայաստանի, Ադրբեյչանի և Ուզբեկստանի ՖԼԿԲ/100 հոգի կորերը 2000-16թթ. համար: ՖԼԿԲ դինամիկայի նկարագրման առումով կարևոր են այս կորերի ձևը (ներթափանցման տեսմայ) և դրանց մեկնարկային կետը

<sup>12</sup> Մեզանում լայնաշերտ կապը հաճախ նույնականացվում է ինտերնետի հետ, մինչդեռ այն առաջին հերթին կապ է և հետո այլ բաներ:

Գծապատկեր 1  
ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշի 2000-16թթ. շարքերը  
որոշ երկրների համար [22]



(ներթափանցման սկիզբ): Ինչպես տեսնում ենք, բոլոր այս կորերին բնորոշ է շրջված Ֆ-ձև տեսքը՝ շրջման մեջ կետով: Այդ կետը նախանշում է բուռն զարգացման փուլի շրջումը զարգացման ավելի դանդաղ տեմպի, ինչը շուկայի հազեցման, ՖԼԿ տեխնոլոգիաների տվյալ սերնդի սահմանային ցուցանիշներին հասնելու և այլ, այդ թվում՝ տնտեսական ու քաղաքական (մենաշնորհ, սահմանափակումներ և այլն) գործոնների հետևանք է: Որոշ երկրների համար շրջման կետից հետո ՖԼԿԲ կորը ոչ թե հասնում է «հազեցման» ռեժիմ՝ դառնալով հաստատուն, այլ շարունակում է դանդաղ գծային աճը (ԱՄՆ, Էստոնիա, Իսրայել, Բելառուս): Ի մի բերելով Հայաստանում ՖԼԿ ներթափանցման մասին տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ

- Հայաստանում ՖԼԿ ներքափանցման ուշացումը առաջատար երկրներից կազմել է 10-12 տարի: Այս ժամանակահատվածն ավելին է, քան ՖԼԿ տեխնոլոգիական սերնդափոխության տևողությունը, ինչը հղի է քրոնիկ բնույթի ուշացման վտանգով:
- 2000-16թթ. համար Հայաստանում ՖԼԿԲ/100 հոգի տեսակարար ցուցանիշի սկզբնական աճի փուլին բնորոշ էին ընդհանուր ընկճվածությունը, դրա կտրուկության պակասը և շրջման փուլի վաղ հասունացումը: Արդյունքում՝ նշված ցուցանիշներով Հայաստանը տարածաշրջանում այսօր զբաղեցնում է վերջին տեղը:
- Անցած 7 տարիների ընթացքում այս ցուցանիշով Հայաստանը զիջում էր Աղբքեջանին միջինը տարեկան 50%-ով, իսկ բացարձակ թվերով՝ միջինը տարեկան 6.3 անգամ [22]:

Հակառակը, 2014-16թթ. ընթացքում ՖԼԿ տեղակայված հզորության առումով Հայաստանում արձանագրված է էական առաջնադաշտում: 2014-ի համեմատ 2016-ին ՖԼԿ տեղակայված հզորությունը գրեթե քառապատկվել է. 2014թ. 87.9 Գբ/վ ցուցանիշից այն 2016-ին հասել է 331 Գբ/վ ցուցանիշի [20]: Զգալիորեն աճել է նաև ՖԼԿ տեղակայված հզորության օգտագործման գործակիցը՝ 2013-ի 60%-ից հասնելով 75%-ի՝ 2015-ին: Հայաստանում ՖԼԿ տեղակայված հզորության ցուցանիշի այս էական աճը, կարծում ենք, պայմանավորված է առաջին հերթին հանրապետությունում 2014-16թթ. ընթացքում արձանագրված օպտիկամալուխային ազգային ցանցի էական զարգացմամբ, ինչպես նաև առավել արագագործ ՖԼԿ տեխնոլոգիական լուծումների կիրառումով:

ՖԼԿ տեղակայված հզորության առումով Հայաստանի 2014-16թթ. առաջխաղացումն առավել ցայտուն կդառնա, եթե անդրադառնանք դրա տեսակարար արժեքներին՝ ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորության (ՖԼԿ SSՀ) ցուցանիշին: Այս ցուցանիշը հաշվարկվում է մեկ մարդու կամ մեկ ինտերնետ օգտատերի հաշվով՝ կր/վ/մարդ կամ կր/վ/ի.օ. չափողականությամբ<sup>13</sup>, և ունի կարևորագույն նշանակություն, քանի որ.

- լինելով որակական՝ այն համարժեք կերպով արտահայտում է նոր «թվային խզման» երևույթը (դիտարկումների «առաջին ածանցյալի մակարդակ», տե՛ս վերը),
  - լինելով տեսակարար՝ այն հնարավորություն է ստեղծում իրականացնել համարժեք համեմատական վերլուծություն՝ վերանալով տվյալ երկրի (կամ երկրների) խմբի բնակչության բացարձակ արժեքներից:

**Աղյուսակ 1-ում** բերված են ՀՄՍ 2017թ. հաշվետվության տվյալները աշխարհի աշխարհագրական (ձախ սյունակ) և գլոբալ (աջ սյունակ) տարածաշրջանների 2016թ. ՖԼԿ ՏՏՀ միջին ցուցանիշները կր/վ/ի.օ. չափողականությամբ: Համեմատելով դրանք Հայաստանի 2016թ. ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշի հետ՝ 178 կր/վ/ի.օ., տեսնում ենք, որ 2016-ին Հայաստանն այս ցուցանիշով հավասարվել է Եվրոպայի միջին ցուցանիշին՝ զգալիորեն առաջ անցմելով աշխարհի մնացած բոլոր աշխարհագրական տարածաշրջանների միջին ցուցանիշներից [20]: Ավելին, 2016-ից Հայաստանը գերազանցում է Ամերիկաների միջին արժեքը մոտ

<sup>13</sup> Մինչ 2016թ. ՀՍՍ-ն իր հրապարակումներում այս ցուցանիշների մասին տեղեկատվությունը կանոնավոր ֆիքսում էր կր/վ/մարդ չափողականությամբ: 2017-ից ՀՍՍ-ն (և Աղրբեջանը) անցնում էն ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշի կր/վ/ի.օ. չափողականության: Այս առնչությամբ Աղրբեջանի ՖԼԿ ՏՏՀ վիճակագրական տվյալներում պաշտոնական գենդարարությունների մասին տես՝ ս [20]:

2 անգամ, ԱՊՀ-ին<sup>14</sup> և արաբական երկրներին՝ ավելի քան 3 անգամ, Աֆրիկային՝ ավելի քան 4 անգամ: Նույն այդ տարում Հայաստանն առաջին անգամ առաջ է անցել նաև զարգացած երկրների ՖԼԿ ՏՏՀ միջին ցուցանիշից (140 կր/վ/ի.օ.)՝ գերազանցելով այն 27%-ով: Իսկ գերազանցումը զարգացող երկրների խմբային միջին ցուցանիշից (53 կր/վ/ի.օ.) կազմել է ավելի քան 3 անգամ:

### Աղյուսակ 1

*Աշխարհի տարածաշրջանների ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշները  
1 ի.օ. հաշվով, 2016թ. [23]*

Աշխարհագրական տարածաշրջանների միջին ՖԼԿ ՏՏՀ, կր/վ/ի.օ., 2016թ.		Գլոբալ տարածաշրջանների միջին ՖԼԿ ՏՏՀ, կր/վ/ի.օ., 2016թ.	
Եվրոպա	178	Զարգացած երկրների միջինը	140
Ամերիկաներ	91	Զարգացող երկրների միջինը	53
ԱՊՀ	59	Նվազագույն զարգացած երկրներ	6
Արաբական երկրներ	51		
Ասիա-խաղաղօվկիա- նոսյան տարածաշրջան	48		
Աֆրիկա	39		

Անդրադառնանք նաև ՖԼԿ արագությանն ըստ ՖԼԿ բաժանորդային արագության (ք.ա.) երեք տիրույթների՝ 256 կր/վ-ից մինչև 2 ՄԲ/վ, 2 ՄԲ/վ-ից մինչև 10 ՄԲ/վ, և 10 ՄԲ/վ և ավելի տիրույթներում ՖԼԿ բաժանորդների թվի: 2015-ին մեր տարածաշրջանում առաջատարը ՌԴ-ն էր, 10 ՄԲ/վ և ավելի ք.ա. տի-

<sup>14</sup> Համաձայն ՀՄՄ (և ՄԱԿ) մեթոդաբանության, ԱՊՀ-ն դիտարկվում է որպես աշխարհագրական տարածաշրջան: Այս հարցի առնչությամբ տե՛ս [17]:

բույրում  $12.26 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  ցուցանիշով (65%), որին հաջորդում էր Թուրքիան՝  $8.66 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  (69%), և Վրաստանը  $6.38 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  (45%): ՀՀ-ում  $10 \text{ Մբ/վ}$  և ավելի բ.ա. ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշը 2015թ. կազմում էր  $3.17 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  (33.5%) և այն էականորեն գերազանցում էր Աղրբեջանի ցուցանիշը՝  $1.57 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  (8%) [20]: Տեսակարար ՖԼԿԲ ընդհանուր թվով Աղրբեջանի ( $19.93 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$ ) գերազանցությունը Հայաստանի ( $9.48 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$ ) նկատմամբ առավելապես պայմանավորված էր ամենադանդաղ՝  $256 \text{ կբ/վ-ից}$  մինչև  $2.0 \text{ Մբ/վ}$  բ.ա. տիրույթի բաժանորդների թվով: 2015-ին Հայաստանում այս թիվն արդեն նվազել էր մինչև  $0.11 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$  (1.2%), մինչդեռ Աղրբեջանում այդ խումբը դեռ շարունակում էր մնալ ամենամեծը՝  $10.69 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$ , և կազմում էր ՖԼԿԲ ընդհանուր թվի կեսից ավելին (54%):


Այսպիսով, 2013-15թթ. ժամանակահատվածում մեզ մոտ 3 անգամ աճել է ՖԼԿ  $10\text{Մբ/վ}$  և ավելին՝ բ.ա. արագությամբ տիրույթում ՖԼԿԲ թիվը: Այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում էր Աղրբեջանին ( $1.57 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$ , 8%) մոտ 2 անգամ, սակայն զիջում էր Վրաստանին ( $6.38 \text{ ՖԼԿԲ}/100 \text{ հոգի}$ , 45%)՝ նույնպես մոտ 2 անգամ [20]:

**Ինտերնետ օգտատերեր.** Ինչպես նշել էինք վերը, ինտերնետ օգտատերերի թիվը ինտեղրալ ցուցանիշ է և միանգամայն պիտանի է «1-ին ածանցյալ» մակարդակի դիտարկումների համար: **Գծանկար** 2-ում ներկայացված են մեր տարածաշրջանի 6 երկրների, ինչպես նաև Էստոնիայի և Իսրայելի «ի.օ.» ցուցչի ժամանակային շարքերը 2000-16թթ. համար:

Ինչպես տեսնում ենք, Էստոնիան ի.օ. 50% արժեքը գրանցել էր 2003-ի վերջին, Իսրայելը՝ 2007-ին, ՈՉ-ն և Աղրբեջանը՝

2011-ին: Իսկ Հայաստանը՝ միայն 2014-ին: 2016-ին Հայաստանն իր «ի.օ.» ցուցով (64.2%)<sup>15</sup> զիջում էր Աղրբեջանին (78.2%) և ՌԴ-ին (76.4%), բայց առաջ էր Իրանից (53.2%), Թուրքիայից (58.4%) և Վրաստանից (50.0%): Աղրբեջանի 2016թ. ցուցանիշը գրեթե հավասար է միջին եվրոպական ցուցանիշին՝ 79.1%: Համեմատության համար նշենք, որ ըստ ՀՄՄ-ի, 2016թ. «ի.օ.» միջին արժեքն աշխարհի համար կազմել էր 47.1%, իսկ զարգացած և զարգացող երկրների խմբերի համար՝ 81.0% և 40.1% համապատասխանաբար:

### Գծապատկեր 2 Ինտերնետի օգտատերեր, բնակչության %: ՀՄՄ, 2017 [18]



Այսպիսով, «ի.օ.» ցուցով առաջատար երկրներից Հայաստանի ուշացումը (լազը) կազմում է մոտ 10 տարի: Այսինքն՝

<sup>15</sup> Ըստ ՀՄՄ 2018թ. փետրվարին ճշգրտված տվյալների: ՀՄՄ համացանցային գրադարանում Հայաստանի 2016թ. «ի.օ.» ցուցանիշի համար շարունակում է բերվել 2016-17թթ. 62% զնահատականը, որն էլ կրկնում ենք Գծապատկեր 2-ում:

մոտ այսքան, որքան կազմում էր առաջատար երկրներից Հայաստանի ՖԼԿ ներթափանցման ուշացումը (տե՛ս՝ վերք):

### **3.4 Արբանյակային ունակություններ**

Այժմ անդրադառնանք ԻԿՏ ոլորտի արբանյակային բաղադրիչին: Սկսենք պարզ փաստերից: 1966-ին աշխարհում կար արբանյակային ունակություններով 5 տերություն, որոնցից սեփական արձակման հնարավորություն ունեին միայն 3-ը՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Դրանցից միայն ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ն ունեին կապի և հեռահաղորդակցության արբանյակներ (ԿՀԱ)<sup>16</sup>: Իսկ 40 տարի անց՝ 2016-ին, աշխարհում արբանյակային ունակություններ ուներ արդեն ավելի քան 3 տասնյակ երկիր (տե՛ս՝ Քարտեզ 3), որից ԿՀԱ ուներ ավելի քան 2 տասնյակը: Այդպիսի ունակություններից այսօր գրկված են հիմնականում Աֆրիկայի հասարակածային գոտու երկրները, Ասիայի և Կենտրոնական Ամերիկայի մի քանի երկրներ, ինչպես նաև Սիրիան, և ըստ այս քարտեզի՝ Աղրբեջանը: Քարտեզ 3-ում դրանք նշված են գորշ գույնով:


Բայց «Աշխարհի մտահոգված գիտնականների միության» (UCS) հեղինակավոր կայքը, որից վերցրել ենք այս քարտեզը, ցավոք, անփոյթ է կազմված: Հավանաբար, արբանյակային ունակությունների հարցով նրանց (ինչպես նաև մեր որոշ գործիչների ու փորձագետների) մտահոգվածությունը բավականաշափ խոր չէ: Այլապես, 2016-ի այս քարտեզում կնշվեր, որ Աղրբեջանն արդեն մոտ 3 տարի ունի արբանյակային ունակություններ [8], իսկ Ղազախստանը և Պակիստանն ունեն նաև ար-

<sup>16</sup> ԿՀԱ-ն ընդհանրապես անզլուսարսնյան արգասիք է. սկսած Ա.Քլարկի 1945թ. «*Extra-terrestrial Relays*» հողվածից մինչև աշխարհում առաջին «*Early Bird*» ԿՀԱ-ն արձակված 1965թ. ապրիլի 6-ին: ԽՍՀՄ առաջին «*Молния-1*» ԿՀԱ-ն արձակվեց նույն տարում՝ ընդամենը 17 օր անց:

ձակման հնարավորություններ, միզուցե ոչ այդքան զարգացած, բայց՝ սեփական: Այսօր Թուրքիան ունի 6 արբանյակ (մեկ ԿՀԱ, մեկ ունիվերսալ և երկու հետախուզական) և հայտարարում է արձակման սեփական կարողությունների<sup>17</sup> ու սեփական ուղեծրային կայանի ստեղծման մտադրության մասին<sup>18</sup>: Ղազախստանն ունի 2 ԿՀԱ և 2 հետախուզական-հեռազննման արբանյակ ու պատրաստվում է արձակել նորերը: 4 արբանյակ ունի Իրանը (մեկ ԿՀԱ, մեկ ունիվերսալ և երկու հետախուզական):

### Քարտեզ 3

*Կոսմիկական տերությունները 2016-ին: Անընդհատ զույնով  
նշված են արբանյակային, շեղազծով՝ սեփական  
արձակման ունակություններով երկրները<sup>19</sup>*



<sup>17</sup> <https://rg.ru/2015/03/05/kosmodrom-site.html>

<sup>18</sup> [https://forbes.kz/news/2017/10/04/newsid\\_156148](https://forbes.kz/news/2017/10/04/newsid_156148)

<sup>19</sup> <https://www.ucsusa.org/nuclear-weapons/space-weapons/satellite-database#.W1MI2NIza00>

Աղրբեջանն այսօր ունի 2 արբանյակ (մեկ ԿՀԱ և մեկ հետախուզական) և մտադիր է 2018-ի ընթացքում արձակել ևս 2-ը [8, 9]: Առաջին ԿՀԱ-ն՝ «Azerspace-1»-ը, արձակվել է 2013թ. փետրվարի 7-ին, Գվիանայում տեղակայված ֆրանսիական «Կուռու» կոսմոնորումից, ֆրանսիական «Arianespace» ընկերության ծանր դասի հրթիռային կրիչով: «Azerspace-1»-ը պատրաստվել է ԱՄՆ «Orbital Sciences» տիեզերական կորպորացիայի կողմից<sup>20</sup> և նախատեսված է «թվային հեռարձակման, ինտերնետ հասանելիության, տվյալների փոխանակման, VSAT համակարգերի սպասարկման, ինչպես նաև պետական և հատուկ կապի» ոլորտներում ծառայություններ մատուցելու համար: 2017թ. մարտի դրությամբ այդ արբանյակի միջոցով իրականացվում էր 30 հեռուստա- և 17 ռադիոալիքների հեռարձակումը՝ աղրբեջաներեն, թուրքերեն, վրացերեն, ուկրաիներեն և ռուսերեն լեզուներով: 2017-ին «Azerkosmos» և վրացական «The Georgian Public Broadcasting» ընկերությունների միջև համաձայնագիր կնքվեց Adjara TV, 2TV, Maestro TV, Saperavi TV, Palitra TV և Trialeti TV հեռուստաալիքների կոմերցիոն հեռարձակման մասին: Աղրբեջանում գործում են արբանյակների կառավարման կառույց և պահեստային կենտրոն: Վերջինս տեղակայված է Նախիջևանում, և, համաձայն «Azerkosmos» ընկերության պաշտոնյայի, այն «երաշխավորում է Աղրբեջանի և Նախիջևանի միջև ուղղակի կապը՝ անկախ այլ երկրների տարածքով անցնող որևէ կապուղիներից» [8]:

Այսօր մեր տարածաշրջանում միայն Հայաստանը և Վրաստանն են, որ չունեն սեփական արբանյակային, այդ թվում ԿՀԱ ունակություններ: Այս առումով Հայաստանը դուրս է

<sup>20</sup>Պայմանագիրը ստորագրվել էր 2010թ. մայիսի 27-ին:

գտնվում *զարգացած* երկրների շարքից: Այնինչ Հայաստանի համար, իր աշխարհաքաղաքական վիճակով, բազմամիլիոնանց աշխարհասփյուռ հայությամբ ու տարածաշրջանում կրիպտոհայության շոշափելի զանգվածով, ԿՀԱ ունակությունները, հասկանալի է՝ ինֆորմացիոն բովանդակ ու գործուն քաղաքականության հետ միասին, պարզապես հրամայական են:

Բայց ԿՀԱ-ները դեռ ամենը չեն: Անհրաժեշտ է կանգ առնել նաև հետախուզական արբանյակների վրա, և այստեղ պետք է կատարել հետևյալ դիտարկումը: Մինչ 1990-ականների սկիզբը, մի կողմից՝ գուտ ռազմական նշանակության հետախուզական<sup>21</sup>, մյուս կողմից՝ քաղաքացիական ու կոմերցիոն նշանակության երկրի հեռագննման (ԵՀ)<sup>22</sup> օպտիկական արբանյակների, դրանց հետ կապված ենթակառուցվածքների միջև գոյություն ուներ խոր անջրապետ: Սակայն տեխնոլոգիական սրբնթաց զարգացումը պարզապես հեղափոխեց իրադրությունը, և այսօր այս երկու ոլորտներն արդեն սերտորեն միահյուսված են: Որոշ զարգացած երկրներում (օրինակ՝ Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ, ՌԴ) մասնավոր ու կիսամասնավոր աերոլուսմիկական կորպորացիաների զարգացածությունը հնարավորություն է ընձեռում ունենալ ոչ միայն բարձր և գերբարձր (մի քանի տասնյակ սմ-ից մինչև 1մ) օպտիկական լուծումով ԵՀ առանձին արբանյակներ, այլև այդպիսի արբանյակների իրական համաստեղություններ<sup>23</sup>:

---

<sup>21</sup> Reconnaissance.

<sup>22</sup> Earth Observation.


<sup>23</sup> Real constellation, истинное (спутниковое) созвездие - արբանյակային խմբավորում, որում ընդգրկված արբանյակներն ունեն ուղեծրերի վազանցի ու ֆազային համաձայնեցված շեղում, ինչը հնարավորություն է ընձեռում լուսանկարել երկրի մակերևույթի գրեթե ցանկացած վայր օրական ընդամենը մի քանի ժամը մեկ պարբերականությամբ:

Այսինքն՝ ունակություններ, որոնք բնորոշ են առաջին հերթին ռազմական և ռազմավարական արբանյակային հետախուզության ոլորտին, և որոնք ոչ ուշ անցյալում ունեին միայն ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը: Այնպես որ, այժմ տեղին է խոսել Հետախուզական և Երկրի հեռազննման (ՀԵՀ) արբանյակների միացյալ դասի մասին: Ընդ որում, արբանյակային հետախուզության ոլորտում տեխնոլոգիաների ու տվյալների փոխանցման վերահսկման միջազգային մեխանիզմների բացակայության ներկայիս պայմաններում [9], ՖԼԿ և ինտերնետային ծառայությունների զարգացածության աստիճանը, մի կողմից, միահյուսվելով նշված աերոկոսմիկական կորպորացիաների մասնավոր բնույթի պարագային, այսօր ստեղծել են միացյալ ՀԵՀ արբանյակային ունակությունների և ծառայությունների «գորշ շուկա», որից կարող են օգտվել և օգտվում են աշխարհի արդեն ավելի քան մեկ տասնյակ երկրներ՝ ձեռք բերելով այնպիսի հնարավորություններ, որոնք մինչ այդ հասանելի էին միայն աշխարհի երկու գերտերություններին: Այսպես, 2014թ. դեկտեմբերին ֆրանսիական *Airbus SD/EADS Astrium* ընկերությունն Աղբբեջանին վաճառեց իր արդեն ուղեծրում գտնվող միջին դասի ՀԵՀ «Spot-7» արբանյակը, որն Աղբբեջանում հայտնի է որպես «Azersky» (տե՛ս Նկ. 1, ներքևում):

Ավելին, հայտնի դարձավ, որ Աղբբեջանին հասու է ոչ միայն «Spot-7»-ը, այլև միջին դասի «Spot-6» և «Spot-7» ՀԵՀ արբանյակային գույգից, ինչպես նաև բարձր ճշգրտության դասի ֆրանսիական «Pleiades-1A» և «Pleiades-1B» ՀԵՀ արբանյակային գույգի ունակություններից օգտվելու հնարավորությունը: Ընդ որում, «Spot-6», «Spot-7» և «Pleiades-1A», «Pleiades-1B» արբանյակները կազմում են իրական, քառարբանյակ համաստեղություն (մանրամասները տե՛ս [8, 9]):

### Նկար 1

Վերևում՝ Ղազախստանի *KazEOSat-1* ՀԵՀ արբանյակը (ձախից), նրա 650 մմ ապերտուրով Կորշի հեռադիտակը (աջից): Ներքևում՝ Աղրբեջանի *Spot-7(Azersky)* ՀԵՀ արբանյակը (ձախից), նրա 200 մմ ապերտուրով Կորշի երկու հեռադիտակներից մեկը (աջից)<sup>24</sup>



Նկատենք, որ 2015թ. ապրիլ-մայիսին «*Spot 7/Azersky*» արբանյակի կողմից իրականացվել է Արաքս գետի ձախափնյա հատվածի հատուկ լուսանկարում՝ Խուդաֆերինի ՀԷԿ-ից մինչև Հորադիզ ընկած տիրույթում<sup>25</sup> [9]: Մեկ տարի անց հենց այս հատվածում ծավալվեցին Աղրբեջանի 2016թ. ապրիլյան 4-օրյա ազրեսիայի հիմնական գործողությունները: «*Spot 7/Azersky*» արբանյակի նմանօրինակ ակտիվություն է արձանագրվել նաև

<sup>24</sup> Airbus SD/EADS Astrium

<sup>25</sup> Նոյն 2015-ին հայտարարվեց Ղազախստանի «ՊազԿոսմոս» ընկերության մտադրությունը՝ օգտվել «*Spot 7/Azersky*» ՀԵՀ արբանյակի հնարավորություններից՝ «սեփական արբանյակային խմբավորման հնարավորություններն ընդլայնելու համար»:

2018-ի մայիսին՝ Աղդամի տարածքում<sup>26</sup>: Հավելենք, որ նույն *Airbus SD/EADS Astrium* ֆրանսիական ընկերությունը Ղազախստանի համար պատրաստել է բարձր դասի «KazEOSat-1» ՀԵՀ արբանյակը (տե՛ս Նկ. 1, վերևում), որն ուղեծիր է դուրս բերվել նույն 2014թ. ապրիլի 30-ին:

Ըստհանրապես, Թուրքիայի, Ադրբեջանի, Պակիստանի և Ղազախստանի արբանյակային կարողությունների զարգացման գործընթացներին բնորոշ է հատկանշական համանմանություն: Բացի այդ, փաստված են ՀԵՀ արբանյակային ոլորտում այս երկրների միջև համագործակցության հաստատմանն ուղղված ջանքերը: Դրանք ամրողությամբ տեղավորվում են նշված երկրների միջև արդեն տասնամյակներ տևող բարձր մակարդակի ռազմաքաղաքական համագործակցության տրամաբանությունում: Վերջապես, Թուրքիան, Պակիստանը և Ղազախստանն ունեն ընդգծված աղբբեջանամետ դիրքորոշում՝ թե՛ Արցախի հարցում, թե՛ Հայաստանը մեկուսացնող (և ՈՒ-ն շրջանցող) տարածաշրջանային աշխարհաքաղաքական ու ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման գործում: Իսկ Կասպից ծովի դելիմիտացիայի ռազմավարական նշանակության հարցում դրանցից առնվազն երկուսի դիրքորոշումը հակասության մեջ է ՈՒ և Իրանի երկարաժամկետ աշխարհաքաղաքական շահերին<sup>27</sup>: *Ուստի, ելնելով ՀՀ ազգային անվտանգության հրամայականներից՝ անհրաժեշտ է դիտարկել այս երկրներում արբանյակային, հրթիռային և բարձր տեխնոլոգիաների այլ ոլորտներում ծավալվող ծրագրերը համատեղ և որպես իրական վտանգ ու պոտենցիալ սպառնալիք ՀՀ ազգային անվտանգությանը:*

<sup>26</sup> <https://ru.sputnik.az/karabakh/20180630/415997246/Azersky-sputnik-monitoring-podzheg-okkupirovannyj-agdam.html>

<sup>27</sup> <https://www.youtube.com/watch?v=xhTFNalGhqY>

Այսօր, ինչպես և անցած քսանամյակի ընթացքում, Հայաստանը գուրկ է ՀԵՀ սեփական արբանյակային ունակություններից, ուղեծրային հետախուզական տվյալների անկախ ու պաշտոնական աղբյուրներից, դրանց պատվիրման, ստացման, մշակման և օգտագործման կարողություններից: Հավանաբար, իրագործվում է որոշակի երկկողմ<sup>28</sup>, բազմակողմ<sup>29</sup> և միջազգային<sup>30</sup> համագործակցություն այս ուղղությամբ: Սակայն ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում և գործող միտումների հեռանկարում առկա իրադրությունը պարզապես անթույլատրելի է:

Հայաստանում ՀԵՀ սեփական արբանյակային ունակությունների ստեղծումը, և ավելի լայն՝ կոսմիկական և արբանյակային տեխնոլոգիաների զարգացման համալիր ու բազմափուլ ծրագրի մշակումը, ընդունումը և իրականացումը հրատապ պահանջ են:

### *3.5 Ինստիտուցիոնալ կայացում*

Եվս մի քանի մտահոգիչ փաստեր: Աղբբեջանի ազգային հետախուզական և կապի ու հեռահաղորդակցության «Azerbai-kosmos» կոսմիկական գործակալությունը պաշտոնապես հիմնադրվել է 2010-ին՝ հիմնվելով դեռ 1992-ին կազմավորված Աղբբեջանի կոսմիկական հետազոտությունների կենտրոնի ժառանգության վրա, որն, իր հերթին, ստեղծվել էր անցած դարի 70-

<sup>28</sup> Համաձայն աղբբեջանական աղբյուրների, 1990-ականներին Հայաստանն օգտվել էր ՈՒ ուղեծրային հետախուզական որոշ տվյալներից: ՀՀ-ի և ՈԴ-ի միջև այս ասպարեզում համագործակցության մասին պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է թե՝ Հայաստանում, թե՝ Շուսաստանում:

<sup>29</sup> ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում արբանյակային տեխնոլոգիաների և կոսմիկական ծրագրերի առումով ՀՀ-ի հետ համագործակցությունը բացակայում է [24, 25]: Թեև առկա են Աղբբեջանի հետ որոշակի ծրագրեր, չնայած որ վերջինս ՀԱՊԿ անդամ չէ:

<sup>30</sup> Մասնավորապես երկրաբանության, գեոդեզիայի և սեյսմիկ ոիսկերի գնահատման ուղղությամբ:

ականների կեսին Ադր. ԽՍՀ կազմում ձևավորված «Կասպի» տիեզերական մոնիթորինգի կենտրոնի հենքի վրա: Այսօր «Azerbaijanos»-ը տնօրինում է երկու գործող արբանյակ՝ գեռստացիոնար և արևասինքրոն ուղեծրերում, մի շարք վերգետնյա ենթակառուցվածքային օբյեկտներ, այդ թվում՝ արբանյակների դեկավարման պահուստային կենտրոնը Նախիջևանում: Գործում է նաև երիտասարդ ազգային մասնագետների պատրաստման համակարգը: Մինչդեռ ՀՀ-ում, միայն երկրի գեռդեզիայի և քարտեզագրման բաղադրիչով, դրա նմանօրինակը հիմնադրվել էր, ճիշտ է՝ դեռ 2009-ի ապրիլին, սակայն աշխատանքների լիակատար ձախողման հետևանքով<sup>31</sup> այն ստիպված վերակազմափորվել ու վերաբացվել է միայն 2017-ի վերջին<sup>32</sup>, Ադրբեյջանից առնվազն 7 տարի ուշացումով [26, 29]:

Փաստենք հետևյալը. ՀԽՍՀ գոյության վերջին 20-25 տարիներին կոսմիկական և արբանյակային տեխնոլոգիաների առումով Հայաստանում կուտակված էր շոշափելի ժառանգություն: Ճիշենք միայն Պ.Մ. Հերունու Ռադիոֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտը՝ եզակի ողջ ԽՍՀՄ մասշտաբով, Գ.Ա. Գուրզադյանի Գառնիի Տիեզերական աստղագիտության ինստիտուտը<sup>33</sup>, Աշտարակի հատուկ կոնստրուկտորական բյուրոն, տասնյակ այլ բյուրոներ և միավորում-

<sup>31</sup> Կապված ՈԴ «Pecups-ՃԿԻ» արբանյակի խափանման, ինչպես նաև ՀԵՀ ասպարեզում աշխատանքների համարի և համարժեք ծրագրի բացակայության հետ [27, 28]:

<sup>32</sup> 2018-ի հուլիսին հայտնի դարձավ ՈԴ ԶՈՒ գլխավոր շտարի ռազմատեղագրական վարչության աշխատանքային խմբի Հայաստան այցի մտադրության մասին՝ ռազմական տեղագրության, նավիզացիայի, գեռդեզիայի և քարտեզագրության ոլորտում համագործակցության հարցերի քննարկման համար [30]:

<sup>33</sup> 70-ականների վերջից մինչև 80-ականների վերջը Գ.Գուրզադյանը նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Տիեզերական սարբաշինության ամբիոնի վարիչն էր: Այսօր, թեև ԵրՊԻ-ն դարձել է Հայաստանի ճարտարագիտական պետական համալսարան, սակայն այն այլևս չունի տիեզերական սարքաշինության ոչ ամբիոն, ոչ էլ անգամ լաբորատորիա:

ներ («Բազալտ», «Աստրո», «Շուրբին», «Պողիստոր», «Կոմետա», «Իմպուլս», «Տրանզիստոր» և այլն), որոնք էական դերակատարում ունեին ԽՍՀՄ արքանյակային և հրթիռային տեխնիկայի, կոսմիկական կապի ու հետախուզական տեխնոլոգիաների, կոսմիկական սարքաշինության և Էլեկտրոնիկայի կայացման գործում: Այն շատ ավելին էր, քան Աղրբեջանի պարագայում: Սակայն 90-ականների սկզբին, մի շարք հանգամանքների պատճառով, իսկ հիմնականում՝ ինստիտուցիոնալ թույլ հիշողության, սիսալ ու կամայական վճիռների, և կենտրոնախույս տեսնենցներով կուրացման հետևանքով, Հայաստանում այս ժառանգությունն ըստ էռության փոշիացավ, չուրացվեց ու մնաց չիրացված: Մինչդեռ, ունենալով շատ ավելի համեստ մեկնարկային պայմաններ, Աղրբեջանն այս առումով հասավ շոշափելի ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական հաջողությունների [8, 9]: Եվ այսօր մեզ համար թույլ սփոփանք է այն, որ ՌԴ վերջին սերնդի հետախուզական արքանյակները դեռ շարունակում են կրել հայկական անուններ<sup>34</sup>:

Հատկանշական է և այն, որ Աղրբեջանի (և Ղազախստանի) ազգային աերոկոսմիկական գործակալությունները գտնվում են այդ երկրների պաշտպանական արդյունաբերության նախարարությունների ենթակայության տակ. Աղրբեջանում՝ 2006-ից, Ղազախստանում՝ 2016-ից: Վերջինիս պարագայում նախարարությունը կոչվում է Աերոկոսմիկական և պաշտպանական արդյունաբերության նախարարություն: Այսինքն՝ արքանյակային ունակություններն այս երկրներում դիտարկվում են որպես ռազմարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) բաղկացուցիչ մաս:

<sup>34</sup> «Раздан». Спутники оптико-электронной разведки следующего поколения. 28.07.2016, <https://www.dw.com/ru/коммерсант-минобороны-рф-заказало-новую-систему-космической-разведки/a-19431580>

Ըսդհանրապես, ՌԱՀ ինստիտուցիոնալ կայացման տեսանկյունից հարկ է նշել, որ ՌԱՀ զարգացման պետական, բազմափուլ և համալիր պետական ծրագիրն Աղրբեջանում ընդունվել է 2005-ին, Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթադաշտի յուրացման հիմնական փուլի մեկարկի նախօրեին (մանրամասն տե՛ս [2]): Նույն տարրում հիմնադրվել է և Աղրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարությունը: Իսկ հաջորդ տարի Աղրբեջանի կոսմիկական գործակալությունը փոխանցվեց այս նախարարության ենթակայության տակ: Մեզ մոտ նման նախարարություն չկա մինչ օրս, իսկ ՌԱՀ զարգացման քիչ թե շատ համալիր ծրագիրը ընդունվել է միայն 2016թ. դեկտեմբերին<sup>35</sup>, Աղրբեջանից մոտ 12 տարի ուշացումով և միայն Աղրբեջանի 2016թ. ապրիլյան ազրեսիայից հետո: Իսկ 2018թ. մայիսին ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվեց ՀՀ ՊՆ «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը<sup>36</sup>:

Կառուցվածքային առումով ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը նախարարական մակարդակով ՀՀ-ում կազմավորվել է միայն 2016-ին՝ Աղրբեջանից 12 տարի ուշացումով: Ի տարբերություն Աղրբեջանի, Հայաստանում բարձր տեխնոլոգիաների ոլորտը ինստիտուցիոնալ, օրինակ՝ նախարարական մակարդակով (ավաղ՝ նաև բռվանդակային առումով) տակավին կազմավորված չէ: Նորից ընդգծենք, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտը չի համընկնում IT ոլորտի հետ: Այստեղ առաջին պլանում են կենսատեխնոլոգիաները, նյութագիտությունը, կենսագենետիկ տեխնոլոգիաները, լազերային տեխնիկան, ատոմային և միջուկային տեխնոլոգիաները, արբանյակա-

<sup>35</sup> <https://razm.info/92657>

<sup>36</sup> <https://www.e-gov.am/sessions/archive/2018/05/11/>

յին ունակությունները և այլն, այդ թվում և *IT* ոլորտը<sup>37</sup>:

Վերջապես, «Թվային տնտեսության», ինֆորմացիայի և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական ծրագիրն Աղրբեջանում մշակվել և ընդունվել է դեռ 2003-ին, այնուհետև նորացվել 2013-ին՝ 2014-20թթ. համար, և 2017-ին՝ 2018-2021թթ. համար [31]<sup>38</sup>: Հայաստանում նմանօրինակ ռազմավարական ծրագիրը մշակվել և նախնականորեն ընդունվել է միայն 2017-ին: Այսօր, սակայն, աշխատանքներն այս ծրագրի ուղղությամբ առկախված են:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը<sup>39</sup>՝ կարելի է պնդել, որ վերջին տասնամյակի ընթացքում նկատելի է գիտատեխնոլոգիական մարտահրավերների հանդեպ Հայաստանի պատասխանի ուշացումը թե՝ ինստիտուցիոնալ, թե՝ բովանդակային առումներով: Հանգամանք, որը չի կարող չմտահոգել: Մանավանդ եթե հաշվի առնենք Ա.Թոյնիքի մարտահրավերներին համարժեքորեն պատասխանելու ունակության կարևորության դրույթը երկրի (կամ քաղաքակրթության) զարգացման համար<sup>40</sup>: Առավել ևս, որ. «Այսօր մենք ականատեսն ենք աշխարհում ընթացող 2 կարևոր ու հակադիր միտումների: Մի կողմից՝ գիտատեխնոլոգիական սրբնյաց զարգացում, տվյալների մեծ շտեմարանների ստեղ-

<sup>37</sup> Հնդ որում՝ հատկապես հեռանկարային է *IT* ոլորտի տարրերի սիներգետիկ միաձուլումը նշված բարձրտեխնոլոգիական ոլորտների հետ:

<sup>38</sup> <https://www.trend.az/business/it/2812163.html>

<sup>39</sup> Ըստգծենք, որ այստեղ խոսում ենք միայն ինստիտուցիոնալ մարմինների կայացման ժամանակագրության մասին դուրս թռղնելով այս ինստիտուցիոնալ որոշումների համարժեքության և կառույցների արդյունավետության հարցը, ինչն առանձին և ծավալուն հարց է:

<sup>40</sup> Ավելի վաղ [11, 12] Գ.Ա. Հարությունյանի հետ համատեղ առիթ ունեցել էնք ձևակերպել մեր «Ապագայի Օնմասսիկայի» թերեմը, համաձայն որի՝ «Ապագան կանխանակցեն այն երկները, որոնք աշխարհաքաղաքական կրնադիդացիայի միջոցով ունակ կիրակ փոխարկել իրենց քաղաքակրթական ու տնտեսական ներուժը զիտատեխնոլոգիական և ինֆորմացիոն ներուժը»:

ծում, հեռահաղորդակցության միջոցների զարգացում և դրանց հանրայնացում: Մյուս կողմից՝ հիմնարար նշանակության տեխնոլոգիաների, գիտելիքների ու հմտությունների կենտրոնացում քիչ թվով պետությունների ու ֆինանսատեխնոլոգիական խմբերի ձեռքում, դրանց օտարում մարդկության և երկրների մեծամասնությունից: Հակադիր այս միտումներն օրեցօր դառնում են ավելի հուժկու՝ վկայելով նոր անհավասարության ու նոր մարտահրավերների գալուստը» [12, էջ 77]:

### **3.6 Երկրորդ մարտահրավեր. թվային խզումից իմաստավորման խզում**

Անհավասարության երևույթի դիտարկումներում «0-ական» մակարդակից անցումը «առաջին ածանցյալի» մակարդակ դեռ դյուրին է հասկանալ, ըմբռնել և վերլուծել: Ի վերջո, այս անցումը բնութագրվում է համեմատաբար հասանելի, և ամենակարևոր՝ ուղղակիորեն չափելի պարամետրերով («ՖԼԿ ՏՏՀ», «ի.օ.» և այլն): Կարծում ենք, սակայն, որ երևույթի բուն դինամիկան, ինչպես և միշտ դինամիկայում, թաքնված է «2-րդ ածանցյալի» մակարդակում: Իսկ ահա այս մակարդակի բնութագրից պարամետրերն արդեն դժվար չափելի են: Դրանց նույնիսկ որոշումն ու սահմանումը ինքնին լրջագույն խնդիր է<sup>41</sup>: Այստեղ առկա է առնվազն երկու բարդություն:

<sup>41</sup> Եվրոպական բնագիտության համար պահանջվեց մի քանի դար, որպեսզի հստակ սահմանվեն, ընկալվեն ու կիրառվեն «ուժ» և «իմպուլս» հասկացությունները: Մեր դիտարկումներում դրանք համապատասխանում են (մեխանիկական) երևույթների «առաջին ածանցյալ» մակարդակին: Իսկ հետո պահանջվեց որակական նոր թռիչք, որպեսզի սահմանվեն «կինետիկ էներգիա», «ուժային ֆունկցիա» և «գործողություն» (*գեյշտիւն, action*) հասկացությունները, որպեսզի իր ողը ընդհանրականությամբ ձևակերպվի «գործողության մինիմալության սկզբունքը» (*the principle of least action*), դրվեն վարիացիոն մեխանիկայի հիմունքները: Սա մեր դիտարկումների «2-րդ ածանցյալ» մակարդակն է:

Առաջինը պայմանավորված է այսպես ասած «նորի ստեղծման ու տարածման» հետ: ԻԿՏ ոլորտում դրանք, օրինակ, լայնաշերտ կապի որակապես նոր տեխնոլոգիական լուծումներն են՝ պայմանավորված «մեքենան մեքենային» (*M2M*), «իրերի ինտերնետի» (*IoT*), և «փոքր իրերի ինտերնետի» (*IoST*) տեխնոլոգիաների ներթափանցմամբ<sup>42</sup>: Կամ մինի-արբանյակների հենքի վրա զլորալ մատչելիության ու անվճար համացանցի ստեղծումը: Կամ «խելացի իրերի», «խելացի նյութերի» ստեղծումը՝ հիմնված արհեստական բանականության ու նյութագիտության ոլորտների հատույթի վրա և այլն: Տեխնոլոգիաներ, որոնք ոչ միայն կհանգեցնեն սրբնթաց զարգացման, այլև էապես կփոխեն մարդկության սոցիալական դինամիկան, հանրային կյանքը և ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ ստեղծելով նոր մարտահրավերներ: Սա «2-րդ ածանցյալի» մակարդակի *տեխնոլոգիան պրոլիֆերացիայի* (ծավալման) ասպեկտն է, որը պահանջում է առանձին դիտարկում:

Երկրորդ բարդությունն ինչ-որ առումով նույնիսկ ավելի ֆունդամենտալ է: Կարծում ենք, որ այն կապված է ԻԿՏ ոլորտում անհավասարության երևույթների «2-րդ ածանցյալի» մակարդակին բնորոշող ֆունդամենտալ պարամետրերի հայտնաբերման ու որոշման հետ: Սա անհավասարության երևույթի «2-րդ ածանցյալի» մակարդակի *անվանարկման* ասպեկտն է, ու այստեղ խոսքն այս մակարդակի ուրույն պարամետրերի վերհանման, դրանց սահմանման մասին է: Ենթադրում ենք, որ այս պարամետրերը պետք է որ առնչվեն տվյալների (հաղորդակցության) *կոնստենտին*, դրա իմաստային դաշտին: Ավելի ճշգրիտ՝

<sup>42</sup> Համաձայն պաշտոնական տվյալների, *M2M* շարժական ցանցի բաժանորդների թիվը Հայաստանում 2013-ի 1.7 հազարից աճել է մինչև 54.9 հազ. 2015-ին: Աճը մոտ 32 անգամ:

այդ կոնտենտն ըմբռնելու և վերլուծելու հետ: Այլ խոսքով՝ **տվյալներն իմաստավորելու հետ:**

Ահա այստեղ է, որ առաջին պլան են գալիս տվյալների մեծ շտեմարանների (*Big data*) զոյացման, հավաքագրման, մշակման, և ամենակարևորը՝ դրանց վերլուծության, արդյունքների իմաստավորման ու կիրառման ունակությունները [11, 12]: Հստ էության, տվյալներն իմաստավորելու ունակությունն է, որ ընկած է ԻԿՏ ոլորտում անհավասարության խորացման ներկայիս գործընթացների հիմքում: Այս առումով կարծում ենք, որ այսօր ԻԿՏ ոլորտում տեղի ունեցող անցումը անհավասարության երևույթի «2-րդ ածանցյալի» մակարդակ տեղին է անվանել անցում «թվային խօսմից **իմաստավորման խզում**» (*From Digital divide to Data divide*): Այսուհետ «աշխարհի աշխարհների» ու լեզվական ընտանիքների միջև տեխնոլոգիական (այդ թվում՝ ԻԿՏ) մրցակցությունը, անհավասարության խորացումը, աշխարհաբաղաքական լարումներն ու քաղաքակրթական բախումները կընթանան հենց այս դաշտում [13, 14]:

Արդեն այսօր ինֆորմացիան, այդ թվում (և առաջին հերթին՝ ինֆորմացիոն «աղբը», հասանալի է դարձել ավելի, քան երբնէ, մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող լայն լարանի համար: Սակայն, այս ինֆորմացիոն հեղեղի մեջ շատ քիչ թվով երկրներ, երկրների խմբեր կամ լեզվական հանրություններ են ունակ ըմբռնել, պեղել (*data mining*), վերլուծել (*data processing*), և ամենակարևորը՝ օգտագործել այս ողջ ինֆորմացիան իրենց այս կամ այն նպատակների համար: Հատկանշական է, որ *Big Data*-ին նվիրված բազմաթիվ աշխատություններում գրեթե բացակայում է այն կարծես թե ակնհայտ ընկալումը, որ իր բնույթով այդ *Data*-ն հիմնականում և առաջին

հերթին *լեզվական* է, անգամ այն դեպքերում, եթե ունի թվային կամ նիշային տեսք: Այսպիսի ակամա «կուրությունն» իրականում ի ցույց է դնում արդի ժամանակաշրջանի հիմնական *կոլիզիան՝* լեզվական գերընտանիքների (չինարեն, անգլերեն, իսպաներեն, հինդի, տե՛ս [11], Գծ. 2) և թվով ավելի համեստ լեզվական հանրությունների (պորտուգալերեն, ֆրանկոֆոն երկրներ, «Շուսական աշխարհ») միջև մրցակցությունը տվյալների իմաստավորման ու լեզվաքաղաքակրթական և տեխնոլոգիական «իմաստների ստեղծման» գործում: Կարծում ենք, որ «Հյուսիս» ու «Հարավ» տարածաշրջանների միջև հիմնարար ջրբաժանն անցնում է հենց այստեղ [17]: Եվ իր բնույթով այն *լեզվաքաղաքակրթական* է ու *գիտատեխնոլոգիական*:

Դյուրին գործ չէ սահմանել «2-րդ ածանցյալ» այս երևույթները համարժեքորեն բնութագրող պարամետրերը, որոնք լինեն չափելի, հասանելի և ակնառու: Այդպիսիք, թերևս, կարող էին հանդիսանալ արհեստական բանականության ստեղծման, արդի կոնտենտ-վելուծության, տվյալների մեծ շտեմարանների ու լեզվական կորպուսների մշակման գործիքակազմերը, դրանց հնարավորությունների նկարագիրը [12]: Բայց այսպիսի ինֆորմացիան, մեղմ ասած, հասանելի չէ<sup>43</sup>, ոժվար չափելի է ու բավական հեռու է ակնառու լինելուց: Ուստի, ստիպված ենք գործ ունենալ անուղղակի պարամետրերի հետ՝ ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթի (տե՛ս 3.7 - 3.9 ենթագլուխները):

<sup>43</sup> Այն կարող է դառնալ հասանելի միայն արտառող դեպքերում: Օրինակ, Սնոուդենի դիպվածից հայտնի դարձան ԱՄՆ ԱԱԳ «*Boundless Informant*» և «*XKeyscore*» ծրագրերի ունակությունները (Հայաստանի առևտությամբ այս ծրագրերի մասին տե՛ս [33]): ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի «ոռուսական հետք» դույեից հայտնի դարձավ «*Cambridge Analytics*» ընկերության մարդու պրոֆիլավորման ծրագրի կարողությունների մասին օգտագործել, մշակել և որոշակի կերպով օգտագործել մոտ 80 մլն մարդկանց ֆեյսբուքան տվյալները և այլն [34, 35]:

### 3.7. Տվյալների շտեմարաններ և կենտրոններ

Նյութական առումով այդպիսիք կարող են լինել, օրինակ, տվյալ երկրում կամ տարածաշրջանում արդի տվյալների կենտրոնների (*data centers*) թիվն ու դասը, ամպային սերվերային կենտրոնները (*cloud service centers*) կամ համացանցի թրաֆիկի փոխանակման կետերի (*IXPs*) առկայությունը և մատչելիությունը: Մեր տարածաշրջանի համար դրանց քարտեզների ուսումնասիրությունը վկայում է, որ այսօր Հայաստանում բացակայում են արդի տվյալների կենտրոնները: Այնինչ, 2018թ. ապրիլի դրությամբ Վրաստանը և Աղրբեջանն ունեին 3-ական այդպիսի կենտրոններ (*Քարտեզ 4*): Մինչդեռ, 2016-ին նրանք ունեին 2-ական այդպիսի կենտրոններ:

*Քարտեզ 4*  
Տվյալների կենտրոնները (*data centers*) տարածաշրջանում  
2018թ. ապրիլին



Աղյուսակ՝ <http://www.datacentermap.com/>

Հայաստանում բացակայում են նաև ամպային սերվերային կենտրոնները: Այնինչ, 2018թ. ապրիլի դրությամբ Վրաստանը և

Աղրբեջանն ունեին 1-ական այսպիսի կենտրոն (տե՛ս՝ *Հավելված I*): Իսկ համացանցի թրաֆիկի փոխանակման տարածաշրջանային մոտակա կետը գտնվում է Թուրքիայում (*Հավելված I*): Այս հանգույցը տեղակայված է Ստամբուլում, DE-CIX տիպի (*Deutsche Commercial Internet Exchange*), մաքսիմալ թռողունակությունը՝ 6.4 Gb/վ: Հայաստանում առաջին, առնվազն «Tier 3» դասի, տվյալների կենտրոնի ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշումը կայացվել է միայն 2017թ. նոյեմբերին [36, 37]: Իսկ ամպային տեխնոլոգիաների հիման վրա առաջին կենտրոնը, հիմնված ըստ «Cloudflare» ընկերության տեխնոլոգիաների<sup>44</sup>, Հայաստանում թռողարկվեց 2017թ. մարտին (*U-com* ընկերություն)<sup>45</sup>:

Նորից այստեղ տեսնում ենք արդի մարտահրավերների հանդեպ Հայաստանի ուշացումը: Իրականության առջև չմեղանչելու համար ասենք, որ այստեղ առկա էին և շարունակում են գործել լուրջ աշխարհաքաղաքական ու աշխարհագրական, ինչոր առումով՝ օբյեկտիվ խոչընդոտներ՝ պայմանավորված Հայաստանի տարածաշրջանային մեկուսացմամբ և շրջափակմամբ:

### *3.8. Օպտիկամալուխային տարածաշրջանային մայրուղիներ*

Խնդիրն այն է, որ Թուրքիայի, Աղրբեջանի և, մասամբ, Վրաստանի կողմից իրականացված Հայաստանի շրջափակումը բազմակողմ է: Այսպես, օրինակ, տրանսպորտային շրջափակումը շոշափելիորեն սանձում է Հայաստանի արդյունաբերական զարգացումը, դժվարացնում ու թանկացնում տրանսպորտային


---

<sup>44</sup> <https://blog.cloudflare.com/yerevan-armenia-cloudflare-data-center-103/>

<sup>45</sup> <https://news.am/rus/news/381370.html>: 2018թ. ապրիլի դրությամբ աշխարհի «ամպային» սերվերային կենտրոնների քարտեզի վրա Հայաստանը, այնուամենայնիվ, բացակայում է, տե՛ս և *Հավելված I*:

Լոգիստիկան: Էներգետիկ շրջափակումն արգելակում է էլեկտրականէրգիայի տարածաշրջանային կենտրոն դառնալու մեր հնարավորության իրականացումը: Իսկ ԻԿՏ ոլորտում շրջափակման իրողությունները դանդաղեցրին Հայաստանում կապի և համացանցի մալուխային և օպտիկամալուխային ցանցի (ՕՄՑ) զարգացումը, շոշափելիորեն բարդացրին դրա համակցումը տարածաշրջանային մայրուղային ՕՄՑ-ներին (*long haul fiberoptic cables*):

Քարտեզ 5



Աղյուսակ՝ <https://www.itu.int/itu-d/tnd-map-public/>

Այսպես, Հայաստանը հարավում դուրս մնաց 1999-ին թռղարկված 17 հազ. կմ երկարությամբ մայրուղային *TAE<sup>46</sup>* (*Trans-Asia-Europe Optical Fibre Cable System*), կյուսիսում՝ պլանավորվող *TASIM* (*Trans-Eurasian Information Super Highway*) մայրուղային օպտիկամանրաթելային մայուսներին (SOU) համակ-

<sup>46</sup> Ստամբուլ-Օդեսա հատվածով այն միանում է ITUR ծովային OU3-ին:

ցումից: Հայաստանի ներքին ազգային OÜ3-ն, ի դեպ՝ ամենախիտը Հարավային Կովկասի տարածաշրջանում, միանում է տարածաշրջանային ՄՕՄ-երին միայն երկու համակցումներով (տե՛ս Քարտեզ 5): Հարավում համակցումն անուղղակի է՝ հայկական *GNC-Alfa* ընկերության միակ ՕՄ-ը Մեղրի-Ազարակ հատվածով նախ միանում է իրանական *TIC* (*Trans-Iranian-Cable*) և *Aryacell* ՕՄ-երին, այնուհետև ձգվում մինչև Չուլֆա ու միանում մայրուղային *TAE*-ին միայն Եվողլուի (*Evolgo*) մոտակայքում (տե՛ս Հավելված 2, ներքուս):

Նույն է իրավիճակը նաև հյուսիսային համակցման պարագայում: Այստեղ վրացական *FOTPNET* ընկերությանը պատկանող միակ ՕՄ-ով Հայաստանի OÜ3-ն միանում է տարածաշրջանային հյուսիսային մայրուղային ցանցերին. 1) Սևծովյան Վրաստան-Ռուսաստան ՄՕՄ-ին (*GROC*)<sup>47</sup> 1999-ից, ինչպես նաև «Կովկասյան կաբելային ցանցին» (*CCS*)<sup>48</sup>-ին՝ 2009-ից; 2) «Ростелеком» ընկերության ՕՄ-ով Սոչիի հեռահաղորդակցային հանգույցին, ինչպես նաև պլանավորվող «Տրանսեվրասիական ինֆորմացիոն գերիւծությ» (*TASIM*) ՄՕՄ-ին (տե՛ս Հավելված 2, վերևուս):

Հասկանալի է, որ այսպիսի համակցումը խոցելի է, ինչը ողջ սրությամբ ի հայտ եկավ 2011թ. մարտին, երբ բահի մի հարվածով անջատվեց Հայաստանի ողջ ինտերնետը [38]: Համաձայն հայտնի *AKAMAI* ընկերության, Հայաստանը և Քենիան աշխարհում միակ երկրներն են, որոնց ողջ ազգային ինտերնետը կարող է անջատվել (հետևաբար՝ կարելի է անջատել) փոքր

<sup>47</sup> *Georgia-Russia Fiber Optic Cable*, 0.64 Sp/վ:

<sup>48</sup> «*Caucasus Cable System*», նախագծային հզորությունը՝ 1.92 Sp/վ, ներկայում տեղակայված հզորությունը հասցված է մինչև 12.6 Sp/վ: Ընդ որում, Փոթի (Վրաստան)-Բալշիկ (Բուլղարիա) ծովային ՕՄ մարտիկի անցկացումն ամերիկյան «*CS Tyco Decisive*» նավին ավարտեց 2008թ. հուլիսին վրաց-օսմական 5-օրյա պատերազմից միքանի շաբաթ առաջ:

լոկալ վթարի հետևանքով [39]: Տարօրինակ է այն, որ եթե շրջափակման տրանսպորտային ասպեկտի մասին խոսվել է բազմիցս, էլեկտրաէներգետիկ շրջափակման մասին՝ ավելի հազվագյուտ, ապա ԻԿՏ ոլորտի, հատկապես տարածաշրջանային մայրուղային ՕՍՑ-ից Հայաստանի մեկուսացման ու համակցման խոցելիության մասին գրեթե չի խոսվում ոչ մեզ մոտ, ոչ էլ միջազգային հարթակներից:

### **3.9. «Հետաքրքրասիրությունը» և Վիքիպեդիան**

Ներկայում երկրների միջև անհավասարությունը բնութագրող «2-րդ ածանցյալի» երևույթները նկարագրող կարևորագույն (և ոչ նյութական) պարամետր է հանդիսանում «հետաքրքրասիրությունը՝ վերցված առաջին հերթին իմացաբանական, բնագիտական և տեխնոլոգիական առումներով ու վերագրված անհատին, հասարակությանը, ազգին ու լեզվական ընտանիքին: Մտահոգիչն այստեղ այն է, որ անցած երկու տասնամյակի ընթացքում մեր հեռուստաեթերում իսպառ բացակայում էր գիտահանրամատչելի որևէ ալիք կամ հաղորդումների շարք: Օրինակ՝ թուրքական *TRT-4* և *TRT Okul* հեռուստաալիքների կամ աղբքեցանական որոշ հեռուստաշարքերի նման:

Այսօր արևելահայերենով այլս գոյություն չունի որևէ գիտահանրամատչելի ամսագիր կամ պարբերական, ուր կպրոպագանդվեր գիտությունը, կրաշալերվեր հետաքրքրասիրությունը՝ երիտասարդ լսարանի համար գրավիչ ձևերով ու մատուցմամբ<sup>49</sup>: Հակառակը, սերիալների քանակով մեր երկու

<sup>49</sup> 1963-ից հրատարակվող «Գիտություն և տեխնիկա» ամսագիրը, որի կազմը ժամանակին նկարագրում էր Քոչարը, և որտեղ հոդվածներ էին ներկայացնում Մերգելյանն ու Համբարձումյանը, այսօր, ավաղ, կորցրել է ողջ գրավչությունը, խորությունը և, հետևաբար, իր լսարանը:


ամենամեծ լսարան ունեցող հեռուստաալիքների հեռարձակման շաբաթական ծավալը («Հ1», «Արմենիա», 89 ժամ շաբաթական) մոտ 6 անգամ զերազանցում է աղբյեջանական երեք ամենամեծ լսարան ունեցող ալիքներին (*«Aztv»*, *«ATV»*, *«ICTIMAI»* 15 ժամ շաբաթական): Մինչդեռ հայկական նշված 2 ալիքների մշակութային-լուսավորչական-դաստիարակչական բնույթի հեռարձակման շաբաթական ծավալը («Հ1», «Արմենիա», 28 ժամ շաբաթական) մոտ 3 անգամ զիջում է թե՛ աղբյեջանական համանման երկու ալիքներին (*«Aztv»*, *«ICTIMAI»*, 86 ժամ շաբաթական), թե՛ իրենց իսկ կողմից սերիալների հեռարձակման ծավալին [40]: Չնշին են նաև հայերենով գիտահանրամատչելի բնույթի գրքերի տպագրության ծավալն ու անվանացանկը:

Ցածր է բնագիտության և ընդհանրապես՝ գիտելիքի, հասարակական վարկը: Այս առումով խոսուն են Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) մասնագիտական ֆակուլտետների դիմորդներով լրացման աստիճանը 2017թ. ու դրա կառուցվածքն ըստ մասնագիտությունների (տե՛ս Գծապատկեր 3): Ինչպես տեսնում ենք, «Փիզիկա», «քիմիա», «կենսաֆիզիկա» և կենսաինֆորմատիկա» մասնագիտություններով դիմորդների լրացվածության աստիճանը կազմել է ընդամենը 6%, 8% և 9% համապատասխանաբար, և սա ուսման վարձի 430 հազ. ՀՀ դրամ դեպքում: Այնինչ «միջազգային հարաբերություններ» և «իրավագիտություն» մասնագիտություններով լրացվածությունը կազմում է 100%՝ ուսման վարձի էականորեն ավելի բարձր մակարդակի պայմաններում (870 և 650 հազ. ՀՀ դրամ համապատասխանաբար): Դժվար չէ նկատել, որ երեկ և այսօր ձևավորված հանրային ընկալումներում այս մասնագիտությունների գրավչությունը պայմանավորված է արտերկրում աշ-

խատելու կամ ուժային կառուցներին մոտ գտնվելու հեռանկարների հետ: Ու այս շարժառիթներն այսօր գերակայում են բնագիտական կամ հումանիտար մասնագիտությունն ընտրելու շարժառիթների հանդեպ:

*Գծապատկեր 3*

*Դիմոքրատիական լրացվածությունը (ձախից, %),  
ուսման վարձը (աջից, հազ. ՀՀ դրամ), 2017թ., ԵՊՀ*



Աղյուրը՝ <http://armtimes.com/hy/article/117747>

«Հետաքրքրասիրությունը» բնութագրող մեկ այլ պարամետր է տվյալ ժամանակահատվածում Վիքիպեդիաի (ՎՊ) անգլե-

թեն և ազգային լեզուներով էջերի դիտումների ընդհանուր քանակը տվյալ երկրում՝ մեկ ի.օ. հաշվով (ՎՊ դիտում/ի.օ.): Առիթ ունեցել ենք փաստել ՎՊ էական դերակատարումը որպես տեղեկատվության մասսայական ու հասանելի աղբյուր [11]: Ուստի, այս հարցին այլս չենք անդրադառնա<sup>50</sup>: Փոխարենը կանգ կառնենք դիտումների վիճակագրության վրա: Համարժեք վերլուծության համար սկսենք գլոբալ պատկերից:

Հստ «ՎիքիՄեդիա» ընկերության վիճակագրության՝ 2017-ին աշխարհում ի.օ. թիվը կազմում էր մոտ 3.0 մլրդ (աշխարհի 7.3 մլրդ ընդհանուր բնակչության 42%-ը)<sup>51</sup> [41]: Ընդ որում, «Հյուսիս» տարածաշրջանի համար, որը պարփակում է աշխարհի բնակչության մոտ 18%-ը կամ մոտ 1.3 մլրդ մարդ<sup>52</sup>, ի.օ. միջին ցուցանիշը կազմում է բնակչության արդեն 76%-ը (0.99 մլրդ ի.օ.): 2017-ի մայիսին այս օգտատերերն ապահովել էին ՎՊ գլոբալ<sup>53</sup> դիտումների 73%-ը (11.6 մլրդ դիտում ամսական): Այսպիսով, «Հյուսիս» տարածաշրջանի համար մեկ ի.օ. կողմից իրականացվում է ՎՊ էջերի ամսական միջինը 12.0 դիտում:

Հակառակը, «Հարավ» տարածաշրջանը պարփակում է աշխարհի բնակչության մոտ 82%-ը (6.0 մլրդ մարդ): Բայց «Հարավ»-ի ի.օ. միջին ցուցանիշը կազմում է բնակչության ընդամենը 34%-ը (մոտ 2.1 մլրդ մարդ): 2017թ. մայիսին դրանք ապահովել էին ՎՊ գլոբալ դիտումների 27%-ը (4.3 մլրդ դի-

<sup>50</sup> ՎՊ վրիպակները, որոշ մակերեսային դիտարկումները չի ծաղրել միայն ալարկուտը: Բոլոր նրանց համար կրկնենք մեր առաջարկը բերեք գիտելիքների ու տվյալների նույնքան մասսայական, այդքան լեզվական խմբեր ընդգրկող, իր իսկ օգտագործման վիճակագրությունն այդքան խնամքով վարող և այն այդքան հասանելի դարձրած մի այլ աղբյուր:


<sup>51</sup> Հայաստանի 2017թ. ի.օ. ցուցանիշը՝ 62% (Ճշգրտված՝ 64.2%): Աղբբեջանին՝ 78.2% [18]:

<sup>52</sup> Տիրահոչակ «ոսկե միլիարդը»:

<sup>53</sup> ՎՊ բոլոր, մոտ 200, լեզվական կորպուսների համար:

տում), ինչը համարձեք է մեկ ի.օ. հաշվով ամսական ընդամենը 2.0 դիտման: Եթե իր բնակչությամբ «Հարավ»-ը գերազանցում է «Հյուսիսին» մոտ 2 անգամ, ապա մեկ ի.օ. կողմից ՎՊ էջերի դիտումների ցուցանիշով այն արդեն զիջում է «Հյուսիսին» արդեն 6 անգամ: Այլ խոսքով՝ լինելով մոտ 2 անգամ ավելի սակավաթիվ, «Հյուսիս»-ի միջին ինտերնետ օգտատերը մոտ 6 անգամ ավելի «հետաքրքրասեր» է «Հարավ»-ի օգտատերից<sup>54</sup>:

**Գծապատկեր 4**  
**ՎՊ էջերի ամսական դիտումները մեկ ի.օ. հաշվով նախկին ԽՍՀՄ հանրապետությունների խմբերի համար: 2017թ. մայիսի 1-31-ը**  
**(Աղբյուրը՝ [41], սեփական հաշվարկներ)**



**Գծապատկեր 4**-ում բերում ենք ՎՊ դիտումների պատկերը՝ հաշվարկված նախկին ԽՍՀՄ հանրապետությունների

<sup>54</sup> Այս առումով կարծում ենք, որ ի.օ. տեսակարար ցուցանիշը պետք է ավելացնել «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջանները սահմանող Բրանդի բաժանագծին [17]:

բալթյան, պլավոնական և թյուրքախոս հանրապետությունների համար: Բերում ենք նաև Հայաստանի և Վրաստանի տվյալները, ինչպես նաև նշում «Հյուսիս»-ի և «Հարավ»-ի միջին ցուցանիշները: Ինչպես տեսնում ենք, ՎՊ դիտում/ի.օ. ցուցանիշի առավելագույն արժեքն ունեն բալթյան երկրները՝ 10.7 ՎՊ դիտում/ի.օ.<sup>55</sup>, որին հաջորդում են պլավոնական երկրները՝ 8.0 ՎՊ դիտում/ի.օ. և Վրաստանը՝ 7.0 ՎՊ դիտում/ի.օ.: Հայաստանը նախավերջինն է՝ 6.0 ՎՊ դիտում/ի.օ. ցուցանիշով:

Ըստ որում, Հայաստանի այս ցուցանիշը ստացված է 47% ի.օ. արժեքի պարագայում, որն օգտագործում է «Վիրիսեղիս» ընկերությունը [41]: Եթե այստեղ մենք օգտվենք Հայաստանի ի.օ ցուցանիշի ՀՄՄ ավելի հավաստի տվյալից (62% 2017-ին, [18]), ապա 2017թ. մայիսի ընթացքում արձանագրված ՎՊ 9.1 մլն դիտումը կհամապատասխանի տեսակարար ավելի փոքր ցուցանիշի՝ ընդամենը 5.0 ՎՊ դիտում/ի.օ. Հայաստանի համար (տե՛ս Գծ. 4): Վերջին տեղում են նախկին ԽՍՀՄ թյուրքախոս երկրները՝ 3.5 ՎՊ դիտում/ի.օ. ցուցանիշով (Ղազախստան և Ղրղզստան՝ 5 դիտում/ի.օ., Ուզբեկստան՝ 0.6 դիտում/ի.օ.)<sup>56</sup>: Այլ խոսքով՝ 2017թ. մայիսի դրությամբ հայաստանյան մեկ ի.օ.-ն միջինը մոտ 2 անգամ ավելի «անհետաքրքրասեր» էր, քան Բալթյան երկրների ի.օ.-ն, մոտ 1.5 անգամ ավելի, քան պլավոնական երկրների ի.օ.-ն:

Հատուկ կանգնենք Իրանի դեպքի վրա: Թեև այստեղ փաստված է ի.օ. նվազագույն ցուցանիշը մեր տարածաշրջա-

<sup>55</sup> Էստոնիա՝ 16 դիտում/ի.օ., ավելի, քան «Հյուսիս»-ի միջին ցուցանիշը (12 դիտում/ի.օ.):

<sup>56</sup> Ուշագրավ է, որ Թուրքիայի ցուցանիշը (0.4 ՎՊ դիտում/ի.օ.) էականորեն փոքր է ոչ միայն Աղրբեջանի (3.0 ՎՊ դիտում/ի.օ.) և Հայաստանի ցուցանիշներից, այլև գտնվում է «Հարավ» տարածաշրջանի միջին արժեքի (2.0 ՎՊ դիտում/ի.օ.) շեմից էլ զգալիորեն ցածր: Սա, իհարկե, Թուրքիայում ինտերնետի սահմանափակումների և հասարակական ցածր վարկանիշի հետևանք է: Նմանատիպ արդյունք կարող ենք տեսնել և Չինաստանի պարագայում (տե՛ս ստորև):

նում (32%, մոտ 27 մլն ի.օ.), ավելի փոքր, քան անգամ «Հարավ»-ի միջին ցուցանիշը (34%), այնուամենայնիվ, 2017թ. մայիսին իրանցի այս օգտատերերը կատարել են 418 մլն ՎՊ դիտում կամ ՎՊ գլոբալ դիտումների 2.6%-ը<sup>57</sup>: Իսկ դա նշանակում է իրանցի օգտատերերի կողմից ՎՊ դիտումների տպավորիչ՝ 17.0 ՎՊ դիտում/ի.օ. տեսակարար ցուցանիշ: Սա աշխարհում 4-րդ արդյունքն է: Այն ավելին է միայն Իռլանդիայի (24.0 ՎՊ դիտում/ի.օ.), Հոնկոնգի (20.0 ՎՊ դիտում/ի.օ.) և Ֆինլանդիայի (19.0 ՎՊ դիտում/ի.օ.) համար: Իսկ, օրինակ, ԱՄՆ-ում այն կազմել էր 13.0, Մեծ Բրիտանիայում՝ 15.0, իսկ Չինաստանում՝ ընդամենը 0.2 ՎՊ դիտում մեկ ի.օ. հաշվով: Կարծում ենք, որ Իրանի այս տպավորիչ ցուցանիշն անմիջականորեն կապ ունի (Բ) սերնդային ալիքի (*տե՛ս /17/, Գծ. 1*) և այս երկրում բնագիտության բարձր հանրային վարկի ու մի շարք լայնածավալ ազգային գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման հետ:

\*\*\*

Այս և նախորդ բաժիններում ներկայացված իրողությունների և պատկերացումների համախումբը, ի լրումն այլ գործոնների, ձևավորում է այնպիսի հիմնարար հասկացության բովանդակությունը, ինչպիսին է պետության հավաքական հզորությունը: Վերջինիս վերաբերյալ արդի մոտեցումները և հարակից խնդիրները կքննարկվեն հաջորդ բաժնում:

<sup>57</sup> Սուտավորապես նույնքան ՎՊ դիտում է ֆիքսված, օրինակ, Կանադայի համար, որը, սակայն, ունի 82% ի.օ. ցուցանիշ՝ մոտ 2 անգամ ավելի, քան Իրանը:

## Գրականություն

1. *Մարգանյան Ա.Հ.*, Նյութական և ոչ նյութական կրիտիկական ենթակառուցվածքներ, «Նորավանք» ԳԿՀ սեմինար, 23.12.2016; [http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT\\_ID=15305](http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15305):
2. *Մարգանյան Ա.Հ.*, Աղբբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, «Նորավանք ԳԿՀ», Երևան, 2013; [http://noravank.am/upload/pdf/Marjanyan\\_book.pdf](http://noravank.am/upload/pdf/Marjanyan_book.pdf), <http://noravank.am/upload/pdf/ANNEXES.pdf>:
3. *Մարգանյան Ա.Հ.*, Ազգային անվտանգությունը գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում, «21-րդ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, 1 (35), 2011, էջ 31-60; <https://cyberleninka.ru/article/v/nacionalnaya-bezopasnost-v-ehrohu-globalnyh-geopoliticheskikh-izmenenij> :
4. *Մարճանյան Ա.Ա.*, Корпорация RAND и Мы: Армяно-турецкие взаимоотношения, «21-й ВЕК», № 2 (18), 2011. С. 15-43; [www.noravank.am/upload/pdf/2.Ara\\_Marjanyan\\_21\\_VEK\\_02\\_2011.pdf](http://www.noravank.am/upload/pdf/2.Ara_Marjanyan_21_VEK_02_2011.pdf).
5. *Армянская диаспора: неспособность воспринимать реальность*. Интервью с национальным экспертом ПР ООН по энергетике в Армении, президентом НПО «Е-куб», к.т.н. Ара Марճаняном. Кавказский Геополитический Клуб, 22 декабря, 2016; <http://www.kavkazgeoclub.ru/content/armyanskaya-diaspora-nesposobnost-vosprinimat-realnost>.
6. *Մարճանյան Ա.Ա., Արյունյան Հ.Ա.*, Союзники на фоне научнотехнологического пейзажа. Тр. межд. конференции «Демократия и сетевые технологии в современном социально-политическом процессе», 18 мая, 2017, Москва, ФИП/РГГУ, 2017.
7. *Սուեֆիանյան Դավիթ, Վերանյան Կարեն, Մարգանյան Արա*, «Նորավանք» ԳԿՀ 2016թ. հարցաշարի արդյունքների վերլուծություն: Վերջնական հաշվետվություն, «Նորավանք» ԳԿՀ, 2017:
8. *Մարգանյան Ա.Հ.*, Աղբբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեգմենտը, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, 1 (90), 2018:
9. *Մարգանյան Ա.Հ.*, Աղբբեջանի կոսմիկական ծրագրի հետախուզական բաղադրիչը, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, 2 (91), 2018:
10. «*Поразительная потеря адекватности в восприятии реальности*». Итоги 2016 года. Интервью с национальным экспертом ПР ООН по энергети-

- ке в Армении, президентом НПО «Е-куб», к.т.н. Ара Марджаняном. Кавказский Геополитический Клуб, 31 декабря, 2016;  
<http://www.kavkazgeoclub.ru/content/porazitelnaya-poterya-adekvatnosti-v-vospriyatiu-realnosti>.
11. Մարգանյան Ա.Հ., Տվյալները՝ որպես բնական պաշար և հզորության աղբյուր, «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» Վերլուծական հանդես, 5 (84), 2017; [http://www.noravank.am/upload/pdf/Ara\\_Marjanyan\\_Globus\\_5\\_2017.pdf](http://www.noravank.am/upload/pdf/Ara_Marjanyan_Globus_5_2017.pdf):
  12. Մարգանյան Ա.Հ., Բառերի տիեզերք I. Հաճախակիության բառարանները և Google n-grams գործիքը. «Նորավանք» ԳՎՀ, «21-րդ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, 4 (74), 2017, էջ 60-81:
  13. Հարությունյան Գ.Ա., Մարգանյան Ա.Հ., Բազմակենտրոն աշխարհակարգի գիտատեխնոլոգիական բնապատկերը, «21-րդ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, 3 (73), 2017, էջ 2-27:
  14. Մարճանյան Ա.Ա., Научно-информационная политика и гибридные войны. *Геополитика и Безопасность*. Санкт-Петербург, № 4 (40), 2017, с. 26-34.
  15. Արդյունյան Գ.Ա., Մարճանյան Ա.Ա., Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных войнах, 21-й Век, № 4 (45), 2017, с. 5-17.
  16. Մարճանյան Ա.Ա., Военно-политический союз Армении и России на современном этапе: реалии, угрозы, перспективы. Доклад на конференции «Стратегический союз Армения-Россия: реалии и современные вызовы». 7 июля 2018г. Ереван, Армения.
  17. Մարգանյան Ա.Հ., Գլոբալ տարածաշրջաններ, սերնդային ալիքներ և պատմական քաղաքականություն, «21-րդ ԴԱՐ», 3 (79), 2018, էջ 17-81; [http://www.noravank.am/upload/pdf/new\\_Ara\\_Marjanyan\\_21\\_DAR\\_03\\_2018.pdf](http://www.noravank.am/upload/pdf/new_Ara_Marjanyan_21_DAR_03_2018.pdf):
  18. Մարգանյան Ա.Հ., Ինտերնատօնական օգտատերերի թիվը Հայաստանում և տարածաշրջանում. Փաստեր, «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» Վերլուծական հանդես, 3 (92), 2018:
  19. *The Independent Commission on International Development Issues (Brandt Commission, 1-st Brandt Report). North – South: A Programme for Survival*. Pan Books, 1980. *Common Crisis North-South: Cooperation for World Recovery. (2nd Brandt Report)*. An MIT Press Classic. April, 1983. Տե՛ս նաև Quilligan, J.B., The Brandt Equation: 21st Century Blueprint for the New Global Economy. Brandt 21 Forum, 2002.

20. *Մարզանյան Ա.Հ.*, Ֆիքսված լայնաշերտ կապը Հայաստանում ու տարածաշրջանում. Փաստեր, «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, 7 (86), 2017:
21. ICT Facts and Figures 2012. UN ITU, Geneva, Switzerland. 2012.
22. *Մարզանյան Ա.Հ.*, Ֆիքսված լայնաշերտ կապի հզորությունը և արագությունը Հայաստանում և տարածաշրջանում. Փաստեր, «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, 8 (87), 2017:
23. ICT Facts and Figures 2016. UN ITU, Geneva, Switzerland. June, 2016.
24. *Moldabekov, Yerzhan, Vinokurov, Evgeny*, Space Industry in CIS Countries: Prospects of Cooperation. Eurasian Development Bank, Sector Report no. 8. Almaty, 2010.
25. Землю прозондирует группировка спутников ЕАЭС. *РИТМ Евразии*. 04.02.2018; <https://www.ritmeurasia.org/news--2018-02-04--zemlju-prozondiruet-gruppirovka-sputnikov-eaes-34779>.
26. Երևանում բացվել է տիեզերական մոնիթորինգի կենտրոն. *PanARMENIAN.Net*. 1 ապրիլի, 2009; <http://www.panarmenian.net/arm/news/29888/>.
27. Российский спутник-картограф «Ресурс-ДК1» превратился в космический мусор. *TASS*. 18 апреля 2016; <http://tass.ru/kosmos/3214060>.
28. ՀՀ կառավարություն որոշում: 22 հունիսի 2012թ. № 778-Ն. ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի №1919-ն և 2012թ. մարտի 22-ի № 315-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին: Հավելված № 2, ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի № 778-Ն որոշման, Գլ. 3:
29. ՀՀ կառավարություն որոշում: 16 նոյեմբերի 2017թ. № 1478-Ա «ԳԵՂԿՈՍՈՎՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրելու մասին:
30. Ռուսաստանի ԶՈՒ գլխավոր շտաբի աշխատանքային խումբը կայցելի Հայաստան. *Sputnik*. 16.07.2018; <https://armeniasputnik.am/armenia/20180716/13276502/armenia-rusastan-glxavor-shtab.html>.
31. *Мамедов З.Ф., Зейналов В.*, Состояние и перспективы развития космической промышленности Азербайджана в условиях экономики знаний. Аз.ГЭУ, 2010.
32. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2015թ. օգոստոսի 30-ի № 667-Ն հրաման, «Հավելված N 1»:
33. *Марджанян А.А.*, Прощание с прошлым. «Мост», приложение к газете «Голос Армении». 30 Октября, 2013; <http://mostga.am/vzglyad/proshchanie-s-proshlym.html>.

34. The Cambridge Analytica Facebook scandal: a guide; <https://www.vox.com/2018/4/10/17207394/cambridge-analytica-facebook-zuckerberg-trump-privacy-scandal>.
35. Here's Cambridge Analytica's plan for voters' Facebook data. Techcrunch, Mar 29, 2018; <https://techcrunch.com/2018/03/29/heres-cambridge-analyticas-plan-for-voters-facebook-data/>.
36. ՀՀ կառավարություն որոշում: ՀՀ տարածքում տվյալների պահողի ստեղծման ծրագրին, միջոցառումների ժամանակացույցին և պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափին հավանություն տալու մասին: 23 նոյեմբերի 2017 թվականի N 49; <http://www.irtek.am/views/act.aspx?aid=92669>:
37. Մարդանյան Ա.Հ., Տվյալների մեծ կենտրոններ (big data centers) և շուկամարանները տարածաշրջանում, «Նորավանք» ԳՎՀ, Անալիտիկ տեղեկանք, 11.04.2017:
38. Lomsadze, Giorgi, A Shovel Cuts Off Armenia's Internet. 28.03.2011; <https://www.wsj.com/articles/SB10001424052748704630004576249013084603344>.
39. Hewitt, Kathryn, Two Ways an Entire Country Can Lose Access to the Internet - and Why the U.S. is Resistant. October 11, 2016; <https://blogs.akamai.com/2016/10/2-ways-an-entire-country-can-lose-access-to-the-internet-and-why-the-us-is-resistant.html>.
40. Մանուկյան Ս., Գալստյան Դ., Մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Աղրբեջանի հիմնական հեռուստաալիքներում, «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, 3 (92), 2018:
41. Wikimedia.org Squid Report. Page Views per Country Overview (1-31 May 2017). Wikimedia Report, Fri, Jun 2, 13:52 UTC. 2017.

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.

*Տարածաշրջանի «Ամպային» կենտրոնները  
(cloud service centers), 2018թ. ապրիլ*




*Ինտերնետ թրաֆիկի փոխանակման կետերը (IXP)  
մեր տարածաշրջանում, 2018թ. ապրիլ*



## ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Հայաստանի ONU հյուսիսային (վերևում) և  
հարավային (ներքեւում) համակցումները



## **4. ԱԶԳԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ԴԱԾՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ**

Արդի ֆրազմենտացվող աշխարհակարգի և «հիբրիդային» պերմանենտ պատերազմների իրողություններում տարբեր աշխարհագաղաքարախոսական կենտրոնների միջև առձակատումը, ըստ ամենայնի, դեռևս երկար է տևելու: Ակնհայտ է, որ նման իրադրությունում հատկապես ծանր իրավիճակում են հայտնվում պետական ոչ մեծ միավորները, ինչպիսին է Հայաստանը (ՀՀ և Արցախի Հանրապետություն): Բնական է, որ այս պայքարում առաջնազիծ են դուրս գալիս գիտելիքներն ու տեխնոլոգիաները. իզուր չէ, որ ամերիկյան ստրատեգները կարծում են, թե նոր տիպի պատերազմներում գլխավոր գենքը լինելու են դիմակայող կողմերի բանականությունն ու իմացական կարողությունները: Այսօր կան բոլոր հիմքերը կարծելու, որ նմանատիպ «հիբրիդային պատերազմները» շարունակվելու են նաև տեսանելի ապագայում: Հատկանշական է նաև, որ պետական և անդրազգային կազմակերպությունների կողմից ձևավորված «հիբրիդային» հակամարտությունների տրամաբանությունը ներմուծվում է նաև հանրությունների ներքաղաքական հարաբերություններ, որի արդյունքում դրանք նույնպես ձեռք են բերում «հիբրիդային» ուրվագծեր: Ստեղծված իրավիճակում, առավելքան նախկինում, որոշիչ դերակատարում է ստանում պետու-

թյան հավաքական հզորությունը, որը պայմանավորվում է նաև արտաքին սպառնալիքների աղեկված ընկալման համատեքստում արդյունավետ դաշնակցային հարաբերություններ ձևավորելու հմտությամբ:

#### **4.1 Պետության «հավաքական ազգային հզորությունը»**

**Պետության ներուժի գնահատմանն ուղղված մոտեցումները.** Երկրորդ աշխարհամարտից հետո, հատկապես սառըպատերազմյան ժամանակաշրջանում, առաջատար երկրների քաղաքական ընտրանիները սկսեցին զգալի ուշադրություն դարձնել իրենց երկրների և հասարակությունների մասնակի կամ հստակ ուղղվածության (տնտեսական, ռազմական և այլն) ուսուլաների գնահատման ու այդ պոտենցիալի զարգացման հնարավորություններին: Առանձնակի հաջողություններ արձանագրեցին հատկապես արևմտյան երկրները, ինչպես նաև Ռուսաստանն ու Չինաստանը: Հետազոտական աշխատանքներին ակտիվորեն ներգրավված էին ազգային փորձագիտական հանրության ներկայացուցիչները, որոնք հիմնավորված գնահատականներ էին ներկայացնում և դրանց հիման վրա կանխատեսումներ անում տվյալ պետության և հասարակության հզորության չափորոշիչների սահմանման ու ռեսուլսների զարգացման հնարավորությունների վերաբերյալ:

Սկզբնական շրջանում թիրախային հետազոտություններ էին կատարվում մասնավորապես խաղաղ պայմաններում պետության մարդկային և մտավոր կարողությունների գնահատման ոլորտում: Մեծ ուշադրություն էր դարձվում այդ պոտենցիալի մոբիլիզացման (կուտակման) հնարավորություններին հատկապես նախապատերազմական և ճգնաժամային

հնարավոր սցենարների պարագայում։ Խնդիրն իսկապես ակտուալ էր այն առումով, որ մարդկությունը նոր էր վերապրել Երկրորդ աշխարհամարտը և գտնվում էր հնարավոր նոր ռազմական բախումների վերսկսման սպառնալիքների ներքո։

Ենելով այդ ժամանակաշրջանի միջազգային ռազմաքաղաքական լարված իրադրությունից և սառըպատերազմյան զարգացումների ընդհանուր տրամարանությունից՝ «պետության և հասարակության պոտենցիալի կամ հզորության գնահատման» մեթոդաբանական չափորոշման հետազոտություններում առաջնակարգ տեղ էր հատկացվում երկրի ռազմական ռեսուրսների մոբիլիզացման ու զարգացման հնարավորություններին։ Այս ուղղությամբ լուրջ գիտահետազոտական ուսումնասիրություններ կատարվեցին մասնավորապես Միացյալ Նահանգներում ու Ռուսաստանում, որոնք գիտահետազոտական, ռազմատեխնիկական ասպարեզներում զգալի ներդրումներ էին կատարում միջուկային պոտենցիալի հզորացման նախազգերում։

Սառըպատերազմյան ժամանակաշրջանի վերջին տասնամյակներին և ընդհուած մինչև ԽՍՀՄ փլուզումը աշխարհի առաջատար երկրներում վերանայվեցին «պետության և հասարակության մասնակի» (թիրախային) հզորության կամ պոտենցիալի» գնահատման գերակայությունները, սկսեցին մեծ ուշադրություն դարձնել «պետության բազմակողմանի» կամ, ինչպես ընդունված է ասել մասնագիտական գրականությունում, «պետության հավաքական հզորության», «հավաքական ազգային հզորության» (այսուհետ՝ ՀԱՀ) գնահատման մեթոդաբանական մշակումներին։

**Պետության ՀԱՀ գնահատման ամերիկյան և չինական մոտեցումները.** Մասնագիտական գրականությունում ՀԱՀ-ը սահ-

մանվում է որպես պետության և հասարակության գիտատեխնիկական, քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային պոտենցիալի միջինացված ցուցիչ, որը հնարավորություն է տալիս տվյալ պետությանը զարգանալ տարածաշրջանային, միջազգային մարտահրավերների ու սպառնալիքների ներքո, հայթահարել ներքին և արտաքին քաղաքական-տնտեսական կատակիզմները, առաջ մղել և տարածել ազգային արժեքներն ու հոգևոր ներուժը:

Դետության և հասարակության ռեսուրսների զարգացման հնարավորությունների հարցում փոխվեցին նաև քաղաքական և փորձագիտական գնահատման նախկին մոտեցումները: Դա դրսևորվեց հատկապես արևմտյան առաջատար երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա), որտեղ «պետության հավաքական հզորություն» սահմանմամբ, հատկապես վերջին տասնամյակում, ամրագրվեց ներուժի գնահատման «փափուկ» չափորոշումը, որը տվյալ դեպքում ենթադրում էր ոչ այնքան երկրի պոտենցիալի ռազմական բաղադրիչ, որքան նրա մտավոր և մարդկային կարողությունների ներդրում ի շահ հասարակության բարեկեցության ապահովման: Ի տարբերություն արևմտյան երկրների, այդ համատեքստում Ռուսաստանը միայն մասնակիորեն կարողացավ դուրս գալ սառըպատերազման ընդհանուր ռազմականացման մրցակցային տրամաբանությունից և դեռևս շարունակում է հիմնական ուշադրությունը սևեռել պետության հզորացման ռազմական բաղադրիչին:

ԱՄՆ-ում ՀԱՀ գնահատման առաջին հետազոտություններն իրականացվել են 1960-ականներին: 1963թ. քաղաքագիտության պրոֆեսոր Ջ. Դավիթ Սինգերն առաջարկեց «Ազգային հզորության վիճակագրական գնահատում» (*Composite Index of*

*National Capability-CINC* մոդելը: Գնահատման այս մեթոդաբանության հիմքում, սակայն, ընկած էր միայն «կոշտ ուժի» հաշվարկը, որը հիմնվում է համաշխարհային ցուցիչների՝ ժողովրդագրական (օրինակ՝ քաղաքային-զյուղական բնակչության համամասնությունը), տնտեսական-էներգետիկ (օրինակ՝ երկրում էներգիայի սպառման ցուցանիշները, երկաթի ու պողպատի արտադրությունը) և ռազմական միջին տոկոսային ցուցանիշների վրա: Նշենք, որ սա շարունակում է համարվել **ՀԱՀ գնահատման հիմնական մեթոդներից մեկը նաև ներկայում:**

Միացյալ Նահանգներում **ՀԱՀ հետազոտական ռազմավարական մշակումներում** զգալի է Ռեյ Քլայնի (*Ray C. Cline*) ավանդը, որը համաշխարհային տերությունների ազգային հզորության գնահատման հիմնական մեթոդներից մեկի հիմնադիրն է<sup>1</sup>: Նա այս ոլորտում հրատարակված իր առաջին գրքում (*«Համաշխարհային տերությունների հզորության գնահատումը. ռազմավարական առաջընթացի հաշվարկը»*, *World power assessment. A calculus of strategic drift*) կատարել է տարբեր երկրների հավաքական ազգային հզորությունների սահմանման մաթեմատիկական-մեթոդաբանական հաշվարկներ: Ընդ որում, նրա մեթոդաբանական մոտեցումներում հաշվարկվում էին հիմնականում պետության հավաքական հզորության ոչ ռազմական հնարավորությունները:

Նշենք, սակայն, որ մինչև 2000-ական թթ. սկիզբը Միացյալ Նահանգներում թեև լայն տարածում ստացան «պետության հավաքական հզորության» փորձագիտական գնահատման մեթոդաբանական մոտեցումները, այնուհանդերձ, դրանք հիմնականում ունեին բավական ստանդարտացված չափորոշիչներ: Այս-

---

<sup>1</sup> [http://www.situation.ru/app/j\\_art\\_1155.htm](http://www.situation.ru/app/j_art_1155.htm)

պես, որպես «պետության հավաքական հզորության» գնահատման չափորոշիչներ առանձնացվում էին երկրի ՀԱ, ռազմական ծախսերի և զինված ուժերի թվաքանակի, բնակչության թվաքանակի և այլ ցուցանիշներ:

ՀԱՀ մեթոդաբանական-փորձագիտական գնահատումների տեսանկյունից արժեքավոր է նաև ամերիկյան հեղինակավոր «Ուենդ» կորպորացիայի 2005թ. հրատարակած «Չափելով ազգային հզորությունը» (*Measuring National Power*) գեկույց-հետազոտությունը: Այդ ուսումնասիրության փորձագետների գնահատականով, պետության հզորությունը (State power) կարող է սահմանվել 3 մակարդակով.

1. պետության ռեսուրսները (կամ ընթացիկ հզորությունը),
2. ինչպես է այդ հզորությունն արտացոլվում ազգային գործընթացներում (*National processes*),
3. պետության հզորությունը վերջնահաշվարկում կամ՝ ո՞ր պետությունն է գերիշխում տվյալ հանգամանքներում:

«Ուենդ»-ի մեթոդաբանական մշակումներում առաջարկվում է ՀԱՀ-ը գնահատել երկու ուղղությամբ՝ «կոշտ» և «փափուկ» ուժի մեթոդաբանության կիրառմամբ: ՀԱՀ գնահատման մեթոդաբանական հաշվարկներում շեշտվում է նաև այսպես կոչված «ոչ պետական գործոնների» կամ դերակատարների» (*Non-state actors-NSAs*) ընդգրկման անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ, ահաբեկչության, «ուղեղային կենտրոնների» և խոշոր մասնավոր կորպորացիաների ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա:

ՀԱՀ գնահատման ակտիվ հետազոտական մշակումներ

իրականացվեցին Չինաստանում 20-րդ դարի 80-90-ական թթ.: Այդ մեթոդաբանական հաշվարկների համաձայն, 1989թ. դրությամբ Չինաստանը ՀԱՀ ցուցով զբաղեցնում էր աշխարհում 6-րդ հորիզոնականը՝ 222 ամփոփ միավորով՝ զիջելով ԱՄՆ-ին (593 միավոր) և ԽՍՀՄ-ին (386 միավոր):

Վերջին շրջանում Չինաստանում «պետության հավաքական հզորության» գնահատման հաշվարկներում աստիճանաբար մեծ տեղ է հասկացվում ՀԱՀ «փափուկ ուժի» գնահատման մեթոդաբանության մշակմանը: Ներմուծվեցին նոր հասկացություններ, ինչպես, օրինակ, «պետության հոգեոր հզորություն», «պետության մշակութային-արժեքաբանական և քաղաքակրթական ներուժ»: Չինաստանի դեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում միջազգային հարթությունում իր քաղաքակրթական, մշակութային-արժեքաբանական ներուժի «արտահանման» և ազդեցության տարածման հարցերին:

Համաձայն պետության հզորության հարցի վերաբերյալ չինական մեթոդաբանական գնահատումների, ներկայում չինական դիվանագիտությունն ընկալվում է որպես «պետության հավաքական հզորության» և առհասարակ երկրի զարգացման կարևոր նախադրյալներից մեկը, որը համեմատվում է, օրինակ, Ռուսաստանի միջուկային պոտենցիալի հետ: Միաժամանակ շեշտվում է, որ չինական դիվանագիտության արդյունավետ մեխանիզմների և ռազմավարության շնորհիվ հնարավոր է ներազդել միջազգային հարաբերությունների և միտումների վրա, ինչը նույնպես, որպես ցուցիչ, խոսում է տվյալ պետության «հավաքական ազգային հզորության» բարձր ցուցանիշների մասին: Այստեղ կարևոր ցուցիչներ են արտաքին շուկայում տվյալ պետության ներդրումների ծավալները, ինչպես

նաև արտաքին տնտեսական քաղաքականությունում երկրի մասնակցությունն ու ներգրավվածության մասնաբաժինը:

Կարևոր հարցերից մեկը վերաբերում է այս կամ այն քաղաքական-տնտեսական դաշինքին տվյալ պետության մասնակցությանը՝ որպես երկրի ՀԱՀ բնութագրիչ: Միջազգային հարաբերությունների և քաղաքական գործընթացների վրա հնարավոր ազդեցության հարցը ենթադրում է նաև գնահատման մեթոդաբանական-փորձագիտական հստակ մեխանիզմների մշակում, ինչը թույլ կտա պարզել՝ որքանով է այս կամ այն ռազմաքաղաքական, տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունում կամ դաշինքում տվյալ երկրի ներկայացվածությունն ազդում այդ պետության ՀԱՀ ցուցչի վրա:

Բավական արժեքավոր են 2013թ. տարվա ամփոփ տեղեկատվության արդյունքների հիման վրա չինացի հայտնի տնտեսագետ Խոր Անգանի՝ ԱՄՆ և Չինաստանի ՀԱՀ համեմատական վերլուծության տվյալները: Նշենք, որ այդ վիճակագրությունը հիմնվում էր գնահատման «կոշտ ուժի», ստանդարտ ցուցիչների հաշվարկի մեթոդաբանության վրա: Հստ Խոր Անգանի մեթոդաբանական հաշվարկի, 2013թ. ՀԱՀ ընդհանուր ցուցչով Չինաստանն առաջ էր անցել Միացյալ Նահանգներից: 2014թ. դրությամբ, ըստ այդ գնահատականների, Չինաստանն արձանագրել էր համաշխարհային հավաքական հզորության ցուցչի 17.13%, Միացյալ Նահանգները՝ 15,25%<sup>2</sup>: Նշենք նաև, որ տարբեր հաշվարկներով, լիակատար մոբիլիզացման պայմաններում պետության ՀԱՀ-ը գնահատվում է տվյալ երկրի ՀՆԱ 45-50%-ի չափով (կորեական պատերազմի շրջանում ԱՄՆ-ը մոբիլիզացրեց ՀՆԱ 13%-ը)<sup>3</sup>:

<sup>2</sup> <http://globalaffairs.ru/number/Bolshie-gonki-18150>

<sup>3</sup> <http://mybiblioteka.su/tom2/1-44554.html>

**Հետևողուններ Հայաստանի համար.** Պետության «հավաքական ազգային հզորության» գնահատման հարցն ակտուալ է առաջին հերթին ռազմական սպառնալիքներ ունեցող երկրների համար, ինչպիսին է Հայաստանը: Հաշվի առնելով այն իրողությունը, որ Աղրբեջանի ղեկավարությունը հետևողականորեն մեծացնում է ազրեսիվ քաղաքականությունը ՀՀ և Արցախի Հանրապետության նկատմամբ, հայաստանյան փորձագիտական շրջանակներում ՀԱՀ գնահատման անհրաժեշտությունն իսկապես հրատապ է: Այսօր դժվար է ասել՝ արդյո՞ք մեզանում իրականացվել են Հայաստանի և Աղրբեջանի հավաքական հզորության գնահատման համեմատական հետազոտություններ: Ավելին, ինչպես արդեն նշվեց, ներկայում ակտիվ աշխատանքներ են տարվում ՀԱՀ գնահատման «փափուկ ուժի» և դրա հոգևոր-քաղաքակրթական բաղադրիչի մշակումների համատեքստում: Եվ այս առումով չափազանց արժեքավոր կլիներ համեմատական հիմնարար հետազոտություն իրականացնել, որը հնարավորություն կտար բացահայտել Հայաստանի և ողջ Հայկական հանրության և Աղրբեջանի հոգևոր-արժեքաբանական հզորությունը կամ պոտենցիալը:

Կարելի է համաձայնել, որ երկու երկրների ռեսուրսների կամ պոտենցիալի ուսումնասիրման աշխատանքներ, թերևս, կան, սակայն դրանք կրում են մասնակի բնույթ, ինչպես, օրինակ, Հայաստանի և Աղրբեջանի ռազմական պոտենցիալի հետազոտությունները և այլն:

Հայաստանում ՀԱՀ գնահատման հետազոտությունների իրազործումը հնարավորություն կտա պարզել ոչ միայն մեր հավաքական ազգային ներուժն ու ոլորտի բացթողումները, այլ նաև այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակել և առաջարկել Հայաստանի զարգացման սցենարներ:

#### 4.1 Էնթագլիփ աղբյուրներ

1. С. Пуденко, "Комплексная мощь государства (нации)". Почему рухнул СССР и развивается Китай?, [http://www.situation.ru/app/j\\_art\\_1155.htm](http://www.situation.ru/app/j_art_1155.htm)
2. В.Я. Портяков, Догнал ли Китай Америку по комплексной мощи?, <http://globalaffairs.ru/number/Bolshie-gonki-18150>
3. Совокупная мощь государства как показатель его возможностей национальной безопасности, <http://mybiblioteka.su/tom2/1-44554.html>

#### 4.2 ՀՀ դաշնակցային հարաբերությունները հիբրիդային իրողություններում

Բնական է, որ վերը ներկայացված խաղաղության և պատերազմի պայմաններում հատուկ կարևորություն է ստանում դաշնակիցների հարցը, որոնց, իհարկե, ցանկալի է ընտրել գաղափարական-քաղաքակրթական չափանիշներով։ Հարկ է փաստել, որ այս տեսանկյունից ամենակայացածը անզլուսաքսոնական հանրությունն է։ Այնինչ, «Սլավոնական աշխարհը» տարաբնույթ քաղաքական տեխնոլոգիաների ազդեցության արդյունքում գրեթե լիովին մասնատված է, այսինքն՝ «հիբրիդային» իրողություններում շատ բան թելադրվում է քաղաքական կոնյունկտուրայով, և դաշնակիցները գոյանում են ոչ միայն գաղափարական հատկանիշներով [1]։ Այս հանգամանքներն անմիջականորեն առնչվում են փաստացի պատերազմական իրավիճակում գտնվող Հայաստանի անվտանգության խնդիրներին, ինչը զգալիորեն պայմանավորված է «Սլավոնական աշխարհի» ներկայացուցիչ ՌԴ-ի հետ ունեցած ռազմական (ՀԱՊԿ) և տնտեսական (ԵՏՄ) սերտ հարաբերություններով։ Ելնելով նշված իրողություններից՝ դիտարկենք ՌԴ-ՀՀ դաշնակցային հարաբերությունների խնդիրները քաղաքակրթական-գաղափարախոսական տեսանկյունից, անդրադառնալով նաև

տարբեր երկրներում առկա հանրային կարծիքներին՝ դաշնակցային հարաբերությունների ձևավորման հարցում։ Այս համատեքստում մեծ հետաքրքրություն են ներկայացնում *WIN/Gallup International* ընկերության 2016թ. նոյեմբեր-դեկտեմբերին անցկացրած գլոբալ հարցման արդյունքները։

Հարցումն իրականացվել է «Տարվա վերջը» (*End of the Year*)<sup>4</sup> ամենամյա նախազգի շրջանակներում, որի ընթացքում աշխարհի 68 երկրներում հարցման ենթարկվածներին տրվել է հետևյալ հարցը. «Աշխարհի ռազմական առավել մեծ պոտենցիալ ունեցող 6 երկրներից՝ ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Հնդկաստան, ո՞րը կնախընտրեիք որպես դաշնակից Ձեր երկիր ռազմական ներխուժման պարագայում»<sup>5</sup>:

Ինչպես հետևում է *Աղյուսակ 1-ում* ներկայացված տվյալներից, ՌԴ-ին պատերազմի պարագայում որպես դաշնակից ընկալող առաջին 8 հանրություններից 6-ը գտնվում են Ռուսաստանի հետ նույն քաղաքակրթական միջավայրում։ Մերժիայի, Բուլղարիայի, Ռուսաբնայի և Սլովենիայի քաղաքակրթական ընդհանրությունը ՌԴ-ի հետ պայմանավորված է նույն «Սլավոնական աշխարհին» պատկանելով և համատեղ պայքարով օտարերկրյա զավթիչների դեմ, իսկ համապատասխանաբար 2-րդ և 4-րդ տեղեր զբաղեցրած Հայաստանի և

---

<sup>4</sup> *WIN/Gallup International. End of year 2016. Gallup International/Romir, 02.05.2017, http://romir.ru/studies/904\_1493672400/.*

<sup>5</sup> Հարցման է ենթարկվել ավելի քան 66.5 հազ. մարդ։ Յուրաքանչյուր երկրում հարցումն իրականացվել է ազգային ռեպրեզենտատիվ ընտրանքով։ Ռուսաստանում դաշտային աշխատանքներն իրականացվել են Romir հետազոտական հոլդինգի կողմից քաղաքային ռեպրեզենտատիվ ընտրանքով (1000 հարցվող), Հայաստանում *Marketing Professional Group LLC* ընկերության կողմից, անձնական հարցման ճանապարհով, քաղաքային ռեպրեզենտատիվ ընտրանքով (1104 հարցվող)։ Միջնասիական հանրապետություններում և Վրաստանում հարցումներ չեն իրականացվել։

Հունաստանի հետ քաղաքակրթական ընդհանրությունը հետևանք է ոչ միայն Օսմանյան կայսրության դեմ այդ երկրների համատեղ վարած պայքարի, այլև դեռևս բյուզանդական ժամանակաշրջանում ձևավորված բավական մոտ արժեքային համակարգի և ավանդույթների, այլ խոսքով՝ նշված հանրությունների վերաբերմունքը ՌԴ-ի հանդեպ՝ պայմանավորված պատմական-քաղաքակրթական գործոններով:

### *Աղյուսակ 1*

*ՌԴ-ն և ԱՄՆ-ը որպես ռազմական դաշնակից ընտրած առաջին 8 երկրները (ըստ WIN/Gallup Int. 2016թ.)*

№	ՌԴ	ԱՄՆ
1	Մոնղոլիա	71%
2	Հայաստան	67%
3	Սերբիա	56%
4	Հունաստան	48%
5	Չինաստան	47%
6	Բուլղարիա	42%
7	Ռուսաստան	33%
8	Ալյովենիա	30%

Սակայն արդի պայմաններում ռազմաքաղաքական պայմանագրերի առումով դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ ունի միայն Հայաստանը: Ավելին, նույն եղբայրական պատմական Ռուսաստանի հետ ՌԴ-ն գտնվում է պատերազմական վիճակում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ին նախապատվություն տվող երկրների հասարակությունները քաղաքակրթական տեսանկյունից հեռու են «անզլոսաքսոնյան աշխարհից»: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ ԱՄՆ ամենամերձավոր ռազմաքաղաքական դաշնակիցներն են Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավս-

տրայիան և Նոր Զելանդիան։ Ակնհայտ է, որ այդ երկրների հասարակություններում պատերազմի դեպքում ԱՄՆ-ին դիմելու հարց չի ծագում, քանի որ նրանց միասնության վերաբերյալ դատողություններն ուղղակի ավելորդ են։

Անդրադառնալով ռուս-հայկական հարաբերություններին՝ պետք է ընդունել, որ մեր երկրների ազգային անվտանգության տեսանկյունից վերոնշյալ քաղաքակրթական ներուժը դեռևս լիովին աղեկված չի ընկալվում և չի օգտագործվում։ Ավելին, վերջին 3-4 տարիներին ՀՀ-ՈՒ դաշնակցային հարաբերությունների հիմնարար դրույթներին տրվում են երբեմն մեկնաբանություններ, որոնք չեն կարող չմտահոգել։

Այսպես, օրինակ, հանրահայտ և ազդեցիկ Վալդայան ակումբի 2017թ. թիվ 66 «Գրառումները» սկսվում են հետևյալ փաստումից։ «Ռուսաստանի ռազմական դաշնակիցները քիչ են» և «պարտավորեցնող պայմանագրեր, երբ մեկ կողմի վրա հարձակումը հավասարվում է հարձակման բոլորի վրա, Ռուսաստանն ունի միայն Արխազիայի և Հր. Օսիայի հետ» [2]։ Հավելվում է նաև, որ «այլ պայմանագրերը, անգամ այն երկրների հետ, որոնք համարվում են Ռուսաստանի ամենամոտ դաշնակիցները, չունեն անվտանգության փոխադարձ երաշխիքների այսպիսի ավտոմատ մեխանիզմներ։ Մասնավորապես, ՀԱՊԿ շրջանակում այս առումով պարտավորությունները զգալիորեն ավելի մեղմ են, քան ՆԱՏՕ-ի դեպքում։ Եվ սա պարզորոշ երևում է համապատասխան դրույթների համեմատությունից»։ «Գրառումներում» բերվում են նաև հետևյալ համեմատական մեջբերումները։

- **Հյուսիսատյան դաշինք, Հոդված 5. «Կողմերը համաձայնում են, որ զինված հարձակումը Կողմերից մեկի կամ**

մի քանիսի վրա Եվրոպայում կամ Հա. Ամերիկայում կրիտարկվի որպես հարձակում ընդդեմ բոլորի...»:

- **ՀԱՊԿ պայմանագիր, Հոդված 2.** «Անդամ պետություններից մեկի կամ մի քանիսի անվտանգությանը, կայունությանը, տարածքային ամբողջականությանը և սուվերենությանը սպառնալիքի գոյացման դեպքում անդամ պետություններն անհապաղ գործարկում են համատեղ խորհրդատվության մեխանիզմները՝ նպատակ ունենալով համադրել իրենց դիրքորոշումները օգնություն տրամադրելու համար, մշակում և ընդունում են միջոցներ վտանգը վերացնելու ուղղությամբ»:

Ելնելով այսպիսի, ինչպես կտեսնենք՝ իստ ընտրովի, հետևաբար և խեղաթյուրված համեմատությունից՝ եզրակացվում է, որ.

1. Դաշնակիցների հետ հարաբերություններում ՀԱՊԿ այս «պրազմատիկ» մոտեցումը համահունչ է պայմանագրի տառին և ոգուն (ինչը փաստացի սխալ է);
2. Նման մոտեցումը համապատասխանում է Ռուսաստանի ազգային շահերին (ինչը, կարծում ենք, սխալ է կոնցեպտուալ առումով և վտանգում է ՌԴ անվտանգությունը):

Ակումբի փորձագետների կարծիքով, դաշինքների համակարգն առաջին հերթին պետք է ապահովի Ռուսաստանի ներկայությունը որպես ազդեցիկ ուժ իր համար կարևոր տարածաշրջաններում: Բայց, միևնույն ժամանակ, Ռուսաստանը պետք է խուսափի սեփական դաշնակիցների մանիպուլյացիաներին ենթարկվելուց: Օրինակ, ինչպես պարզաբանում են «Գրառում-

ները», «Հայաստանի հետ հարաբերությունները ՌԴ-ի համար կարևոր են Անդրկովկասում իր ներկայությունը պահպանելու և ամրապնդելու առումով: ՌԴ-ն Հայաստանին տրամադրում է և կշարունակի տրամադրել ռազմական օգնություն և կստարի տնտեսական զարգացմանը: Բայց Ռուսաստանը կխուսափի այնպիսի իրավիճակներից, երբ իր հակառակ կոալիցիայում կհայտնվի Աղքադականը՝ մեկ կամ մի քանի հարևան պետությունների հետ միասին»:

Հասկանալի է, որ ողջ խնդիրն այստեղ այն է, թե ինչ են հասկանում Վաղայան ակումբի փորձագետները «դաշնակիցների մանհապույացիաների» տակ, և ի՞նչ կլինի, եթե, օրինակ, Աղքադականը «մեկ կամ մի քանի հարևան պետությունների հետ հայտնվի ՌԴ հակընդիմ կոալիցիայում»: Ու ոչ թե քմահաճույքի կամ մանհապույացիաների արդյունքում, այլ աշխարհաքաղաքականության դաժան օրենքների տրամաբանությամբ: Ինչեւ, այսպիսին են իրողությունները: Ցավոք, նման «թվացյալ պրագմատիկ», քաղաքակրթական<sup>6</sup> և անզամ աշխարհաքաղաքական իրողություններն անտեսող մոտեցումները բնորոշ են ոչ միայն Վաղայան ակումբի, այլ նաև ՀՀ որոշ փորձագետներին: Նման ոչ լայնախոհ, «պրագմատիկ փորձագետների» թեզերը պայմանականորեն կարելի է հակադրել «գաղափարախոսական» վերլուծաբանների մոտեցումներին (*տե՛ս Աղյուսակ 2*).

<sup>6</sup> Ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել, որ համաձայն ամերիկյան փորձագետների՝ ազգային անվտանգության հիմնական խնդիրը սեփական արժեհամակարգի պահպանումն է:

## Աղյուսակ 2

*Ո՞Դ դաշնակիցների հետ հարաբերություններում  
«զաղափարախոսների» և «պրազմատիկների» մոտեցումները*

«Գաղափարախոսներ»	«Պրազմատիկներ»
1. Ռուսաստանի դաշնակիցները սակալ են: Հետևաբար, պետք է ամրապնդել կապերը եղածների հետ ու ջանալ ձեռքբերել նորերը:	1. Ռուսաստանի այս «փայլուն մեկուսացվածություն» օգնում է մեր արտաքին քաղաքական շահերը հետապնդելիս գործել ազատ ձեռքբերով, առանց կապանքների:
2. Ռուսաստանը պետք է զաղափարախոսական այլընտրանք առաջարկի «Արևմուտքին» (և/կամ «մահմեղական արմատականությանը»):	2. Գաղափարախոսության բացակայությունը և մեսիականությունից հրաժարումն է, որ թույլ են տալիս ՈՒ-ին պահպանել իր աշխարհաքաղաքական բարձր դիրքը՝ ծախսելով դրա համար ավելի քիչ ռեսուրսներ, քան ԽՍՀՄ-ը:
3. Ռուսաստանը պետք է ամրապնդի դիրքերն ազդեցության իր ավանդական տարածաշրջաններում՝ հետխորհրդային տարածքում և Բալկաններում:	3. Ռուսաստանը պետք է կայունացնի <i>լիմիտրոփ</i> տարածքները միայն այն շափով, որն անհրաժեշտ է իր տարածքների անվտանգությունն ապահովելու համար, և թույլ չտա դաշնակիցներին իրեն ներքաշել իր համար ոչ անհրաժեշտ կոնֆլիկտների մեջ:

«Պրազմատիկների» նման մոտեցումները կառուցողական չեն, և այն պատճառով, որ դրանք հիմնվում են հիմնարար փաստաթղթերի ընտրովի ընթերցման վրա: Այսպես, ՆԱՏՕ դաշինքի 5-րդ հոդվածի ամբողջական տեքստը հետևյալն է.

*Հյուսիսատլանտյան դաշնազիր, Հոդված 5. «Կողմերը համաձայնում են, որ զինված հարձակումը Կողմերից մեկի կամ մի*

<sup>7</sup> Լիմիտրոփ (*լատ. limitrophus* — «սահմանային») - այս եղբ տակ հասկացվում է այն պետությունների համախումբը, որոնք առաջացել են 1917-ից հետո Ռուսական կայսրությանը պատկանող տարածքում, իսկ հետո, դեռևս 1990թ. սկզբին, գտնվում էին ԽՍՀՄ կազմում:

քանիսի վրա Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում կղիտարկվի որպես հարձակում ընդդեմ բոլորի, հետևաբար, նրանք համաձայնում են, որ եթե նման զինված հարձակում կատարվի, ապա նրանցից յուրաքանչյուրը, ըստ ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածի, որով ճանաչվում է անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը, կօժանդակի այն կողմին կամ կողմերին, որոնց վրա հարձակում է կատարվել՝ անմիջապես անհատական կամ մյուս կողմերի հետ համախմբված գործողություն ձեռնարկելով, ներառյալ զինված ուժի կիրառումը: Նման գործողության նպատակն է Հյուսիսատլանտյան տարածաշրջանում անվտանգության վերականգնումն ու պահպանումը»<sup>8</sup>:

Իսկ ՀԱՊԿ պայմանագրի 4-րդ հոդվածը, որը «Գրառումների» հեղինակները չգիտես ինչու «մոռացել» են մեջբերել աներկրա ասում է.

**ՀԱՊԿ պայմանագիր, Հոդված 4.** «...Եթե պայմանագրի մեկ մասնակից ենթարկվում է ազրեսիայի, ապա դա դիտարկվում է որպես ազրեսիա բոլոր մասնակից պետությունների հանդեպ: Ազրեսիայի ենթարկված պետության խնդրանքի դեպքում բոլոր մնացյալ պետությունները նրան տրամադրում են անհրաժեշտ օգնություն, ներառյալ՝ ռազմական, ինչպես նաև կստարեն իրենց տրամադրության տակ եղած միջոցներով, ըստ ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված կոլեկտիվ անվտանգության իրավունքի»<sup>9</sup>:

---

<sup>8</sup>[https://www.nato.int/cps/ru/natohq/official\\_texts\\_17120.htm?selectedLocale=hy](https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=hy)

<sup>9</sup>[http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=126](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126)

Այսինքն՝ Ճիշտ այն, ինչ ասվում է ՆԱՏՕ պայմանագրի 5-րդ հոդվածում՝ ընդհուպ մինչև հղում ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածին:

Ավելին, «մոռացվել» է նաև «ՀԱՊԿ Կոլեկտիվ անվտանգության հայեցակարգ» անունը կրող փաստաթուղթը, որում հստակ սահմանված են դաշինքի հայեցակարգային հիմունքները.

- Անվտանգության միասնականության դրույթը, այսինքն՝ ՀԱՊԿ անդամ պետության հանդեպ ազրեսիան դիտարկվում է որպես ազրեսիա բոլորի հանդեպ;
- Մասնակիցների անվտանգության ապահովման գործում մասնակից պետությունների հավասար պատասխանատվությունը<sup>10</sup>:

**Ո՞Չ-ՀՀ դաշնակցային հարաբերությունների հեռանկարներն արդի իրողություններում.** Դիտարկելով արդի իրողություններում ՀՀ-ի և Ո՞Չ-ի միջև ռազմաքաղաքական դաշինքի հեռանկարները՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել այն տարրերը, որոնք, մեր կարծիքով, պահպանում են իրենց ողջ օգտակարությունն ու արդյունավետությունը թե՝ «պրազմատիկների» մոտեցման, թե՝ «զաղափարախոսների» ավելի խորացված ընկալումների պարագայում։ Հակիրճ դրանք կարելի է վերնագրել հետևյալ կերպ. «Ապահովել դաշնակից տերությունների տեխնոլոգիական և ենթակառուցվածքային կապակցվածությունը քաղաքական առնվազն 2–3 ընտրական ցիկլերի հեռանկարում»։

Այս առումով արդեն իրականացված են մի շարք կարևոր քայլեր, որոնք են. ՀՀ և Ո՞Չ միացյալ ռազմական խմբավորման ձևավորումը, հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համատեղ հրամանատարության ստեղծումը, Հայաստանում Ո՞Չ 102-րդ

<sup>10</sup> [http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=130](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=130)

ուազմաբազայի գտնվելու ժամկետի երկարաձգումը մինչև 2044թ.: Սակայն այս ամենը, արդի աշխարհի հիբրիդային սպառնալիքների պայմաններում, թերևս դեռ բավարար չէ [3, 4]: Կարծում ենք, առաջնահերթ են նաև հետևյալ խնդիրները.

1. 2026-ից սկսած և 50-70 տարի ժամանակային հորիզոնում ապահովել Հայաստանում առումային էներգետիկայի ողջ սեգմենտի առկայությունն ու զարգացումը:
2. Վերակենդանացնել և զարգացնել երկարաժամկետ և բարձրտեխնոլոգիական համագործակցությունը տիեզերական (հատկապես արբանյակային, լազերային տեխնիկայի և միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում):
3. Իրագործել Հայաստանն ապաշրջափակող «Հյուսիս-Հարավ» էներգատրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծումը:

Իսկ ամենակարևորը, թերևս, Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական դաշինքը բուն աշխարհաքաղաքական բովանդակությամբ հագեցնելու խնդիրն է: Չէ՞ որ Հայաստանը, ինչպես և Ռուսաստանը, ավարտուն և ավարտված աշխարհաքաղաքական ծրագրեր չեն: Ինչպէ՞ս մենք դրանք կավարտենք, և մե՞նք է, որ պիտի դրանք ավարտենք. ահա հարցեր, որոնք պահանջում են խորացված և հիմնավոր պատասխաններ ու ենթադրում են այդ խնդիրները շարունակաբար ուսումնասիրող երկկողմ փորձագիտական-խորհրդատվական կառույցի առկայություն: Վերջինս, թերևս, պետք է փորձի հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքները:

Այսօր ՆԱՏՕ-ին անդամակցող երկրներում ընթացող կենտրոնախույս գործընթացները և ՀԱՊԿ որոշ անդամների քաղա-

քական դիրքորոշումների պատճառով առաջացած խնդիրները հուշում են, որ չպետք է բացառել, որ այդ ռազմաքաղաքական կազմակերպությունները կարող են և ենթարկվել որոշակի ձևաչափային փոխակերպումների: Այդ համատեքստում, փորձելով դատողություններ կատարել «ժամանակային տրիադայում» ապագայի կանխատեսման կարևորության վերաբերյալ թեզիսի շրջանակներում, որպես հեռանկարային կարելի է գնահատել *Մուկլա-Երևան-Աթենք* ռազմաքաղաքական առանցքի հնարավոր ձևավորումը, ինչը միանգամայն համահունչ կլինի այս երկրների «քաղաքակրթական-աշխարհաքաղաքական ժառանգությանը: Նման դաշինքն իմաստավորված է առաջին հերթին նրանով, որ Հայաստանը Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում առ այսօր չունի ռազմաքաղաքական դաշնակիցներ: Այստեղ հարկ է նաև ամրագրել, որ Հունաստանի և Հայաստանի պաշտպանության նախարարությունների միջև ռազմատեխնիկական ոլորտում ձևավորվել են հատուկ հարաբերություններ, որոնք սկիզբ են առել դեռևս Արցախյան պատերազմի տարիներին և շարունակվում են առ այսօր: Թերևս, ուշագրավ է նաև այն փաստը, որ հունական հասարակության մեծ մասը (57%) որոշակի թերահավատություն ունի ՆԱՏՕ-ի հանդեպ, ինչն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է նաև Կիպրոսի շուրջ ընթացած հայտնի զարգացումներով: Այսինքն՝ նման առանցքի հնարավոր ձևավորումը չպետք է ընդունել միայն քաղաքակրթական նկատառումների վրա հենված նախագիծ: Այն ունի այժմեական նշանակություն, և այդ տեսանկյունից նշենք նաև հետևյալ հանգամանքները.

- Նախագիծը պարունակում է գաղափարախոսական-տեղեկատվական վեկտոր, որն ուղղված է եվրասիական

խնդիրներում Ո՞Դ փորձագիտական որոշ շրջանակներում հեղինակություն վայելող ԱԼԴուզինի ռուս-թուրքական միասնության տեսության դրույթների դեմ;

- Առկա է նաև զլորալ աշխարհաքաղաքական գործոն, քանի որ հայկական և հունական բազմավեկտոր քաղաքականությունը կարող է նպաստել ՀԱՊԿ-ՆԱՏՕ համագործակցության ձևավորմանը:

Բացառված չէ նաև, որ կոլեկտիվ բնույթի անվտանգային դաշնակցային հանրույթները (ՆԱՏՕ, ՀԱՊԿ և այլն) հետզհետե զիշեն իրենց տեղն առանձին երկկողմ համակարգերի: Ուստի, հրատապ խնդիր է դառնում արդիականացնել 1997թ. օգոստոսի 29-ին ստորագրված և 1998թ. նոյեմբերի 5-ից ուժի մեջ մտած «ՀԴ-ի և ՀՀ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին պայմանագիրը»<sup>11</sup>: Մասնավորապես, կարծում ենք, անհրաժեշտ է արդիականացնել այս պայմանագրի 2-րդ, 3-րդ և 7-րդ հոդվածների դրույթները՝ բերելով դրանք առնվազն ՀԱՊԿ պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածների պարտավորեցնող դրույթների մակարդակին: Իրականում, հաշվի առնելով հիշյալ պայմանագրի երկկողմ բնույթը, դրանք կարող են լինել ավելի խոր և համապարփակ, քան արդի պայմաններում դա ընդունված է կոլեկտիվ բնույթի անվտանգային պայմանագրերում:

Միևնույն ժամանակ, դաշնակցային հարաբերությունները կարող են խմբագրվել և ձևափոխվել աշխարհատնտեսական որոշակի նախագծերի իրականացման արդյունքում, և դրանց «կրիտիկական» դերակատարումը հիբրիդային իրողություննե-

<sup>11</sup> [http://www.mid.ru/foreign\\_policy/international\\_contracts/2\\_contract/-/storage-viewer/bilateral/page-243/47338](http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-243/47338)

րում նույնպես պետք է փորձել աղեկված ընկալել: Որպես նման ներուժ ունեցող նախագիծ պետք է դիտարկել նաև «Եվրասիա» ջրանցքի կառուցման մտադրությունը:

#### **4.2 Ենթագլխի գրականություն**

1. *Марджанян А., Арутюнян Г.*, Союзники на фоне научно-технологического пейзажа. Материалы Третьей международной конференции «Экспорт демократии» и сетевые технологии. Фонд исторической перспективы/РГГУ, Москва, 18 мая, 2017.
2. *Силаев Н., Сушенцов А.*, Союзники России и geopolитический фронтир в Евразии. Валдайские записки, № 66, Апрель, 2017.
3. *Марджанян А.*, Научно-информационная политика и гибридные войны. *Геополитика и Безопасность*, № 4 (40), 2017, с. 26-34.
4. *Арутюнян Г., Марджанян А.*, Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных реалиях, «21-й ВЕК», 4 (45), 2017.

#### **4.3 «Եվրասիա» ջրանցքի ռազմավարական առանձնահատկությունները տարածաշրջանային անվտանգության շրջանակներում**

Վերջին 10-15 տարվա ընթացքում աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ուղղված են նոր աշխարհակարգի՝ անբնեռ աշխարհի ձևավորմանը: Ակնհայտ է, որ առանց այս գլոբալ փոփոխությունները հաշվի առնելու դժվար կլինի հասկանալ, թե ինչ է իրականում կատարվում Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում են գտնվում ՀԱՊԿ և ԵՏՄ շրջանակներում Հայաստանի Հանրապետության ռազմական և տնտեսական դաշնակից պետությունները՝ Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը:

2018թ. մայիսի 14-ին Սոչիում ԵՏՄ երկրների գագաթաժողովում Ղազախստանի նախագահ Նուրսուլլյան Նազարբաևը հայտարարեց Սև և Կասպից ծովերի միջև նավագնաց ջրանցքի շինարարության հնարավորության մասին: Գաղափարը նոր չէ, և, ինչպես արտահայտվեց ինքը՝ Ն.Նազարբաևը. «դրա մասին խոսում էին դեռ ցարի ժամանակ»<sup>12</sup>: Առաջին անգամ ԵՏՄ երկրների ինտեգրման պայմաններում մեծամասշտաբ ջրանցքի շինարարության մասին Ն.Նազարբաևը հայտարարել է դեռ 11 տարի առաջ՝ 2007թ.: Խորհրդանշական է, որ հենց այդ տարի Ռուսաստանի տարածքում ջրային ուղիների ընդլայնման կարևորության մասին հայտարարեց նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը՝ որպես տարբերակ առաջարկելով Վոլգա-դոնյան ջրանցքի արդիականացումը: 2009թ. Եվրասիական զարգացման բանկը (*EDB*) \$2.7 մլն էր հատկացրել Կասպից և Ազովի-Սև ծովերի ավագանի նոր ջրային տրանսպորտի ստեղծման հնարավորությունն ուսումնասիրելու համար, սակայն ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն հրապարակվել:

Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի կողմից առաջարկվող ջրային ուղին, օրինակ, 1000 կիլոմետրով կարձ է ուսուաստանցիների առաջարկածից, ընդ որում, «Եվրասիա» ջրանցքն ի վիճակի է բաց թողնել ավելի շատ քեռներ, քան ուսուաստանյանը՝ մինչև 45 մլն տոննա տարեկան<sup>13</sup>: Այժմ Աստանան դեպի Սև ծով նավթի ու զագի համարյա 70%-ն առաքում է Ռուսաստանով, Թենգիզ-Ատլանտ-Աստրախան-Նովոռոսիյսկ (Կիսկ/ՆՊԿ) նավթամուղի միջոցով, բայց այդ նավթատարի են-

<sup>12</sup> Սաֆարյան Ա., «Եվրասիա» նոր ջրանցք կառուցելու Ղազախստանի նախագահի առաջարկը, <http://www.azg.am/AM/2018060117>, 05.06.2018թ.

<sup>13</sup> Նույն տեղում:

թակառույցները բավական հնացել են, ինչը բարդացնում է ողջ գործընթացը:

Ավելի մանրամասն անդրադառնանք «Եվրասիա» նախագծի կրիտիկական ենթակառուցվածքներին: Համոզված ենք, որ սույն նախագիծը պետք է դիտարկել տարածաշրջանի ռազմավարական առանձնահատկության տեսանկյունից: Միանշանակ, «Եվրասիա» ջրանցքն անմիջապես կապ ունի վերջին տարիներին ռուս-չին-դաշտական տնտեսական համագործակցության ակտիվ զարգացման հետ: Ինչպես արդեն նշել ենք, «Եվրասիա» ջրանցքի նախագծի իրականացումը պետք է դիտարկել տարածաշրջանի անվտանգության տեսանկյունից: Այս համատեքստում փորձենք նշել տարածաշրջանային և համաշխարհային դերակատարների ռազմավարական առանձնահատկություններն ու շահերը Կենտրոնական Ասիայում:

**Թուրքիա և Իրան.** Խորհրդային կառավարման շրջանի ավարտից հետո համաշխարհային շատ տերություններ «աչք դրեցին» աշխարհառազմավարական առումով խիստ կարևոր այս տարածաշրջանի վրա՝ ձգտելով իրենց հսկողության տակ վերցնել նավթն ու գազը: Միջազգային ասպարեզի այնպիսի դերակատարներ, ինչպիսին են Թուրքիան և Իրանը, աշխատեցին օգտվել տարածաշրջանի հետ իրենց մշակութային ու պատմական կապերից՝ սեփական ներկայությունը հաստատելու համար: Սակայն ճնշումը Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Չինաստանի կողմից խափանեց այդ փորձը:

Ելնելով ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից՝ հարկավոր է նշել, որ Թուրքիայի գործոնի ակտիվացումը Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կուժեղացնի նաև պանթուրքական գաղափարախոսությունը, որը վտանգավոր է

ոչ միայն Հայաստանի, այլ նաև ՌԴ-ի, Իրանի և Չինաստանի համար: Օրինակ, Իրանի պարագայում կարևորվում է «Հյուսիսային Աղբքեցան» հասկացությունը, որտեղ առկա է Իրանի թյուրքախոս բնակչություն, որը և, հնարավոր է, ի զորու կլինի Թուրքիայի և Աղբքեցանի միջոցով անշատողական որոշակի գործընթացներ ծավալել: Ռուսաստանի հարավում և Պովոլժիե-ում իսլամական և թյուրքախոս ինքնավարություններ են հաս-տատվել, որոնցում կրկին Անկարայի և Բաքվի միջոցով հնարա-վոր է ծայրահեղ իսլամիստական ու պանթյուրքական տրա-մադրությունների ակտիվացումն ու տարածումը՝ Ռուսաստանի համար ստեղծելով նոր ներքին լարվածության օջախներ: Իհար-կե, այս խնդիրը չի անտեսվում նաև Չինաստանի կողմից, քանի որ այդ երկրի հյուսիսարևմտյան նահանգները բնակեցված են թյուրքալեզու ույղուրներով:

**Միացյալ Նահանգներ և ՆԱԽՕ.** 1990-2000-ական թթ. Կասպյան տարածաշրջանը ԱՄՆ արտաքին քաղաքականու-թյան և Հյուսիսատլանտյան դաշինքի ավանդարդում էր գտնվում: Վաշինգտոնն ակտիվորեն ներգրավված էր տարածա-շրջանային քաղաքական գործընթացներում: ԱՄՆ-ը Կասպյան տարածաշրջանը եվրատլանտյան միասնության միաձուլման գոտի ստեղծելու անթաքույց նպատակ էր հետապնդում: Այդ գոտին սկսվում էր Վրաստանի Սև ծովի ափից և ավարտվում Ղազախստանի արևելյան սահմանների մոտ: Այս տարածքի վերահսկողությունը (որն ամերիկյան ակադեմիական միջավայ-րում սովորաբար կոչվում է «Մեծ Կասպի»<sup>14)</sup>, ԱՄՆ-ին կտրա-մադրեր նշանակալի առավելություններ Կենտրոնական Ասիայում և կուժեղացներ նաև Վաշինգտոնի ազդեցությունը

<sup>14</sup> Світоч А., Большой Каспий. Строение и история развития, Москва: МГУ, 2014, с. 54.

համաշխարհային էներգետիկ շուկայում: Սակայն ներկա փուլում «Մեծ Կասպի» տարածաշրջանում ձևավորված հավասարակշռության արդյունքում Միացյալ Նահանգները և ՆԱՏՕ-ն Ռուսաստանի և Իրանի կողմից լիովին դուրս են մղվել Կասպից ծովի արևմտյան և արևելյան ափերից<sup>15</sup>: Հետևաբար, ԱՄՆ-ը ներկա փուլում ստիպված է հետևել «բաց թողնված հնարավորությունների» ռազմավարությանը՝ տարածաշրջանում առնվազն նվազագույն ներկայություն պահպանելու համար:

**«Արջի և կարմիր վիշապի» միջև ռազմավարական պայքարը.** Ակնհայտ է, որ Ռուսաստանն իր հսկողության տակ է վերցրել տարածքի պետությունների անվտանգության հարցը (տէ և *Աղյուսակ 1*): Իր հերթին, Պեկինը ձգուում է հսկողություն սահմանել տարածաշրջանի էներգետիկ պաշարների վրա, որը «սպառնալիք է դառնում» Մուկվայի համար՝ խանգարելով վերջինիս կարևորագույն դեր խաղալ Կենտրոնական Ասիայում:

Չնայած 2014թ. մայիսի 29-ին պայմանագիր ստորագրվեց, որի համաձայն հիմնադրվեց ԵՏՄ-ն, Պեկինն իր «տնտեսական էքսպանսիայի» (տէ և *Աղյուսակ 2*) քաղաքականության հիման վրա շարունակում է աջակցել տեղական կառավարություններին, որպեսզի նրանք «դուրս գան» Մուկվայի հսկողությունից և անցնեն իր թևի տակ: Սակայն Մուկվան չի կարող թույլ տալ իրեն դուրս մղել տարածաշրջանից, որտեղ պատմականորեն և ներկա փուլում այդքան կարևոր դիրք է զբաղեցնում:

Նշենք, որ Պեկինի նման մոտեցումը Կենտրոնական Ասիայի հանդեպ նորություն չէ: Եթե ռուսական պետությունը «շփվել» է Կենտրոնական Ասիայի էքնոսների և խանություննե-

<sup>15</sup> Зона, свободная от НАТО. Каспий сдался РФ, <https://www.pravda.ru/authored/06-12-2017/1358605-kaspiy-0/>, 12.05.2018.

*Աղյուսակ 1*

*Կենտրոնական Ասիայում գործող  
ռուսական ռազմակայանները, 2018թ.<sup>16</sup>*

Ղազախստան	Ղրղզստան	Տաջիկստան
Սարբ-Շազան, ՌՀԴ և ՀՊ	Կանտ, ավիաբազա	Կուրգան-Մյուքե, 201-րդ ՌԴ ռազմաբազա
Պրիօլյորսկ, ռադիո- տեխնիկական համա- կարգեր	Կարակյոլ, 954-րդ ՌԴ ռազմաբազա	Նուրեկ, «Պատուհան» օպտոէլեկտրոնային համալիր
Ժանակազան, 20-րդ ՌՆՀԶ	«Մարև» նավա- տորմի 338-րդ կապի կենտրոն	Դուշաներ, ՌԴԱԴԾ սահմանապահ ծառայություն
Կարագանդա, 171-րդ ԱՀԳ	Կարա-Բալտա, ՌՆՀԶ	
Տորետամ, «Բայկո- նուր»-ի ռազմատիեզե- րական համալիրը		

*Աղյուսակ 2*

*Չինաստանի արտահանման մասնաբաժինը  
Կենտրոնական Ասիայի երկրներում, 2016թ.<sup>17</sup>*

Չինաստան	Տաջիկստան	Ղազախստան	Ռուսական	Թուրքիանստան
67.9%	53.1%	27.7%	21.9%	7.1%

րի հետ 16-րդ դարի սկզբում, իսկ այդ ժողովուրդների անցումը Ցարական Ռուսաստանի ազդեցության տակ տեղի ունեցավ միայն 2-3 դար հետո՝ 18-19-րդ դդ., ապա այդ էթնոսների հետ

<sup>16</sup> *Российские войска за рубежом,*

<http://www.kommersant.ru/Images/Vlast/Vlast/>, 16.05.2018

<sup>17</sup> *The Atlas of Economic Complexity*, <http://atlas.cid.harvard.edu/explore/>, 15.05.2018.

Հինացիների առաջին կապերը հաստատվել են դեռևս Խան թագավորության ժամանակներում (մ.թ.ա. VIդ.): Ավելին, «սինոկենտրոն» աշխարհայցքի համաձայն, տարածաշրջանի «քոչվոր ժողովուրդները» մինչ այժմ «Չինական աշխարհի» (*Pax Sincera*)<sup>18</sup> անբաժանելի մաս են համարվում:

### *Հետևողություններ*

- «Եվրասիա» ջրանցքի նախագծի իրականացումը կուժեղացնի Ռուսաստանի և Ղազախստանի տարածաշրջանային դիրքերը;
- Ըստ «*Sinohydro*»-ի կողմից իրականացված հետազոտության արդյունքների, ջրանցքը կարող է դառնալ չինական բեռնափոխադրումների շարժման կարևոր ուժի: Նոր տրանսպորտային ուղին թույլ կտա կրածառել ճանապարհի վրա ծախսվող ժամանակն ու բեռնափոխադրման ծախսերը;
- «Եվրասիա» ջրանցքի կառուցման գաղափարն ակտիվ քննադատվում է բնապահպանների կողմից: Իհարկե, դա ձեռնտու է Թեհրանին, որն այլընտրանքային նախագիծ ունի՝ միավորել միմյանց հետ Սև ծովն ու Պարսից ծոցը, և օգտագործել այն «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» չինական ծրագրի շրջանակներում;
- Վաշինգտոնը նույնակես բացասաբար է արձագանքել այս նախագծին, քանի որ այն մեծացնում է ՉԺՀ և Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական դերը ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլ նաև Եվրոպայում, որը Մոսկվայի և Պեկինի ապրանքների ու ծառայությունների մատակարարման նպատակն է;
- «Եվրասիա» նախագծին դրական կարձագանքեն Անկարայում և Բաքվում, որովհետև Ղազախստանի Կասպյան նավահանգիստների արդիականացումը կնպաստի Աստանայի և

<sup>18</sup> 馬衛東, 中道網, 中國古代三大治世的歷史成因, 2018

Բարվի միջև ապրանքաշրջանառության զարգացմանը: Անկասկած, դա իր հերթին կակտիվացնի Բարու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նշանակությունը տարածաշրջանում:

- Այնուամենայնիվ, քանի որ համաշխարհային զարգացման կենտրոնն աստիճանաբար տեղափոխվում է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական կարևորությունը, որպես Եվրասիական մայրցամաքի հիմք (*«Heartland»*), միայն ավելի կրաքարանա ու կակտիվանա, ինչպես և Մոսկվայի ու Պեկինի միջև տարածաշրջանում առաջատար դերի համար ընթացող ռազմավարական պայքարը:

\*\*\*

Ներկայի հիբրիդային իրողություններում աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող գործընթացներին նախորդում, իսկ հետագայում նաև ուղեկցում են լայնածավալ տեղեկատվական պատերազմները: Պատահական չէ, որ կրիտիկական ենթակառուցվածքների արդի եզրաբանությունը սկիզբ է առել հենց այդ ոլորտում կատարված հետազոտությունների հիմանվրա: Հաջորդ բաժնում կքննարկվեն տեղեկատվական անվտանգության հետ կապված հայաստանյան խնդիրները:

#### 4.3 Ենթագլխի գրականություն

1. Світоч А., Большой Каспий. Строение и история развития, Москва: МГУ, 2014.
2. 馬衛東, 中道網, 中國古代三大治世的歷史成因, 2018
3. The Atlas of Economic Complexity, <http://atlas.cid.harvard.edu/explore/>, 15.05.2018.
4. Российские войска за рубежом, <http://www.kommersant.ru/ImagesVlast/Vlast/>, 16.05.2018.
5. Зона, свободная от НАТО: Каспий сдался РФ, <https://www.pravda.ru/authored/06-12-2017/1358605-kaspiy-0/>, 12.05.2018.

## 5.ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Արդի հիբրիդային իրողություններում, ինչպես հայտնի է, առաջնային դերակատարում են ձեռք բերել տեղեկատվական ոլորտում ընթացող զարգացումները, որոնք հնարավորինս դիտարկվել են մեր կողմից «Տեղեկատվական անվտանգություն» կողեկտիվ աշխատությունում [1]: Միևնույն ժամանակ, այդ ոլորտում կատարվող փոփոխությունները խիստ արագ են ընթանում, և դրանք ադեկվատ ընկալելու, վերիմաստավորելու և համարժեք արձագանքելու մշտական պահանջ կա: Այս բաժնում կրիտիկական ոլորտների վերաբերյալ պատկերացումների համատեքստում կհամեմատվեն և կքննարկվեն ՀՀ և Ադրբեյջանի հանրապետության (ԱՀ) տեղեկատվական հաղորդումների բովանդակային բնույթի հարցերը, կներկայացվեն ՀՀ կիբեռտարածքի առկա խնդիրները:

### *5.1 Տեղեկատվական դաշտի բովանդակային բնույթի խնդիրները*

Տեղեկատվական դաշտը ներկայում արդեն ոչ թե պարզապես ԶԼՄ ամբողջություն է, այլ ամենախնտենսիվ սոցիալական կոմունիկացիաների միջավայր: Այն աստիճանաբար վերածվում է առավել հզոր և ունիվերսալ «սոցիալականացման ազենտի»: Այդ պատճառով տեղեկատվական դաշտը դարձել է թիրախ հասա-

բակություններում աշխարհի նոր կերպարի կազմավորման և ներդրման համար: Դրա հետևանքով արդի պայմաններում պետություններն ազգային անվտանգության հայեցակարգերում ընդգրկում են իրենց հասարակությունների հոգևոր-մշակութային անվտանգության բաղադրիչի պաշտպանությունը, իսկ միշտ շարք երկրներում (ԱՄՆ, Իսրայել, ԵՄ երկրներ) հասարակության մշակութային-հոգևոր ոլորտը սահմանվում է որպես կրիտիկական ոլորտ: Հոգևոր-մշակութային անվտանգության համատեքստում հիմնարար նշանակություն ունի, թե ինչ արժեհամակարգեր են գերակայում հասարակությունում, քանի որ դրանք համակարգային ազդեցություն ունեն հասարակության բոլոր ենթահամակարգերի վիճակի վրա և պայմանավորում են հասարակության զարգացման հնարավորություններն ու ուղղությունները: Տվյալ հասարակությունը պարուրող տեղեկատվական դաշտում առկա արժեհամակարգերի ամբողջությունը նույնական կրիտիկական ոլորտ է, քանի որ դրա անհամապատասխանությունը հասարակության շահերին ունակ է կազմալուծելու կամ անբարենպաստ ուղղությամբ փոխակերպելու հասարակության շահերի տեսակետից բարենպաստ արժեհամակարգերը, որոնք ապահովում են ինքնանույնականացումը, ամբողջականությունը, կայունությունը և հարմարվողականությունը:

ՀՀ տեղեկատվական դաշտը, մասնավորապես՝ հեռուստատեսությունն ու ինտերնետը, հզոր բազմաշերտ և բազմաբովանդակ ազդեցություն ունեն հասարակության վրա: Այն լցնում է մարդկանց ազատ ժամանակը, ձևավորում նրանց տեղեկությունները, գիտելիքները, ձաշակը, դիրքորոշումները և, վերջին հաշվով, աշխարհայացքը: Ներկայում, եթե արդեն հանրահայտ է, որ տեղեկատվական դաշտի միջոցով, ինչպես երկրի ներսից,

այնպես էլ դրսից, կառավարվում են հասարակությունները, հրահրվում են հասարակական հոգումներ և պատերազմներ, կարևոր է ունենալ Հայաստանի (ՀՀ և Արցախի Հանրապետություն) տեղեկատվական դաշտի հնարավորինս համապարփակ նկարագրությունը, ինչպես նաև Հայաստանի հասարակության վրա դրա ազդեցության բնույթի և բովանդակության հարացուցքը: Ակնհայտ է, որ տեղեկատվական դաշտի համապարփակ ուսումնասիրությունը լայնամասշտաբ է, և այն պետք է լինի համակարգային ու անընդհատ: Մյուս կողմից, արդի իրողություններում, հավանաբար, առավել դինամիկ օբյեկտը տեղեկատվական դաշտն է, որի հետևանքով դրա ուսումնասիրությունները սիստեմատիկ կերպով «հետ են մնալու» դրա փոփոխության տեսմանց: Եվ այնուամենայնիվ, Հայաստանի տեղեկատվական դաշտի ուսումնասիրությունը հույժ անհրաժեշտ է: Այս համատեքստում շեշտնք, որ հեռուստատեսության պարագայում ազդեցության չափն ու ուղղությունն ավելի տեսանելի են, և այն համարվում է արժեքների ձևավորման առաջատար:

**Հեռուստահաղորդումների ազդեցությունը հասարակության վրա.** Հասարակության վրա հեռուստատեսության սոցիալական և մշակութային ազդեցության ամբողջական պատկերն ընկալելու և գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչ են մատուցում հեռուստաընկերությունները հասարակությանը, ինչ վարքային մոդելներ և արժեքներ են հեռարձակվում այսօր հեռուստատեսությամբ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանի 18 և ավելի տարիքի հեռուստալսարանի 77.4%-ի համար 1-ին կամ 2-րդ առավել դիտվող այլիքներն են «Արմենիան», «Շանթը» և «Հ1»-ը: Երեկոյան 18:00-24:00-ը՝ «փրայմ թայմ» (ամենադիտվող ժամա-

նակահատված) հեռուստացույց է դիտում Հայաստանի բնակչության 84%-ը [2]: Հետևաբար, այդ երեք հեռուստաալիքների «փրայմ թայմ» եթերի ծրագրերի ուսումնասիրությունն աղեկվատ պատկերացում է տալիս այն մասին, թե, ընդհանուր առմամբ, ինչ է մատուցում հայաստանյան հեռուստաեթերն իր լսարանին:

Հայաստանի հեռուստալսարանում աշխարհի կերպարը փաստորեն կազմավորվում է հիմնականում երեք վարկանիշային հեռուստաալիքների՝ «Արմենիա», «Շանթ» և «Հ1», լուրերի բովանդակությամբ, իսկ աշխարհայացքը, մտածողության բովանդակությունը, կենսական տիպական իրավիճակները և դրանց գնահատականները, կյանքին վերաբերող արժեքները, նորմատիվային վարքն ու գեղարվեստական ձաշակը՝ սերիալներով: Հետևաբար, Հայաստանի հասարակության վրա հեռուստատեսության ազդեցության ուսումնասիրության տեսակետից առաջնահերթ է հեռուստատեսային սերիալների և հեռուստատեսային լուրերի կառուցվածքային ու բովանդակային, մշակութային հաղորդումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

**Լրատվական հաղորդումների առանձնահատկությունները հայկական հեռուստաալիքներում.** Հեռուստատեսային լուրերը կարևոր դերակատարում ունեն ՀՀ հասարակության պատկերացումների կազմավորման հարցում՝ արդի աշխարհի, արդի Հայաստանի, աշխարհում Հայաստանի տեղի և դերի, ինչպես նաև համաշխարհային և հայաստանյան զարգացումների վերաբերյալ: Ըստ Դ.Դոնդուրեյի, «լուրերը ոչ միայն բոլոր մեղիաների հիմքն են, այլ նաև հասարակական կարծիքի, տրամադրության ձևավորման հիմնային մեխանիզմ են» [3]: Անբարենպաստ քաղաքական, տնտեսական և ուսումնական կոնյունկտուրայի պայմաններում հասարակական ընկալումներում աշ-

խարիի կերպարի անհամապատասխանությունն ազգային անվտանգության և ազգային զարգացման նպատակներին բարձրացնում է ազգային աղետի հավանականությունը։ Հետևաբար, աշխարիի կերպարը հասարակական գիտակցությունում հանդիսանում է կրիտիկական ենթակառուցվածք։

«Նորավանք» ԳՎՀ-ում տարբեր տարիներին կատարված հետազոտությունների ընթացքում դիտարկվել են հեռուստալուրերի աշխարհագրությունը և թեմատիկ ուղղվածությունը<sup>1</sup>։ Հայաստանի առավել մեծ հեռուստալսարանն ունեցող հեռուստաընկերությունների հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Երևանի, ՀՀ մյուս քաղաքների և գյուղերի միջև լրատվությունը բաշխվում է անհամաչափորեն։ Երևանին տրամադրվում է անհամամասնորեն ավելի շատ ժամանակահատված։ Փաստորեն, Հայաստանի մասին լրատվությունը կենտրոնացված է մայրաքաղաքային լուրերի վրա։ Շատ քիչ են մարզային լուրերը։ Անբավարար է Արցախի մասին լրատվության ծավալը։ Լուրերի ժամանակահատվածի նման բաշխումը հայաստանյան հեռուստալուրերի տեղեկատվական դաշտում ունակ չէ տալու հայաստանյան իրավիճակի աղեկված պատկերը [4]։

Հեռուստահաղորդումների հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակության համար «արտաքին աշխարհի» մասին լրատվությունը հիմնականում վերաբերում է Արևմուտքին (ԵՄ և ԱՄՆ), ՌԴ-ին, Ազգային և Թուրքիային [5]։ Հայաստանի հասարակությանն անբավարար տեղեկություն-

<sup>1</sup> Մասնավորապես, 2017թ. սեպտեմբերի 13-20-ի ընթացքում դիտարկվել են՝ 4՝ «Հ1», «Արմենիա», «Շանթ», «Հ3» հեռուստաալիքների լրատվական հաղորդումների հիմնական թողարկումները՝ «Օրակարգ» (Հ1)՝ 21:00-21:35, «Ժամը» («Արմենիա»)՝ 20:00-20:50, «Հորիզոն» («Շանթ»)՝ 22:00-22:35, «Օրը լրատվական» (Հ3)՝ 21:30-22:00։ Սոնիթորինգի և վերլուծության միավորն է հանդիսացել մեկ առանձին նորությունը կամ լրատվական ռեպորտաժը։

ներ են հաղորդվում ինչպես ուսումնական դաշնակցի՝ ՈՒ-ի, այնպես էլ հարևանների՝ Վրաստանի և Իրանի վերաբերյալ:

Հասարակական գիտակցության և կարծիքի ձևավորման տեսակետից կարևոր է նաև այն, թե ինչ թեմաներ են արծարծվում հեռուստատեսությամբ: Թեմաների շարքում գերակշռում են քաղաքական և տնտեսական լուրերը [6]: Դրանց հաջորդում են սոցիալական, սփյուռքի վերաբերյալ և մշակութային լուրերը: Նշանակալի տեղ է տրամադրվում աղետներին, պատահարներին, ահարեկչությանը և քրեական լուրերին: Այս թեմաներին հաջորդում են սպորտը, շոու բիզնեսի իրադարձությունները, եղանակի տեսությունը: Իսկ շարքն ավարտում են լուրերը գիտության և տեխնոլոգիաների մասին: Վերջին խմբում են բնապահպանական և ուսումնական լուրերը: Սոցիալապես և քաղաքականապես կարևոր բազմաթիվ ոլորտների (օրինակ՝ մշակույթ, կրթություն, գիտություն) լուսաբանումը կրում է իրադարձային բնույթ, գրեթե չի խոսվում այդ ոլորտների խնդիրների մասին: Եթե «աշխարհի ապագան» պատկանում է գիտական, տեխնոլոգիական և մտավոր բարձր զարգացած հասարակություններին, միաժամանակ՝ ՀՀ-ն պետական մակարդակով որպես զարգացման կարևորագույն ուսումնական հիմք և նպատակ է առաջարկել գիտելիքահեն տնտեսության ու հասարակության կազմավորումը, ապա խիստ տարօրինակ է և անհանգստացնող, եթք հեռուստատեսությամբ գիտությանը և տեխնոլոգիաներին է տրամադրվում ավելի քիչ ժամանակ, քան շոու բիզնեսի սկանդալային իրադարձություններին, քրեական իրադարձություններին, աղետներին, եղանակի տեսությանը և սպորտին:

Հայաստանի առավել մեծ լսարան ունեցող հեռուստարներությունների լրատվական բլոկների աշխարհագրական և

թեմատիկ կառուցվածքները չեն համապատասխանում ՀՀ ազգային անվտանգության և ռազմավարական զարգացման նպատակներին: Հիմնական հեռուստարձնկերությունների հաղորդումների բովանդակությունը խարիսում է ազգային անվտանգության տեսակետից կարևոր կրիտիկական ենթակառուցվածքը՝ ազգային զարգացման տեսակետից նպաստավոր «աշխարհի կերպարը»:

*Հայկական հեռուստատեսությամբ հաղորդվող հեռուստասերիալների թեմաները և բովանդակային առանձնահատկությունները.* «Նորավանք» ԳՎՀ տարբեր հետազոտությունները ցույց են տվել, որ սերիալներին տրամադրվում է հեռուստատեսության եթերաժամանակի զգալի մասը [5-7]: Այդ պատճառով հեռուստատեսության բովանդակության խնդիրներին անդրադարձալիս հարկ է դրանք դիտարկել առանձին, մասնավորապես, դրանցում արծարծվող հիմնական թեմաների, առկա արժեքների և վարքի նորմատիվային մոդելների, լեզվի, հուզական երանգների և շրջանառվող գաղափարների տեսակետից<sup>2</sup>:

Հեռուստասերիալներում ներկայացված հիմնական թեմաներն են իշխանություն և փող, սեր ու ատելություն, արդարություն և սոցիալական անհավասարություն, ընտանիք ու սերունդների հարաբերություններ, հայրենիք և բանակ, ընկերություն, կրթություն և այլն: Թեմաների գերակայությունները կախված են սերիալի բովանդակությունից: Արժեքները և նորմերը

<sup>2</sup> Բովանդակային վերլուծության համար ընտրվել են 3 հեռուստապայիքներով («ՀՀ» որպես համրային հեռուստարձնկերություն, «Արմենիա», «Շանթ» առավելագույն լսարան ունեցող հեռուստապայիքներ) ցուցադրված վարկանիշային սերիալները՝ «Նոան հատիկ» («Արմենիա»), «Օստարը» («Շանթ»), «Բացիր աչքերդ» («ՀՀ»): Ցուրաքանչյուր սերիալից բանակական և որակական վերլուծության է ենթակվել 5-ական սերիա: Որպես վերլուծության միավոր ընտրվել է առանձին տեսարանը, որի տևողությունը միջինը 1-1.5 րոպե է:

հեռուստասերիալների թեմաներում կարելի է ներկայացնել հետևյալ հերթականությամբ.

1. «*Սոցիալական անհավասարությունը*» ամենածավալուն ու շրջանառվող թեման է: Հասարակությունը խիստ քեռացված է ներկայացվում, իսպառ բացակայում է միջին քաղաքացու կերպարը: Հերոսները կամ հիերարխիայի բուրգի վերևում են, կամ ներքեւում ու սպասարկում եմ վերին խավի շահերը: Նրանք ներկայացվում են որպես անզոր, ենթակա և համակերպվող: Հարկ է նշել, որ հակառակ կողմը ևս ընդգծված բացասական երանգավորում ունի՝ հղիացած, անօրեն ու ինքնավստահ: Բարձր խավին են պատկանում միայն հարուստը և իշխանավորը: Նման հատվածային ներկայացված սոցիալական իրականությունը բազմակի կրկնությունների հետևանքով ատեղծում է իրականության համապարփակ պատկերի տպավորություն: Այդ պատկերի շրջանակում ձևավորվում է փողի՝ որպես ամենազերակա արժեքի, ընկալումը:

2. «*Ընտանիքի» թեման՝ չնայած թեմայի խորությանն ու կարևորությանը, մակերեսային է ներկայացված: Բոլոր ընտանիքներում հարաբերությունները կոնֆլիկտային են: Մերիալներում, որպես կանոն, չկա որևէ լիարժեք և երջանիկ ընտանիք: Իսկ եթե կա, ապա ընտանիքի անդամներից որևէ մեկը պարտադիր հիվանդ է, իսկ ընտանիքը՝ ծանր ֆինանսական վիճակում: Ծնողական սերն արտահայտվում է միայն զոհաբերության միջոցով:*

Մերիալում, որպես կանոն, առկա է նաև ընտանեկան բռնություն: Թեմայի շրջանակներում լրածման եղանակ է առաջարկվում իրավիճակին համակերպվելը: Մերիալներում ներկայացված ընտանիքներում կինն ունի խիստ սահմանափակ

իրավունքներ, մասնավորապես՝ զրկված է իր կարծիքն ազատ արտահայտելու հնարավորությունից: Ընտանիքներում արձարձվում է նաև սերունդների միջև փոխհարաբերությունների հարցը:

**3. «Միրո» թեման** առանցքային է բոլոր սերիալներում: Դրա ֆունկցիան սերիալի դիտողականության ապահովումն է: Սերը հաճախ պարզունակացվում է, գերակշռում են բացասական հուզական ապրումները, բացակայում են երջանիկ զույգերը: Հաճախ սիրո թեման ներկայացվում է ընտանիքի և ընկերության թեմաներին զուգահեռ: Ծնողական սերը ներկայացվում է որպես հանուն երեխայի երջանկության ինքնազոհություն, իսկ որդիխական սերը դրսերվում է որպես ծնողի կամքի կատարում:

**4. «Ընկերությունը»** չի դիտարկվում որպես արժեք: Այն միակողմանի է, հաճախ ներկայացված է որպես շահագործում: Մյուս կողմից, ընկերությունը միասին ժամանակ անցկացնելն է և զվարձանքը: Սակայն վերջին սերիալներում առաջացել է նաև ավագ սերնդի մարդկանց միջև ընկերության ներկայացումը: Ի հակադրություն երիտասարդ սերնդի, նրանց ընկերությունում առկա է անշահախնդիր փոխօգնությունը:

**5. «Հայրենիքի» թեման,** որպես կանոն, շաղկապվում է բանակի թեմային: Կարևորվում են զինվորի դերը, բանակում ծառայելու, հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը: Մի դեպքում առկա է զինվորի հերոսացում, իսկ մյուս դեպքում ծառայելը ներկայացվում է որպես կյանքի կարևոր և բնականոն ընթացք, այնպես, ինչպես ուսումը կամ աշխատանքը: Առաջին դեպքում ծառայելը հանգեցվում է հանուն հայրենիքի զոհվելուն, մյուս դեպքում ծառայելը ներկայացվում է դրական ֆոնով, որը նպաստում է անձի կայացմանն ու հասունացմանը:

**Հեռուստասերիալների լեզուն, հուզական երանգները և ազրեսիայի դրսորումները.** Սերիալներում կիրառվող լեզուն, որպես կանոն, առօրյա խոսակցականն է, հաճախ՝ գրեհկացված: Սերիալների որակի բարձրացման հարցում մաքուր հայերենի գործածումը պետք է սահմանել որպես կարևորագույն առաջնահերթություն:

Սերիալներում գերակշռում են բացասական հուզական երանգներն ու հոռեստեսական դիրքորոշումները: Սերիալներում վատատեսական մթնոլորտն ավելի է սրվում թե՝ խոսքային, թե՝ ֆիզիկական ազրեսիայի ինտենսիվ դրսորումներով:

Հեռուստաբովանդակության ուսումնասիրություններում մեծ թիվ են կազմում հեռուստատեսությամբ մատուցվող ազրեսիայի բացասական հետևանքների հետազոտությունները: Այս մասին բազմաթիվ հետազոտություններ կան՝ սկսած 20-րդ դարի սկզբից [8], և կարելի է ապացուցված համարել, որ բռնության տեսարանները լսարանում բարձրացնում են ազրեսիվության մակարդակը: Ուստի, առանձնակի ուշադրություն պետք է դարձնել հայկական արտադրության հեռուստասերիալներին՝ ազրեսիվ բովանդակության, ազրեսիվ վարք թելադրելու տեսանկյունից: Հետազոտական տվյալները ցույց են տվել, որ սերիալների համարյա յուրաքանչյուր տեսարանում առկա է ազրեսիա: Այն առկա է սերիալների ժամանակի շուրջ 30%-ի ընթացքում (*տե՛ս Աղյուսակ 1*): Սերիալներում գերակշռում է խոսքային ազրեսիան, իսկ ֆիզիկական ազրեսիան հաճախ դրսորվում է խոսքային ազրեսիային՝ սպառնալիքներին գուգընթաց:

*Աղյուսակ 1**Խոսրային և ֆիզիկական ազրեսիան սերիալներում<sup>3</sup>*

<i>Ազրեսիայի տիպը</i>	<i>«Բացիր աչքեր» (<i>«Հ1»</i>)</i>		<i>«Նոան հատիկ» (<i>«Արմենիա»</i>)</i>		<i>«Օտարը» (<i>«Շանթ»</i>)</i>		<i>Ընդամենը</i>	
	N	Տնտեսվուն	N	Տնտեսվուն	N	Տնտեսվուն	N	Տնտեսվուն
<i>Խոսրային</i>	10	9.6%	43	33.4%	22	19.5%	75	20.8%
<i>Ֆիզիկական</i>	7	6.7%		0.0%	3	1.7%	10	2.7%
<i>և՝ ֆիզիկական, և՝ խոսրային</i>	1	1.6%	8	6.3%	5	4.5%	14	4.2%
<i>Ընդամենը՝ առկա է</i>	18	<b>18.0%</b>	51	<b>39.7%</b>	30	<b>25.8%</b>	99	<b>27.7%</b>
<i>Առկա չէ</i>	212	<b>82.0%</b>	242	<b>60.3%</b>	76	<b>74.2%</b>	530	<b>72.3%</b>
<i>Ընդամենը</i>	230	<b>100.0%</b>	293	<b>100.0%</b>	106	<b>100.0%</b>	629	<b>100.0%</b>

Ազրեսիվ վարքի կրկնօրինակումը կարող է պայմանավորված լինել որոշ հանգամանքներով, օրինակ՝ *ազրեսիվ հերոսի հետ նույնականացումը*, *ազրեսիվ ֆիլմում առկա են այնպիսի պայմաններ, որոնք համբռնենում են հեռուստադիտողի իրական կյանքի փորձին կամ գուցե հեռուստահերոսի մեջ առկա են ազատարարի կամ փրկարարի որոշ դրսորումներ*<sup>4</sup>: Սերիալներում ազրեսիայի տեսարանների շարունակական ցուցադրումը

<sup>3</sup>Գոյություն ունեն ազրեսիայի տարբեր սահմանումներ, մենք առաջնորդվել ենք Ա.Բասի (1961) մոտեցմամբ, համաձայն որի՝ ազրեսիա է համարվում յուրաքանչյուր վարքային ձև, որը սպառնալիք է պարունակում կամ կարող է ուրիշին վնաս հասցնել: Բասն առանձնացնում է ազրեսիայի երկու տիպ ֆիզիկական և խոսրային, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթատիպերը՝ ակտիվ, պասիվ, ուղղակի անուղղակի:

<sup>4</sup>Այս մասին խոսվում է նաև Վ. Միրաքյանի «Ազրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորումը լրատվամիջոցներով» հոդվածում: Տե՛ս [http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT\\_ID=6099](http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=6099)

հեռուստալսարանին «ընտելացնում» է դրան՝ այն վերածելով նորմատիվային վարքի:

Ընդհանուր առմամբ, հայկական արտադրության սերիալները միատիպ, կրկնվող և կանխատեսելի սցենարով սերիալներ են, հաճախ այուժեն կառուցված է հերոսի անձնական ողբերգութան շուրջ: Այսօր մեծ հաշվով գերիշխող են մնում միատիպ՝ «ընթացքում ձևավորվող», անհետոնդական սցենարով «դժբախտ» սերիալները: «...Տեղական արտադրության սերիալները մտահոգում են աննպաստ զաղափարներ, բառապաշար և խոսելառ տարածելու, ներքնտանեկան ու միջանձնային հարաբերությունների վնասակար մողելներ և հերոսների աղքատիկ կերպարներ մասուցելու, հանրությանը հանցավորին և արատավորին «ընտելացնելու» առումով [9]:

Սերիալներն առավելապես ազդում են հանրության հուգական ոլորտի վրա՝ բաց թողնելով գիտակցության դաշտը: Շրջանառվում են ավելի շատ բառեր, քան զաղափարներ և այդ պատճառով առանձնացված թեմաների զաղափարական հիմքը թույլ է: Դրանք չեն արտացոլում տվյալ երևույթի կամ արժեքի խորությունը և իմաստը:

Սերիալների ազդեցության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է լայնածավալ հետազոտություն հեռուստասերիալներ դիտող հանրության շրջանում: Շարունակական պրոբլեմատիկ սոցիալական հարաբերությունների, արժեքների աղավաղված ներկայացումը, բացասական տրամադրությունների ցուցադրումը չեն կարող անհետուանք մնալ, դա կարող է հանգեցնել սոցիալական ապատիայի:

Հաշվի առնելով սերիալների մասսայականությունը՝ դրանք անհրաժեշտ են հեռուստաեթերում: Ինչպես ցույց է տա-

լիս արտերկրյա փորձը, որակյալ հեռուստաերիալը կարող է լինել հետաքրքիր և բարձր մշակույթ սերմանել:

**Մշակութային և դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Աղրբեջանի հեռուստաբովանդակությունում.** Ազգերի և պետությունների միջև մրցակցությունում կարևոր նշանակություն ունի, թե ինչ արժեքային համակարգում է վերարտադրվում և զարգանում ազգային ինքնությունը, որքանով է այն կայուն և ունակ արձագանքելու տարաբնույթ սպառնալիքներին: Ներկայում՝ տեղեկատվական պատերազմների ժամանակաշրջանում, ազգային ինքնության սպառնալիքների նշանակալի մասը բխում է տվյալ ազգը պարուրող տեղեկատվական դաշտից: Այս խնդիրն առավել ևս կարևոր է Հայաստանի համար, որը գտնվում է Աղրբեջանի դեմ պատերազմական վիճակում: Հետևաբար, Հայաստանի և Աղրբեջանի հիմնական հեռուստաալիքների համեմատական նկարագիրն այս տեսակետից կարևոր է, հասկանալու համար թե որքանով են դրանք իրականացնում հասարակության մշակութային-լուսավորչական-դաստիարակչական ֆունկցիա [10]<sup>5</sup>:

Լուսավորչական-դաստիարակչական հեռուստահաղորդումները դիտարկվել են մի քանի ենթատիպերի համատեքստում՝ ազգագրական, հայրենագիտական, մշակութային հաղորդումներ, ականավոր դեմքերին նվիրված հաղորդումներ: Դրանցից յուրաքանչյուրը կատարում է համապատասխան գործառույթ:

<sup>5</sup> Հետազոտությունը հիմնված է աղրբեջանական չորս (Aztv, ATV, Naxçıvan Dövlət Televiziyası և ICTİMA) և հայկական երկու («Հ1» և «Արմենիա») հեռուստաալիքների մեջ շաբաթվա հեռուստահաղորդումների վերլուծության վրա: Աղրբեջանական հեռուստաալիքները դիտարկվել են 2018թ. մարտի 19-25-ը, իսկ հայկականները՝ ապրիլի 2-8-ը ժամանակահատվածներում: Ավելի մանրամասն տես ս U. Մանուկյան, Դ. Գալստյան, «Մշակութային-լուսավորչական դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Աղրբեջանի հիմնական հեռուստաալիքներում», «Գլոբուս», թիվ 3 (92), 2018թ.:

**Ազգագրական հաղորդումներ.** Ազգային ինքնությունը ճանաչվում և արտահայտվում է առաջին հերթին ազգային սովորույթներով, ավանդույթներով, երաժշտությամբ, բանահյուսությամբ, տարազով, ծեսերով և տոններով: Կոնկրետ ազգը՝ որպես եզակի մարդկային հանրույթ, վերարտադրվում է՝ ճանաչելով իր արմատները: Հեռուստատեսությունն ազգագրական հաղորդումների միջոցով ունակ է նպաստելու այդ գործընթացին: Այս տեսակետից աղբբեջանական հեռուստավայիքները բացարձակ գերակշռում են հայկական ալիքների նկատմամբ:

**Հայրենագիտություն.** Հայկական «Հ1»-ը մեր կողմից դիտարկված շաբաթվա ընթացքում հայրենագիտական հաղորդումներին տրամադրված ժամաքանակով մի փոքր գերազանցել է բոլոր դիտարկված աղբբեջանական ալիքները: Հայկական մյուս ալիքը՝ «Արմենիա»-ն, դիտարկված շաբաթվա ընթացքում հայրենագիտությանը չի անդրադարձել:

**Ականավոր դեսքեր.** Ազգն իր արժանապատվությունն է ձեռք բերում, իր հասարակությանը, հատկապես երիտասարդությանը կյանքի ուղենիշներ և իդեալական քաղաքացու օրինակներ է տրամադրում, արժանապատվորեն համամարդկային մշակույթ է ընդգրկվում իր ականավոր դեմքերով՝ գիտնականներով, գրողներով, կոմպոզիտորներով, գինվորականներով, պատմական քաղաքական և հասարակական դեմքերով:

**Մշակութային հաղորդումներ.** Այս հաղորդումների շարքում ընդգրկվել են արվեստի տարբեր ուղղությունների, մշակույթի պատմության, կիրառական արվեստի վերաբերյալ ճանաչողական հաղորդումները: Մշակութային-լուսավորչականդաստիարակչական հեռուստահաղորդումների կառուցվածքային միավորների դիտարկումից ստացվել է հետևյալ պատկերը (*տե՛ս Աղյուսակ 2*):

**Աղյուսակ 2**

Հաղորդման տիպ	Աղբեջանական ալիքներ					Հայկական ալիքներ	
	Aztv	ATV	Naxçivan	ICTIMAI	Հ1	Արմենիա	
Ազգագրական	17:10	3:30	16:15	5:00	0:00	0:00	
Հայրենագիտական	2:20	3:05	2:50	3:45	3:35	0:00	
Ականավոր դեմքեր	13:35	0:00	5:15	13:10	4:10	1:50	
Մշակութային	12:25	0:00	5:30	5:40	1:10	0:15	

Ինչպես տեսնում ենք, մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հեռուստահաղորդումների տեսակետից աղբեջանական հեռուստալիքները բացարձակ գերակշռում են հայկական ալիքների նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, աղբեջանական և հայկական առավել մեծ լասրան ունեցող հեռուստալիքների համեմատությունը ցույց է տալիս, որ աղբեջանական հեռուստալիքներն ունեն ազգակերտման և ազգային կոնսոլիդացման հստակ ինֆորմացիոն քաղաքականություն: Այդ քաղաքականության բաղադրիչներն են.

- Ազգագրական հաղորդումների միջոցով աղբեջանցությունը միասնական ազգի, մշակութային հիմքի կազմավորումը:
- Հայրենագիտական հաղորդումների միջոցով աղբեջանցությունը աշխարհի պատկերում ներկայիս Արբեջանի տարածքը որպես նրա հայրենիք դիրքավորումը:
- Ականավոր դեմքերի վերաբերյալ հեռուստատեսային հաղորդումների միջոցով կառուցվում է աղբեջանցի ազգի ժամանակի և տարածության մեջ դիրքավորված և ազգային միասնականությունը կազմավորող պանթեոնը:
- Մշակութային հաղորդումների միջոցով յուրացվում և ազ-

գայնացվում է Աղրբեջանի տարածքում այլ ազգերի, հատկապես հայերի մշակութային ժառանգությունը:

Ազգի մշակութային-լուսավորչական-դաստիարակչական քաղաքականության առկայությունը մեծ լսարան ունեցող հայկական հեռուստաալիքներից («Հ1», «Շանթ», «Արմենիա») միայն «Հ1»-ում է արտահայտված, սակայն իր ինտենսիվությամբ (այդ հաղորդումներին տրվող ժամերի քանակով) նշանակալիորեն զիջում է աղրբեջանական մեծ լսարան ունեցող ալիքներին: Ինչ վերաբերում է «Արմենիա» և «Շանթ» հեռուստաալիքներին, ապա ազգի մշակութային դաստիարակության հարցում դրա հսկայական ներուժը դեռևս չի կիրառվում: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ մեր դիտարկումներով՝ հայաստանյան հեռուստաալիքների շարքում կան այնպիսիները, որոնք ստեղծում և հեռարձակում են լայն սպեկտրով բարձրորակ հեռուստահաղորդումներ, որոնք ունակ են դաստիարակելու բազմակողմանի և զարգացած, ազգային մտա- և հոգեկերտվածքով քաղաքացիներ, օրինակ՝ «Ար», «Շողակաթ», «Երկիր Մեղիա»:

**Եզրակացություններ.** Հայաստանի հասարակությանը գործնականում հասանելի հեռուստահաղորդումները ժանրային տեսակետից խիստ սահմանափակ են: Ըստ էության, մեծ լսարան ունեցող հեռուստաալիքներում անբավարար են մշակութային, սոցիալական, գիտահանրամատչելի, կրթական և ճանաչողական հաղորդումները: Գործնականում բացակայում է դասական մշակույթը: Հայկական ազդեցիկ հեռուստաալիքներից միայն «Հ1»-ում է արտահայտվել մշակութային-լուսավորչական-դաստիարակչական քաղաքականության առկայությունը: Սակայն նույնիսկ այստեղ այդ հաղորդումներին տրվող

ժամանակը նշանակալիորեն զիջում է աղքադանական ազդեցիկ ալիքներին: Եթե այդպիսի հաղորդումներն առկա են այլ հեռուստավալիքներում կամ այլ ժամերի, ապա դրանցից շատ քիչ օգուտ կա, եթե դրանց լսարանը՝ ցանկացած պատճառների (փոքր լսարան, անհարմար ժամ, հեռուստավալիքի բացակայությունը հանրամատչելի հեռարձակվող փաթեթում և այլն) համակցության հետևանքով, խիստ փոքր է: Հետևաբար, մի կողմից՝ առկա է այս հեռուստավալիքների լսարանների ընդլայնման խնդիր, իսկ մյուս կողմից՝ այլ «մեծ» ալիքներով հեռարձակվող բովանդակության բարելավման խնդիր:

Ներկայում տեղեկատվական դաշտի ուսումնասիրություններն անհրաժեշտ է համարել համացանցային լրատվամիջոցների, բլոգների և սոցիալական ցանցերի ուսումնասիրություններով: Հետազոտական գործիքներն անհրաժեշտ է համալրել «Մեծ տվյալների» ուսումնասիրության տեխնոլոգիաներով: Իսկ հասարակության վրա տեղեկատվական դաշտի ազդեցության գնահատման համար անհրաժեշտ են սոցիոլոգիական համալիր հետազոտություններ:

### 5.1 Ենթագլխի գրականություն

1. «Տեղեկատվական անվտանգություն» (նախագծի ղեկավար և զիյու իսլամիկ Հարությունյան Գ.), 317 էջ, Երևան, «Նորավանք» ԳՎՀ, 2017:
2. Սանուկյան Ս., «Հեռուստավարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ.», «21-րդ ԴԱՄ», թիվ 6 (76), 2017:
3. *Дондуреј Դ.*, Телевидение: режиссура реальности, М., 2007, с. 108.
4. Սանուկյան Ս., Գալստյան Շ., Հակոբյան Լ., «Աշխարհի կերպարը Հայաստանի հեռուստատեսային լուրերում», Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 10 (89), 2017:
5. «Իրավունքները ՀՀ տեղեկատվական տարածքում», «Նորավանք» ԳՎՀ, 2013:

6. Գալստյան Դ., Հակոբյան Լ., «Լրատվական հաղորդումների համեմատական վերլուծություն», «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 10 (89), 2017:
7. Մանուկյան Ս., Գալստյան Դ., «Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստաալիքները», «Նորավանք» ԳՎՀ «Գլոբուս» ամսագիր, #9 (88), 2017:
8. Լազիս Ա., Կեյլինա Լ., Դեти и кино; Под ред. Е. Угаровой; Главсоцвос. Наркомпрос; М., (1928).
9. Մանուկյան Ս., Գալստյան Դ., «Հեռուստասերիալները՝ որպես բովանդակություն և ծավալ», «Գլոբուս», թիվ 1, 2013:
10. Մանուկյան Ս., Գալստյան Դ., «Մշակութային-լուսավորչական դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Աղրբեջանի հիմնական հեռուստաալիքներում», «Գլոբուս», թիվ 3 (92), 2018:

## **5.2 Կրիտիկական ենթակառուցվածքները կիրեռանվտանգության տեսանկյունից**

Տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներն այսօր լրջագույն մարտահրավերներ են Հայաստանի համար: Մի շարք կրիտիկական ենթակառուցվածքներ կարող են հանդիսանալ կիրեռհարձակումների թիրախ, ինչն էլ կարող է ունենալ ազգային անվտանգության մակարդակի բացասական հետևանքներ: Նշված իրավիճակում Հայաստանը պետք է ունենա ավելի հստակեցված մոտեցումներ տեղեկատվական անվտանգության և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հարցում:

**Միջազգային փորձը և Հայաստանի խնդիրները.** Այսօր աշխարհում ձևավորվել են հստակ պատկերացումներ կիրեռտարածքում կրիտիկական ենթակառուցվածքների վերաբերյալ: Կիրեռհարձակումներն ընկալվում են որպես ոչ միայն տեսական, այլ նաև իրական վտանգ, քանի որ հայտնի են բազմաթիվ

դեպքեր, երբ հաքերային լայնածավալ հարձակումները կաթվածահար են արել ենթակառուցվածքների աշխատանքը։ Միջազգային փորձն այսօր պետություններին պարտադրում է անվտանգության տեսանկյունից շարժվել կրիտիկական ենթակառուցվածքների նկարագրման և դրանց պաշտպանության համակարգի ստեղծման ուղղությամբ։ Այսպես, օրինակ, ԱՄՆ հատուկ ծառայությունները համակարգող *Homeland Security* կառույցն ընդունում է 16 ոլորտ, որոնք հայտարարվում են կրիտիկական ենթակառուցվածքներ, և որոնք պետք է պաշտպանվեն (նաև կիբեռհարձակումներից)։ Կրիտիկական ենթակառուցվածքներ են ճանաչվում ինչպես էներգետիկ կամ ռազմարդյունաբերության ոլորտները, այնպես էլ սննդի կամ առողջապահության օբյեկտները<sup>6</sup>։ Իսկ Ռուսաստանի Դաշնությունն ունի հատուկ օրենք տեղեկատվական կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության վերաբերյալ, որը ենթադրում է հատուկ գործառույթներ կիբեռհարձակումների վերաբերյալ<sup>7</sup>։ Այստեղ նույնպես խոսքը շատ լայն սպեկտրով ոլորտների պաշտպանության մասին է, ընդ որում՝ գործառույթները կարող են վերաբերել ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպություններին և, նույնիսկ, անհատ ձեռներեցներին։

Մինչդեռ ՀՀ-ում բացակայում է ոչ միայն պետական մոտեցումը կրիտիկական ենթակառուցվածքներին, այլև գոյություն չունի ազգային մակարդակով համակարգող մարմին, որը կկարողանար նման գործառույթներն իրականացնել առկա իրավական կարգավորումների պարագայում։ Փաստացի, Հա-

<sup>6</sup>Critical Infrastructure Sectors <https://www.dhs.gov/critical-infrastructure-sectors>

<sup>7</sup>Федеральный закон о безопасности критической информационной инфраструктуры Российской Федерации,  
[http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_220885/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_220885/)

յաստանում ոչ միայն գոյություն չունի կրիտիկական ենթակառուցվածքների՝ կիբեռանվտանգության տեսանկյունից պաշտպանողական համակարգ, այլև չկան պատկերացումներ, թե որոնք են այդ ենթակառուցվածքները:

**Հարձակումներ կրիտիկական համակարգերի վրա.** Համարվում է, որ առաջին մեծ հարձակումը, որը բերել է կրիտիկական հանգույցի ֆիզիկական վնասվածքի, *Stuxnet* վիրուսի կիրառումն է 2010թ. Իրանի միջուկային ծրագրի դեմ: Վիրուսային համակարգը ներխուժել էր Իրանի Նաթանզի ուրանի հարստացման գործարան և, ազդելով ավտոմատացման համակարգերի վրա, ֆիզիկապես վնասել ցենտրիֆուգները: Համարվում է, որ վիրուսը ստեղծվել էր ԱՄՆ և Իսրայելի գաղտնի ծառայությունների միասնական աշխատանքի արդյունքում, և դրա կիրառումը մի քանի տարով հետ էր զցել Իրանի միջուկային ծրագիրը<sup>8</sup>:

Սակայն *Bloomberg* գործակալությունը 2014թ. տեղեկացրեց, որ, ամենայն հավանականությամբ, առաջին կիբեռօգենքի կիրառումը եղել է ավելի վաղ՝ 2008թ. օգոստոսի 5-ին, եթե Թուրքիայում պայթեցվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուտը: Մինչև վերջերս համարվում էր, որ այն պայթեցրել էին քրդական զինյալները: Սակայն, *Bloomberg*-ի տվյալներով, պայթյունը եղել է ոուսաստանյան հաքերների գործողության հետևանքը<sup>9</sup>:

Հետազա զարգացումները ցույց տվեցին, որ հաքերներն ունակ են հարձակումներ իրականացնել շատ ավելի լուրջ ֆիզիկական համակարգերի վրա: Այսպես, *The Wall Street Journal*-ը տեղեկատվություն էր ստացել, որ 2013թ. իրանական հաքերնե-

<sup>8</sup> An Unprecedented Look at Stuxnet, the World's First Digital Weapon, 11.03.14, <http://www.wired.com/2014/11/countdown-to-zero-day-stuxnet/>

<sup>9</sup> Mysterious'08 Turkey Pipeline Blasted Open New Cyberwar. 10.12.2014.

<http://www.bloomberg.com/news/articles/2014-12-10/mysterious-08-turkey-pipeline-blast-opened-new-cyberwar>

թիս հաջողվել է ներխուժել Նյու Յորքի ջրամբարի կառավարման համակարգ: Պարզապես հաքերները չեն ուզեցել վնաս հասցնել, չնայած հնարավորություններ ունեցել են<sup>10</sup>: Խոցելի են նաև տրանսպորտային մեծ համակարգերը, օրինակ՝ երկարգծերի կառավարման համակարգերը<sup>11</sup>:

2015թ. դեկտեմբերի 23-ին Ուկրաինայի կեկտրացանցերը ենթարկվեցին հաքերային հարձակման, որի հետևանքով մի շարք շրջաններում հոսանքագրկումներ եղան: Ուկրաինական հատուկ ծառայությունները համարում են, որ հարձակումն իրականացրել է ռուսաստանյան *Sandworm* հաքերային խումբը՝ *BlackEnergy* վիրուսի միջոցով<sup>12</sup>: 2017թ. *NotPetya* համակարգչային վիրուսի համաձարակի պատճառով Ուկրաինայում կաթվածահարվել էր պետական, բանկային, առևտրային կազմակերպությունների աշխատանքը<sup>13</sup>:

**Զանգվածային կապի խափանումներ.** Ավելի տարածված են հարձակումներն ինտերնետ կապուղիների վրա, որոնց հետևանքով խափանվում են այլ ենթակառուցվածքների աշխատանքները նույնպես: Կապի զանգվածային խափանումները նույնպես կարող են ունենալ ծանր հետևանքներ, քանի որ, չնայած այս դեպքում հաքերները չեն կարողանում ներխուժել համակարգեր, սակայն նրանց հաջողվում է կասեցնել դրանց աշխատանքը: Համաշխարհային ցանցային անվտանգության ոլորտում հետզհետեւ ավելի մտահոգիչ են դառնում *DDoS*<sup>14</sup> տիպի հաքե-

<sup>10</sup> Иранские хакеры атаковали дамбу в Нью-Йорке. 21.12.2015.

<http://www.securitylab.ru/news/477830.php>

<sup>11</sup> Эксперты: ИТ-инфраструктура железной дороги уязвима к кибератакам, 24.12.2015, <http://www.securitylab.ru/news/478059.php>

<sup>12</sup> Хакеры атаковали облэнерго на западе Украины, 29.12.2015, <http://www.securitylab.ru/news/477942.php>

<sup>13</sup> “Petya” Ransomware: What we know now <https://www.eset.com/us/about/newsroom/corporate-blog/petya-ransomware-what-we-know-now/>


<sup>14</sup> What is a DDoS Attack?, <http://www.digitalattackmap.com/understanding-ddos/>

բային հարձակումները, որոնց ժամանակ հարերներին հաջողվում է ցանցերը խցանել ահոելի քանակի «աղբային» հոսքերով, որոնք հանգեցնում են համակարգերի աշխատանքի դադարեցմանը։ Հայաստանը նույնպես վերջին ժամանակահատվածում ավելի հաճախ է դառնում նման հարձակումների թիրախ։

### Նկար 1

*DDoS հարձակումների միտումները 2013-2014թթ.*

*ըստ Incapsula կազմակերպության տվյալների*



DDoS հարձակումների վտանգներից կարելի է նշել այն, որ ցանցահենները դրանց ժամանակ օգտագործում են հազարավոր վարակված համակարգիչներ, որոնք սփռված են աշխարհով մեկ, և հաճախ անհնար է պարզել, թե ով ինչ պատճառներով է իրա-

կանացնում հարձակումը: Այսօր նման հարձակումներն ավելի սաստկանում են, իսկ դրանց իրականացումը՝ էժանանում: Հստ *Incapsula* կազմակերպության տվյալների, 2014թ. ընթացքում, անցյալ տարվա համեմատ, *DDoS* հարձակումների 240% աճ է նկատվել<sup>15</sup>: Բացի այդ, կտրուկ աճել է առանձին հարձակման ուժգնությունը: Այսպես, *Incapsula*-ի տվյալներով, դեպի թիրախ ընթացող հարձակման ուժգնությունն արդեն հասնում է մինչև 180 Gbps (*Նկար 1*): *DDoS* հարձակումներից պաշտպանությամբ զբաղվող *Cloudflare* կազմակերպությունը հայտնում է էլ ավելի կտրուկ աճի մասին: Հստ այդ կազմակերպության տվյալների՝ արդեն արձանագրվել է հարձակում, որի ուժգնությունը հասել է 400 Gbps<sup>16</sup>: 2015թ. հունվարի սկզբին *BBC* բրիտանական լրատվական կայքի վրա իրականացված հարձակումը հասել էր աննախադեպ հզորության՝ մինչև 602 Gbps<sup>17</sup>: Արդեն հունվարի վերջին նմանատիպ հարձակման էր ենթարկվել *HSBC* բանկի ինտերնետ բանքինզի համակարգը, ինչի հետևանքով հաճախորդները ֆինանսական խնդիրներ էին ունեցել<sup>18</sup>: 2018թ. հարձակումների հզորությունը սկսեց գերազանցել 1,7 Tbps (տե՛ս *Նկար 2*):

Նման ուժգնության հարձակումները կարող են կաթվածահար անել մեծ հանգույցներ, ընդհուպ մինչև փոքր պետությունների ցանցերի աշխատանքը: Այդպիսի փորձ արդեն եղել է: Այսպես, 2007թ. Էստոնիայի վրա կատարված հարձակման հետևանքով շարքից դուրս էին եկել ոչ միայն երկրի լրատվական


<sup>15</sup> Report: 2014 DDoS Trends - Botnet Activity is up by 240%,  
<http://www.incapsula.com/blog/ddos-threat-landscape-report-2014.html>

<sup>16</sup> Technical Details Behind a 400Gbps NTP Amplification DDoS Attack,  
<http://blog.cloudflare.com/technical-details-behind-a-400gbps-ntp-amplification-ddos-attack>

<sup>17</sup> 602 Gbps! This May Have Been the Largest DDoS Attack in History, 08.01.2016,  
<http://thehackernews.com/2016/01/biggest-ddos-attack.html>

<sup>18</sup> HSBC online banking is 'attacked'. 29.01.2016,  
<http://www.bbc.com/news/business-35438159>

Նկար 2  
2018թ. մարտին զրանցվեց  $1,7 \text{ Tbps}$  հզորության DDoS հարձակում<sup>19</sup>



և այլ հանգույցները, այլ նաև գրեթե խափանվել էին պետական կառույցների գործառույթները, որոնք իրականացվում էին ցանցի միջոցով<sup>20</sup>: Ըստ որում՝ հարձակման ուժգնությունն այդ

<sup>19</sup> World record broken again! DDoS attack exceeds 1.7 terabits per second, <https://hotforsecurity.bitdefender.com/blog/world-record-broken-again-ddos-attack-exceeds-1-7-terabits-per-second-19653.html>

<sup>20</sup> Estonian DDoS Attacks – A summary to date, 05.17.2007, <http://www.arbornetworks.com/asert/2007/05/estonian-ddos-attacks-a-summary-to-date/>

պահին հասնում էր ընդամենը 100 *Mbps*, ինչը համեմատելի չէ այսօրվա հզոր հարձակումների հետ: Զանգվածային հարձակումներ են դիտվել 2008թ. օգոստոսին, ոռուս-վրացական պատերազմի ժամանակ, որոնց հետևանքով կասեցվում էր վրացական պետական և լրատվական կայքերի աշխատանքը, ինչը հանգեցրեց Վրաստանի համար լուրջ խնդիրների տեղեկատվական-քարոզական ոլորտում<sup>21</sup>:

Հայաստանը նույնպես դառնում է *DDoS* հարձակումների թիրախ: Առաջին լուրջ հարձակումները, որոնք ունեին հասարակական ազդեցություն, արձանագրվեցին 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ<sup>22</sup>: Պատվիրատուններին հայտնաբերել հնարավոր չէր, այնպես որ՝ կարելի է միայն ենթադրել, հաշվի առնելով քաղաքական իրավակիցը, որ մեծ է այն հավանականությունը, որ պատճառը եղել է երկրի ներսում: Սակայն վերջին զարգացումներն արդեն ունեն հիմնականում արտաքին բնույթ: Այսպես, երկկողմանի լայնածավալ *DDoS* հարձակումներ կիրառվեցին հայկական և աղբբեջանական կայքերի դեմ Ռամիլ Սաֆարովի շուրջ ծավալված իրադարձությունների ժամանակ, 2012թ. սեպտեմբերի ընթացքում:

Մտահոգիչ են դառնում 2013թ. նոյեմբերից արձանագրվող՝ պարբերաբար կրկնվող հարձակումները, որոնք իրականացվում են ինչպես կոնկրետ Հայաստանում տեղակայված կայքերի, այնպես էլ Հայաստանի համացանցային մեծ հանգույցների վրա: Հստ *Google*-ի կողմից իրականացվող *Digital Map Attack* կայքի տվյալների<sup>23</sup>, Հայաստանի ցանցի վրա 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. ապրիլ իրականացվել է 8 խոշոր հարձակում,

<sup>21</sup> Cyber Attacks Against Georgia - [http://dea.gov.ge/uploads/GITI 2011/GITI2011\\_3.pdf](http://dea.gov.ge/uploads/GITI 2011/GITI2011_3.pdf)

<sup>22</sup> DDoS-ը դառնում է ավանդ լյո, <http://media.am/DDos-attacks-on-websites>

<sup>23</sup> Digital Map Attack, <http://www.digitalattackmap.com/>

որոնց ուժգնությունը հասել է 50 *Gbps*, ինչը համեմատելի է Հայաստանի կողմից սպառվող ողջ ինտերնետային թրաֆիքի հետ:

Հարձակումների հետևանքով Հայաստանում տեղակայված մի շարք կայքեր, որոնց ցանկում հասարակական կարևորություն ունեցող հանգույցներ կան, պարբերաբար անհասանելի են դառնում օգտվողների համար: Բացի այդ, դիտվում են ինտերնետ կազի խափանումներ: Այսինքն՝ հարձակումներն ազդեցություն են ունենում ընդհանուր երկրի վրա: *DDoS* հարձակումների ուժգնության աճի միտումը բավական մտահոգիչ է և ազգային մակարդակով լուծումներ ունենալու խնդիր է բարձրացնում:

Քանի որ ավտոմատացված համակարգերն այսօր հանդիսանում են գրեթե բոլոր պետությունների և խոշոր կազմակերպությունների անբաժան մասը, դրանց վրա հարձակումներն աստիճանաբար ավելի են ուժգնանալու: Հարքերային հարձակումները ենթակառուցվածքների վրա անհամեմատ ավել մեծ վնաս կարող են հասցնել ավելի փոքր մարդկային և ֆինանսական ռեսուրսների ներգրավմամբ, քան նույնիսկ ահաբեկչական գործողությունները: Նման իրավիճակում պետություններն իրականացնում են կիբեռտիրույթի սպառազինում, ինչի հետևանքներն անկանխատասելի են:

**ՀՀ տեղեկատվական անվտանգության համակարգը.** ՀՀ ուժ տեղեկատվական անվտանգությանը վերաբերող խնդիրները կարելի է բաժանել երկու մասի՝ տեխնիկական բաղադրիչ, որն աշխարհի շատ երկրներում հիմա ընդունված է կոչել կիբեռանվտանգություն, և բովանդակային, որը քարոզչական, հակաքարոզչական, զանգվածային լրագրության, տեղեկատվական հոսքերի հետ կապված խնդիրների հետ է կապված: Այս ոլորտի բոլոր խնդիրները նկարագրվում են ՀՀ տեղեկատվա-

կան անվտանգության հայեցակարգում<sup>24</sup>:

2011-ից տեղեկատվական անվտանգության տեխնիկական բաղադրիչի համակարգող է հանդիսանում Ազգային անվտանգության ծառայությունը<sup>25</sup>: Բովանդակային հատվածով տեղեկատվական անվտանգության գործառույթները բաշխված են մի շարք կառույցների միջև, բազմաթիվ գործառույթները իրականացնում են պաշտպանության նախարարությունը, արտգործնախարարությունը և այլն: Այս ոլորտում համակարգող դեր ուներ ՀՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը:

Գոյություն ունի նաև ոլորտային մոտեցում: Խոսքը բանկային ոլորտի մասին է: Այստեղ 2013թ. ընդունվել է Կենտրոնական բանկի խորհրդի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» որոշումը, որը նախատեսում է բանկային համակարգի տեղեկատվական անվտանգության ստանդարտներին անցնելը<sup>26</sup>: 2015թ. ստեղծվեց ՀՀ արդարադատության նախարարության Ամձնական տվյալների պաշտպանության գործակալությունը<sup>27</sup>:

<sup>24</sup> Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 2009թ. հունիսի 26-ի, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52559>

<sup>25</sup> Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազոր և ազգային համակարգող մարմին նշանակելու մասին, 2011թ. մարտի 9, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66158>

<sup>26</sup> «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին, 9 հուլիսի 2013թ., <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84836>

<sup>27</sup> ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նվազագույն լիազոր մարմին ճանաչելու, ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 28-ի N 1917-ն որոշման մեջ լրացնումներ կատարելու և ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրությունը և կառույցվածքը հաստատելու մասին, 2 հուլիսի 2015թ., <http://www.arlis.am/documentview.aspx?docid=98941>

2017թ. սեպտեմբերին տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ Ազգային անվտանգության խորհրդում մշակվել է ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը: Սակայն փաստաթուղթն այդպես էլ չի հանրայնացվել և հետագա զարգացում չի ստացել<sup>28</sup>: Բացի այդ, կառավարությունը ներկայացրել է Կիբեռանվտանգության ռազմավարություն հաստատելու վերաբերյալ որոշման նախագիծը<sup>29</sup>: Սակայն այն նույնպես զարգացում չի ունեցել:

**ՀՀ տեղեկատվական անվտանգության անվերահսկելի հատվածները.** Հայաստանի Հանրապետությունում մի շարք բնագավառներ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից դուրս են մնում ընդհանուր և մասնավոր վերահսկումից: Նախ՝ Հայաստանում գոյություն չունի ազգային կիբեռանվտանգության պատասխանատու մարմին: ԱԱԾ-ն վերահսկում է միայն պետական ցանցի հատվածը, այն էլ՝ ոչ ամբողջությամբ: Այսպես, կառավարությանը կից մի շարք մարմինների կայքերը չեն վերահսկվում: Իսկ Արցախի պետական կայքերի մեծ մասը շարունակում է մնալ խոցելի և պարբերաբար ենթարկվում է հարերային հարձակումների՝ հիմնականում աղբեջանական ցանցահենների խմբերի կողմից<sup>30</sup>:

<sup>28</sup> Նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել է Ազգային անվտանգության խորհրդի նիստ, <http://www.president.am/hy/press-release/item/2017/09/27/President-convened-National-Security-Council-meeting/>

<sup>29</sup> ՀՀ կառավարության «Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/projects/581/about>

<sup>30</sup> Այսպես, օրինակ, Արցախի Հանրապետության զյուղատնտեսության նախարարության կայքը <http://minagro.nkr.am/>, Ենթարկվեց հարերային հարձակման աղբեջանական Anti-Armenia Team ցանցահենային խմբի կողմից 2016թ. մայիսի 15-ին, <http://zone-h.org/mirror/id/26268331>; Արցախի Վերասկից պալատի կայքը <http://www.cocnkr.am/>, ենթարկվել է հարերային հարձակման 2017թ. մարտի 22-ին արգենտինյան ցանցահենի կողմից, <http://zone-h.org/mirror/id/28914827>

Բացարձակ անվերահսկելի դաշտում են գտնվում նաև մի շարք կրիտիկական ենթակառուցվածքներ, որոնք պետության անմիջական վերասկզբության տակ չեն գտնվում: Նման կրիտիկական հանգույցները, գտնվելով մասնավոր կամ օտարերկրյա կազմակերպությունների վերահսկողության տակ, չունեն օրենսդրորեն պարտավորություններ ապահովելու տեղեկատվական անվտանգության հստակ ստանդարտներ: Նաև չկան մեխանիզմներ, որոնք թույլ կտան որևէ պետական կամ անկախ մարմնի իրականացնել առուղիտ և վերհանել համակարգային թույլ կետերը, որոնք կարող են խոցելի լինել կիբեռհարձակումների համար: Այսպես, եթե Մեծամորի ատոմակայանը գտնվում է պետության վերահսկողության տակ և այստեղ կարող են լինել հստակ պահանջներ տեղեկատվական անվտանգության վերաբերյալ, որոնք կարող են վերահսկվել պետական գործակալությունների կողմից, ապա մնացած էներգահամակարգը գտնվում է լրիվ անպաշտպան գոտում:

Պետության կողմից անվերահսկելի և տեղեկատվական անվտանգության առումով չկարգավորված դաշտում են գտնվում մի շարք կրիտիկական ենթակառուցվածքային տիրույթներ.

- Էլեկտրաէներգետիկան
- գազի մատակարարումը
- ջրմուղ-կոյուղին
- հեռահաղորդակցությունը:

Այս ոլորտներում ոչ միայն չկա հստակ կարգավորում՝ կապված տեղեկատվական անվտանգության հետ, այլև չկան գնահատականներ, թե որքանով են տվյալ ենթակառուցվածքնե-

որ պոտենցիալ խոցելի կիրեռարձակումների տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվայնացումը համակարգերի անընդհատ իրականացվող գործընթաց է, վերոնշյալ ենթակառուցվածքների հնարավոր խոցելիությունները և դրանց վրա կիրեռարձակումների միջոցով ներազդելու հնարավորությունն անընդհատ աճում են:

**Հայ-աղբբեջանական հակամարտության գործոնը.** Աղբբեջանական հաքերային համայնքի հիմնական թիրախներից են Հայաստանը և հայերը՝ անկախ բնակության վայրից: Նույնիսկ հաքերային ամենամեծ ու ակտիվ խմբավորումը, որը գործում է արդեն 5 տարի, կոչվում է *Anti-Armenia Team*: Սա հիմնական հակահայկական կազմակերպված հաքերային հարձակումների պատասխանատուն է: Չնայած ասպարեզում պարբերաբար գործում են նաև նրա հետ համագործակցող թուրքական խմբավորումներ<sup>31</sup>: Հիմնականում աղբբեջանական հաքերներն աշխատել և շարունակում են աշխատել տարբեր հայկական կայքերը «կոտրելու» ուղղությամբ: Նրանք պարբերաբար իրականացնում են նաև DDoS տիպի հարձակումներ<sup>32</sup>: Միևնույն ժամանակ, 2016-2017թթ. ընթացքում նկատվում է աղբբեջանական հաքերների հարձակումների որակի փոփոխություն: Դեռ ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ նկատվեց, որ արդեն որպես թիրախ սկսում են հանդես գալ ոչ միայն կայքերը, ներքին ցանցերը, այլև առանձին հայ օգտատերեր: 2017թ. աղբբեջանցի հաքերները հայտարարեցին, որ իրենց հաջողվել է կոտրել

<sup>31</sup> Մարտիրոսյան Ս., «Հայ-աղբբեջանական ապրիլյան պատերազմին ուղեկցող կիրեռարձակումները», «Գլորուս», թիվ 3 (72), 2016թ., [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=14732](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14732):

<sup>32</sup> Մարտիրոսյան Ս., «DDoS հարձակումները Հայաստանի վրա դառնում են մտահղողի», «Գլորուս» վերլուծական հանդես, թիվ 4, 2014, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=12704](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12704)

հարյուրավոր հայկական ֆեյսբուքյան օգտատերերի կայքերը<sup>33</sup>: Այդ օգտատերերի մուտքանունն ու գաղտնաբառերն էին հրապարակվել: Հետագայում անընդհատ հարձակումները հայկական օգտատերերի դեմ շարունակվում էին: Եթե մինչև վերջերս օգտատերերի վրա հարձակումը հիմնականում հոգեբանական ձնշման միջոց էր, ապա վերջին զարգացումները ցույց են տալիս, որ դրանք օգտագործվում են նաև ապատեղեկատվություն տարածելու համար՝ որպես տեղեկատվական պատերազմի բաղադրիչ: Այսպես, 2017թ. փետրվարի 25-ի ադրբեջանական ձախողված դիվերսիոն գործողությունից հետո կոտրված ֆեյսբուքյան հաշիվներն օգտագործվում էին որպես հայերի անունից ապատեղեկատվություն՝ հայկական կողմի կորուստների վերաբերյալ տարածելու համար<sup>34</sup> (տե՛ս Նկար 3):

Հաշվի առնելով, որ ընդհանուր համակարգչային գրագիտությունը Հայաստանում բավական ցածր մակարդակի է, ադրբեջանական հաքերների, և ոչ միայն նրանց համար հանրապետության բնակչության բավական լուրջ տոկոսը շարունակում է հանդիսանալ հարձակումների հեշտ թիրախ: Եվ փաստացի, համակարգչային գրագիտություն չստացած հասարակության հատվածը դառնում է հակառակորդի տեղեկատվական գործողությունների գործիք, որոնք իրականացվում են հայաստանյան հասարակության դեմ ռազմական իրավիճակներում:

Ներկա համաշխարհային զարգացումները, որոնք տանում են դեպի հասարակությունների, պետությունների ավելի ու ավելի լայն թվայնացման, տեղեկատվական անվտանգության

<sup>33</sup> Facebook-ի էջերի ցանկ է ներկայացվել. ըստ ադրբեջանցի հաքերների, դրանք կոտրված են, <http://newsarmenia.am/am/news/armenia/facebook-i-ejeri-cank-e-nerkayacvel/>

<sup>34</sup> Ադրբեջանի ՊՆ-ն խոստովանել է 5 զինծառայողի կորուստ, <http://razm.info/97043>

Նկար 3

*Կուտրված հայկական օգտատերերի կողմից տարածվող  
ապատեղեկատվության օրինակ*



Ոնզ

Только что позвонили из районного военкомата сказали чтобы сын завтра пришел с утра туда. Соседям тоже звонили, видимо опять "добровольцев" набирают как в апреле...

Нравится · Еще · 11 ч назад



Լաура

Ахчик нам тоже звонили пару часов назад сказали мужу явиться в главный военный комиссариат. Гла вное не впадать в панику как в прошлый раз, а то потерпеть опять будет много

Нравится · Еще · 10 ч назад



Ոնզ

их и так много, в госпитале родильные освобождают и кладут наших солдат, у каждого второго нет руки или ноги. Как Левон не понимает что нельзя бросать детей на передовую в пасть этим туркам

Нравится · Еще · 10 ч назад

հարցերը դարձնում են առաջնայիններից մեկը: Կրիտիկական ենթակառուցվածքների վրա կիրեռարձակումներն արդեն այսօր թույլ են տալիս պետություններին լրջազույն հարվածներ հասցնել: Նման տեղեկատվական ազրեսիվ միջավայրում դիմակայելու համար Հայաստանը պետք է որդեգրի մարտահրավերներին համապատասխան զարգացման ուղի, ունենահատակ ռազմավարություն և մարտավարություն տեղեկատվական անվտանգության հարցերում:

**Հայաստանը կիրեռանվտանգության միջազգային վարկանիշային համակարգում.** Առկա իրավիճակում հարկ է, որ Հայաստանում հատուկ ուշադրություն դարձվի կիրեռանվտանգությանը: Սակայն իրական պատկերը հեռու է իդեալականից: Առավել ևս, որ կիրեռանվտանգությունը ենթադրում է անընդհատ և դինամիկ պաշտպանության զարգացում, քանի որ վտանգները տարեցտարի փոխվում են: Իրականում Հայաստանը կիրեռութիրույթում պատրաստ չէ արդիական մարտահրավերներին դիմակայելուն: Այս անպատրաստությունը որոշ ոլորտներում արձանագրեց նաև *International Telecommunication Union (ITU) ՄԱԿ գործակալության* կողմից հրապարակված *Global Cyber Security Index 2017* համաշխարհային կիրեռանվտանգության ուսումնասիրությունը: Այն Հայաստանը տեղադրում է *111-րդ դիրքում, այսինքն՝ աշխարհում գրեթե ամենավատ դիրքերից մեկում: Մինչդեռ, օրինակ, մեր հարևան Վրաստանն արդեն 8-րդ տեղում է հայտնվել, Աղրբեջանը՝ 48-րդ (տե՛ս Աղյուսակ I):*

Ինչո՞վ է պայմանավորված Հայաստանի նման ցածր դիրքը վարկանիշում: Ուսումնասիրությունը գնահատել է երկրներն ըստ մի քանի հիմնական ոլորտային չափանիշների: Խոսքը հինգ հիմնական խմբերի մասին է. ոլորտային օրենսդրության, տեխնիկական, որը ենթադրում է ազգային մակարդակի կամ ոլորտային կիրեռանվտանգության պատասխանատու մարմինների առկայությունը, կիրեռանվտանգության ռազմավարությունը, ստանդարտների ձևավորումը և կրթական ծրագրերն ու համագործակցությունն ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ միջազգային մակարդակով (տե՛ս Նկար 4):

Եթե դիտարկենք նման ցուցանիշները, ապա կտեսնենք, որ Հայաստանում գրեթե ոչ մի կետ ազգային կամ պետական մակարդակով տվյալ պահին իրականացված չէ, ոչ էլ գտնվում է

**Աղյուսակ 1**

*Որոշ հետխորհրդային երկրների դիրքը ITU Global Cyber Security Index 2017 կիրեռանվտանգության վարկանիշում*

Երկիրը	Դիրքը վարկանիշում
Վրաստան	8
Ռուսաստանի Դաշնություն	10
Բելառուս	39
Ադրբեյչան	48
Ուկրաինա	59
Մոլդովա	73
Ղազախստան	83
Տաջիկստան	91
Ուգրեկստան	93
Ղրղզստան	97
Հայաստան	111
Թուրքմենստան	132


իրազործման ճանապարհին: Օրենսդրությունը հիմնական առումով չի նկարագրում արդիական SS զարգացումները: Կիրեռանվտանգության հանրային կամ ոլորտային պատասխանատու մարմիններ, որպես այդպիսին, չկան: Մի շարք կառույցներում, օրինակ՝ ԱԱԾ-ում, գոյություն ունեն համապատասխան բաժիններ, որոնք, սակայն, լուծում են խիստ սահմանափակ տիրույթների պաշտպանության խնդիրը: Հստակ ռազմավարության բացակայությունը տվյալ պահին բերում է նաև ստանդարտների բացակայության: Կրթական համակարգում խնդիրն ընդհանրապես անտեսվում է: Ինչ վերաբերում է համագործակցությանը միջազգային մակարդակով, սա միակ ոլորտն է, ուր Հայաստանը դերակատար է հանդիսանում (տե՛ս Նկար 5):

Իհարկե, ցուցանիշները տագնապալից են: Սակայն դրանք ցուցադրում են ՀՀ պոտենցիալ խոցելիությունը կիրեռհարձակում-

## Նկար 4

### *ITU Global Cyber Security Index 2017 հիմնական զնահատման ցուցանիշները*

Figure 2.3.1: GCI pillars and sub-pillars



Ների տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ինքնակարգավորման, տեղական լուծումների շնորհիվ վտանգները նվազեցվում են: Բացի այդ, առ այսօր չկա հստակ հրապարակված վիճակագրություն Հայաստանում կիբեռհանցագործությունների վերաբերյալ:

Նկար 5

*ITU Global Cyber Security Index 2017*  
միշտ հետխորհրդային երկրներն  
ըստ հիմնական գնահատման ցուցանիշների

Figure 6.5.2: CIS region scorecard

\* \* \*

Կիբեռանվտանգության ոլորտում, սակայն, զարգացումներն այնքան արագ են ընթանում, որ վտանգները և դրանց տեսական ու իրական ազդեցությունը Հայաստանի Հանրապետության վրա կարող են արդեն մոտակա ժամանակներում ունենալ աղետալի հետևանքներ, եթե չիրականացվեն ոլորտը զարգացնելու և կայունացնելու համակարգված աշխատանքներ: Ինչպէս հետևում է ներկայացված նյութերից, արդի պայմաններում տեղեկատվական գործոնը մեծապէս ազդում է մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառների վրա: Այդ տեսանկյունից բացառություն չէ նաև ժողովրդագրական ոլորտը, որտեղ, իթիվս տնտեսական, սոցիալական և քաղաքական հանգամանքների, կարևոր դերակատարում է ձեռք բերել նաև տեղեկատվականը: Միևնույն ժամանակ, հարկ է շեշտել, որ հայաստանյան իրողություններում ժողովրդագրական ոլորտը ինքնին ձեռք է բերել կրիտիկական նշանակություն: Այդ խնդիրների համալիրը կըննարկվի հաջորդ բաժնում:

## **6. ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ**

Համակարգերի ընդհանուր տեսությունից հայտնի է, որ համակարգի բարդության աճը, մնացած հավասար պայմաններում, նպաստում է դրա կայունության, զարգացման, հարմարվողականության և արտաքին ու ներքին սպառնալիքներին դիմակայելու ներուժի աճին: Համակարգի բարդությունը պայմանավորվում է դրա տարրերի քանակով և կառուցվածքի (տարրերի միջև կապերի) բազմազանությամբ:

### **6.1 Համակարգերի տեսություն և ժողովրդագրություն**

Եթե երկրի ժողովրդագրությունը դիտարկվի համակարգերի տեսության շրջանակում, ապա երկրի բնակչության բացարձակ քանակը այն հիմնական բնութագրերի շարքում է, որը սահմանափակում է դրա համակարգային բարդության հնարավոր աստիճանը: Յուրաքանչյուր պետության համար, կախված աշխարհում իր աշխարհաքաղաքական, տնտեսական և տեխնոլոգիական դիրքից, գոյություն ունի բնակչության քանակի նվազագույն սահման, որից ցածր քանակի դեպքում արտաքին սպառնալիքներին դիմակայելու հնարավորությունները դառնում են անբավարար և անթույլատրելի բարձր մակարդակի է հասնում ժամանակի ընթացքում պետական/ազգային/հասարակական աղետի հավանականությունը:

Դա պայմանավորված է երեք խումբ պատճառներով: Առաջին՝ արդի աշխարհում սպառնալիքները շատ ավելի բազմաթիվ են և բազմազան, քան թեկուց 30 տարի առաջ: Հետևաբար, հասարակությունը պետք է ունենա բավարար ֆունկցիոնալ բազմազանություն, որը թույլ կտա արձագանքել բազմազան սպառնալիքներին: Երկրորդ՝ ցանկացած ֆունկցիա տվյալ պետության համար բավարար արդյունավետությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է տարբեր մասնագիտություններ և որակավորումներ ունեցող աշխատողների բավարար քանակ, որը նույնպես, վերջին հաշվով, սահմանափակվում է երկրի բնակչության թվաքանակով: Երրորդ՝ ժամանակի ընթացքում պարբերաբար առաջանում են խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ռեսուրսների ոչ թե ստացիոնար բաշխում, այլ արագ կենտրոնացում: Եթե համակարգի ծավալը փոքր է, մեծանում է հավանականությունը, որ ռեսուրսների կենտրոնացումը մեկ, սակայն կենսականորեն կարևոր խնդրի լուծման համար կարող է հանգեցնել հասարակության այլ՝ նույնպես կենսական ֆունկցիաների իրականացման անհնարինությանը:

Ժամանակի երկարատև հատվածում հասարակության բնականոն գործունեության և զարգացման հնարավորության համար կարևոր է ոչ միայն **բնակչության բացարձակ քանակը, այլև բնակչության ժողովրդագրական և սոցիալական կառուցվածքները**, մասնավորապես՝ սեռատարիքային, ամուսնական, ընտանեկան, բարեկեցության, առողջական վիճակի, կրթական, զբաղվածության, մասնագիտական կատեգորիաների, որակավորման և այլն: Դրանք, իրենց հերթին, հավելյալ սահմանափակումներ են դնում տարբեր պետական և հասարակական խնդիրների լուծման հնարավորությունների վրա:

Ժողովրդագրական պրոցեսների կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ դրանք ունեն մեծ իներցիոնություն, այն, ինչ տեղի է ունենում «տվյալ պահին», ամբողջությամբ արտահայտվում է տասնյակ տարիներ հետո: Երբեմն, եթե տվյալ պահին ժողովրդագրական տեսակետից «ամեն ինչ կարգին է» և «հիմքեր չկան ենթադրելու», որ մոտակա 3-5 տարիներին ինչ-որ բան էապես կվատանա, ապա կառավարիչներն այդ խնդիրը գնահատում են ոչ երատապ և զբաղվում են «անհետաձգելի» իրավիճակային խնդիրներով: Սակայն, եթե ներկայի բացասական միտումների հետևանքներն ի հայտ են գալիս 10 կամ ավելի տարի հետո և սկսում են ուղղակի և անհաղթահարելի կերպով սահմանափակումներ դնել տնտեսական, սոցիալական, մշակութային կամ պաշտպանական խնդիրների հնարավոր լուծումների վրա, պարզվում է, որ իրավիճակն արագ շտկել հնարավոր չէ՝ նույնիսկ լավագույն ռազմավարությունների լավագույն իրականացման արդյունքներն արտահայտվելու են մոտավորապես նույն կարգի ժամանակի ընթացքում:

**6.2 Ժողովրդագրական վիճակը որպես կրիտիկական ոլորտ**  
Վերը ներկայացված նկատառումներից բխում է, որ պետությունում ժողովրդագրության ոլորտը, որը բնութագրվում է բնակչության թվաքանակով, բնակչության վերարտադրության բնույթով, ժողովրդագրական և սոցիալական կառուցվածքներով, հանգուցային նշանակություն ունի պետության և հասարակության անվտանգության, բնականոն կենսագործունեության և զարգացման տեսակետից: Այդպիսի ոլորտներն ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգերում ընդունված է անվանել «կրիտիկական»:

Արդի ժամանակաշրջանում, երբ ազգերի և պետությունների միջև մրցակցությունն ընթանում է նախ և առաջ գիտության և տեխնոլոգիաների ոլորտում, առանձնահատուկ նշանակություն են ստանում բնակչության սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքներն ըստ կրթամակարդակի, ըստ ժամանակակից բարձր-տեխնոլոգիական մասնագիտությունների, ըստ գիտության տարբեր ոլորտներում զբաղվածության, ըստ տնտեսության տեխնոլոգիական ոլորտներում զբաղվածների: Բնակչության այդ բնութագրերի վերլուծությունը, դրանց դինամիկայի վերհանումը, կառավարումը և դրանց ազդեցությունները երկրի տնտեսության, մարդկանց բարեկեցության, գիտության, տեխնոլոգիաների, մշակույթի և, վերջին հաշվով, ազգային անվտանգության վիճակի վրա կազմավորում են ժողովրդագրության՝ որպես կրիտիկական ենթակառուցվածքի, բովանդակությունը [1]:

**Հայաստանի ժողովրդագրական վիճակի ընդհանուր նկարագիրը, դինամիկան և զնահատականը.** Ժողովրդագրական վիճակի և դրա դինամիկայի ամբողջական պատկերը ստանալու համար կիրառվում է մի քանի տասնյակ, իսկ համապարփակ և մանրամասն պատկերը ստանալու համար՝ մի քանի հարյուր ցուցանիշ: Ժողովրդագրական իրավիճակի և դինամիկայի պարզագույն և նախնական երկու ցուցանիշներն են բնակչության միզրացիոն սալդոն (մեխանիկական շարժը, բնակչության ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) և բնական վերարտադրությունը (ծնվածների և մահացածների տարբերությունը):

ՀՀ ժողովրդագրական վիճակի ընդհանուր պատկերը 2017թ. դրությամբ հետևյալն է: Մշտական (դե յուրէ) բնակչությունը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2986.1 հազար

մարդ [2]<sup>1</sup>, իսկ առկա (դե ֆակտո) բնակչության գնահատականը, հաշվի առնելով 2011-2017թթ. բնակչության արտահոսքը, գնահատվել է մոտ 2595 հազար [2, 3-19]<sup>2</sup>: Ընդ որում, քաղաքային բնակչությունը կազմել է 63.7%, իսկ գյուղականը՝ 36.3%, տղամարդիկ՝ 47.5%, կանայք՝ 52.5%: Բնակչության միջին տարիքը՝ 36.2 տարի: Մշտական բնակչության կառուցվածքում՝ 0-15 տարեկանները կազմել են 21.1%, աշխատունակ տարիքի բնակչությունը՝ 65.7%, աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը՝ 13.2%: Ժողովրդագրական բեռնվածքի<sup>3</sup> գործակիցը կազմել է 0.521: ՄԱԿ չափանիշով՝ Հայաստանի բնակչությունը ծերացող էր՝ 65 և բարձր տարիքի բնակչությունը կազմում էր 11.2%<sup>4</sup>: 2017-ին Հայաստանում ծնվել է 37699 (նախորդ տարվա համեմատ՝ նվազել է) և մահացել է 27367 (նվազել է), ամուսնացել է 15214 (նվազել է), ամուսնալուծվել է 3940 (աճել է) մարդ: Ծնելիության ընդհանուր գործակիցը՝ 12.7 (նվազել է), մահացության ընդհանուր գործակիցը՝ 9.2 (նվազել է) [2]:

<sup>1</sup> Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին. Տեղեկատվական ամսական գելուց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2018: Հետագա շարադրանքում Հայաստանի ժողովրդագրական վիճակի մասին տվյալները՝ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, ներկայացված են ըստ այդ հրապարակման:

<sup>2</sup> 2011թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ դե ֆակտո բնակչությունը կազմել է 2,871.5 հազար մարդ (տե՛ս ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքները: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013, էջ 80): Իսկ 2011-2017թթ. ընթացքում բնակչության արտահոսքը կազմել է 276.6 հազար: Աշխատանքում Հայաստանից բնակչության արտահոսքի վերաբերյալ բոլոր տվյալները տրված են ըստ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության 2002 և 2004-2017թթ. «Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներում» ներկայացված Հայաստանից մեկնումների և Հայաստան ժամանումների վիճակագրության հիման վրա: 2017թ. տվյալները տրված են ըստ ՀՀ Սոցիալական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2018թ.:

<sup>3</sup> 0-15 տարեկան և բոշակային տարիքի բնակչության թվի հարաբերությունն աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակին:

<sup>4</sup> ՄԱԿ չափանիշներով երկրի բնակչությունը համարվում է ծերացող, եթե դրա կազմում 65 և ավելի տարիքի մարդկանց քանակը բարձր է 7%-ից:

Բնակչության բնական աճի կարևոր ինտեգրալ ցուցանիշ է կանանց պտղաբերության գործակիցը, որը ցույց է տալիս, թե քանի երեխա կունենա կինն իր ծնունակ տարիքում (15-49 տարեկան) ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում: Եթե այս ցուցանիշը 2.10-2.15 միջակայքում է, ապա երկար ժամանակահատվածում՝ 20 և ավելի տարի, մնացած հավասար պայմաններում տեղի է ունենում բնակչության պարզ վերարտադրություն: Եթե ցուցանիշը փոքր է 2.10-ից, տեղի ունի բնակչության կրծատում, եթե մեծ է 2.15-ից՝ բնակչության աճ:

Այս ցուցանիշների, հատկապես պտղաբերության գործակիցի ժամանակային շարքերի դիտարկումը ունակ է ահազանգելու ապագա խնդիրների վերաբերյալ:

Օրինակ, ՀՀ ներկայիս ժողովրդագրական վաս վիճակի մասին առաջին ահազանգերը եղել են 1990-ականների երկրորդ կեսից: 1992 թվականից Հայաստանում կանանց պտղաբերության գործակիցը նվազեց 2.15 արժեքից և մնաց այդ շեմից ցածր մինչ օրս: Եթե մոտ 20 տարի դրա բացասական հետևանքներն ակնառու չեն, նույնիսկ կար «դրական» գործոն՝ նվազել էր ընտանիքում ժողովրդագրական բեռնվածքի գործակիցը, ապա սկսած 2015-ից՝ ծնելիության բացասական հետևանքները դարձան կրծութիկական՝ Հայաստանում անբավարար դարձավ զորակոչային տարիքի երիտասարդների քանակը, որի հետևանքով սկսեց խրախուսվել կանանց բանակային ծառայությունը, որը նվազեցնում է ծնելիության գործակիցը, վերացվեց ուսանողների տարկետման իրավունքը, որը խնդիրներ է առաջացնում երկրի գիտական, տեխնոլոգիական և մասնագիտական ներուժի զարգացման հարցերում: Աշակերտների քանակի բնական կրծատումը հանգեցրեց ուսուցիչների քանակի հարկադրված կրծատման,

որն առաջացնում է տոցիալական լարվածություններ: Բնակչության ընդհանուր քանակի կրճատումը հանգեցրեց բուժաշխատողների քանակի հարկադրական կրճատման, որի արդյունքում սրվեցին բուժաշխատողների մարզային տեղաբաշխման խնդիրները: Բնակչության ընդհանուր կրճատումը հանգեցրեց Հայաստանի սպառողական շուկայի կրճատմանը, որը սպառողական ապրանքների գների աճի գործոններից մեկն է:

Ներկայում ՀՀ ժողովրդագրական վիճակը վատթարացնող ամենահզոր գործոնը բնակչության արտահոսքն է: 2007-2017թթ. ՀՀ-ից մեկնածների և Հայաստան ժամանածների տարբերությունը եղել է բացասական՝ 2017թ. կազմելով 36200 մարդ: Այդ պատճառով հետագա շարադրանքում հիմնական շեշտադրումը կլինի բնակչության արտահոսքի նվազեցման հարցերի վրա:

### **6.3 Բնակչության արտահոսքը և տնտեսական վիճակը**

1992-2017թթ. Հայաստանից ընդհանուր արտահոսքը կազմել է 1147.0 հազար մարդ, այդ թվում՝ 1992-1997թթ. ընթացքում՝ 586.8 հազար, 1998-2007թթ.՝ 129.1 հազար և 2008-2017թթ.՝ 431.1 հազար [2, 4-19]<sup>5</sup>:


Գծապատկեր 1-ում ներկայացված է Հայաստանից բնակչության արտահոսքի և ՀՆԱ տարեկան հավելաձի դինամիկան 1991-2017թթ. [21], ինչպես նաև ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության հաշվարկված գործազրկության մակարդակի դինամիկան՝ 1999-2017թթ. ընթացքում [20]: Հարկ է նշել, որ սկսած 2008-ից՝ այդ մեթոդաբանությունը փոխվել է՝ գործազրկի կարգավիճակը նույնականացվել է ավելի խիստ պայմանների դեպքում, որի հետևանքով դրա մա-

<sup>5</sup>Տե՛ս ծանոթագրություն 2:

կարդակը 2008թ. կտրուկ անկում է ունեցել: 1991-1999թթ. գործազրկության մակարդակի ցուցանիշները, որպես կանոն, չեն դիտարկվում, քանի որ այդ տարիներին առկա էր լայնածավալ թաքնված գործազրկություն՝ վարձու աշխատողների նշանակալի հատված աշխատավարձ չէր ստանում:

### Գծապատկեր 1

*ՀՆԱ տարեկան աճը, գործազրկությունը և արտագաղթի դինամիկան Հայաստանում 1991-2017թթ. Հայաստանում գործազրկության մակարդակի ցուցանիշները տե՛ս՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>, իսկ ՀՆԱ տարեկան հավելաձի մասին՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM>*



Գծապատկերի տվյալների համատեղ դիտարկումը տալիս է երեք կարևոր հարցերի պատասխան:

**Առաջինը վերաբերում է Հայաստանի տնտեսության ընդհանուր գնահատականին:** 1988թ. Սպիտակի երկրաշարժի և 1991-1994թթ. ազատական տնտեսակարգին անցնելու հետևանքով Հայաստանի տնտեսությունը, որն իր արդյունաբերական և գիտատեխնոլոգիական զարգացման մակարդակով համարժեք էր Չեխոսլովակիայի տիպի պետությանը, ապաարդյունաբերականացվեց: 1994-2000թթ. ընթացքում այն վերականգնվեց որպես աշխարհամակարգի դասական ծայրամասային երկիր, որի հիմնական ճյուղերն են հանքագործությունը, գյուղատնտեսությունը և տուրիզմը: Ծայրամասային տնտեսությամբ երկիրը չի կարող բարձր որակավորում պահանջող և բարձր վարձատրվող աշխատանքով ապահովել այն քանակով որակյալ աշխատուժին, որը մնացել էր Խորհրդային Հայաստանից: Ավելին՝ այդպիսի տնտեսությունը չի կարող որևէ աշխատանքով ապահովել այնպիսի քանակով բնակչությանը, որը հնարավոր էր բարձր զարգացած արդյունաբերության առկայության դեպքում: Դրա ակնառու ապացույցն այն է, որ 2000-2017թթ. ընթացքում, չնայած բնակչության լայնամասշտաբ արտահոսքին, գործազրկության մակարդակը մնացել է շատ բարձր՝ 18-20%<sup>6</sup>: Այսուղից հետևություն՝ Հայաստանից բնակչության արդի արտահոսքն օբյեկտիվ երևույթ է և հետևանք է արդի Հայաստանի տնտեսության տեխնոլոգիական ցածր մակարդակի և, եթե նպատակ է սահմանվում Հայաստանի բնակչությունը 2040թ. հասցնել 4 միլիոն մարդու, ապա դրա համար անհրաժեշտ պայ-

<sup>6</sup> Կարելի է ենթադրել, որ նոր մեթոդաբանությամբ վերահաշվարկված գործազրկության մակարդակը 1999-2007թթ. կկազմեր 20-25%:

ման է երկրի վերինդուստրացումը, որն արդի ժամանակաշրջանում համարմեք է տնտեսության փոխադրմանը բարձր-տեխնոլոգիական տնտեսական նիշա:

Երկրորդ՝ գծապատկերում արտահայտվել է, թե ինչպես են քաղաքական էքսցեները և քաղաքական համակարգի նկատմամբ վստահությունը ՀՀ-ում ազդել բնակչության արտահոսքի վրա: Այսպես՝ 1996թ. նախագահական ընտրություններից հետո, երբ ուժային կերպով ձնշվեց նախագահական ընտրությունների արդյունքների կեղծման հետ կապված ժողովրդական բողոքը, բնակչության 1993-1996թթ. արտահոսքի նվազման միտումը փոխվեց: Եթե 1996թ. այն կազմել էր 21 հազար մարդ, ապա 1997թ. դարձավ 31 հազար: Երբ 1997-ին Կարեն Դեմիրճյանը վերադարձավ մեծ քաղաքականություն և հասարակության շրջանում լավատեսություն առաջացավ ապագայի նկատմամբ՝ բնակչության արտահոսքը տարեկան 31 հազարից նվազեց մինչև 7 հազար: Պետք է ենթադրել, որ եթե տեղի չունենար 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը, ապա, լավատեսական սպասումների աստիճանական իրականացման պայմաններում, ՀՀ-ում կակավեր բնակչության ներհոսք: Սակայն ահաբեկչության գոհ դարձան ոչ միայն Կարեն Դեմիրճյանն ու Վագգեն Մարգարյանը, այլև հասարակության ապագայի հույսը, իսկ բնակչության արտահոսքը 2000 և 2001-ին հասակ համապատասխանաբար 58 և 60 հազարի: Դրան, անշուշտ, նպաստեց նաև այդ տարիների քաղաքական անկայունությունը:

Երրորդը վերաբերում է այն հարցին, թե ինչ չափի ՀՆԱ տարեկան աճի դեպքում է հնարավոր կասեցնել բնակչության արտահոսքը: Հայաստանում վերջին 27 տարիների ընթացքում տեղի է ունեցել բնակչության ներհոսք, երբ ՀՆԱ տարեկան հա-

վելաձր բարձր է եղել 10%-ից: Կարևոր է նշել, որ ՀՆԱ այդպիսի հավելաձր շատ արագ է ազդում միզրացիոն բալանսի վրա: Ակսած 2002-ից, եթե տնտեսական աճի բարձր տեմպը վերագրվեց քաղաքական կայունությանը, միզրացիոն բալանսը դարձավ դրական: Գծապատկերի տվյալներով կառուցված մաթեմատիկական մոդելը ցույց է տվել, որ մնացած հավասար պայմանների դեպքում Հայաստանում միզրացիոն սաղոն կվերածվի 0-ի՝ ՀՆԱ տարեկան 13% հավելածի դեպքում: Իսկ եթե նպատակ է սահմանվում 2040թ. Հայաստանի բնակչության թվաքանակը հասցնել 4 միլիոն մարդու, ապա ծնելիության ներկայիս մակարդակի պահպանման պայմաններում անհրաժեշտ է տարեկան միջին հաշվով մոտ 40 հազար մարդու ներհոսք: Մոդելից ստացված գնահատականով, դրա համար անհրաժեշտ է ՀՆԱ տարեկան 22% կարգի հավելած:

Սակայն այդպիսի հավելած հնարավոր չէ ոչ գյուղատնտեսության, ոչ հանքագործության և ոչ էլ տուրիզմի ոլորտում: Դրա համար անհրաժեշտ է շատ բարձր արտադրողականությամբ ոլորտների զարգացում, իսկ այդպիսին են միայն բարձրտեխնոլոգիական ոլորտները: Նորից հանգում ենք եզրակացության, որ ՀՀ ժողովրդագրական վիճակի բարելավման և հավակնութ նպատակների իրականացման համար անհրաժեշտ է Հայաստանի տնտեսության անցում բարձրտեխնոլոգիական նիշա:

**Բնակչության արտահոսք, բարեկեցության մակարդակ և բարեկեցության ընկալումներ.** Դիտարկենք, թե ինչպիսին է Հայաստանի բնակչության բարեկեցության մակարդակը ներկայիս տնտեսության պայմաններում, ինչպես է այն ընկալում հասարակությունը և ինչպես են այդ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններն ազդում բնակչության արտահոսքի վրա:

2017թ.՝ 3-րդ Հանրապետության սկզբից 25 տարի անց, ՀՀ ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով կազմել է \$3937 [22]<sup>7</sup>, որը մոտ է Համաշխարհային բանկի դասակարգմամբ միջին բարեկեցությամբ երկրների խմբի ներքին սահմանին: Նման ցածր ցուցանիշն արտահայտվում է բնակչության ինչպես օբյեկտիվ բարեկեցության, այնպես էլ բարեկեցության սուբյեկտիվ ընկալումներով: Եթե համեմատենք ՀՀ 4 անձից կազմված ստանդարտ ընտանիքի (որպես կանոն, երկու չափահաս և երկու անչափահաս) ամսական ծախսերը և նրանց կողմից ընկալվող բարեկեցության ստանդարտները, ապա կստանանք հետևյալ պատկերը: Ըստ 2016թ. ՀՀ կառավարության պատվերով կատարված հետազոտության, Հայաստանի բնակչության ընկալումներում այդպիսի ընտանիքը Հայաստանում «լավ ապրելու համար» ամսական պետք է ունենա միջին հաշվով 670 հազար դրամ եկամուտ, «նորմալ ապրելու համար»՝ 360 հազար դրամ, իսկ «աղքատ չհամարվելու համար»՝ 200 հազար դրամ [23]<sup>8</sup>: Սակայն, ըստ Կենտրոնական բանկի 2016թ. հետազոտության, ՀՀ ստանդարտ ընտանիքների 55%-ը ամսական ծախսում է 200 հազարից պակաս դրամ, 28%-ը՝ 200-360 հազար դրամ, 14%-ը՝ 360-670 հազար դրամից ավելի և 4%-ը՝ 670 հազարից ավելի [28]<sup>9</sup>:

Պատկերացում կազմելու համար, թե ինչպես են միմյանց հետ շաղկապված ընտանիքների բարեկեցության օբյեկտիվ մակարդակները և տնտեսության տեխնոլոգիական զարգացման մակարդակը, դիտենք Հայաստանում 2017թ. տնտեսության ճյուղերում միջին աշխատավարձերի մակարդակները և այդ

<sup>7</sup>Տե՛ս <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>


<sup>8</sup>Սանուլիյան Ս., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2016», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր):

<sup>9</sup>Սանուլիյան Ս., «Տնային տնտեսությունների պարտքերի ուսումնասիրություն, 2017», ՀՀ Կենտրոնական բանկ (ձեռագիր):

ճյուղերում աշխատողների քանակը՝ ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների (Գծապատկեր 2) [4]: Գծապատկերում տրված են անվանական աշխատավարձերը: Առաջնային աշխատավարձերը՝ հարկերի պահումներից հետո, կազմում են ներկայացված տվյալների մոտ 75%-ը:

### Գծապատկեր 2

*Միջին անվանական աշխատավարձը Հայաստանում (1000 դրամ) և զբաղվածների քանակն ըստ տնտեսության ոլորտների, %, 2017, մարտ: Հայաստանի տղիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-ապրիլին. Տեղեկատվական ամսական գեկույց: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017, էջ 47-48*



Գծապատկերից երևում է, որ, եթե ստանդարտ ընտանիքում առկա է երկու աշխատող, ապա այդ աշխատողների 94%-ի աշխատավարձի կրկնապատիկը՝ հարկերը հանելուց հետո, ցածր է 330 հազար դրամից: Իսկ «նորմալ ապրելու համար» անհրաժեշտ մակարդակից (ամսական 360 հազար դրամ) ավելի

բարձր աշխատավարձեր ունի Հայաստանի տնտեսությունում զբաղվածների ընդամենը 6%-ը:

Հետևաբար՝

- *Բնակչությանը Հայաստանից «արտամղող» ֆինանսական գործուն ազդում է Հայաստանի ընտանիքների 83%-ի և զբաղվածների 94%-ի վրա:*

Այս արդյունքից նորից բխում է այն հիմնարար եզրակացությունը, որ.

- *Հայաստանի տնտեսության առկա կառուցվածքի, տեխնոլոգիական զարգացման և արտադրողականության դեպքում Հայաստանից բնակչության արտահոսքի կրճատումը ծայրահեղ խնդրահարույց է, եթե ոչ՝ անհնար:*

#### ***6.4 Բնակչության արտահոսքի սոցիալ-հոգեբանական և մշակութային գործուները***

Վերը բնակչության արտահոսքը դիտարկվեց մակրոտնտեսական երկու կարևոր ցուցանիշների դինամիկ շարքի համատեքստում: Այս ենթագլխում կդիտարկվեն, թե ինչպիսին է Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշման դինամիկան հասարակության շրջանում, ինչպես են իրենք՝ մարդիկ բացատրում Հայաստանից ընդմիշտ մեկնելու իրենց դիրքորոշումները և ինչ աշխարհայացքային համալիրներ են առկա Հայաստանի հասարակությունում, որոնք ձևավորում և վերարտադրում են Հայաստանից ընդմիշտ մեկնելու նրանց դիրքորոշումները:

ՀՀ-ում 2012-2016թթ. ընթացքում համահայաստանյան մասշտաբով իրականացված ներկայացուցչական սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները [23-27] պարզել են, որ այդ

տարիների ընթացքում ՀՀ 18 և ավելի տարիքի բնակչության շրջանում հնարավորության դեպքում Հայաստանից ընդմիշտ հեռանալու դիրքորոշումները եղել են շատ բարձր: Եթե 2012թ. այդպիսի դիրքորոշում ուներ բնակչության 50%-ը, ապա 2016թ.՝ 43%-ը: Չնայած տարիների ընթացքում ցուցանիշը նվազել է, սակայն մնում է շատ բարձր: Համեմատության համար նշենք, որ Վրաստանում 2017թ. այդպիսի դիրքորոշում ուներ 18 և ավելի բնակչության 8%-ը, իսկ Աղբեջանում՝ 2013թ.՝ 20%-ը<sup>10</sup>: Պատկերն ավելի ակնառու է դարձնում այն փաստը, որ նոյն տարիներին ՀՀ շափահաս բնակչության 10-13%-ն ինչ-որ բան էր ձեռնարկում ընդմիշտ մեկնելու նպատակով: 2012թ. այդ անձինք կազմել են շափահաս բնակչության 14%-ը, իսկ 2016թ.՝ 12%-ը: Եթե ցուցանիշները վերածենք մարդկանց թվաքանակի, ապա կստացվի, որ:

- 2016թ. ՀՀ 840 հազար շափահաս բնակիչ հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկներ Հայաստանից, իսկ 235 հազարը ինչ-որ բան էր ձեռնարկում այդ նպատակով:

Սոցիոլոգիական հետազոտությունները տալիս են այն հարցի պատասխանը, թե ինչու են մեկնելու դիրքորոշում ունեցողները ցանկանում ընդմիշտ մեկնել Հայաստանից [27]: Առանձնանում են երկու խումբ պատճառներ. 1. տնտեսական պատճառներ, օրինակ՝ բարձր աշխատավարձով աշխատանք ունենալը, իր որակավորմանը համապատասխան աշխատանք ունենալը, բարեկեցիկ կյանքով ապրելը և այլն: Տարբեր տարիների այդպիսի պատճառներ է նշել մեկնելու դիրքորոշում ունեցողների 82-86%-ը: 2. սոցիալ-հոգեբանական պատճառներ, օրինակ՝ բարեկիրք,

<sup>10</sup> Հաշվարկները կատարված են ըստ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների 2013 և 2017թթ. զանգվածային սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների շտեմարանների:

կարգությունը, արդար երկրում ապրելու ցանկությունը, իրենց կամ իրենց երեխաների լավ ապագայի սպասումները, Հայաստանի իշխանությունների վատ կառավարումը, օտարվածությունը հայաստանյան հասարակությունից: Եթե 2012թ. այդպիսի պատճառ է նշել ընդմիշտ հեռանալու դիրքորոշում ունեցող մարդկանց 45%-ը, ապա 2016թ.՝ արդեն 92%-ը:

Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների միջոցով բացահայտվել են Հայաստանի հասարակությունում առկա այն աշխարհայացքային համալիրները, որոնք պայմանավորում են Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը<sup>11</sup>: Ստորև տրված են այդ գործոնները, դրանց առանձնացված ազդեցության ուժը: Անհրաժեշտության դեպքում մեկնաբանված է դրանց բովանդակությունը:

**1. Իր ընտանիքի տնտեսական վիճակի ընկալումը:** Եթե մարդիկ լիովին գոհ են, ապա դա ունակ է ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը նվազեցնել 19%-ով: Այս գնահատականը ներկայացնում է նախորդ ենթագլխում նկարագրված իրավիճակի արտապատկերումը հասարակական դիրքորոշումներում:

**2. Հայաստանի վիճակից բնդիանուր բավարարվածությունը:** Եթե մարդիկ լիովին բավարարված են Հայաստանի ընդհանուր վիճակից, ապա դա ունակ է ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը նվազեցնել 22%-ով: Այս աշխարհայացքային համալիրը կազմավորվել է երկրի վիճակի 35 գնահատականների ընդհանրացման արդյունքում, որոնք ընդգրկում են երկրի սոցիալական, տնտեսական, բնապահպանական, ծառայությունների, կառավարման որակի և այլ ոլորտները:

<sup>11</sup> Սողելները կառուցված են «Կյանքի որակը Հայաստանում 2016» հետազոտության տվյալների շտեմարանի խորացված վերլուծությամբ:

3. **Իրավական պաշտպանվածության գործոն:** Եթե մարդիկ համարում են, որ իրենք լիովին պաշտպանված են իրավական ոլորտում, ապա դա ունակ է ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը նվազեցնել 16%-ով: Այս աշխարհայացքային համալիրը համախմբում է մարդկանց ընկալումները, որ դատարանում կարող է հանդիպել անարդարության, պետությունը կամ որևէ հզոր անձ կարող է անօրինական կերպով խլել իր ունեցվածքը, ոստիկանությունը կարող է անօրինական գործողություններ կատարել իր նկատմամբ և այլն:
4. **Քաղաքական լարվածության գործոն:** Եթե մարդիկ համարում են, որ Հայաստանում քաղաքական լարվածություն չկա, դա կարող է ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը նվազեցնել 18%-ով: Քաղաքական լարվածությունը ներառում է՝ արդյո՞ք մարդիկ ընկալում են լարվածություն պետության և ժողովրդի միջև, քաղաքական կուսակցությունների միջև, իշխանությունների և ընդդիմության միջև:
5. **Քաղաքացիական մշակույթի զարգացածության մակարդակ:** Եթե հասարակության բոլոր անդամները պատկանեին քաղաքացիական մշակույթին, ապա Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը կնվազեր 16%-ով: Քաղաքացիական մշակույթին պատկանող անձանց բնութագրերից են հետաքրքրվածությունը երկրի ներքին և արտաքրին քաղաքականությամբ, քաղաքական կոմպետենտության զգացողությունը, քաղաքական սուբյեկտության զգացողությունը և մասնակցությունը քաղաքական գործընթացներին:
6. **Քաղաքացիական մասնակցության ինտենսիվությունը** ունակ է նվազեցնել ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը 30%-ով: Քաղաքացիական մասնակցության ինտենսիվությունը

շափկում է մարդու մասնակցության աստիճանով տարբեր քաղաքացիական գործողությունների, օրինակ՝ շփումներ պաշտոնյաների հետ հանրային հարցերի կապակցությամբ, մասնակցություն հանրային միջոցառումներին, մասնակցություն հասարակական կազմակերպություններին, մասնակցություն քաղաքացիական շարժումներին, կամավորական աշխատանք և այլն:

7. **Քաղաքական մասնակցության ինտենսիվությունը** քաղաքացիական մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկն է, որն ունի ինքնուրույն՝ քաղաքացիական մշակույթի այլ բաղադրիչների հետ թույլ շաղկապված ազդեցություն: Այն ունակ է նվազեցնելու ընդմիշտ մեկնելու դիրքորոշումները 26%-ով: Քաղաքական մասնակցությունը ենթադրում է մասնակցություն քաղաքական կուսակցություններին և տարբեր քաղաքական միջոցառումների և գործընթացների:
8. **Դասական մշակույթում ընդգրկվածության աստիճանն** ունակ է նվազեցնելու ընդմիշտ մեկնելու հասարակական դիրքորոշումները 26%-ով: Դասական մշակույթում ընդգրկվածությունն ընդհանրացված կերպով արտացոլում է այն շափը, թե որքանով է անձը ծանոթ հայկական և դասական մշակութային արժեքներին:

Նկարագրված գործոններից երեքը՝ Հայաստանի վիճակից ընդհանուր բավարարվածությունը, քաղաքական լարվածության գործոնը և դասական մշակույթում ընդգրկվածության աստիճանը, ունեն կարևոր առանձնահատկություն, որը բնակչության արտահոսքի խնդիրը շաղկապում է մեկ այլ կրիտիկական ենթակառուցվածքի վիճակի հետ: Խոսքը վերաբերում է ՀՀ-ի *տեղեկատվական դաշտի բովանդակությանը* (տե՛ս 5.1): Սո-

ցիոլոգիական հետազոտությունները բացահայտում են բնակչության արտահոսքի վրա ինֆորմացիոն դաշտի բովանդակության ազդեցության մեխանիզմը:

Խնդիրն այն է, որ Հայաստանի ընդհանուր վիճակի և ՀՀ-ում քաղաքական լարվածության մասին տեղեկությունները բնակչությունը ստանում է ՀՀ տեղեկատվական դաշտից, իիմնականում հեռուստատեսությունից և ինտերնետից: Իսկ ՀՀ-ում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանում մարդկանց մեծ մասն իր ընտանիքի տնտեսական վիճակը գնահատում է ավելի բարձր, քան Հայաստանի տնտեսական վիճակը: Այդ անհամապատասխանությունը բացատրող գործոններից է այն, որ ՀՀ տեղեկատվական դաշտի բովանդակության նշանակալի մասը Հայաստանում իրավիճակը գնահատում է ավելի մութ երանգներով, քան կա իրականում, ինչն առաջացնում է ապագայի նկատմամբ վատատեսություն և խթանում է բնակչության ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը: Նույնը վերաբերում է նաև տեղեկատվական դաշտի բովանդակությունում քաղաքական կոնֆլիկտների վերաբերյալ տեսահոլովակների և լրատվության գերառատությանը: Անավարտ պատերազմական վիճակում գտնվող երկրում քաղաքական հարատև անկայունության ինտենսիվ արտահայտությունն ինֆորմացիոն դաշտում խթանում է ընդմիշտ մեկնելու դիրքորոշումների աճը և վերարտադրությունը:

Թե ինչու է դասական մշակույթում դաստիարակությունը նվազեցնում արտագաղթը, ակնհայտ է՝ ցանկացած, այդ թվում նաև ազգային դասական մշակույթում հայրենասիրությունն ամենազերակա արժեքների շարքում է: Հետևաբար, որքան ավելի խոր է անձն ընդգրկված ազգային մշակույթում, այնքան նրա համար ավելի բարձր է Հայրենիքը որպես ազգային արժեք:

Դասական մշակույթում մարդու ընդգրկվածությունը պայմանավորված է երկու հիմնական գործոնով. 1. ինչ չափով և արդյունավետությամբ է ազգային դասական մշակույթը փոխանցվում սերունդներին կրթական համակարգում, հատկապես հանրակրթական դպրոցում, 2. ինչ չափով և ինչպես է ազգային և համաշխարհային դասական մշակույթն ընդգրկված ՀՀ տեղեկատվական դաշտում:

### *6.5 Տէխնոլոգիական զարգացումը որպես ժողովրդագրական վիճակի շոկման հիմնարար գործոն*

Վերը դիտարկված՝ ՀՀ-ից բնակչության արտահոսքը պայմանավորող մակրոտնտեսական գործոնների, բնակչության տնտեսական վիճակի և հասարակության շրջանում առկա աշխարհայացքային համալիրների միջև վիճակագրական և պատճառահետևանքային կապերի վերլուծությունը թույլ է տվել դրանք միավորել փոխառաջակցված մոդելում, որը պարզորոշ կերպով արտապատկերում է այն ուղիները և մեխանիզմները, որոնցով բարձրտեխնոլոգիական տնտեսությունը բարենպաստ ազդեցություն է գործում բնակչության մեխանիկական շարժի վրա՝ նվազեցնում է բնակչության արտահոսքը կամ առաջացնում բնակչության ներկությունը: Մոդելը ներկայացված է Նկար 1-ում:

Մոդելի հանգուցային կոնցեպտներն (գագաթներ) են «Տէխնոլոգիական տնտեսության զարգացումը» և «Բնակչության արտահոսքի նվազումը»: Մոդելում դրանք տրված են կարմիր գույնով: Մոդելի իմաստն այն է, որ այստեղ արտապատկերված է, թե ինչպես է «տեխնոլոգիական զարգացումը» տարբեր ուղիներով նվազեցնում «բնակչության արտահոսքը»:

Մոդելում վերը դիտարկված մակրոտնտեսական, միկրոտնտեսական և աշխարհայացքային գործոնները ներկայացված

են երկնագույն զագաթներով։ Դրանցից յուրաքանչյուրն ուղղորդված կապերի՝ սլաքների միջոցով ուղղակիորեն կամ միջնորդավորված և տարբեր ուղիներով հասանելի է «Տէխնոլոգիական տնտեսության զարգացում» զագաթից, այսինքն՝ ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով բխում է տեխնոլոգիական զարգացումից։ Մյուս կողմից, երկնագույն զագաթներից յուրաքանչյուրը սլաքներով ուղղակիորեն կամ միջնորդավորված, տարբեր ուղիներով կապված է «Բնակչության արտահոսքի նվազում» զագաթի հետ, այսինքն՝ նվազեցնում են բնակչության արտահոսքը։


Մոդելի վերևի մասում տրված է կանաչ զագաթներով ներկայացված և ուժեղ կապակցված ենթամոդել, որը հիմնարար նշանակություն ունի Հայաստանի տնտեսության բարձրտեխնոլոգիական զարգացման հարցում։ Այդ ենթամոդելի հիմքում է «Քարձրտեխնոլոգիական զարգացման հեռանկարային պլանավորում» գործողությունը, որը կապված է կամ, ավելի շուտ, ներառում է «Կրթական ոլորտի հեռանկարային պլանավորում», «Ֆունդամենտալ գիտության հեռանկարային պլանավորում» և «Կիրառական գիտությունների հեռանկարային պլանավորում» զագաթները։ Այդ չորս «պլանավորման» զագաթներից են բխում կոնկրետ ռազմավարություններ և գործողություններ արտապատկերող զագաթները՝ «Գիտության զարգացումը» և «Կրթական ոլորտի զարգացումը» զագաթները։

Ստորև կդիտարկենք մոդելի բնակչության արտահոսքին վերաբերող հատվածը։

Բարձրտեխնոլոգիական տնտեսության զարգացումն ուղղակիորեն նպաստում է «որակյալ մասնագետների պահանջարկի աճին», «աշխատավարձերի աճին» և «փոքր բիզնեսի անկախության աճին», որոնցից յուրաքանչյուրը «բարեկեցության աճի» միջոցով նվազեցնում է բնակչության արտահոսքը։

## Նկար 1

### Բարձրտեխնոլոգիական տնտեսության և բնակչության արտահոսքի կայի մոդելը



Եթե առաջին երեք դրույթներն ակնհայտ են, ապա երրորդն անհրաժեշտ է մեկնաբանել: Բարձրտեխնոլոգիական ոլորտների գործարարները կապես տարբերվում են մանր առևտորի, գեղեցկության կենտրոնների և համանման ոլորտների գործարարնե-

րից, ում հնարավոր է հեշտությամբ ներքաշել կոռուպցիոն գործարք, քանի որ այդ ոլորտների ցածր արտադրողականությունը նրանց «ստիպում» է խուսափել հարկերից: Բարձրտեխնոլոգիական ոլորտներում արտադրողականությունն անհամեմատ ավելի բարձր է, գործարարների բիզնես մշակույթն՝ ավելի կատարելագործված, իսկ տնտեսական օրենսդրության իմացությունն՝ ավելի կատարյալ: Նրանց դժվար է «սարսափեցնել» և դրա միջոցով դրդել կոռուպցիոն գործարքների»:

**«Որակյալ մասնագետների պահանջարկի աճ», «աշխատավարձերի աճ», «փոքր բիզնեսի անկախության աճ» գործոնները, «մշակութային մակարդակի աճ» գործոնի հետ համատեղ, նաև մեկ այլ ուղիղով՝ «երկրի ընդհանուր վիճակի ընկալումը» բարելավելով, նվազեցնում են բնակչության արտահոսքը:**

**«Փոքր բիզնեսի անկախության աճը» և «բնակչության բարեկեցության աճը» բարձրացնում են հասարակության լայն շրջանակների «իրավական պաշտպանվածության ընկալումը», որը հանգուցային գործոն է, քանի որ երեք անուղղակի և մեկ անմիջական ուղիներով նվազեցնում է բնակչության արտահոսքը՝ բարձրացնելով «քաղաքացիական ակտիվությունը», «քաղաքական ակտիվությունը» և, դրանց հետ միասին, նպաստում է նաև «էկեկտորալ կոռուպցիայի նվազմանը»:**

Նշենք, որ «քաղաքացիական ակտիվությունը», «քաղաքական ակտիվությունը», «էկեկտորալ կոռուպցիայի նվազումը» և «կոռուպցիայի նվազումը» համարժեք են քաղաքացիական մշակույթի զարգացմանը:

Համանման կերպով հնարավոր է հեշտությամբ տեսնել բնակչության արտահոսքի նվազեցման մոդելում առկա մնացած ուղիները:

## 6.6 Եզրակացություններ և առաջարկներ

Առաջնահերթություն է ձերբագատվել արդեն 20 տարի արևմտյան փորձագետների կողմից Հայաստանում շրջանառության մեջ դրված այն մոլորությունից, որ «զարգանալու համար պետք է հաղթահարել կոռուպցիան: Իրականությունը ճիշտ հակառակն է՝ կոռուպցիան հաղթահարվում է զարգացման արդյունքում: Իսկ ավելի ճշգրիտ՝ զարգացումն ու կոռուպցիայի հաղթահարումը կապված են դրական հետադարձ կապով՝ զարգացումը նպաստում է կոռուպցիայի հաղթահարմանը, իսկ կոռուպցիայի հաղթահարումը՝ զարգացմանը: Սակայն առաջին իմպուլսը տալիս է զարգացումը:

ՀՀ բնակչության արտահոսքի նվազեցման և ներհոսքի կազմավորման համար անհրաժեշտ են հետևյալ տնտեսական նպատակային ցուցանիշները: Միգրացիոն բացասական բալանսը 0-ական դարձնելու համար Հայաստանում անհրաժեշտ է ՀՆԱ տարեկան 13% հավելած: Որպեսզի 2040թ. Հայաստանի բնակչությունը հասնի 4 միլիոն մարդու, բնական վերարտադրության ներկայիս մակարդակի պահպանման դեպքում անհրաժեշտ է ՀՆԱ տարեկան 22% հավելած, միջին աշխատավարձի բարձրացում մինչև ամսական 240,000 դրամ (առձեռն՝ 180,000 դրամ), ստանդարտ ընտանիքի (4 անձից կազմված) ամսական եկամուտների մակարդակի բարձրացում մինչև 360,000 դրամ (ներկայում կազմում է 204,000 դրամ):

Բնակչության արտահոսքի խնդրի լուծման համար աշխատատեղերի ստեղծումը աշխատատար և ցածր արտադրողականությամբ տնտեսության ճյուղերում կարածուն և միշնաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է, սակայն ռազմավարական հեռանկարում՝ միանգամայն անբավարար: Անհրաժեշտ է զբաղվածության կառուցվածքում ավելացնել բարձրտեխնոլոգիական

նիշաներում գտնվող աշխատատեղերի քանակը: Դրանք են ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, այլև, մասնավորապես՝ ինժեներինգը, միկրոէլեկտրոնիկան, ռադիոտեխնիկան, կառավարման համակարգերը, կենսատեխնոլոգիաները, փոքր քիմիան, սարքաշինությունը, նյութագիտությունը:

Սոցիալ-մշակութային ոլորտում անհրաժեշտ է.

- Հասարակական ընկալումներում բարելավել Հայաստանի և պետական կառավարման մարմինների, հատկապես իրավական համակարգի կերպարները:
- Նվազեցնել քաղաքական լարվածությունը և դրա հասարակական ընկալումները:
- Նվազեցնել սոցիալական անհավասարությունը և դրա հասարակական ընկալումները:
- Նպաստել պետության նկատմամբ հարգանքի զգացում կրող քաղաքացիական հասարակության կազմավորմանը:
- Կրթական ամբողջ համակարգում և տեղեկատվական դաշտում ինտենսիվորեն զարգացնել ազգային և համաշխարհային դասական մշակույթի բաղադրիչը:
- Նպաստել ՀՀ-ի վերաբերյալ հայկական միջավայրում օբյեկտիվ և ստուգված տեղեկությունների տարածմանը, ընդ որում՝ առանց կոծկելու բացասական երևույթները: Այս հարցում ընդգրկել ավանդական արժեհամակարգը տարածող հասարակական կազմակերպություններին և ոչ ֆորմալ խմբերին և նվազեցնել օտարերկրյա ֆինանսավորմամբ գործող կազմակերպությունների դերակատարումը:

\*\*\*

Ինչպես հետևում է այս և նախորդ բաժիններում ներկայացված վերլուծություններից, ՀՀ-ում մարդկային կենսագործունեության

մի շարք ոլորտներ կրիտիկական նշանակություն են ձեռք բերել: Ստեղծված իրավիճակում լրացնելու նպատակով, բացի սեփական մոտեցումներից, օգտակար է նաև ծանոթանալ այլ երկրներում նմանատիպ խնդիրները հաղթահարելու համար կիրառվող ռազմավարություններին: Այդ իսկ պատճառով հաշորդ բաժնում համառոտ կղիտարկվեն որոշ երկրներում կիրառվող մոտեցումները կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգությունը և զարգացումը ապահովելու նպատակով:

### Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն (հետազոտական ծրագիր), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԿ Բնակչության հիմնադրամ, «Նորավանք» ԳՎՀ, Երևան, 2014թ., 218 էջ:
2. Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին. Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2018:
3. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքները: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013:
4. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2017 հունվար – ապրիլին. Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017:
5. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 1940-2000, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2002:
6. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2004, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2004:
7. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2005, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2005:
8. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2006, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2006:
9. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2007, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2007:
10. ՀՀ ժողովրդագրական ժողովածու 2008, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2008:

11. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2009, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2009:
12. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2010, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2010:
13. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2011, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2011:
14. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2012, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2012:
15. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2013, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2013:
16. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2014, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2014:
17. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2015, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2015:
18. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2016, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2016:
19. ՀՀ Ժողովրդագրական ժողովածու 2017, ՀՀ Ազգային վիճակագրական ժողովածու, Երևան, 2017:
20. Հայաստանում գործազրկության մակարդակի ցուցանիշները, <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>,
21. Հայաստանի ՀՆԱ տարեկան հավելածի ցուցանիշները, <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM>
22. Հայաստանի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>
23. Մանուկյան Ա., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2012», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր), Երևան, 2013:
24. Մանուկյան Ա., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2012», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր), Երևան, 2014:
25. Մանուկյան Ա., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2012», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր), Երևան, 2015:
26. Մանուկյան Ա., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2012», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր), Երևան, 2016:
27. Մանուկյան Ա., «Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2016», ՀՀ կառավարության պատվերով (ձեռագիր), Երևան, 2017:
28. Մանուկյան Ա., «Տնային տնտեսությունների պարտքերի ուսումնասիրություն, 2017», ՀՀ Կենտրոնական բանկ (ձեռագիր):
29. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ «Կովկասյան բարոմետր 2017» տվյալների շտեմարան, <http://caucasusbarometer.org/en/downloads/>:

## **7. ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ. ՈՐՈՉ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԲ**

### **7.1 Ենթակառուցվածք. հասկացությունը, սահմանումները և տիպերը**

Ենթակառուցվածք (*инфраструктура, infrastructure*) եզրը ծագում է հին հունարեն «անդր/ենթա» և «կառուցվածք» բառերի համակցությունից, իսկ մասնագիտական շրջանակներում այն սկսեց կիրառվել 20-րդ դարում։ Եզրույթի լայն բովանդակային մեկնությունը, ինչպես նաև տերմինի համատեքստային կիրառման փորձը ենթադրում է ժամանակակից հասարակության և պետության՝ որպես համակարգի անընդհատ բարդացող կենսապահովման միջավայրի գոյությունը։ Ենթակառուցվածքի ներքո հասկանում են սպասարկող կառույցների և օբյեկտների մի համալիր ամբողջություն, որը տվյալ համակարգի ֆունկցիոնալության և կենսունակությունն ապահովող բաղադրիչ մասն է հանդիսանում։ Անգլերեն լեզվում այն սկսեց գործածվել 1920-28թթ. և ի սկզբանե կիրառվում էր ռազմական ոլորտի պարագայում՝ որպես զինված ուժերի գործունեությանն օժանդակող/ապահովող կառույցների (շինությունների) փոխկապակցված միասնականություն։ Ռուսերենում ենթակառուցվածք եզրն ավելի հաճախ գործածվում և ընկալվում է իրեն կառավարման համակարգերի, կապի և տարաքնույթ հաստատությունների և ձեռնարկությունների ամբողջություն, որը կոչված է ապահովե-

լու հասարակության (կամ հասարակության ինչ-որ մի հատվածի) կենսագործունեությունը: Մասնագետների կարծիքով՝ գործնականում ենթակառուցվածքն ավելի դյուրին է մատնանշել, քան նկարագրել այն [1, p. 50]:

Լայն իմաստով՝ բոլոր այն կառույցների և ցանցերի ամբողջությունը, որն անհրաժեշտ ծառայություններ է մատակարարում զանազան բնագավառներին և տարբեր հանրություններին, ու նպաստում է ազգի/պետության ընդհանուր զարգացմանը, սահմանվում է որպես ենթակառուցվածք:

Ենթակառուցվածքները դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների (օրինակ՝ ընդհանուրական առումով դրանք կարող են լինել նյութական և սոցիալական), բայց առավել կարևորվում են տեղեկատվական ենթակառուցվածքները (տեղեկատվության կազմակերպական կառույցների (ենթա)համակարգեր), սոցիալական ենթակառուցվածքները (ոլորտների և ձեռնարկությունների ամբողջություն, որն ապահովում է հասարակության կենսագործունեությունը. կրթություն, գիտություն, առողջապահություն և այլն), տրանսպորտային, ռազմական, ինովացիոն և այլ ենթակառուցվածքներ [1, p. 51]:

Հայտնի է, որ տնտեսական աճն ու ենթակառուցվածքը սերտորեն փոխկապված են և ներազբում են միմյանց վրա: Օրինակ՝ 1% ենթակառուցվածքային հավելումը բոլոր երկրների դեպքում բերում է ՀՆԱ 1% աճի [2]:

**Կրիտիկական ենթակառուցվածք. տիպեր և փոխկախվածության տեսակներ.** Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանվածության ապահովումը որպես այդպիսին արտացոլում է ազգային անվտանգության ապահովման մի շարք չափումներ: Դրանք տարբերվում են անմիջական կամ (արտաքին)

օտարերկրյա ուղղակի սպառնալիքների՝ արդեն ավանդական դարձած պաշտպանության կամ անմիջական հակադարձման տրամաբանությունից՝ թե՛ հայեցակարգային և թե՛ գործնական մեխանիզմների օգտագործման առումներով։ Կրիտիկական ենթակառուցվածքների պարագայում առաջին հերթին կարևորվում է վերջիններիս «դիմադրողականության» բնութագրիչը, որն, ի թիվս այլոց, ենթադրում է հարձակման/վնասի պարագայում՝ ֆունկցիոնալության հարաբերականորեն արագ վերականգնում, վնասի նվազեցման մեխանիզմների առկայություն, այլընտրանքային միջոցների և ռեսուրսների օգնությամբ՝ վերականգնման նոր եղանակների ներդրում։ Ի տարբերություն նախորդ դարաշրջանի, երբ հիմնական սպառնալիքներն ու վտանգները կապված էին արտաքին դերակատարների, առաջին հերթին՝ պետական միավորներից ծագող ազրեսիվ և նախահարձակ նկրտումների հետ, ժամանակակից սպառնալիքները պարունակում են «ավելի տարրալուծված և անորոշ բնույթի ռիսկեր, որոնց առանձնահատկությունն է թշնամու հստակ ահստորոշման դժվարությունը»<sup>1</sup>։ Կրիտիկական ենթակառուցվածքները՝ որպես ժամանակակից պետության և հասարակության անվտանգային սպեկտրի կարևորագույն բաղադրիչներ, հայտնվել են հենց այդ կարգի ռիսկային համադրույթի թիրախում, երբ հակառակորդի միանշանակ կամ անմիջական հավաստանշումը վերածվել է բավականաշափ բարդ գործիք։

Օրինակ, ԱՄՆ-ում, ի տարբերություն «սովորական» կամ «ավանդական» ենթակառուցվածքների՝ կրիտիկական նշանակություն կրող ենթակառուցվածք է համարվում «փոխկախված

---

<sup>1</sup> McAveLty, ‘Critical Information Infrastructure: Vulnerabilities, Threats and Responses’, UNIDIR Disarmament Forum, no. 3, 2007, pp. 15–22.

ցանցերի և համակարգերի շրջանակը, որը ներառում է որոշակի ինդուստրիալ միավորներ, ինստիտուտներ (ներառյալ՝ մարդկանց ու ընթացակարգեր) և բաշխիչ կարողություններով օժտված ակտիվներ, որոնք ապահովում են ինչպես ԱՄՆ պաշտպանության և տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից խիստ էական ապրանքների և ծառայությունների անխափան մատակարարումը, այնպես էլ կառավարության և ողջ հասարակության գործունեության հենքը<sup>2</sup>:

ԳԴՀ-ն նույնպես հայեցակարգային և օրենսդրական մակարդակով սահմանում է կրիտիկական ենթակառուցվածքները՝ «կազմակերպական և ֆիզիկական կառույցներ, որոնք այն աստիճան կենսական կարևորություն ունեն հասարակության և տնտեսության համար, որ նրանց խաթարումը կամ դեգրադացիան կարող է հանգեցնել (...) հանրային անվտանգության և ապահովության նշանակալի վատթարացման, կամ այլ դրամատիկ հետևանքների» [3, p. 4]:

ԱՄՆ-ում առաջին պաշտոնական փորձը՝ սահմանելու կրիտիկական ենթակառուցվածքներն ու ըմբռնելու դրանց կարևորության ընդհանուր շրջանակն ու պարամետրերը, վերագրվում է 1997թ. հոկտեմբերին Բ.Քլինթոնի նախագահական վարչակազմի կողմից ստեղծված Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության նախագահական հանձնաժողովին (PCCIP): Առաջին հերթին հստակեցվեցին այն 8 բնագավառները (սեկտորները), որոնց պարագայում հանձնաժողովը մատնանշեց, թե վերջիններիս «անվտանգությունը, հարատևությունն ու

<sup>2</sup> Presidential Policy Directive -- Critical Infrastructure Security and Resilience, PRESIDENTIAL POLICY DIRECTIVE/PPD-21, Feb. 12, 2013,  
<https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2013/02/12/presidential-policy-directive-critical-infrastructure-security-and-resil>

հասանելիությունն ապահովելոց զատ չկան էլ ավելի կարևոր և հրատապ գերակայություններ»<sup>3</sup>: Այդ ութ բնագավառներն էին.

- հեռուստահաղորդակցությունը,
- էլեկտրահամակարգը,
- բնական գազն ու նավթը,
- բանկային ոլորտն ու ֆինանսները,
- տրանսպորտային համակարգը,
- ջրամատակարարման համակարգը,
- կառավարության գործունեությունը,
- արտակարգ իրավիճակների ծառայությունը:

Հետագայում, արդեն Ջ.Բուշի և Բ.Օբամայի վարչակազմերի օրոք, բնագավառների թիվն ու ընդգրկումն ընդլայնվեցին. ներկայում 16 սեկտոր է ընդգրկված ԱՄՆ կրիտիկական ենթակառուցվածքների մեջ. ի հավելումն նախորդների, ցուցակում հայտնվել են քիմիական արտադրության ոլորտը, կրիտիկական նշանակության արտադրանքը, միջուկային ռեակտորներն ու վառելիքը (Էներգետիկ ոլորտից զատ), պաշտպանության ինդուստրիալ ակտիվները, առողջապահությունը, սննդամթերքն ու գյուղատնտեսությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները<sup>4</sup>:

Պաշտպանության և անվտանգային հարցերով ամերիկյան հետազոտողները մատնանշում են, որ բոլոր վերոհիշյալ (կրիտիկական) ենթակառուցվածքներն ըստ էության փոխակերպվող համակարգեր են այն առումով, որ վերջիններս օժտված են ինչպես «ուսանելու», այնպես էլ որոշակի «համակարգային հիշողություն» ձևավորելու կարողություններով: Վերջիններս՝

<sup>3</sup> President's Commission on Critical Infrastructure Protection, Critical Foundations: Protecting America's Infrastructures (1997), [www.ciao.org](http://www.ciao.org)

<sup>4</sup> Department of Homeland Security: <https://www.dhs.gov/critical-infrastructure-sectors>

որպես համալիր և բարդ համակարգեր, բաղադրիչների սովորական հանրագումար չեն, այլ բարդ երևույթ են՝ օժտված ինքնակենսունակության ապահովման որոշակի ալգորիթմներով, որոնց հիմքում կարող է ընկած լինել ինչպես մարդկային «գործունը», այնպես էլ իներցիոն բնույթի հանգամանքներ, որոնք կարող են պայմանավորված լինել արհեստական ինտելեկտի գործարկմամբ:

**Փոխկախվածության գործոնը և փոխկախվածության տիպերը.** Իբրև համալիր բնույթի երևույթ՝ կրիտիկական ենթակառուցվածքների կարևորագույն բնութագրիչներից են փոխկապվածությունը («համակարգերի համակարգ», «*system of systems*») և փոխկախվածությունը: Առավել պարզ՝ երկկողմանի կախվածությունը ենթադրում է մի իրողություն, երբ երկու ենթակառուցվածքներ փոխկախված են միմյանցից: Գործնականում, սակայն, նման կարգի փոխկախվածություններն էապես բարդացնում են ողջ համակարգի գործունեությունը: Առանձնացնում են փոխկախվածությունների չորս չափում՝ ֆիզիկական, կիրեռ, աշխարհագրական և տրամաբանական փոխկախվածություններ [4, քր. 14-16]:

Ենթակառուցվածքների ֆիզիկական փոխկախվածության ներքո հասկանում են մի իրավիճակ, երբ մեկ ենթակառուցվածքի արտադրանքը/վերջնարդյունքը հանդիսանում է մեկ այլ ենթակառուցվածքի գործունեության համար անհրաժեշտ ուսուրս, որի բացակայության պարագայում վերջինը չի կարող ապահովել իր արտադրանքը/վերջնարդյունքը: Օրինակ, երկաթզիծն ու ջերմակեկտրակայանը ֆիզիկական փոխկախվածության մեջ են գտնվում միմյանցից: Երկթագծի միջոցով մատակարարվում են ածուխն և անհրաժեշտ սարքավորումներ ջեր-

մակելտրակայանի կողմից էլեկտրաէներգիայի գեներացման համար, բայց երկաթզիծն իր հերթին կախված է էլեկտրանքից (երկաթզային ազդանշաններ և այլն՝ իր անխափան աշխատանքն ապահովելու համար:

Կիբեռփոխկախվածությունը հարաբերականորեն նոր երևույթ է. այն, առաջին հերթին, վերջին տասնամյակների ընթացքում համատարած համակարգչայնացման հետևանք է: Ենթակառուցվածքը կիբեռկախվածության մեջ է գտնվում, երբ վերջինիս գործունեությունը կախված է տեղեկատվական ենթակառուցվածքի միջոցով տեղեկատվության փոխանցումից: Հայտնի է, որ շատ համակարգեր վերահսկվում, կարգավորվում և կառավարվում են ավտոմատացված տեղեկատվական մեխանիզմների միջոցով. համապատասխանաբար՝ տեղեկատվական ենթակառուցվածքի արտադրանքից (ինֆորմացիա) է կախված վյուս ենթակառուցվածքների (այդ թվում նաև կրիտիկական) գործունեությունը: Այս իմաստով, տեղեկատվական հոսքերը վերածվում են ենթակառուցվածքների միջև փոխանցվող/փոխանակվող հիմնական «ապրանքի»:

Աշխարհագրական փոխկախվածության չափումը ենթադրում է տեղայնացմամբ պայմանավորված մի իրավիճակ, երբ տարբեր ենթակառուցվածքներում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են փոփոխությունների մեջ այլ ենթակառուցվածքում, որի պատճառն է տարածական մերձավորությունը: Օրինակ, կամուրջներով անցնող էլեկտրական, տեղեկատվական, ֆիբերօպտիկական կամ հաղորդակցության այլ մալուխները ֆիզիկապես կամ կիբեռկախվածության առումով ուղղակի կապի մեջ չեն գտնվում կամուրջներով անցնող տրանսպորտային հոսքերի հետ: Սակայն տրանսպորտային

խափանումը կարող է հանգեցնել նույն կամրջի միջոցով իրականացվող կոմունիկացիոն հոսքերի խափանման՝ հաշվի առնելով երկու տիպի ենթակառուցվածքների աշխարհագրական/տարածական մոտիկության հանգամանքը:

Տրամաբանական փոխկախվածությունը վերահսկման համադրույթի հետ կապված երևույթ է, երբ մեկ ենթակառուցվածքի բաղադրիչը կապված է մեկ այլ ենթակառուցվածքային բաղադրիչի հետ՝ առանց որևէ ֆիզիկական, կիրեռ- կամ աշխարհագրական մեկտեղման: Այսպես, ապակենտրոնացման քաղաքականությունը կամ մրցակցության խթանմանը միտված քայլերը էներգետիկայի ոլորտում (օրինակ՝ էլեկտրականության տարանջատումը Էկեկտրականություն գեներացնող հզորություններից) կարող է բերել լուրջ խնդիրների ֆինանսական համակարգում՝ հանգեցնելով ներդրումային քաղաքականության փոփոխությունների (թե՝ դրական, թե՝ բացասական): Ենթակառուցվածքների տրամաբանական փոխկախվածության մեկ այլ օրինակ՝ ամառային ամիսներին կամ հանգստյան ժամանակահատվածում ամերիկյան բնագալցակայաններում կարող են մեծ հերթեր առաջանալ, որոնք, իրենց հերթին, հանգեցնում են տրանսպորտային խցանումների: Երկու ենթակառուցվածքները փոխկապված չեն միմյանց հետ ոչ ֆիզիկապես, ոչ կիրեռ- և ոչ էլ աշխարհագրական կապերով, բայց պայմանավորված է ամերիկյան վարորդների կողեկտիվ որոշմամբ [4, pp. 15-16]:

### 7.1 Ենթագլխի գրականություն

1. *Kumari A.K. Sharma, Infrastructure financing and development: A bibliometric review, in International Journal of Critical Infrastructure Protection, N 16, 2017.*

2. World Bank, World Development Report, Infrastructure for Development, Washington, DC, 1994.
3. National Strategy for Critical Infrastructure Protection (CIP Strategy), Federal Republic of Germany, Federal Ministry of the Interior, 17th June 2009.
4. *Rinaldi M, J. Peerenboom, T.K.Kelly*, Critical Infrastructure Interdependences: Identifying, Understanding, and Analyzing, IEEE Control System Magazine, December 2001.

## **7.2 Կրիտիկական ենթակառուցվածքները ԱՄՆ ազգային անվտանգության և համաշխարհային ռիսկերի գնահատման գեկույցներում**

Կրիտիկական ենթակառուցվածքների՝ ներքին ու արտաքին բնույթի սպառնալիքներից խոցելիության նվազեցման հիմնահարցերը պաշտոնապես հայտնվեցին ամերիկյան անվտանգության և քաղաքականության մշակողների տեսադաշտում դեռևս 1990-ական թթ.: Պաշտոնապես կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման ինչպես դրկտրինալ հիմնադրույթները, այնպես էլ օպերացիոնալ արձագանքման ձևաչափերը սկսեցին ներառվել ԱՄՆ անվտանգային հանրության ամենամյա գեկույցներում (առանձին ենթաքաժիններով) 2010-ական թթ. ի վեր<sup>5</sup>: Հնդ որում, կրիտիկական ենթակառուցվածքների՝ իբրև համապարփակ երևույթի անվտանգության ապահովման թե՝ հրատապության և թե՝ ենթակառուցվածքնե-

<sup>5</sup> ԱՄՆ ԿՀՎ տնօրենը յուրաքանչյուր տարեսկզբին ԱՄՆ Կոնգրեսին է ներկայացնում ամերիկյան հետախուզական հանրության (տարբեր ծառայությունների և գործակալությունների մասնակցությամբ պատրաստված) ընթացիկ տարվա անվտանգության սպառնալիքների գլորալ գնահատականների գեկույցը: Փաստաթուղթն ուշագրավ է այն առումով, որ համապարփակ ձևով ներկայացնում է անվտանգության ոլորտում աշխատող տարբեր մարմինների կողմից «ազրեզացված» գնահատականները: Զեկույցների հանրության համար բաց տեքստերը հասանելի են [www.dna.gov](http://www.dna.gov) կայքում:

րին վերաբերող տեղեկատվության ծավալները տարեցտարի ընդլայնվում են: Մասնավորապես, 2011թ. գեկույցում գլոբալ սպառնալիքներն աստիճանակարգված էին հետևյալ կերպ. առաջին հերթին մատնանշվում էր ահարեկչության վտանգն իր տարածաշրջանային բոլոր չափումներով, այնուհետև՝ զանգվածային բնաջնջման զենքի և տեխնոլոգիաների տարածումը<sup>6</sup>: Կրիտիկական ենթակառուցվածքները հիշատակվում էին զուտ «ռազմական կարողությունների ինստիտուցիոնալացման» համատեքստում՝ ելնելով այն հանգամանքից, որ ռազմական ոլորտի մատնանշված միտումը խոցելի է դարձնում, ըստ ամերիկյան հետախուզական հանրության, կրիտիկական ենթակառուցվածքների ողջ համալիրը:

2012թ. հերթական գեկույցում կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիության հետ կապված հիմնախնդիրներն ու անվտանգության ապահովման հնարավոր լուծումները գլխավորապես ներկայացված էին կիբեռսպառնալիքների՝ ռազմավարական նշանակության պրոբլեմի վերածման համատեքստում: Մասնավորապես՝ մատնանշվում էր, որ «կիբեռսպառնալիքները ազգային և տնտեսական անվտանգության կրիտիկական հիմնախնդիր են դարձել՝ նկատի ունենալով տեղեկատվական տեխնոլոգիաների հարատե առաջընթացն ու կախվածության աստիճանի աճը՝ ժամանակակից հասարակության բոլոր հատվածներում»<sup>7</sup>: Համանման մոտեցում էր գերակայում նաև 2013թ. գեկույցում, որում կիբեռսպառնալիքներին և կրիտիկա-

<sup>6</sup>U.S. Intelligence Community: Worldwide Threat Assessment, J.R.Clapper, March 10, 2011, pp. 1-6.

<sup>7</sup>Unclassified Statement for the Record on the Worldwide Threat Assessment of the US Intelligence Community for the Senate Select Committee on Intelligence, J.R.Clapper, 31 January, 2012, p. 7. [https://www.dni.gov/files/documents/Newsroom/Testimonies/20120131\\_testimony\\_ata.pdf](https://www.dni.gov/files/documents/Newsroom/Testimonies/20120131_testimony_ata.pdf)

կան ենթակառուցվածքներին վերաբերող ենթաբաժինը հայտնվել էր արդեն առաջին էջի վրա. «մենք գտնում ենք, որ ԱՄՆ կրիտիկական ենթակառուցվածքների համակարգի վրա լայնածավալ կիրեռհարձակման հեռավոր հնարավորություն գոյություն ունի, որը կհանգեցնի ծառայությունների երկարաժամկետ և լայնածավալ խաթարմանը»<sup>8</sup>:

2017թ. զեկույցում ամերիկյան անվտանգության խնդիրներով գրադարձ կիրածագիտական հանրությունն արդեն ավելի առարկայական և հասցեական էր իր գնահատականների մեջ. «Ռուսաստանը լիարժեք կիրեռողերակատար է, որը կշարունակի մնալ էական սպառնալիք ԱՄՆ կառավարության, ռազմական, դիվանագիտական, առևտրային և կրիտիկական ենթակառուցվածքների համար: Սուկվայի տնօրինության ներքո չափազանց կատարյալ կիրեռհարձակումների ծրագրեր կան, և վերջին շրջանում Կրեմլը էլ ավելի ազրեսիվ կեցվածք է ընդունել... Մենք գտնում ենք, որ Ռուսաստանի կիրեռործողությունները կշարունակեն թիրախավորել Միացյալ Նահանգները և նրանց դաշնակիցներին՝ հավաքագրելով հետախուզական տվյալներ, օժանդակելով որոշումների կայացմանը ՌԴ-ում, իրականացնելով ներազդման գործողություններ, որպեսզի սատարեն Ռուսաստանի ռազմական և քաղաքական նպատակների ապահովմանը և համապատասխան կիրեռմիջավայր ստեղծեն ապագա գործողությունների համար»<sup>9</sup>:

---

<sup>8</sup> Statement for the Record, Worldwide Threat Assessment of the US Intelligence Community, House Permanent Select Committee on Intelligence, J.R.Clapper, 11 April, 2013, p. 1. <https://nsarchive2.gwu.edu/NSAECB/NSAECB424/docs/Cyber-090.pdf>

<sup>9</sup> Statement for the Record: Worldwide Threat Assessment of the US Intelligence Community, Daniel R. Coats Director of National Intelligence, May 11, 2017, p. 1.

Ըսդհանուր առմամբ, դատելով ամերիկյան հետախուզական և անվտանգային հանրության բաց գեկույցների բովանդակությունից, ակնհայտ է, որ կրիտիկական ենթակառուցվածքների հիմնախնդրի կարևորությունը ոչ միայն շեշտակիորեն ընդգծվել է վերջին տարիների ընթացքում, այլև աճել են վերջինների՝ հասարակության և պետական ինստիտուտների ներթափանցման ինտենսիվությունը և էքստենսիվությունը: Ընդլայնվել են թե՝ ֆիզիկական ու տնտեսական կյանքի տարբեր չափումների վրա սպառնալիքների ներազդման ծավալները և թե՝ վերջինների հոգեբանական հետևանքների դաշտը: Ավելին, 2017թ. ԱՄՆ-ում անցկացված վարժանքների արդյունքները փաստեցին, որ առավել լուրջ վտանգ կարող են ներկայացնել կրիտիկական ենթակառուցվածքների վրա հարձակման հետևանքով առաջացող կասկադային էֆեկտները<sup>10</sup>:

### **7.3 Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության և անվտանգության ապահովման առանձնահատկությունները Գերմանիայում**

Գերմանացի հետազոտողների կարծիքով՝ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության պարագայում կարևորվում են երկու ընդհանուր նկատառումներ. որևէ պետություն գործնականում ի վիճակի չէ 100% ապահովել այդ ենթակառուցվածքների անվտանգությունը, մինչդեռ հիշյալ հիմնահարցի լուծման որևիցե ունիվերսալ եղանակ նույնպես գոյություն չունի: Դրա հետ մեկտեղ, կրիտիկական ենթակառուցվածքների

<sup>10</sup> J. Schneider, Cyber Attacks on Critical Infrastructure: Insights from War Gaming, July 27, 2017, <https://warontherocks.com/2017/07/cyber-attacks-on-critical-infrastructure-insights-from-war-gaming/>

պաշտպանության երեք մոտեցումներ են առկա, որոնք էլ ընկած են համապատասխան քաղաքականությունների հենքում:

*Առաջինը* կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանության (*CIIP, Critical Information Infrastructure Protection*) մոտեցումն է: Այստեղ կարևորվում են բացառապես *IT* ցանցերի և *IT* ոլորտի անվտանգությունն ու հիշյալ խնդրի հետ կապված լուծումները, մինչդեռ նյութական օբյեկտների անվտանգությունն ապահովվում է այլ կազմակերպական շրջանակներում: Կրիտիկական ենթակառուցվածքներին վերաբերող գործառույթները և մասնագիտական պատասխանատվությունը ցրված են տարբեր մարմինների միջև, իսկ մասնավոր հատվածի ինտեգրումը ԿԵ պաշտպանության համակարգում կարևորվում է բոլոր մակարդակներում:

*Երկրորդ մոտեցումը* ենթադրում է թե՝ կրիտիկական *IT* ենթակառուցվածքների և թե՝ նյութական/ֆիզիկական ենթակառուցվածքների պաշտպանություն համապարփակ եղանակներով: Այստեղ նյութական համակարգերի պաշտպանությունը հանդիսանում է քաղաքաշտպանության անքակտելի չափումը, մինչդեռ ԿԵ պաշտպանության և անվտանգության ապահովման կենտրոնական մարմինը զբաղվում է և՝ *IT* անվտանգության հարցերով, և՝ քաղաքաշտպանությամբ, և՝ աղետների ռիսկերի կառավարմամբ: Նման համադրույթի շրջանակներում առանձնահատուկ դերակատարություն է վերապահվում պաշտպանության նախարարությանը, իսկ մոտեցումը հայտնի է «բոլոր (վտանգների) դեպքում» պայմանական անվանմամբ:

Վերոնշյալ երկու մոտեցումներն ել ձգտում են ինտեգրել և միասնականացնել ԿԵ ոլորտին առնչվող պետական և մասնավոր կողմերին մեկ ազգային կազմակերպական շրջանակի մեջ,

սակայն ռազմավարական պլանավորման մակարդակում հանրային/պետական/-մասնավոր որևէ լուրջ համակարգում գրեթե չի նկատվում:

Երրորդ մողելի առանձնահատկությունն, ըստ գերմանացի մասնագետների, վերաբերում է զուտ չինական փորձին: Գլխավոր յուրահատկությունն այն է, որ Չինաստանում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ոլորտում բացակայում է որևիցե համագործակցություն պետական և մասնավոր դերակատարների միջև, իսկ ԿԵ անվտանգության ապահովման գործն ամբողջության ներառված է կառավարության իրավասության մեջ<sup>11</sup>:

Գերմանիայի ԿԵ պաշտպանությունը հենվում է երկրորդ մոտեցման, այն է՝ միասնական «բոլոր (վտանգների) դեպքում» սկզբունքի վրա<sup>12</sup>:

Ի տարբերություն, օրինակ, Սինգապուրի, որտեղ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ապահովումը դրված է հենց վերջիններիս սեփականատերերի վրա<sup>13</sup>, Գերմանիայում ԿԵ անվտանգության ապահովման հիմքում ընկած է պետության և մասնավոր հատվածների համագործակցության սկզբունքը: Դաշնային հանրապետությունում կրիտիկական կարևորության օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանվածության և անվտանգության ապահովման համար պատասխանատու գերատեսչությունը՝ Տեղեկատվական անվտան-

<sup>11</sup> Critical Infrastructure Protection: Survey of World-Wide Activities, Jörn Brömmelhörster, Sandra Fabry and Nico Wirtz for BSI KRITIS, 4/2004, Bundesamt für Sicherheit in der Informationstechnik, pp. 1-2:

<sup>12</sup> Ch. Eismann, Trends in Critical Infrastructure Protection in Germany, Transactions of the VSB – Technical University of Ostrava, Vol. IX, N 2, 2014, pp. 26-31.

<sup>13</sup> Կարող են լինել մասնավոր ընկերություններ, որոնց նկատմամբ վերահսկման քաղաքականություն է իրականացվում Սինգապուրի կառավարության կողմից:

գության դաշնային գերատեսչությունը (*Bundesamt für Sicherheit in der Informationstechnik - BSI*), հիմնվեց 1997թ.՝ այն նույն ժամանակ, երբ լույս տեսավ ԱՍՆ *PDD-63* հրամանագիրը, որով սահմանվում էր ամերիկյան կրիտիկական ենթակառուցվածքների ցուցակը: Ավելի ուշ՝ ԳԴՀ կրիտիկական ենթակառուցվածքների պատասխանատուների մարմիններում ընդգրկվեց նաև ներքին գործերի նախարարությունը, ինչպես նաև Գերմանիայի աշխատանքի և տնտեսության նախարարությունը, քանի որ կրիտիկական ենթակառուցվածքների ճնշող մեծամասնությունը մասնավոր հատվածում էր (մոտ 90%)<sup>14</sup>:

Հաշվի առնելով կրիտիկական ենթակառուցվածքների համալիր բնույթն ու կարևորությունը Գերմանիայի տնտեսական և հասարակական կենսագործունեության համար՝ 2000-ական թթ. սկզբից կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման գործն իրականացվում է միջզերատեսչական ընթացակարգերի ձևաչափում՝ ներքին գործերի նախարարության առաջատար դերակատարման ներքո: Ըստ ԳՖՀ Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ազգային ռազմավարության՝ «կրիտիկական» եզրույթի կիրառումը պայմանավորված է վերջիններիս էական կարևորությամբ՝ ժամանակակից հասարակության գործառույթների ապահովման տեսանկյունից, մինչդեռ ԿԵ խափանումը կարող է հանգեցնել ամբողջ համակարգի երկարաժամկետ խափանման: Նման կարգի «կրիտիկական» բնույթ արտացոլվում է երկու չափումներում.

- *համակարգային կրիտիկական միավորներ՝ ընդհանուր համակարգի շրջանակում տվյալ ենթակառուցվածքային*

<sup>14</sup> Защита критической инфраструктуры: Подходы государств Европейского Союза к определению элементов критической инфраструктуры, *M. Сметана, Ph.D.* ВШБ - Технический Университет Острава, 2014/15, стр. 38.

սեկտորի կառուցվածքային, գործառութային և տեխնիկական դիրքով պայմանավորված փոխկախվածության բարձր աստիճան (օրինակ՝ տեղեկատվական ցանցեր, էլեկտրականություն), որի խափանումը կարող է հանգեցնել ողջ հասարակութան և պետության համար անվտանգային լուրջ հետևանքների;

- սիմվոլիկ կրիտիկական միավորներ, որոնք կապված են ինքնության, հասարակության հուզական կամ մշակութային չափումների հետ և նույնպես կարող են զարգացման բացասական սցենարի պարագայում հասցնել երկարատև հոգեբանական «ապահավասարակշռման էֆեկտի»<sup>15</sup>:

Հատկանշական է, որ ԿԵ պաշտպանության խնդիրն ըստ ընդունված համապատասխան ռազմավարության վերաբերում է ինչպես կառավարությանը, այնպես էլ ողջ հասարակությանն ընդհանուր առմամբ՝ հաշվի առնելով պրոբլեմի թե՝ արդիականությունը և թե՝ իրական ծավալները։ Որպես ԿԵ համակարգային պաշտպանության շահառուներ են դիտարկվում երեք խմբեր՝ կառավարությունը (հանրային կառավարման համակարգը), հասարակությունը (քաղաքացիական հասարակությունը) և ոլորտում աշխատող ընկերությունները (ներառյալ՝ գերազանցապես մասնավոր հատվածը)<sup>16</sup>:

ԱՄՆ 16 կրիտիկական սեկտորների համանմանությամբ՝ ԳԴՀ կառավարությունը ևս առանձնացնում է հետևյալ կրիտիկական ոլորտներն ու ենթակառուցվածքները.

<sup>15</sup> National Strategy for Critical Infrastructure Protection (CIP Strategy), Federal Ministry of Interior, Berlin, 17th June, 2009, p. 7.

<sup>16</sup> Նույն տեղում:

- Փոխադրամիջոցները և տրանսպորտային հոսքերը
- Էներգետիկ համակարգը
- IT և հեռահաղորդակցությունը
- Ֆինանսական և ապահովագրական հատվածը
- Հանրային կառավարման հատվածը
- Սննդամթերքի հատվածը
- Զրամատակարարման և հարակից ոլորտները
- Առողջապահությունը
- ԶԼՄ-ն և մշակույթը:

Ուշագրավ է, որ կրիտիկական ենթակառուցվածքները Գերմանիայում դասակարգվում են ըստ վերջիններիս *տեխնիկական բազայի*<sup>17</sup> կամ սոցիալ-տնտեսական ծառայությունների կարևորության<sup>18</sup>:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունն ու անվտանգության ապահովումը Գերմանիայում հենվում են երեք սկզբունքների վրա՝ կանխարգելում (պրոակտիվ նախապատրաստվածություն), արձագանքում (ճգնաժամերի գործուն կառավարում) և հարատևություն (կայունություն): ԿԵ պաշտպանությունն ընկալվում է իբրև համընդհանուր խնդիր, որի ապահովման գործում ներգրավված են բոլոր երեք շահառուները, այդ թվում նաև կրիտիկական բնագավառում աշխատող մասնավոր ընկերությունները (մոտ 2000 ընկերություն): Բացի

<sup>17</sup> Էներգետիկա և մատակարարման համակարգ, տեղեկատվական համակարգ, տրանսպորտ, ջրամատակարարում (*National Strategy for Critical Infrastructure Protection (CIP Strategy)*, p. 7.

<sup>18</sup> Առողջապահություն, սննդամթերք, արտակարգ իրավիճակների ծառայություն, հանրային կառավարում և իրավապահ մարմիններ, ֆինանսական հատված և ապահովագրական գործ, մեղիս և մշակույթ (National Strategy for Critical Infrastructure Protection (CIP Strategy)), p. 7.

այդ, ԳԴՀ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հիմքում ընկած է սուբյեկտիարության<sup>19</sup> սկզբունքը, որը կիրառելի է ոչ միայն ներազգային համադրույթում (տեղական-դաշնային մակարդակներ), այլև վերաբերում է Եվրոպական միության շրջանակում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության մեխանիզմներին և ընթացակարգերին:

#### **7.4 Կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման ռուսաստանյան փորձը**

Սառը պատերազմի դարաշրջանում միջուկային զապման գաղափարի հենքում ընկած էր «փոխադարձ ռջնչացման» մասին թեզը, որը ենթադրում էր հակառակորդ կողմին անընդունելի վնասի հասցնում: Դեռևս 1960-ական թթ. ԱՄՆ ռազմավարական նշանակության օդուժի նշանակետում էր Խորհրդային Միության ռազմական նշանակության 25 թիրախների և 151 քաղաքային-ինդուստրիալ կենտրոնների վերացումը, ներառյալ պողպատի և ցեմենտի գործարաններ, միջուկային օբյեկտներ, ռադիոկայաններ, նավթարդյունաբերության կենտրոններ և տրանսպորտային հանգույցներ<sup>20</sup>: Կարիքյան ճգնաժամի շրջանում (1960-ական թթ.) առաջին անգամ ուշադրության կենտրոնում հայտնվեց հեռահաղորդակցության ոլորտը՝ որպես կրիտիկական կարևորության բնագավառ, որի պաշտպանությունը հասցվեց ռազմավարական նշանակության գերինդրի: Իսկ արդեն 1980-ական թթ. ամերիկյան մասնագետները սահմանե-

<sup>19</sup> Համաձայն այդ սկզբունքի՝ անհատի, փոքր սոցիալական խմբերի իրավունքները և շահերն ավելի առաջնային են, քան պետության իրավունքները և շահերը:

<sup>20</sup> Russian critical infrastructures: Vulnerabilities and policies, K. Pyynöniemi (ed.), The Finnish Institute of International Affairs, pp. 16-17.

ցին ենթակառուցվածքի բովանդակությունն իբրև «փոխկապակցված կառուցվածքային տարրերի ամբողջություն, որոնք պահպանում են կառուցվածքային ամբողջականությունը և կիրառելի են, որպես կանոն, միայն արհեստականորեն ստեղծված կառուցների պարագայում»<sup>21</sup>:

Ըստ ռուսաստանյան պաշտոնական աղյուրների՝ ներկայում ՌԴ-ում մոտ 90 մլն մարդ ապրում է բարձր ռիսկայնության գոտիներում, իսկ երկրում առկա են ավելի քան 45000 հավանական վտանգ ներկայացնող օբյեկտների<sup>22</sup>: Ֆինլանդիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի հետազոտողների կարծիքով՝ ՌԴ կրիտիկական կարևորության օբյեկտների պաշտպանության և անվտանգության ապահովման հարացուցի հենքում ընկած են նախկին խորհրդային մոտեցումները՝ «բոլոր տիպի վտանգներին» պատրաստ լինելու ԽՍՀՄ քաղաքաշտանության սկզբունքը: Հետազոտության հեղինակները պնդում են, որ հիշյալ մոտեցումը դիտարկում էր ոչ թե առանձնացված կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունը որպես այդպիսին, այլ համընդհանուր պատրաստությունը՝ արձագանքելու և պաշտպանվելու տարաբնույթ վտանգներից և սպառնալիքներից<sup>23</sup>:

Կրիտիկական ենթակառուցվածքները որպես առանձին իրավական բնույթի սահմանազատում կրող կատեգորիա՝ ՌԴ-ում սկսեց գործածվել 2010-ական թթ. սկզբներից, եթե բավակա-

<sup>21</sup> Infrastructure for the 21st Century: Framework for a Research Age, Washington: National Academies Press, 1987, [e-resource].

<sup>22</sup> «Основы государственной политики в области обеспечения безопасности РФ и защищенности критически важных и потенциально опасных объектов от угроз природного, техногенного характера и террористических актов на период до 2020 года», 15 ноября, 2011, пр. 3400.

<sup>23</sup> K. Pyynönen (ed.), The Finnish Institute of International Affairs, p. 39.

նաշափ ծավալուն աշխատանքներ տարվեցին ՈԴ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների (*ԿՏԵ*) սահմանման և իրավական պաշտպանության ուղղությամբ<sup>24</sup>: Հնդ որում, ՈԴ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կանոնակարգման շրջանակը ներառում է՝ բացի հանգուցային նշանակության օբյեկտներից, նաև Էլեկտրոդակցության ցանցերը, որոնք օգտագործվում են կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի օբյեկտների միջև փոխազդակցության համար: Այս համադրույթում ինտերնետի օգտագործումն է հանդիսանում կարգավորման հիմնական առարկան<sup>25</sup>:

Հարկ է նշել, սակայն, որ թեև կրիտիկական ենթակառուցվածք եզրույթը մերժ ընդ մերժ օգտագործվում է ՈԴ պաշտոնական կամ փորձագիտական տեքստերում, այդուհանդերձ, մի շարք եզրույթներ «փոխլրացնում» են տվյալ բնագավառին վերաբերող հասկացությունների ամբողջությունը: Դրանց շարքում են, օրինակ, «ռազմավարական օբյեկտ» (*стратегический объект*), «վտանգավոր ինդուստրիալ օբյեկտ» (*опасный производственныий объект*), «հատուկ նշանակության օբյեկտ» (*особо важныий объект*) և այլն<sup>26</sup>:

Ինչ վերաբերում է *ԿՏԵ* հիմնախնդրին, ապա *ԿՏԵ* անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՈԴ-ում սկսել է քննարկվել դեռևս 2000-ական թթ. կեսերից, իսկ 2006թ. ոուսաս-

<sup>24</sup> 2016թ. ընդունված ՈԴ Տեղեկատվական անվտանգության դոկտրինի համաձայն Ռուսաստանի տեղեկատվական ենթակառուցվածքի ներքո հասկացվում է «տեղեկատվայնացման օբյեկտների, տեղեկատվական ցանցերի, ինտերնետում գտնվող կայքերի ամրողությունը, որը գտնվում է ՈԴ տարածքում, ինչպես նաև ՈԴ իրավասության տակ գտնվող տարածքներում կամ օգտագործվում է ՈԴ միջազգային պայմանագրերի համաձայն»: «Դոկтрина информационной безопасности РФ», утвержденная Указом №646 2016г.

<sup>25</sup> «О безопасности критической информационной инфраструктуры РФ».

<sup>26</sup> Russian Critical Infrastructures: Vulnerabilities and Policies, The Finnish Institute of International Affairs, K.Pynnoniemi (ed.), FIIA Report 35, Tampere 2012, p. 42.

տանյան օրենսդիրներին ներկայացվեց «տեղեկատվական և հաղորդակցային ենթակառուցվածքի կրիտիկական կարևորության օբյեկտների տեղեկատվական անվտանգության ապահովման առանձնահատկությունների մասին» օրենքի նախագիծը, որը ստացավ օրենքի կարգավիճակ: Ավելի ուշ՝ 2013թ., մեկ այլ իրավական փաստաթուղթ պատրաստվեց՝ «Ո՞Դ կրիտիկական տեղեկատվական անվտանգության» մասին, որը նախատեսվում էր առանձին ԿՏԵ ռեեստրի ստեղծում և գնահատման ու խոցելիությունների նախանշման ընթացակարգեր<sup>27</sup>: Ո՞Դ ԿՏԵ-ի մեջ ներառվում են ավտոմատացված համակարգերն ու հեռահաղորդակցության ցանցերը, որոնք օգտագործվում են պետական կառավարման և պետության անվտանգության ու պաշտպանունակության ապահովման գործում:

Ո՞Դ Ազգային անվտանգության հայեցակարգում (2015թ.) պետության և հանրության անվտանգությանն ուղղված սպառնալիքների շարքում (կետ 43) մատնանշվում է «ահարեկչական և ծայրահեղական կազմակերպությունների գործունեությունը, որն ուժային միջոցներով նպատակառուղղված է Ո՞Դ սահմանադրական կարգի փոփոխմանը, պետական իշխանության մարմինների գործունեության խթարմանը, ռազմական և ինդուստրիալ կառույցների գործառույթների աղճատմանը, կրիտիկական հանրային ենթակառուցվածքների և տրանսպորտային ենթակառուցվածքների ոչնչացմանը, բնակչության ահարեկմանը, այդ թվում նաև զանգվածային ոչնչացման գենքի, ռադիոակտիվ, թունավոր, տոքսիկ, քիմական կամ կենսաբանական միջոցների օգտագործմամբ, միջուկային ահարեկչությունը, Ո՞Դ IT ենթակառուցվածքի

<sup>27</sup> *Н.Рудычева*, Критическая инфраструктура РФ: сегодня ответственных нет. By Digital Report on 06.12.2016, <https://digital.report/kiberbezopasnost-rossii-otvetstvennyih-za-sboi-net/>

դեմ հարձակումն ու վերջինիս եկարամյա խափանումը»<sup>28</sup>:

2017թ. դեկտեմբերին ռուսաստանյան օրենսդիրներն ընդունեցին «ՌԴ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգության» մասին օրենքի նախագիծը, որտեղ սահմանվում էին կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները, պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում, ինչպես նաև ԿՏԵ օրյեկտների սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները<sup>29</sup>: Հստ 2018թ. ընդունված օրենքի՝ ԿՏԵ սեփականատերերը պարտավոր են տեղեկացնել իշխանություններին համակարգչային միջադեպերի մասին, կանխարգելել ոչ իրավական գործողությունները և ապահովել տեղեկատվական ռեզերվային կրկնօրինակման միջոցով կորսված տեղեկատվական օրյեկտների վերականգնումը:

Հստ 2018թ. հունվարին ընդունված օրենքի՝ ԿՏԵ օրյեկտների շարքին են դասվում.

- պետական մարմինների ինֆոհամակարգերը
- ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները
- առողջապահությունը
- տրանսպորտը
- հեռահաղորդակցությունը
- ֆինանսավարկային համակարգը
- էներգետիկ և միջուկային ոլորտը
- տիեզերագնացությունը և հրթիռաշինությունը
- քիմիական արդյունաբերությունը և մետաղուրգիան<sup>30</sup>:

<sup>28</sup> Russian National Security Strategy, December 2015, Presidential Edict 683, “The Russian Federations’ National Security Strategy”.

<sup>29</sup> За кибератаки будут сажать и штрафовать, Коммерсантъ, 12.07.2017.

<sup>30</sup> Вступил в силу закон о защите критической информационной инфраструктуры, РИА Новости, 01.01.2018.

Ոլորտի կարգավորման գործառույթները Ընուսատանում գլխավորապես դրված են ՌԴ Անվտանգության դաշնախին ծառայության (*ՓԾԲ*), Տեխնիկական և արտահանման վերահսկման դաշնային ծառայության (*ՓԾՏԷԿ*), ինչպես նաև ՌԴ Կազի և հեռահաղորդակցության նախարարության վրա:

Հատկանշական է, որ ի տարբերություն Գերմանիայի, որտեղ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունն ապահովվում է համատեղ ջանքերի շրջանակում՝ տարբեր շահառուների ներգրավմամբ, Ընուսատանում հիմնական շեշտը դրված է կարգավորիչ գործիքակազմի վրա, իսկ համագործակցության ձևաչափերն ավելի շատ վերաբերում են անվտանգության բնագավառում կենտրոնական և տեղական իշխանությունների միջև աշխատանքային հարաբերությունների կայացմանը:

### *7.5 Խրայելի գիտատեխնոլոգիական ոլորտի կրիտիկական ենթակառուցվածքները*

Խրայելը դասվում է, թերևս, այն բացարիկ պետությունների շարքին, որի կրիտիկական ենթակառուցվածքների<sup>31</sup> համակարգի ողջ սպեկտրը այս կամ այն չափով փոխկապակցված է երկրի, բնակչության անվտանգության և մասնավորապես՝ պաշտպանական անվտանգության ոլորտի հետ։ Եվ սա, ըստ Էռլեյան, բնական գործընթաց պետք է համարել, քանի որ 1948թ. Խրայել պետության հիմնադրումից մինչև օրս երկիրը շարունակում է զարգանալ հարևան երկրների ու զինյալ տարբեր խմբավորումների կողմից ռազմական սպառնալիքների իրական վտանգի ներքո։

Ընդհանուր առմամբ, Խրայելի կրիտիկական ենթակա-

<sup>31</sup> Գաղիկ Հարությունյան, «Կրիտիկական ենթակառուցվածքներ և զաղափարախոսություն», «21-րդ ՌԱՀ», թիվ 4 (74), 2017թ., [http://www.noravank.am/arm/articles/detail.php/detail.php?ELEMENT\\_ID=16030](http://www.noravank.am/arm/articles/detail.php/detail.php?ELEMENT_ID=16030)

ոուցվածքների համակարգը կարելի է դասակարգել մի քանի հիմնական ուղղությունների.

**Պաշտպանական անվտանգություն,** որը ներառում է թե՝ սահմանային անվտանգության, թե՝ թիկունքի պաշտպանության հարցերը՝ մասնակիորեն ներառվելով «քաղաքացիական պաշտպանություն» հասկացության սահմաններում։ Պաշտպանական անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքների անքակտելի բաղադրիչներից են Իսրայելի ռազմարդունաբերական համալիրը և պաշտպանության բանակը։ Ներկայացնենք որոշ վիճակագրություն։ 2017թ. Իսրայելն արտահանել է \$9,2 մլրդ.-ի սպառագինություն և ռազմական տեխնիկա՝ կազմելով սպառագինության համաշխարհային արտահանման ծավալների 3%-ը։ Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) տվյալներով՝ 2017թ. սպառագինությունների համաշխարհային արտահանման ծավալներով Իսրայելը եզրափակում էր առաջատար երկրների հնգյակը՝ զիջելով ԱՄՆ-ին, ՌԴ-ին, Ֆրանսիային և Գերմանիային։

**Պաշտպանական անվտանգության ոչ նյութական՝ հոգևոր կրիտիկական ենթակառուցվածքների համակարգում** կարևորագույն տեղ է գրադենում հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության ոլորտը՝ համակարգված հրեա զինվորականի վարքականոնով (*The IDF Code of Conduct*)։ Վարքականոնում, որը Իսրայելի ԶՈՒ դոկտրինի երկու գլխավոր բաղադրիչներից մեկն է և կրում է «Իսրայելի պաշտպանության ուժերի ոգին» խորագիրը, ներգրավված են հետևյալ դրույթները.

- Հրեության հոգևոր ժառանգության պաշտպանությունը (քաղաքակրթական ասպեկտ)<sup>32</sup>, որոնց շարքում կարելի է

<sup>32</sup> [http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT\\_ID=6516](http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=6516)

առանձնացնել լեզուն՝ երրայերենը, կրոնը և հրեական ժառանգության ողջ սպեկտրը:

- Հրեության և Խարայել պետության գոյության շարունակականությունն ինքնին՝ որպես «հրեական առաքելություն», նույնպես դասվում է համայն հրեության և Խարայելի հոգևոր կրիտիկական ենթակառուցվածքների համախմբում:
- Երկրի միջուկային-էներգետիկ պոտենցիալը, ինչը և հանդիսանում է մերձավորարևելյան տարածաշրջանում ուժային հավասարակշռության պահպանման կարևոր երաշխիքներից մեկը: Խարայելի, նրա բնակչության անվտանգության առաջնակարգ երաշխիքը երկրի միջուկային բավական բարձր պոտենցիալի առկայությունն է:
- Պետություն-սփյուռք փոխգործակցությունը (ցանցակենտրոն և միակենտրոն գոյակցման ռազմավարական մոտեցումների փոխլրացմամբ), հայրենադարձության կազմակերպում:
- Կիրեռանվտանգություն, տեղեկատվական-հոգեբանական պատերազմներ:
- Տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություններ:
- Զրային ռեսուրսներ և դրանց արդյունավետ կառավարում. երկիրը, գտնվելով չոր, կիսաանապատայախն բնակլիմայական պայմաններում (հատկապես երկրի հարավային հատվածը) և ունենալով ջրային սուլ ռեսուրսներ, առավելագույն ուշադրություն է դարձնում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմներին:
- Գիտատեխնոլոգիական և մարդկային-մտավոր կապիտալ, որի առկայությամբ է փոխկապակցված յուրաքանչյուր պետության ռազմական, տնտեսական պոտենցիալը:

Գիտատեխնոլոգիական ոլորտը, թերևս, այն անկյունաքարային կրիտիկական ենթակառուցվածքն է, որից ածանցյալ են պետության կրիտիկական ենթակառուցվածքների բոլոր ոլորտները: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ տվյալ դեպքում հենց գիտատեխնոլոգիական բազան է պայմանավորում Խրայել պետության և համայն հրեության գոյության հարցն առհասարակ: Ուստի, ելնելով այդ տրամաբանությունից՝ առավել մանրամասն կանորադառնանք գիտատեխնոլոգիական վիճակսգրական և որակական առանձնահատկություններին:

**Գիտատեխնոլոգիական ոլորտը՝ որպես առանցքային կրիտիկական ենթակառուցվածք.** Ինչպես արդեն նշվեց, վերը հիշատակված կրիտիկական ենթակառուցվածքների գրեթե բոլոր ոլորտներն այս կամ այն աստիճանով փոխվապակցված են Խրայելի անվտանգային-պաշտպանական համակարգին կամ մասնակիորեն սպասարկում են այն: Եվ ըստ այդմ, առաջին հայացքից ձևավորվում է տպավորություն, թե պետության և հասարակության գործունեության գրեթե բոլոր ասպարեզները կարող են ուղղվել Խրայել պետության պաշտպանության համակարգի կատարելագործմանը՝ հանգեցնելով վերոնշյալ բնագավառների մասնակի կամ հատվածային ռազմականացմանը: Չնայած երկիրը գտնվում է մշտական ռազմական սպառնալիքների առկայության պայմաններում, գիտատեխնոլոգիական ոլորտն իր անմիջական մասնակցությունն է ունենում երկրի պաշտպանությանը, այդուհանդերձ, ներկայանում է ոչ թե որպես այդ համակարգի զուտ բաղադրիչ, այլ ավելի շուտ ինքնաբավ գործող, պաշտպանական ոլորտը սպասարկող հատված:

Խրայելի գիտատեխնոլոգիական հատվածը տեղական և օտարերկրյա ներդրումների համար գրավիչ միջավայր դարձ-

նելու հարցում կարևոր նշանակություն ունեցավ համապատասխան օրենսդրական արդյունավետ մեխանիզմների մշակումը: 1959թ. Խորայելում ընդունվեց *Կապիտալ ներդրումների խթանման օրենքը* (*Law for the Encouragement of Capital Investment*), որով կարգավորվում էր Խորայելի տարածքում գործունեություն ծավալող ընկերությունների ներդրումային քաղաքականությունը: Այդ օրենքով առանձնակի ուշադրություն է դարձվում այն ընկերություններին, որոնք գործունեություն են իրականացնում բարձր տեխնոլոգիաների, գիտահետազոտական ոլորտներում (մրցունակ միջավայրի ապահովում, արտոնությունների ձևուն համակարգի ընձեռում և այլն):

1984թ. Խորայելում ընդունվեց արդյունաբերական նշանակության գիտահետազոտական և փորձարարակոնսուլտական աշխատանքների (*ԳՀՓԿԱ-ՀԻՕԿԲ*) խթանման օրենքը (*Law for the Encouragement of Industrial Research & Development*), որով սահմանվում էին արդյունաբերական ԳՀՓԿԱ զարգացմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմները:

Պետության հիմնադրումից ի վեր Խորայելի ղեկավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում երկրում գիտակրթական, գիտատեխնոլոգիական պոտենցիալի զարգացմանը: *Խորայելում կրթությանը հատկացվող ֆինանսական ծավալները կազմում են երկրի ՀՆԱ շուրջ 10%-ը: 2012թ. Խորայելի պետքութեից բարձրագույն կրթությանը տրամադրված միջոցները կազմել են շուրջ \$2 մլրդ: 2013թ. տվյալներով, երկրի առաջտար համալսարաններից միայն մեկի՝ Երուսաղեմի Հրեական համալսարանի բյուջեն կազմել է \$714 մլն, որի 55-65%-ը՝ պետական միջոցների հաշվին: Երկրի գիտատեխնոլոգիական սեկտորի առաջնորդացի ապահովման գործում կարևորագույն*

դեր ունի բուհական համակարգն իր գիտահետազոտական արդյունքների «տնտեսականացման» կամ «կապիտալացման» գործառությներով՝ ձևավորելով կրթություն-գիտություն-տնտեսություն արդյունավետ շղթայական կապը։ Գիտատեխնոլոգիական արդյունքների «կապիտալացման» ցուցանիշով նույնպես Խրայելն աշխարհում առաջատար դիրքեր է զբաղեցնում։ Բուհերը սերտորեն համագործակցում են երկրի տնտեսության համապատասխան մասնագիտացված ճյուղերի հետ՝ ապահովելով դասախոսա-հետազոտական կազմի՝ որպես համահիմնադիր կամ խորհրդատու, ուղղակի մասնակցությունը «start-up»-երին ու տեխնոլոգիական նորարարություններին։

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012թ. գեկույցի վիճակագրական տվյալներով, գիտության և հետազոտությունների ծախսերի ծավալով Խրայելն աշխարհում առաջատարն էր. երկրի ՀՆԱ 4,4%-ը<sup>33</sup> (տե՛ս Գծանկար 1)։

Գծանկար 1  
Գիտահետազոտական ծախսերի ծավալով առաջատար երկրները  
ՀՆԱ-ում տոկոսային հաշվարկով, 2015թ.<sup>34</sup>



<sup>33</sup> UNESCO Institute for Statistics, 2012, <http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info>: Զեկույցի վիճակագրական տվյալները վերաբերում են 2010թ.։

<sup>34</sup> <https://knoema.ru/atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-ВВП>.

Այս առիթով նշենք, որ վերջին տարիներին համաշխարհյան մակարդակով գիտության և հետազոտությունների ֆինանսավորման ծավալներն աճման միտում ունեն: *Industrial Research Institute և R&D Magazine* ասմազրի հրապարակած «2018թ. գիտության և հետազոտությունների համաշխարհյան կանխատեսումները» (*Global R&D Funding Forecast 2018*) գեկույցում ներառված են գիտությանը և հետազոտություններին ֆինանսական հատկացումների հաշվարկով առաջատար 40 երկրները, որոնց ցուցակը գիսավորում է ԱՄՆ-ը: Զեկույցի 2018թ. կանխատեսումներով, ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը (*GERD-Gross Domestic Expenditure on R&D*) կազմելու են \$553 մլրդ (ՀՆԱ 2,84%), 2016թ. այդ ցուցանիշը \$522 մլրդ էր: 2018թ. գեկույցում Խարայելը 40 երկրների շարքում զբաղեցնում է 22-րդ դիրքը: Այդ երկրի գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը կազմում են \$12,85 մլրդ՝ կազմելով երկրի ՀՆԱ 3%-ը<sup>35</sup>: Նշենք, որ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերով Խարայելի վերջին տարիների ցուցանիշները կայուն աճման միտում ունեն: Եթե 2016թ. այդ երկրի համապատասխան ցուցանիշը կազմել է \$12,51 մլրդ, ապա 2017թ.՝ \$12,68 մլրդ<sup>36</sup>:

Վերջին տարիների տվյալներով, Խարայելն աշխարհում բնակչության մեկ շնչին ընկնող հաշվարկով «start-up»-երի քանակով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ ստանալով «Startup-Nation» բրենդ-անվանումը: 2014թ. խարայելական «start-up» ընկերությունները ապահովեցին շուրջ \$3,4 մլրդ ներդրումային ծավալներ, ինչը 46%-ով գերազանցում էր 2013թ. համա-


<sup>35</sup> [http://digital.rdmag.com/researchanddevelopment/2018\\_global\\_r\\_d\\_funding\\_forecast?pg=1#pg1](http://digital.rdmag.com/researchanddevelopment/2018_global_r_d_funding_forecast?pg=1#pg1)

<sup>36</sup> Նույն տեղում:

պատասխան արդյունքը: Իսկ 2015թ. դրությամբ այդ ցուցանիշն աճեց ևս 30%-ով, արդյունքում՝ ներդրումների ծավալը կազմեց \$4,43 մլրդ (գործարքների ընդհանուր քանակը՝ 708):<sup>37</sup>

*IVC* հետազոտական կենտրոնի (*IVC research center*) գնահատմամբ, 2012-2018թթ. Իսրայելի բարձրտեխնոլոգիական կապիտալն (*Israeli High-Tech capital*) արձանագրել է աճման արագ դինամիկա: Եթե 2012թ. բարձր տեխնոլոգիաների սեկտորում երկրում իրականացվել է թվով 516 գործարք՝ \$1.867 մլրդ ընդհանուր ներդրումային ծավալով, իսկ 2015թ.՝ 706 գործարք \$4,307 մլրդ ծավալով, ապա 2017թ. գործարկվել է 623 պայմանագիր՝ \$5,27 մլրդ ընդհանուր ներդրումային ծավալով (*տե՛ս Գծանկար 2*).

Գծանկար 2  
Իսրայելի բարձրտեխնոլոգիական կապիտալը 2012-2018թթ.  
(ըստ եռամսյակների)<sup>38</sup>



Գործարքների քանակը

Ներդրումային ծավալը (\$մլն)

<sup>37</sup> <http://www.rosinfocominvest.ru/upload/iblock/419/419e406d2b01ce002862d7df0dbd121e.pdf>

<sup>38</sup> <http://www.ivc-online.com/Research-Center/IVC-Publications/IVC-Surveys/High-Tech-Capital-Raising>

Նկատենք, որ Իսրայելի ՀՆԱ ավելի քան 11%-ն ապահովում է բարձրտեխնոլոգիական սեկտորը. Վերջինս կազմում է նաև երկրի արտահանման ընդհանուր ծավալի ավելի քան 50%-ը:

Իսրայելի գիտատեխնոլոգիական պոտենցիալը բարձր արդյունքներ է գրանցում նաև միջազգային տարբեր հեղինակավոր վարկանիշային զեկույցներում: «Գլոբալ նորարարության ինդեքսը» (*Global Innovation index*) 2017թ. զեկույցում, որտեղ չափորոշվում է երկրների նորարարական պոտենցիալը, ներառված 127 երկրների շարքում Իսրայելը գրադեցնում էր 17-րդ դիրքը: Զեկույցում երկրների վարկանիշավորման համար ընտրված ցուցիչները համախմբված են 7 խմբում, որոնք են՝ ինստիտուտներ, մարդկային կապիտալ և հետազոտություններ, ենթակառուցվածքներ, շուկայի արդյունավետություն, գործարար միջավայրի արդյունավետություն, գիտական և տեխնոլոգիական արտադրանք, ստեղծագործական արտադրանք:

2006թ. լույս տեսավ «Մենդ» հեղինակավոր կորպորացիայի «Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն 2020թ.» հետազոտությունը՝ նվիրված աշխարհում գիտատեխնոլոգիական սեկտորի զարգացման հեռանկարներին<sup>39</sup>: Հետազոտությունը հովանավորվել է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (*Nation Intelligence Council-NIC*) կողմից (միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական հետազոտություններ իրականացնող վերլուծական կենտրոն է և գործում է ԱՄՆ Հետախուզության հանրույթի (*United States Intelligence Community-IC*)<sup>40</sup> ենթակայության ներքո): Ի դեպ, հետազոտական տվյալ նախա-

<sup>39</sup> RAND Corporation. [http://www.rand.org/pubs/technical\\_reports/TR303.html](http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html), <http://www.rand.org/pubs/monographs/MG475.html>

<sup>40</sup> ԱՄՆ Հետախուզության հանրույթը ներառում է տեղեկատվության հավաքմամբ զբաղվող և հետախուզական գործունեություն իրականացնող ԱՄՆ 17 առանձին կառավարական հաստատություն:

զծի իրագործման համար հավելյալ ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև ԱՄՆ Հետախուզության նորարարական տեխնոլոգիական կենտրոնի (*Intelligence Technology Innovation Center*) և ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի կողմից։ Եվ այսպէս, «Ռենդ» կորպորացիայի փորձագետների կողմից կազմվել է աշխարհի երկրների գիտատեխնոլոգիական պոտենցիալի վարկանիշը 1992-2004թթ. (*Index of Science and Technology Capacity*)։ Մեթոդաբանությունում կիրառվել է 7 չափորոշիչ, այն է՝ ՀԱԱ-ն մեկ շնչի հաշվով, 1 մլն բնակչության հաշվով գիտահետազոտական ոլորտի գիտնականների և ինժեներների թվաքանակը, գիտության և տեխնոլոգիաների թեմայով հրատարակված գիտական հոդվածների քանակը, գիտահետազոտական ոլորտի ֆինանսական հատկացումները՝ ՀԱԱ տոկոսային հարաբերակցությամբ, գիտահետազոտական ինստիտուտների թվաքանակը և այլն։ Վարկանիշային հետազոտությունում ներառված 150 երկրների շարքում լավագույն արդյունքը ԱՄՆ-ինն է՝ 5,03 ամփոփ միավորով, որին հաջորդում են Ճապոնիան (3,08 միավոր) և Գերմանիան (2,12)։ Լավագույն տասնյակը եզրափակում է Իսրայելը՝ 1,53 միավոր։

Նշենք նաև, որ 2017թ. աշնանը Իսրայելի կառավարություն էր ներկայացվել 2017-2022թթ. ազգային ենթակառուցվածքների գարգացման խոշորամասշտաբ մի հայեցակարգ-նախագիծ, որն առանձնանում է գործունեության դաշտի լայն ընդգրկվածությամբ և ներգրավված ֆինանսական միջոցների խոշոր ծավալներով։ Հայեցակարգի շրջանակներում մշակված նախագծերը նախատեսվում է ուղղել տրանսպորտի, Էներգետիկայի, կրթության, գյուղատնտեսության և այլ ոլորտների ենթակառուցվածքների գարգացմանը։ Ազգային ենթակառուցվածքների հայեցա-

կարգում ներառվել է շուրջ 147 նախագիծ (63-ը՝ տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների ոլորտ)՝ շուրջ \$34,4 մլրդ (1\$ = 3.575 շերել) ընդհանուր ներդրումային ծավալով:

Ինչպես ցույց է տալիս Իսրայել պետության հաջողված փորձը, երկրի զարգացումը, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված է գիտակրթական-տեխնոլոգիական ոլորտում կատարվող ներդրումներով: Նման հարցադրումը խիստ ակտուալ է նաև Հայաստանի համար, իսկ թե ինչ մոտեցումներ են գերիշխում մեր տնտեսական քաղաքականությունում՝ կղիտարկվեն հաջորդ գլխում:

### 7.5 Ենթագլխի գրականություն

1. *Գ.Հարությունյան*, «Կրիտիկական ենթակառուցվածքներ և զաղափարախոսություն», 21-րդ ԴԱՐ», թիվ 4 (74), 2017թ.,  
[http://www.noravank.am/arm/articles/detail.php/detail.php?ELEMENT\\_ID=16030](http://www.noravank.am/arm/articles/detail.php/detail.php?ELEMENT_ID=16030)
2. *С.Гриняев*, О взгляде на проблему безопасности критической инфраструктуры в государстве Израиль, [http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT\\_ID=6516](http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=6516)
3. Затраты на НИОКР, <https://knoema.ru/atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-ВВП.>
4. UNESCO Institute for Statistics, 2012, Рейтинг стран мира по уровню расходов на НИОКР, <http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info>
5. Global R&D Funding Forecast, [http://digital.rdmag.com/researchanddevelopment/2018\\_global\\_r\\_d\\_funding\\_forecast?pg=1#pg1](http://digital.rdmag.com/researchanddevelopment/2018_global_r_d_funding_forecast?pg=1#pg1),
6. Развитие инноваций в Израиле, <http://www.rosinfocominvest.ru/upload/iblock/419/419e406d2b01ce002862d7df0dbd121e.pdf>
7. RAND Corporation. The Global Technology Revolution 2020, In-Depth Analyses, [http://www.rand.org/pubs/technical\\_reports/TR303.html](http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html),
8. RAND Corporation, The Global Technology Revolution 2020, Executive Summary, <http://www.rand.org/pubs/monographs/MG475.html>

## **7.6 Կրիտիկական ենթակառուցվածքների նկատմամբ մոտեցումները Թուրքիայում**

Տեխնիկական զարգացման ներկա պայմաններում, տարաբնույթ ճգնաժամերի, բնական և տեխնածին աղետների կանխարգելման, ռիսկերի նվազեցմանն ուղղված քաղաքականության մշակման գործում էական նշանակություն են ձեռք բերում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունն ու բարելավումը: Նման աշխատանքներում, սովորաբար, տարբեր երկրներում ներգրավված են հանրային նշանակության կարևորագույն օբյեկտների գործունեությունը համակարգող պետական, որոշ դեպքերում՝ մասնավոր սուբյեկտները:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության, անվտանգության մակարդակի բարձրացման, դրանց թարմացման ու արդիականացման, ֆինանսական ներդրումների ավելացման հետ կապված հիմնահարցերը համեմատաբար վերջերս են հայտնվել Թուրքիայի պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում:

**Կրիտիկական ենթակառուցվածքները և ռիսկերը.** Թուրքիայի Աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության շրջանակներում գործող տեխնոլոգիական աղետների ռիսկերի նվազեցման աշխատանքային խմբի կողմից 2014թ. հրապարակվեց Թուրքիայի «2014-2023թթ. կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ձանապարհային քարտեզ» գեկույցը: Համաձայն դրա, Թուրքիայի կրիտիկական ենթակառուցվածքների համակարգը կարելի է դասակարգել հետևյալ ուղղություններով.

- Էներգետիկա
- Կիբեռանվտանգություն, կապի տեխնոլոգիաներ

- Տրանսպորտային (ծովային և ցամաքային) կոմունիկացիաներ
- Մշակույթ և տուրիզմ
- Զբային ռեսուրսների կառավարում/ջրամբարների պաշտպանություն
- Բանկային և ֆինանսական համակարգ
- Առողջապահություն
- Գյուղատնտեսություն և սննդամթերքի անվտանգություն
- Բարձր տեխնոլոգիաներ
- Հանրային պաշտպանության ոլորտ:

Այս ենթակառուցվածքների համակարգերի արդյունավետության վրա ազդող սպառնալիքների (աղետների) աղբյուր են համարվում.

- **Բնական՝** երկրաբանական, օդերևութաբանական, բիոլոգիական երևույթները
- **Մարդկային գործոնով պայմանավորված վտանգներ՝** տեղեկատվական պատերազմ, կիրենիանցագործություններ, միջազգային և տեղական մասշտարների ահարեկչական գործողություններ, տրանսպորտային խոշոր պատահարներ, պատերազմներ, տեխնոլոգիական վտանգներ և այլն:

Դրանց առկայությամբ պայմանավորված՝ առաջանում են միկրո- և մակրոմակարդակների աղետներ՝ ազդելով ենթակառուցվածքների վրա ու խաթարելով դրանց կենսագործունեությունը, ընդ որում, նման իրավիճակներում միմյանց հետ փոխկապակցված ենթակառուցվածքներից մեկի խափանումը կարող է ազդել մյուսների վրա: Նման աղետներից են.

- **Բնական՝** երկրաշարժեր, սողանքներ, ջրհեղեղներ, ձյունահյուսեր
- **Տեխնածին՝** խոշոր արդյունաբերական համալիրների, ռադիոակտիվ և միջուկային խնդիրներով պայմանավորված, ծովային և ցամաքային (երկաթուղային) տրանսպորտային հանգույցների, վտանգավոր նյութերի տրանսպորտային փոխադրման հետ կապված աղետներ, էկոլոգիական (կլիմայական փոփոխություններ) աղետներ և այլն<sup>41</sup>:

Ակնհայտ է, որ նման աղետները կարող են հանգեցնել ենթակառուցվածքների քայլայման, ազդել կոռորդինացիոն և օպերատիվ գործողությունների վրա և նույնիսկ կարձաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով հանգեցնել համակարգային փլուզման: Հաշվի առնելով այդպիսի հնարավոր զարգացումներից եկող ռիսկերը՝ կրիտիկական ենթակառուցվածքների սահմանման և անվտանգության հարցերը դրված են Թուրքիայի այն պետական կառույցների վրա, որոնք պատասխանատու են իրենց ոլորտների համար:

Ստորև թվարկված հաստատություններն, ըստ Էռլթյան, իրենց իրավասությունների շրջանակներում պետք է նպաստեն նաև ենթակառուցվածքների կատարելագործմանն ինչպես ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, մասնագիտական կարրերի «աճեցմամբ», այնպես էլ ենթահամակարգերի զարգացմամբ և պաշտպանուակության բարձրացմամբ:

**Համաձայն Աղետների և արտակարգ իրավիճակների կա-**

<sup>41</sup> Թուրքիայի կառավարությանն առընթեր Աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության շրջանակներում առանձին-առանձին գնահատված են թվարկված աղետների առաջացման հետևանքով ի հայտ եկող ռիսկերը, հնարավոր զարգացումներն ու դրանց հետ առնչություն ունեցող ենթակառուցվածքների բարելավման հիմնահարցերը, <https://www.afad.gov.tr/3498/Kurumsal-Raporlar>

ուավարման վարչության գեկույցի, այդ շրջանակների մեջ են մտնում հետևյալ կառույցները.

- **Էներգետիկ ոլորտ՝** Թուրքիայի միջուկային էներգետիկայի կազմակերպություն, Էներգետիկայի նախարարություն, Էներգետիկ շուկայի կարգավորման կազմակերպություն
- **Տրանսպորտային ոլորտ՝** Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարություն
- **Կապի ոլորտ՝** Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հաստատություն, Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարություն
- **Զբային ռեսուրսների կառավարում՝** Գյուղատնտեսության և անտառատնտեսության նախարարություն
- **Ֆինանսարանկային ոլորտ՝** Գանձապետարանի և ֆինանսների նախարարություն, Թուրքիայի կապիտալի շուկաների խորհուրդ, Բանկային գործերի կարգավորման և վերահսկողության գործակալություն
- **Հանրային պաշտպանության ոլորտ՝** Ներքին գործերի նախարարություն
- **Առևտրաարդյունաբերական ոլորտ՝** Արդյունաբերության և տեխնոլոգիաների նախարարություն, Առևտրի նախարարություն, Թուրքիայի պալատների և բորսաների միություն
- **Առողջապահության ոլորտ՝** Առողջապահության նախարարություն
- **Մշակույթ և տուրիզմ՝** Մշակույթի և զբոսաշրջության նախարարություն
- **Գյուղատնտեսության ոլորտ՝** Գյուղատնտեսության և անտառատնտեսության նախարարություն<sup>42:</sup>

---

<sup>42</sup> Քանի որ մի շարք նախարարություններ 2018թ. անվանափոխվել են, հարկ ենք համարել պահպանել նախարարությունների այս պահին գործող անվանումները:

Ստորև կանդրադառնանք տեղեկատվական-տեխնոլոգիական (կիբեռանվտանգություն) և էներգետիկ (միջուկային) ոլորտներին, քանի որ դրանք, գնահատվելով որպես կրիտիկական ուղղություններ, առաջնային են:

**Կիբեռանվտանգություն.** Համաձայն թուրք հետազոտողների՝ կրիտիկական ենթակառուցվածքների և դրանց պաշտպանության հարցերը հիմնականում գնահատվել են «ազգային տեղեկատվական ավտանգության» համատեքստում: 1990-ականներից մինչև 2006թ. տեղեկատվական անվտանգության համակարգված աշխատանքները տարվում էին և ոլորտի անվտանգության վերաբերյալ օրինագիծն էլ մշակվում էր Ազգային պաշտպանության նախարարության կողմից, որի շրջանակներում նախատեսվում էր տեխնիկական, տեխնոլոգիական և դրանցից ածանցված տասնյակ միջոցառումների իրազործում, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով տվյալ օրենսդրական նախագիծը հավանության չի արժանացել:

2012թ. Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի (*TÜBİTAK*) ներգրավմամբ, Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարության հովանավորությամբ՝ Զարգացման նախարարության ներդրումային ծրագրերին նվիրված «Կրիտիկական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության կառավարման նախագծով» ակտուալ դարձավ կիբեռանվտանգության հարցը՝ ենթակառուցվածքների պաշտպանության տեսանկյունից: Նույն թվականին ստեղծվեց Կիբեռանվտանգության խորհուրդը, որն առաջին իսկ համաժողովին ընդունեց Ազգային կիբեռանվտանգության ռազմավարությունը և 2013-2014թթ. գործողությունների պլանը, որի համաձայն՝ առաջին փուլի համար սահմանվեցին կիբեռանվտանգության հետ

անմիջականորեն փոխկապակցված և միմյանց վրա փոխազդող հիմնական խոցելի ենթակառուցվածքները (ոլորտներ), որոնք են. 1. տրանսպորտային, 2. էներգետիկ, 3. էկոտրոնային կապ, 4. ֆինանսարանկային, 5. ջրային ռեսուրսների կառավարում, 6. հանրային ծառայությունների (կրիտիկական) ոլորտները<sup>43</sup>:

Սահմանելով և հաշվի առնելով վերը հիշատակված ենթակառուցվածքները՝ Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրապարակվեց «Ազգային կիբեռանվտանգության ռազմավարություն և 2016-2019թթ. գործողությունների պլան» նոր նախագիծը, որտեղ գնահատվել են հիմնական սպառնալիքներն ու համակարգի հետ կապված ռիսկերը (ներքին և անդրասահմանային կիբեռհարձակումներ և այլն), նաև մասնակիորեն դրանց անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված այնպիսի ռազմավարական նպատակներ, ինչպիսիք են կրիտիկական ենթակառուցվածքների ինվենտարիզացիան և պաշտպանությունը, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ուժեղացումը, կիբեռանվտանգության Էկոհամակարգի զարգացումը, կառքերի (վերա)պատրաստումը, կիբեռանվտանգության ինտեգրումն ազգային անվտանգությանը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների նորացումը և հարակից այլ հարցեր<sup>44</sup>:

Վերոհիշյալ ոլորտների հետ կապված առաջադրանքների և բուն աշխատանքների իրագործման գիսավոր պատասխանատու դերակատարներ են մի շարք գերատեսչական մարմիններ (դրանց թվում են գրեթե բոլոր ուժային կառույցները) և ենթա-

<sup>43</sup> Հարկ է նշել, որ Կիբեռանվտանգության խորհրդի անդամները ներկայացնում են գրեթե բոլոր պետական հաստատությունները, ուն ս <http://www.resmigazete.gov.tr/eskiler/2012/10/20121020-18-1.pdf>:

<sup>44</sup> 2016-2019 Ulusal siber güvenlik stratejisi, <http://www.udhb.gov.tr/doc/siberg/2016-2019guvenlik.pdf>.

կառուցվածքների անվտանգությունն ապահովող առանձին ստորաբաժանումներ: Միևնույն ժամանակ, բազմաթիվ գիտահետազոտական և ակադեմիական հաստատություններ իրենց գիտաստեղծագործական, վերլուծական աշխատանքներով և գործնական առաջարկություններով մասամբ աջակցում են կրիտիկական, խոցելի համարվող ենթակառուցվածքների սահմանման, ոիսկերի նվազեցման և այլ հարցերին<sup>45</sup>:

Այս համատեսատում առանձնահատուկ է Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի դերը գիտատեխնոլոգիական քաղաքականության ռազմավարական մշակման և պլանավորման գործում: Խորհրդին կից գործող Կիրեռանվտանգության ինստիտուտի կրթական ծրագրի կիրառական վարչության կրթական պորտալի միջոցով իրականացվում է համակարգչային տեխնոլոգիաների, տեղեկատվական հոսքերի կոնտենտ վերլուծությունների, նաև կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ոլորտների համար մասնագիտական կազմի պատրաստում<sup>46</sup>: Նշենք, որ Թուրքիայի Քաղիր Հաս համալսարանում 2018 թվականից գործում է կիրեռանվտանգության և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության կիրառական և հետազոտական նշանակության գիտառուսումնական կենտրոն<sup>47</sup>:

**Միջուկային Էներգետիկայի ոլորտ.** Միջուկային գիտելիքների նկատմամբ Թուրքիայի հետաքրքրությունը նոր չէ և ունի

<sup>45</sup>Տե՛ս, օրինակ, Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության իրականացրած Թուրքիայի Էներգետիկ ոլորտի կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության հարցերին նվիրված հետազոտական գեկույցը. Hasan Selim Özertem, Arzu Celalifer Ekinici, Betül Büke Karaçin, Kritik Enerji Altı-yapıı Güvenliği Projesi Sonuç Raporu, <https://www.jstor.org/stable/resrep14227>

<sup>46</sup>Siber güvenlik eğitim kategorileri, <https://egitim.sge.gov.tr/>.

<sup>47</sup><http://www.khas.edu.tr/news/1754>.

տասնամյակների պատմություն։ Թեև այսօր Թուրքիան չենք կարող դասել միջուկային հզոր պոտենցիալ ունեցող երկրների շարքին, սակայն ներկայում այստեղ տեղի ունեցող փաստացի տեղաշարժերը ցույց են տալիս, որ երկրում առնվազն արագ աճում է հետաքրքրությունը ոլորտի նկատմամբ։

Ստեղծվել և ստեղծվում են գիտելիքահեն ակադեմիական կառույցներ, զարգանում են ենթակառուցվածքները, որոնք ի գորու են ազգային միջուկային խնդիրների իրականացման համար ապահովել կադրեր և արտադրել ինտելեկտուալ ռեսուրսներ հերթափոխի համար, ինչը հատկապես նկատելի է վերջին տասնամյակում գիտատեխնիկական ոլորտում իրականացված աշխատանքներում<sup>48</sup>։

Երբ 1956թ. Թուրքիայում նախաձեռնվեց միջուկային հզոր կայանների հիմնումը, ակնհայտ դարձան միջուկային Էներգետիկայի և միջուկային տեխնոլոգիաների ոլորտում խորքային հետազոտություններ իրականացնող ինստիտուտների բացակայությունը, բարձր որակավորում ունեցող մասնագետների անբավարար քանակությունը։ Թուրքիայի միջուկային Էներգետիկայի հանձնաժողովի հիմնադրմանը զուգահեռ, որը հետագայում վերանվանվեց Թուրքիայի միջուկային Էներգետիկայի կազմակերպություն (TAEK), առաջ եկավ նաև ոլորտում կադրերի պատրաստման ռազմավարական պլանավորման հարցը։

Թուրքիայի միջուկային Էներգետիկայի կազմակերպությունը չքավարարվեց միայն միջազգային փորձն օգտագործելով, այլև նպատակահարմար գտավ սեփական ուժերով ստեղ-

<sup>48</sup>Տե՛ս Գիտահետազոտական կենտրոնների թիվը Թուրքիայում հասել է 900-ի, [http://noravank.am/arm/news/detail.php?ELEMENT\\_ID=17407](http://noravank.am/arm/news/detail.php?ELEMENT_ID=17407),

Տեխնոպարկերը Թուրքիայի տնտեսության կարևոր բաղադրիչն են, [http://noravank.am/arm/news/detail.php?ELEMENT\\_ID=17427](http://noravank.am/arm/news/detail.php?ELEMENT_ID=17427)

ծել միջուկային հետազոտություններ իրականացնող գիտական կենտրոններ: Դա առաջին հերթին բացատրվում էր միջուկային էներգետիկայի և միջուկային տեխնոլոգիաների զարգացման, դրանք անվտանգ և ապահով օգտագործել կարողանալու, անհրաժեշտ քանակի և անվտանգության մշակույթին (*safety culture*) տիրապետող, որակյալ մասնագիտական ուժերի կազմակորման անհրաժեշտությամբ:

Ոլորտում հաջողությունների հասնելու համար պետք է կատարվեն հետևյալ կարձամամկետ և երկարաժամկետ ռազմավարական քայլերը, ինչը հրահանգվել էր կենտրոնից.

- միջուկային էներգետիկ ծրագրերի իրականացման համար պատրաստել անհրաժեշտ քանակի որակյալ մասնագետներ՝ օգտվելով միջազգային փորձից և նրանց մշակած ստանդարտներից,
- միջուկային տեխնոլոգիաների ոլորտում որակյալ կադրեր պատրաստելու նպատակով ստեղծել գիտառուսումնական կենտրոններ՝ զինված ժամանակակից համապատասխան տեխնոլոգիաներով,
- կարձամամկետ կրթական ծրագրերի շրջանակներում միջուկային տեխնոլոգիաների ոլորտում պատրաստվող կադրերը հասցնել միջազգային չափանիշի,
- երկարաժամկետ միջուկային ծրագրի շրջանակներում երկրի արդյունաբերական և տեխնոլոգիաների մշակման ոլորտում պատրաստել կադրեր՝ որպես հարթակ օգտագործելով տեխնիկական վարժարանները (լիցեյներ), համալսարանները, ինստիտուտները և մշակել համապատասխան քաղաքականություն ուսումնական ոլորտում:

Վերոհիշյալ ռազմավարական խնդիրների իրագործման համար ստեղծվեցին բավական խոշոր հետազոտական կենտրոններ: Առանցքային նշանակություն ունեցող նման կենտրոններ ստեղծվեցին Թուրքիայի միջուկային էներգետիկայի կազմակերպությանը կից, որոնք հանդիսանում են դրա ենթակառուցները: Դրանք են.

1. Անկարայի Միջուկային հետազոտական և ուսումնական կենտրոնը,
2. Չեքմեջեի Միջուկային հետազոտական և ուսումնական կենտրոնը,
3. Սարայքյոյի անվան Միջուկային հետազոտական և ուսումնական կենտրոնը,
4. Թյուրքական պետությունների միջև միջուկային համագործակցության, հետազոտական և ուսումնական կենտրոնը<sup>49</sup>:

Առաջին երեք հետազոտական կենտրոնները, որոնք գործում են *TAEK*-ին կից, համարվում են կարերի «հարստացման» հիմնական միջավայրը, դրանցում գործում են ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիաներ: Մնացած հատվածի համար, որոնք ունեն սպեցիֆիկ ուղղվածություն, հմտանում և գիտելիքներ են ստանում ինչպես տեղի ակադեմիական հաստատություններում, որոնք չեն գործում *TAEK*-ին կից, այնպես էլ Միջազգային միջուկային էներգետիկայի գործակալության կողմից իրագործվող շարունակական ծրագրային դասընթացների շրջանակներում: Արտերկրի հետ շարունակ-

<sup>49</sup> 1999թ. հիմնադրված Թյուրքական պետությունների միջև միջուկային համագործակցության, հետազոտական և ուսումնական կենտրոնը փակվել է 2010թ. *TAEK* դեկավարության կողմից:

վող միջուսումնական ծրագրերը, ինչպես վկայում են թուրք հետազոտողները, բավական արդյունավետ են այն ուսանողների համար, որոնք չունեն լեզվական խնդիր, ինչը հնարավորություն է տալիս ապագա ինժեներ-ֆիզիկոսներին հարմարվել և արագ յուրացնել միջուկային տեխնոլոգիաների ոլորտում ստացած գիտելիքները<sup>50</sup>:

Միջուկային հետազոտությունները, սակայն, չսահմանափակվեցին միայն *TAEK*-ին կից գործող հետազոտական կենտրոններով: Հաշվի էր առնվել, որ վերջինս չէր կարող միայնակ ստեղծել հետազոտությունների իրականացման պրոֆեսիոնալ դպրոց, այդ պատճառով մշակվեց նաև ինստիտուտների զարգացման ռազմավարություն կադրերի պատրաստման գծով: Ինստիտուտները պետք է համահունչ լինեին ժամանակի պահանջներին և անընդհատ արդիականացվեին թե՝ տեխնոլոգիաների և թե՝ գիտելիքների առումով: Նման քաղաքականությունը հիմնավորվում էր դեռևս 1956թ. կառավարության որոշմամբ հիմնադրված Թուրքիայի միջուկային էներգետիկայի հանձնաժողովի ստեղծմամբ: Այս քաղաքականության արդյունքում ժամանակի հետ ստեղծվեցին ինստիտուտներ, որոնք համարվում են *TAEK* ռազմավարական գործընկերները և կատարում են կադրային փոխլրացման քաղաքականություն<sup>51</sup>:

Միջուկային ուղղությունը՝ որպես հեռանկարային ոլորտ, առաջնային նշանակություն ունի Թուրքիայի համար, և առաջիկա տարիներին Ռուսաստանի համագործակցությամբ ստեղծ-

<sup>50</sup> Dr. Erdener BİROL, TAEK Başkan V., Nükleer Bilimler ve Fizik Mühendisliği, MO Bülteni, "Fizik Mühendisliği", Özel Sayısı, FMO Eğitim Çalışma Grubu.

<sup>51</sup> Օրինակ, Էգեյան համալսարանի Միջուկային գիտությունների ինստիտուտը միջուկային ոլորտում ուսումնասիրություններ կատարող և կադրերի պատրաստման խոշոր ակադեմիական կառույցներից մեկն է:

վելու է Աքքոյուի ատոմակայանը: Հայտնի է նաև, որ Թուրքիայի հարյուրավոր քաղաքացիներ հնարավորություն են ստացել միջուկային ֆիզիկայի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերել ՈՒ գիտական և ուսումնական հաստատություններում, այսինքն կարելի է ասել, որ այդ հարցում մասնագետների պակաս չի զգացվելու:

Ամփոփելով՝ նշենք, որ կրիտիկական ոլորտների հիմնախնդիրները Թուրքիայի պետանվտանգության մասն են կազմում, հետևաբար՝ գտնվում են երկրի բարձրագույն իշխանությունների ուշադրության կենտրոնում, համապատասխան կառուցների կողմից սահմանվում և գնահատվում են խոցելի ենթակառուցվածքները, դրանց մեջ մտնող օբյեկտների քանակը, դրանց փոխազդեցությունները և անվտանգային սպառնալիքները: Հարկ է նաև արձանագրել, որ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված ռազմավարական քայլերի իրագործման ձանապարհին կիրառվում է միջազգային փորձը՝ հաշվի առնելով Թուրքիայի յուրահատկությունները:

\*\*\*

Ինչպես հետևում է նախորդ բաժիններում ներկայացված նյութերից, կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը ենթադրում է նաև պետական զարգացած տնտեսական համակարգ: Մինչդեռ ՀՀ-ում այս ոլորտում նույնպես առկա են խնդիրներ, որոնք և կքննարկվեն հաջորդ բաժնում:

## 8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

2016թ. Դավոսում, 46-րդ Համաշխարհային տնտեսական համաժողովում, ֆորումի նախագահ, պրոֆեսոր Կլաուս Մարտին Շվաբն աշխարհին տեղեկացրեց «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» մասին, որն ազդելու է մարդու գործունեության բոլոր ասպեկտների վրա<sup>1</sup>:

Մարդկությունը թևակոխում է մի դարաշրջան, որը բնութագրվում է նորագույն տեխնոլոգիաների գերակայությամբ, երբ մենք ականատեսն ենք դառնում նոր տեխնոլոգիական առաջընթացի. արհեստական ինտելեկտ, ռոբոտացում, նանոտեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիաներ և այլն: Այս հեղափոխությունը նախորդներից տարբերվում է և՛ զարգացման տեմպերով, և՛ արտադրության ու կազմակերպման համակարգի վրա ազդեցության աստիճանով, որոնք երկարատև հեռանկարում ազդեցություն կգործեն տնտեսության և սոցիումի վրա:

Միաժամանակ, նորագույն տեխնոլոգիաների կիրառման տարածմանը զուգահեռ, սուրյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով, ավելանում է նոր սպառնալիքների քանակը, որոնց հետ բախվում են տարբեր երկրները՝ հանգեցնելով տարատեսակ ձգնաժամերի թվաքանակի աճի: Նման ձգնաժամերը կարող են դուրս գալ ազգային սահմաններից՝ բացասական ազդեցություն

<sup>1</sup> «The Fourth Industrial Revolution», Foreign Affairs, December 12, 2015.

թողնելով այլ պետությունների և դրանց ինստիտուտների սոցիալ-տնտեսական ընթացիկ գործընթացների վրա, դժվարացնելով այդ պետությունների հասարակությունների սոցիալական համախմբվածության և քաղաքական կայունության հասնելու հնարավորությունները:

Վերջին քառասուն տարիներին աշխարհն աստիճանաբար մտել է «հետկառուզմիցյան» իրավիճակ, երբ պատերազմներ այլևս չեն հայտարարում, մարտադաշտերը կարող են լինել ամենուրեք: Խոսքն աշխարհով մեկ տնտեսական, կառավարչական և ֆինանսական ինստիտուտների վրա գրոհների՝ հիբրիդային պատերազմների մասշտաբների տագնապալի աճի մասին է, որոնք ուղղված են պետության կրիտիկականորեն կարևոր տնտեսական, ֆինանսական և կառավարչական (ինստիտցիոնալ) համակարգերի (ենթակառուցվածքների) խափանմանը և անվտանգության ապահովման հնարավորությունները վնասելուն: Սա հրատապ է դարձնում նպատակային հետազոտությունների անցկացումը տնտեսության, նրա ինստիտուտների և ազգային (ներքին և արտաքին) անվտանգության խաչման կետում:

### **8.1 Հայաստանի առջև ծառացած ինդիրները**

**Ներքին անվտանգություն.** Հայաստանի բնակչության մեկ շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ն 2017-2018թթ. ԱՄՀ ցուցակով կազմել է \$3,511.0 (115-րդ տեղը 186 երկրների մեջ): Երրորդ Հանրապետության գոյության տարիների ողջ ընթացքում պահպանվում է գործազրկության, չքավորության և աղքատության բարձր մակարդակը: Սոցիոլոգիական հարցումները մատնանշում են գործազրկության 28%-ին մոտ մակարդակ (պաշտոնապես՝ 18.5%): Առանձնապես մտահոգիչ է այն, որ զուգահեռաբար ար-

ձանագրվում է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նվազում: Նման իրավիճակը բացասաբար է ազդում փոփոխվող սոցիալական կառուցվածքի վրա՝ դրանում առանձնացնելով այն մարդկանց շերտը, որոնք մշտական աշխատանք չունեն, կամ այն մարդիկ են, որոնք գտնվում են այսպես կոչված «պրեկարիատում» (մարդիկ, որոնց վաստակը մշտական չէ): Մեր հասարակությանը բնորոշ երևույթներից են դարձել նաև «աշխատող աղքատները»:

Համաձայն Համաշխարհային բանկի վերջին հետազոտությունների՝ աղքատության մակարդակը (այսինքն՝ երկրում այն մարդկանց թիվը, ովքեր օրական \$5-ից պակաս են ծախսում, իսկ 26%-ն օրական ծախսում է \$2.5-ից քիչ) ՀՀ-ում 2014թ. կազմել է 76%: Հայաստանում աղքատության շեմից ցածր վիճակում է ապրում մոտ 900 հազար մարդ: Իրական բարեկեցության բարելավման բացակայության պայմաններում երկրում բնակչության մի մասի համար ձևավորվել է լճացած աղքատություն կամ, ինչպես մենք ենք անվանում, *անհավասարություն անվտանգության շեմից անդին*:

Երկրի տնտեսությունը լճացման, կառուցվածքային հետընթացի մեջ է՝ այլ երկրներից տնտեսապես հետ մնալու խորացմամբ: Խոսքն, առաջին հերթին, տարածաշրջանի (Հարավային Կովկաս, Մեծ Մերձավոր Արևելք) երկրների մասին է: Չափից ավելի տիսուր սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ պահպանվում են արտագաղթի բարձր տեմպերը, ուղղակի ներդրումները տնտեսությունում կրծատվում են, ավելանում է երկրի արտաքին պարտքը (ՀՆԱ մոտ 60%):

ՀՀ դեկավար ընտրանու ցածր պրոֆեսիոնալիզմը բարեփոխումների 25 տարիների ընթացքում Հայաստանն իշեցրել են

«Երրորդ աշխարհի» երկրների միջինացված մակարդակից ցածր, որոնց բնորոշ է փոքր ու թույլ տնտեսությունը՝ անձնական եկամուտների մակարդակի վառ արտահայտված քննոացմամբ: Երկրում ձևավորվեց հումքային տնտեսության բավական պարզունակ մոդել, միևնույն ժամանակ՝ հիմնականում կախված լինելով արտագնա աշխատողների և սփյուռքի փոխանցումներից: Հասարակությունում տիրող տնտեսական դեստրուկցիան, հուսահատության զգացողությունը հարցականի տակ են դնում երկրի կայունության հարցը, ինչը չէր կարող չանդրադառնալ քաղաքական գործընթացների և հանրապետությունում իրավիճակի կայունության վրա:

Հիշենք, որ դեռևս 1991թ. ՀՀ-ում հայտարարվեց իրավական պետություն կառուցելու ծրագրի մասին: 1995թ. ընդունվեց Սահմանադրությունը, որտեղ այդ ամբողջ ծրագիրն օրինականացվեց: Սակայն 1995-96թթ. չաշխատեց ազատ ընտրությունների մեխանիզմը, չկայացավ նաև արդարադատության համակարգը, քաղաքական ոլորտը սեփականվեց օլիգարխիայի կողմից: Վազգեն Սարգսյան և Կարեն Դեմիրճյան տանդեմի ցանկությունը՝ չափավորել նրանց ախորժակը և նույնիսկ հեռացնել նրանց տնտեսական-քաղաքական իշխանությունից, հանգեցրեց 1999թ. հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձություններին:

**Արտաքին անվտանգություն.** Հայաստանի առջև ծառացած երկրորդ խնդիրը արտաքին անվտանգությունն է: Ինչի՞ հետ է այն կապված: Ընտրություններում տարած հաղթանակից հետո թուրքիայի նախագահը մտադիր է առաջատար ուժ դառնալ տարածաշրջանում: Մայիսի 14-ին ելույթ ունենալով Լոնդոնի *Chatham House* վերլուծական կենտրոնում՝ Էրդողանը կատարել է հետևյալ հայտարարությունը. «Թուրքիան նպաստում է խաղա-

դուրժյան և անվտանգության պահպանմանը Կենտրոնական Ասիայում և Կովկասում: Հայաստանը միակ պետությունն է, որը չի տեղափորձում ընդհանուր պատկերում: Ավելին, Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) «Ընտրական հոչակագրում» ներառվեց դրույթ «Թյուրքական խորհրդի գաղափարը» վերածնելու մտադրության մասին, ինչի շնորհիվ Անկարան կկարողանա ակտիվորեն ընդլայնել և ամրացնել կապերը Կովկասի երկրների և Թուրքեստանի հետ: Կրկին վերածնվող «Թուրքեստան» տեղանունը լիովին կարող է փոխարինել միանշանակ սահմանում չունեցող «Կենտրոնական Ասիա» և բավական «ծանրաքաշ» «Ղազախստան և Միջին Ասիա» տեղանուններին: Այն առավել հզոր պատմական արմատներ ունի, բավական հստակ է նույնականացնում տարածքը:

Թուրքական վերլուծաբանական հանրությունում սկսել են բարձրաձայն քննարկել «Աղրբեշանի և Թուրքիայի միջև դաշնային պետության» նախագիծը: Հնարավորություններ են ընձեռվում ձևավորելու ավելի լայն կապեր Թուրքիայի, Աղրբեշանի և Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) միջև: Ի դեպ, Աղրբեշանի Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի տնօրեն Յաղուր Մամեդովը հայտարարեց, թե Աղրբեշանը համագրքակցում է Թուրքիայի հետ թյուրքերի ընդհանուր պատմությունը գրելու գործում:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ Մեծ Աղրբեշանի ստեղծման առկա նախագծերը՝ դրա կազմում Հարավային (իրանական) Աղրբեշանի ներառմամբ: Գաղտնիք չէ, որ ԱՄՆ-ի համար, որն Իրանը հոչակել է իր գլխավոր հակառակորդը Մերձավոր Արևելքում, գայթակղիչ են ոչ միայն իրանական ուղղությամբ աղրբեշանական խաղաթղթի խաղարկման, այլև մերձավոր-

արևելյան հակամարտությունն առհասարակ դեպի Անդրկովկաս և մասնավորապես Աղբքեջան տեղափոխելու հեռանկարները:

Սակայն Հայաստանի առջև ծառացած խնդիրները սրանցով չեն սպառվում: Հունիսի 26-ին Բաքվում տեղի ունեցավ խոշոր ռազմական շքերթ՝ նվիրված Աղբքեջանի զինված ուժերի 100-ամյակին: Շքերթի նորույթներից մեկը թուրքական արտադրության *SOM-1B* ավիացիոն թևավոր հրթիռն էր: Այն համարվում է ֆրանսիական արտադրության *Microturbo TRI 40* տուրբոռոեակտիվ շարժիչով: Այս հրթիռների մատակարարումների հետ կապված հարց է առաջանում՝ ֆրանսիական շարժիչի առումով: Այսօրվա դրությամբ ԵՄ երկրները հիմնականում պահպանել են Հայաստանին և Աղբքեջանին զենք չմատակարարելու հանձնարարականը: Արդյո՞ք Թուրքիան Ֆրանսիայի հետ համաձայնեցրել է թևավոր հրթիռների մատակարարումները: Եթե այո, ապա ստացե՞լ է արդյոք դրական պատասխան: Եթե արդեն Փարիզն էլ է հեռանում լուր համաձայնեցված էմբարգոյից, նշանակում է՝ այն այլս գոյություն չունի, և սա պետք է նկատի ունենալ<sup>2</sup>:

Այս ամենի առիթով նշենք, որ երկրի ազգային բարեկեցությունը հենվում է անվտանգ և կայուն կրիտիկական ենթակառուցվածքի վրա. դրանք այն ակտիվներն են, համակարգերն ու ցանցերը, որոնք ընկած են ցանկացած հասարակության հիմքում: Կրիտիկականորեն կարևոր ենթակառուցվածքը մենք հետազոտում ենք ներքին և արտաքին անվտանգության ապահովման խնդրի հետ շաղկապված: Նման հետազոտությունները թույլ են տալիս մեզ համապարփակ մոտենալ Հայաստանի կրիտիկական ենթակառուցվածքի այն բաղադրիչի ընտրության խնդրին, որն առավել արդյունավետ ազդեցություն է գործում ըն-

<sup>2</sup> <https://regnum.ru/news/2438426.html>

թացող սոցիալ-տնտեսական գործընթացների վրա: Եվ հասնելով կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիության նվազման ու դրանց անվտանգության ու կայունության բարձրացման նպատակներին՝ մենք դրանով իսկ բարձրացնում ենք զարգացման ինստիտուտների կազմավորմանն ուղղված տնտեսական բարեփոխումների իրականացման հնարավորությունները:

## **8.2 Կրիտիկական ենթակառուցվածքի կոնտենտը**

ԱՄՆ Ազգային հետազոտական խորհուրդը (*National Research Council*) տվել է հետևյալ սահմանումը. «Ենթակառուցվածքը՝ ամենաընդհանուր իմաստով, փոխկապված կառուցվածքային այն տարրերի ամբողջությունն է, որոնք սատարում են ողջ կառուցվածքի ամբողջականությանը: Սովորաբար կիրառվում է միայն արհեստականորեն ստեղծված (ֆիզիկական- հեղ.) կառուցվածքների համար»<sup>3</sup>:

Սպառնալիքների ընդլայնվող բազմազանությունն էլ ավելի մեծ ու իրական վտանգ է ներկայացնում կրիտիկականորեն կարևոր ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում: Նոր խոցելիություններ ի հայտ եկան տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ կապված, որոնք թափանցում են կյանքի բոլոր ոլորտներ: Ուստի, կենսականորեն կարևոր հանրային կառուցների և ինստիտուտների պաշտպանությունը կառավարության կարևորագույն պարտականությունն է՝ պետական անվտանգության ապահովման համատեքստում: Անվտանգության և կայունության հասնելու համար կենսականորեն կարևոր գործընկերները պետք է համատեղ որոշեն գերակայությունները, ձևակերպեն հատակ նպա-

<sup>3</sup> Infrastructure for the 21st Century Framework for a Research Age. Washington: National Academies Press, 1987. ISBN 978-030-9078-146.

տակներ, խուսափեն կամ մեղմեն ռիսկերը՝ աղապտացվելով հակադարձ կապի և փոփոխվող միջավայրի հիման վրա: Գործընկերությունը կրիտիկական ենթակառուցվածքի անվտանգության և կայունության ապահովման միջավայրում ազգային մակարդակում ձևավորում է այն ռիսկերի կառավարման պաշտպանական մեխանիզմները, որոնց կարող են ենթարկվել երկրի կրիտիկական ենթակառուցվածքները:

Ենթակառուցվածքները դասակարգելիս ընդունված է դրանք բաժանել երկու տեսակի՝ կոչու ենթակառուցվածք (ֆիզիկական ցանցեր, որոնք անրաժեշտ են ազգի գործունեության համար) և փափուկ ենթակառուցվածք (ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական համակարգին՝ առողջապահություն, երկրի մշակութային և սոցիալական ստանդարտներ, ինչպես նաև ֆինանսական, առողջապահական համակարգերին, պետական կառավարման և իրավապահ մարմիններին, արտակարգ իրավիճակների ծառայություններին աջակցելու համար)<sup>4)</sup> (տե՛ս Նկ. I):

«Նորավանք» հիմնադրամում իրականացվող հետազոտություններում հատուկ ուշադրություն է հատկացվել կրիտիկական ենթակառուցվածքներին<sup>5)</sup>: Սկզբում շեշտադրվում էր

<sup>4)</sup>The soft infrastructure of a market economy Archived2011-03-28 at the Wayback Machine. William A. Niskanen, 1991, Cato Journal, Vol. 11, No. 2, 233–38, Cato Institute.

<sup>5)</sup> «О критических инфраструктурах евразийской интеграции», декабрь, 2017, [www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT\\_ID=16344](http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=16344). «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում սույն թեմայով հետազոտությունները հիմնադրամի հետազոտական գործունեության կարևոր ուղղությունն են համարվում: Տե՛ս և հիմնադրամի կայքը. *Արյունյան Ղ.*, Критические инфраструктуры и идеология; *Արյունյան Ղ.*, О критических инфраструктурах евразийской интеграции; *Դորեկտ Խաչատրյան*, *Ֆրիդա Հակոբյան*, *Բարձրագույն կրթության գործառությները կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում*; *Մամիկոն Մարտիրոսյան*, *Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը* և կրիտիկական ենթակառուցվածքները; *Գաղիկ Հարությունյան*, *Հայագիտությունը որպես «կրիտիկական ենթակառուցվածք»*, <http://noravank.am/>.

## Նկար 1

### Կրիտիկական ենթակառուցվածքների փոխկախալությունը<sup>6</sup>



ՀՀ տեղեկատվական անվտանգության ոլորտը: Սակայն շուտով պարզվեց, որ ամեն ինչ շատ ավելի բարդ է, քանի որ գրեթե անհնար էր լուծել որևէ կիրառական խնդիր՝ առանց ծագած խնդիրներն այլ ձյուղերի հետ շաղկապելու: Ըստ այդ աշխատանքների, զիտատեխնոլոգիական ոլորտը ազգային անվտանգության հիմնային կրիտիկական ենթակառուցվածքն է, իսկ մնացած տարրերը նրա ածանցյալներն են: Ի լրումն՝ անուշադրության են մատնված սկզբունքայնորեն նոր ծրագրերը՝ կապված, առաջին հերթին, ֆինանսատնտեսական և վարքային կոշտ հակամարտությունների հետ<sup>7</sup>՝ ուղղված պետության կեն-

<sup>6</sup>“Protecting Critical Infrastructures – Risk and Crisis Management. A guide for companies and government authorities.” [www.bmi.bund.de](http://www.bmi.bund.de), Federal Ministry of the Interior, 2008.

<sup>7</sup> Ларина Е., Университеты США и американское разведывательное сообщество: как ведется война против России, [http://communitarian.ru/posts/skrytaya\\_storona\\_vlasti/universitety\\_ssha\\_i\\_amerikanskoe\\_razvedyvatelnoe\\_soobschestvo\\_kak\\_vedetsya\\_v\\_oyna\\_protiv\\_rossii\\_17072015](http://communitarian.ru/posts/skrytaya_storona_vlasti/universitety_ssha_i_amerikanskoe_razvedyvatelnoe_soobschestvo_kak_vedetsya_v_oyna_protiv_rossii_17072015).

սագործունեության օբյեկտների/սուբյեկտների գործունեության կազմաքանդմանը, որոնք կարելի է և պետք է համարել կրի-տիկական ենթակառուցվածքներ:

Ստորև ներկայացվող հայեցակարգային սահմանումները տալիս են կրիտիկական ենթակառուցվածքի կոնտենտը: Այս կարևոր սահմանումները հիմք են հանդիսանում այն որոշող միջավայրն իրատեսորեն ընկալելու համար և նրա անվտանգության ու կայունության ապահովմանն անհրաժեշտ հասարակական մոտեցում են ձևավորում՝ օգտվելով մի շարք երկրների փորձից (*Աղյուսակ I*).

*Աղյուսակ I*  
**Կրիտիկական ենթակառուցվածքի սահմանումը որոշ երկրներում<sup>8</sup>**

Ավատրալիա	Կրիտիկական ենթակառուցվածքը սահմանվում է որպես ֆիզիկական օբյեկտներ, մատակարարումների շղթաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և կայի ցանցեր, որոնք, եթե վերացվելու լինեն, դեգրադացված կլինեն կամ անհասանելի կղանան ժամանակի տևական ընթացքում, զգալի ազդեցություն կարող են գործել ազգի սոցիալական կամ տնտեսական բարեկեցության վրա կամ կարող են ազդել Ավատրալիայի ազգային պաշտպանություն իրականացնելու և ազգային անվտանգությունն ապահովելու կարողության վրա:
Կանադա	Կանադայի կրիտիկական ենթակառուցվածքը կազմված է ֆիզիկական ենթակառուցվածքի այն օբյեկտներից և տեղեկատվական տեխնոլոգիաներից, ցանցերից, ծառայություններից և ակտիվներից, որոնք, որոնք, դրանց վերացման դեպքում, կարող են լուրջ ազդեցություն ունենալ կանադացիների առողջության, անվտանգության կամ տնտեսական բարեկեցության, կամ Կանադայում կառավարության արդյունավետ գործունեության վրա:

<sup>8</sup> Protection og Critical Infrastructure and the Role of Investment Policies Relating to National Security. OECD. 2008.

Գերմանիա	Կրիտկական ենթակառուցվածքը այն կազմակերպություններն ու օբյեկտներն են, որոնք կարևոր նշանակություն ունեն հասարակության համար, որի անհաջողությունը կամ վատթարացումը կարող է առաջ բերել մատակարարումների մշտական դեֆիցիտ, հանրային կարգի զգալի խաթարումներ կամ դրամատիկ այլ հետևանքներ:
Նիդեռլանդներ	Կրիտիկական ենթակառուցվածքը են համարվում այն արտադրանքը, ծառայությունը և ուղեկից գործընթացները, որոնք խախտման կամ անհաջողության դեպքում կարող են առաջ բերել լուրջ սոցիալական անկարգություններ: Դա կարող է լինել հսկայական կորուստների և լուրջ տնտեսական վնասի ձևով:
Միացյալ Թագավորություն	[Ազգային կրիտիկական ենթակառուցվածքը] ներառում է այն ակտիվները, ծառայությունները և համակարգերը, որոնք սատարում են Մեծ Բրիտանիայի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքին, որի կարևորությունն այնպիսին է, որ կորուստները կարող են 1) հանգեցնել մեծաթիվ մարդկանց մահվան; 2) լուրջ ազդեցություն գործել ազգային տնտեսության վրա; 3) ունենալ այլ լուրջ սոցիալական հետևանքներ հանրության համար կամ 4) անմիջական առնչություն ունենալ կառավարության հետ:
Միացյալ Նահանգներ	Կրիտիկական ենթակառուցվածքի սահմանումը՝ համակարգեր և ակտիվներ, դիցուք ֆիզիկական կամ վիրտուալ կենսականորեն այնքան կարևոր Միացյալ Նահանգների համար, որ դրանց անաշխատունակությունը կամ խափանումը բացասական ազդեցություն կունենա անվտանգության, ազգային տնտեսական անվտանգության, ազգային առողջապահության կամ դրանցից յուրաքանչյուրի ցանկացած կոմբինացիայի վրա: Ներդրումային քաղաքականության նպատակների համար այս սահմանումն ավելի նեղ է. համակարգեր և ակտիվներ, դիցուք՝ ֆիզիկական կամ վիրտուալ, կենսականորեն այնքան կարևոր ԱՄՆ-ի համար, որ նման համակարգերի և ակտիվների անաշխատունակությունը կամ խափանումը բացասական ազդեցություն կթողնեն ազգային անվտանգության վրա:

**Կրիտիկականություն.** Որոշ երկրների սահմանումներում **կրիտիկական** բառը վերաբերում է ենթակառուցվածքի այն մասին, որն էական աջակցություն է ցուցաբերում տնտեսական և սոցիալական բարեկեցությանը, հանրային անվտանգությանը և ապահովում է կառավարության կարևոր պարտավորությունների կատարումը: Կանադական սահմանման մեջ **կրիտիկականություն** ասելով հասկանում են «լուրջ ազդեցություն կանադացիների առողջության, անվտանգության, կանադացիների անվտանգության կամ տնտեսական բարեկեցության, կամ Կանադայում կառավարությունների արդյունավետ գործունեության վրա»: Գերմանիան հղում է կատարում «հանրային կարգի խախտումների կամ դրամատիկ այլ հետևանքների» վրա: Կրիտիկական ենթակառուցվածքը Նիդեռլանդներում այն ենթակառուցվածքն է, որի խափանումը կարող է առաջ բերել «լուրջ սոցիալական անկարգություններ», «մարդկանց կյանքի հսկայական կորուստներ» և «տնտեսական վնաս». Այսպիսով, «կրիտիկական» բառը այդ պետությունները վերագրում են այն ենթակառուցվածքին, որի խափանումը հանգեցնում է աղետալի և հեռահար հետևանքների ռող երկրի համար:

**Ենթակառուցվածք.** Վերջինիս սահմանումները, որոնք օգտագործվում են կրիտիկական ենթակառուցվածքի պաշտոնական բնորոշումներում, որպես կանոն, բավական լայն են: Վերը մենք արդեն ներկայացրինք տարբերակներից մեկը: *Աղյուսակ 1-*ում բոլոր 6 երկրներում կրիտիկական ենթակառուցվածք են համարում, առաջին հերթին, ավանդական, ֆիզիկական ենթակառուցվածքները: Դրանց մեծ մասը ներառում է նաև ոչ պութական ակտիվները և/կամ հաղորդակցային ցանցերը:

**Անվտանգություն.** Այն ընդունված է սահմանել որպես «կրիտիկականորեն կարևոր ենթակառուցվածքի պաշտպան-

վածության վիճակ (կամ ոխսկի նվազեցում ֆիզիկական միջոցների կիրառմամբ), որն ապահովում է նրա կայուն գործունեությունը՝ նրա նկատմամբ գրոհներ իրականացնելու, տարերային կամ տեխնածին աղետների պարագաներում» Կրիտիկականութեն կարևոր ենթակառուցվածքների անվտանգության համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է սպառնալիքների անընդհատ և հետևողական մոնիթորինգ՝ մշտապես և ստուգ գնահատելով այդ սպառնալիքներին հակագրելու, դրանք չեզոքացնելու և կանխելու հնարավորությունները: Դա թույլ է տալիս ժամանակին չեզոքացնել սպառնալիքներն ու խոցելիությունները, նպաստում է ստուգ, անհրաժեշտ և գործուն տեղեկատվության փոխանակմանը, ընթացիկ և ապագա ռիսկերի վերլուծություն իրականացնելուն:

**Կայունությունը** սահմանվում է որպես «փոփոխվող պայմաններին պատրաստվելու և հարմարվելու կարողություն», ինչպես նաև օպերատիվորեն դիմակայել և արագ վերականգնվել խափանումներից, կանխամտածված գրոհներից, դժբախտ դեպքերից և/կամ դիմակայել սպառնալիքներին կամ միջադեպերին»:

Խոսելով ենթակառուցվածքային ակտիվների, համակարգերի և ցանցերի կայունության մասին՝ ենթադրվում է, որ դրանք պետք է լինեն հուսալի, ձկուն և ադապտիվ: Սպառնալիքների մասին ստուգ, ճիշտ ժամանակին տրված և գործուն տեղեկատվության առկայությունը և ակնկալվող ռիսկերի վերլուծությունը, դրանց հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումների սահմանումը, սպառնալիքներին արձագանքելը և, համապատասխանաբար, վերականգնվելու կարողությունը կարևոր են կրիտիկական ենթակառուցվածքի կայունության ամրապնդման առումով:

**Ո՞իսկերի կառավարում.** Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացումը և կայունության ամրապնդումն ապահովում են **ո՞իսկերի կառավարման միջոցով.** Ո՞իսկը սահմանվում է որպես «կորստի կամ վնասի հավանականություն» և համարվում է «պոտենցիալ առումով անցանկայի արդյունք», որը հնարավոր է, որ ծագի միջադեպի, իրադարձության կամ այն իրադարձության արդյունքում, որը սահմանվում է նրա ծագման և դրա հետ կապված հետևանքների հավանականությամբ [սպառնալիքների և խոցելիությունների գործառույթ]». Ո՞իսկերի կառավարումը «նույնականացման, վերլուծության գործընթաց է՝ ո՞իսկի մասին տեղեկատվության պատրաստմամբ, նրա մասին տեղեկության փոխանցմամբ և նրա առկայության ընդունմամբ՝ դրանից խուսափելու կամ այն վերահսկելու հնարավորությամբ, ընդունելի արժեքով մինչև ընդունելի մակարդակ հասցնելու նպատակով»: **Գործընկերությունն** ապահովում է ո՞իսկերի արդյունավետ կառավարումը:

**Կրիտիկական ենթակառուցվածքին հասցված վնասը,** դրա խափանումը տարերային աղետների, ահաբեկչական գործողությունների, հանցավոր գործունեության կամ չարամիտ վարքագծի արդյունքում, կարող են էական բացասական ազդեցություն գործել երկրի անվտանգության և նրա քաղաքացիների անվտանգության վրա:

**Հատվածային (սեկտորայ) ընդգրկում.** Աղյուսակ 2-ում ցույց է տրված կրիտիկական ենթակառուցվածքի սեկտորայ ցուցակի աղյուսակը իինգ երկրների և Եվրամիության համար, որոնք, ինչպես ընդունված է կարծել, մտահոգիչ են դրանց պաշտպանության առումով: Ինչպես երևում է ցուցակի սեկտորների ցանկից, կառավարությունների մեծամասնությունը լայն

սեկտորալ մոտեցում է ցուցաբերում կրիտիկական ենթակառուցվածքին. դրանք ներառում են այնպիսի սեկտորներ, որոնց բաժին է ընկնում ազգային եկամտի և զբաղվածության զգալի մասը:

*Աղյուսակ 2*  
*Կրիտիկական ենթակառուցվածքի սեկտորալ ընդգրկումը<sup>9</sup>*

Եվրասիական նախարարություն	ԱՄՆ	Մեծ Բրիտանիա	Նիդեռլանդներ	Կանաడա	Ավստրալիա	Ասուանական միջուկային
Էներգիա (այդ թվում միջուկային)	+	+	+	+	+	+
Տեղեկատվական և հա- ղորդակցային տեխնոլո- գիաներ	+	+	+	+	+	+
Առողջապահություն	+	+	+	+	+	+
Պարենամթերք	+	+	+	+	+	+
Զուր	+	+	+	+	+	+
Տրանսպորտ	+	+	+	+	+	+
Անվտանգության ապահովում	Վրաբրային ծառայություններ	+	+	Վրաբրային ծառայություններ		+
Կառավարություն և ֆինանսներ		+	+	+	+	+
Քիմիա		+	+		+	+

<sup>9</sup> OECD. 2008.

Եվրամիություն		Տիեզերական և հետազոտական օրյեկտներ
ԱՄԿ	+	Ամբարտակներ, կոմելցիոն օրյեկտներ, ազգային հուշարձաններ
Մեծ Բրիտանիա		
Նիդերլանդներ	+	Իրավաբանական / դաստիական մարմններ
Կանադա	+	Այլ սեկտորներ և ակտիվներ
Ավստրալիա	+	Հանրային/իրապարակային հավաքներ ազգային խորհրդանիշներ

**Գործընկերային հարաբերություններ.** ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում ակնթարթորեն մասնավորեցվեց պետական սեփականությունը: Արդյունքում ստացվեց, որ երկրի կրիտիկական ենթակառուցվածքը հիմնականում պատկանում է մասնավոր սեկտորին (այդ թվում՝ *օտարերկրյա ընկերություններ*), որում առաջարկվում է առաջարկ առաջնային առաջարկային համակարգերի ստեղծումը:

ների) և կառավարվում է նրա կողմից, սակայն կառավարությունը և իշխանության տեղական մարմինները նույնպես ունեն և կառավարում են կրիտիկական ենթակառուցվածքի առանձին օբյեկտներ:

Եվ քանի որ ենթակառուցվածքների մեծ մասը, որոնք վճռական նշանակություն ունեն մեր հասարակության համար, մասնավոր սեփականություն է, կառավարությունը և մասնավոր սեկտորը պետք է աշխատեն համատեղ, ինքնակամ համագործակցելով այդ համակարգերի և օբյեկտների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Այն պետք է դառնա և հետագայում մնա ազգային անվտանգության և կրիտիկական ենթակառուցվածքի կայունության ապահովմանն ուղղված կողեկտիվ գործողությունների առաջմղման հիմնական մեխանիզմը: Այսինքն՝ շեշտը պետք է դրվի գործընկերային հարաբերություններ հասկացության վրա, որը սահմանվում է որպես սերտ համագործակցություն ընդհանուր տեսլականին և նպատակներին հասնելու գործում ընդհանուր շահեր ունեցող կողմերի միջև: Այլ խոսքով՝ կարևոր և գործնական նշանակություն է ձեռք բերում «կրիտիկականորեն կարևոր ենթակառուցվածքների համար ոխսկերի կառավարմամբ գրաղվող հանրություն» հասկացությունը, որը ներառում է գործընկերային հարաբերությունները սեփականատերերի (բիզնես-հանրույթի) և օպերատորների (պետական, իշխանության տեղական մարմիններ, ոչ առևտրային՝ փորձագիտական կազմակերպություններ, ակադեմիական շրջանակներ) միջև:

### **8.3 Կրիտիկական ենթակառուցվածքի անվտանգության և կայունության ստեղծման և սատարման տեսլականը, նպատակները և խնդիրները**

ՀՀ գործող նորմատիվային օրենսդրության վերլուծությունը, իշխանության առանձին գործադիր մարմինների, մասնավորապես՝ Արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ուսումնասիրումը թույլ են տալիս պնդել, որ հանրապետության կրիտիկական ենթակառուցվածքների ոլորտում բացակայում է վերջիններիս նորմատիվային սահմանումը: Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակներում քաղաքացիների պաշտպանության հետ կապված գործունեությանը վթարային փրկարարության, հրդեհաշխցման և առաջնահերթ, շտապ, վթարավերականգնողական գործունեության գծով, ապա նախարարության այդ գործառույթները կարգավորվում են մի շարք օրենսդրական ակտերով և նորմատիվային որոշումներով՝ ուղղված պատահարների ռիսկերի նվազմանը: Ցավով պետք է նշենք, որ Հայաստանի 2017-2022թթ. կառավարական ծրագիրը նույնպես ունի նույն թերությունները:

Անհրաժեշտ է, որպեսզի երկրի դեկավարությունն իրականացնի կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության և սպառնալիքների հանդեպ կայունության ապահովման ոլորտում քաղաքականության մշակման ծրագիր՝ Ենթակառուցվածքների պաշտպանության ազգային ծրագիրը:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է սահմանել կրիտիկական ենթակառուցվածքի անվտանգության և կայունության ստեղծման և սատարման տեսլականը, առաքելությունը, նպատակները և խնդիրները: Եվ նման ենթակառուցվածքներից մեկը, մեր պարագայում՝ կրիտիկական ենթակա-

ոուցվածքներից մեկը ներդրումներն են և ներդրումային գործունեությունը: Գիտական գրականության մեջ հայտնի է այն մոտեցումը, երբ սահմանվում են օտարերկրյա ընկերությունների հանդեպ արգելքները՝ ունենալու կրիտիկական ենթակառուցվածքի օբյեկտներ:

Մեր պատկերացմամբ՝ ներդրումային գործունեությունն առանձնացնելով որպես կրիտիկական ենթակառուցվածքի օբյեկտ և այն դիտարկելով որպես փափուկ ենթակառուցվածք, ինստիտուտ, որն անհրաժեշտ է սոցիալ-տնտեսական համակարգի սատարման համար, մենք առանձնացնում ենք դրանում առանցքային տարրը նրա անվտանգության ապահովման գործընթացում, ինչպիսին է մարդկային գործոնը՝ մարդկային կապիտալը<sup>10</sup>:

Կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիության նվազեցումը և դրանց անվտանգության ու կայունության բարձրացումը երկրի հիմնական նպատակներից են: Պետք է ուշադրության առնել ռիսկերի փոխակերպումները և շանքերն ուղղել ճգնաժամի կառավարման համակարգի բարեփոխմանը՝ աղապտացվելու համար նրա նոր համատեքստին: Սակայն ճգնաժամերը շարունակում են զարգանալ՝ մարտահրավեր նետելով անգամ ամենանոր և հուսալի համակարգերին: Ընթանում է ճգնաժամերի տիպերի, տեսակների փոփոխության գործընթաց, ինչի հետ այսօր բախվում են կառավարությունները:

Կրիտիկական ենթակառուցվածքներին հասցվող վնասի կամ աղետալի հետևանքների ռիսկերի հասկացության կատարելագործումը կարևոր քայլ է դրանց ծագման վտանգը նվազեցնելու ձանապարհին, ինչպես նաև պլանավորման հիմք է հան-

<sup>10</sup> Ոորերս Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան, «Բարձրագույն կրթության գործառույթները կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պահպանության գործընթացում», [www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=15751](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15751)

դիսանում արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելն ապահովելու, դրանց համարժեք արձագանքելու և հաղթահարելու գործում:

**Հասարակության արժեհամակարգում և նրա ինստիտուտներում կատարվող ներդրումները՝ ՀՀ կրիտիկական ենթակառուցվածքի բաղադրիչ.** Հայաստանի ապագա բարգավաճումը կախված է խոր ինստիտուցիոնալ բարեփոխումների անցկացումից և տնտեսության կառուցվածքում որակական փոփոխություններ մտցնելուց, ինչն անհրաժեշտ է տնտեսությունում նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև հետամնացությունն արագ հաղթահարելու, զարգացած և դինամիկ զարգացող երկրներից խօսումը կրածառելու համար:

Այս խնդրի լուծումը կգտնվի անհրաժեշտ ներդրումների իրականացման պարագայում, բայց այն ոլորտներում, որոնք ուղղված են «ստեղծարար հասարակության» կայացմանը, հասարակության ստեղծարար զարգացմանը (*the creative society*), ստեղծագործ տնտեսությունում, ինովացիոն զարգացման ինստիտուտներում, այն ամենում, ինչը մենք անվանում ենք **Ներդրումներ հասարակության արժեհամակարգում**, և որը մենք, ներդրումներին հավասար, դիտարկում ենք որպես կրիտիկականորեն կարևոր ենթակառուցվածք: Հստ էության, այն պետք է ընկած լինի զարգացման հավակնոտ նախագծի և հաջորդ 15-20 տարիների երկարաժամկետ նպատակի հիմքում՝ *VISION ARMENIA 2035-2040*: Եթե խոսվում է զարգացման նախագծերի մասին, ապա առաջին եերթին նկատի ունենք այն, որ դրանում հիմնարար գործոն կհանդիսանա աճի այնպիսի գործոնը, ինչպիսին է **ներդրումային-արդյունաբերական, գիտատեխնոլոգիական, ռազմարդյունաբերական համակարգը**:

Ինչպես ենք դա պատկերացնում և կոնկրետ ի՞նչ խնդիրների լրացմանը պետք է ուղղվեն ներդրումները հասարակության արժեհամակարգում:

Երևակայություն և նորարարությունների կարողություն, այլ ոչ թե բնական պաշարներ, կապիտալ կամ սպառազինություն. առաջիկա 25 տարիներին դրանք են լինելու հանրային շահի շարժիչ ուժը, դրանք պետք է ապահովեն իշխանությունների, բիզնեսի և հասարակության ադապտացիան յուրաքանչյուր նոր արդյունաբերա-տեխնոլոգիական շարժը:

Միննույն ժամանակ, չպետք է հեռանալ իրողություններից: Մեր պետությունը պետք է առաջ ընթանա ծայրահեղ սահմանափակ ռեսուրսներով և մշտական ռազմական սպառնալիքի վիճակում, չմոռանալով, որ ներկա պահին մենք ազրարային երկիր ենք, որը պաշտպանության վրա ծախսում է բյուջեի 15%-ը, իսկ սոցիալական ոլորտի և առողջապահության վրա՝ ևս մոտ 40%: Նման բարեփոխումների իրականացման համար սկզբունքորեն կարևոր է հանրային նախագիծը, որը ենթադրում է սոցիումի համախմբում անվտանգության, զարգացման ընդհանուր նպատակների և ազգային ընդհանուր բարիքի գաղափարախոսության շուրջ: Սա հարկ է անել կոնսենսուսի պայմաններում և հասարակության ու նրա փորձագիտական հանրույթի հետ համատեղ գործունեությամբ՝ մի կողմից, կառավարության և երկրի ղեկավարության հետ՝ մյուս կողմից:

**Սրարրափ.** Կպահանջվի աստիճանաբար հեռանալ «հետևից վազող տնտեսության» ռազմավարությունից և խթանել տնտեսական աճը զարգացման նոր մոդելի ստեղծման միջոցով, որը հենված կլինի նորարարությունների և գործարարության վրա: Հստ էության, առաջարկվում է աճի մոդել, որի հաջողու-

թյունը պետք է հենվի ոչ թե ապրանքների արտադրության, այլ նորարարությունների առաջմղման վրա, ինչը կարևոր փոփոխություն է ընդհանուր զարգացման մոդելում:

Դրա համար հանրապետությունը պետք է ունենա բավական ծանրակշիռ հիմնավորումներ, որ կարող է հասնել այդ նպատակին: Նրա հասարակությունը, քաղաքացիները պետք է ձանաշվեն որպես արդի տեխնոլոգիաների ամենաակտիվ օգտատերեր, երկրում այսուհետ ևս պետք է զարգացնել *IT* տեխնոլոգիայի ոլորտը:

Երկիրը պետք է դառնա ամենանպաստավորներից մեկը բիզնես բացելու համար: *Heritage Foundation*-ի գնահատականով՝ Հայաստանն աշխարհում 42-րդն է տնտեսական ազատությունների մակարդակով: Պետք է խրախուսել մասնավոր սեկտորի գործողությունները: Պետական մարմինների հետ համագործակցությամբ (պետական կապիտալի գերազանցությամբ) հարկ է ստեղծել ֆինանսական մեխանիզմ սթարթափերի խթանման, աջակցության և ուղեկցման համար նորարարությունների ոլորտում: Կապահանջվի ֆինանսապես աջակցել և հարկային արտոնություններ մտցնել սթարթափերի գործարկման պահից մինչև նախագծերի ավարտը, նրանց համար ստեղծել ֆոնդային բորսա:

Նման գործունեությունն անհնար է առանց ֆինանսարանկային համակարգի համապատասխան միջոցների՝ արտադրության զարգացման երկարաժամկետ վարկավորման ինստիտուտների ստեղծման և նորարարական գործունեության էական խթանման գծով: Դրանք պետք է լրացվեն հեռանկարային, բայց ռիսկային գիտատեխնիկական մշակումների վենչութային ֆինանսավորման ինստիտուտների ստեղծմամբ, ինչպես նաև

նոր տեխնոլոգիական տիպի հեռանկարային արտադրությունների հիմնմանն ուղղված նորարարական և ներդրումային նախագծերի խիստ արտոնյալ վարկավորման մեթոդներով:

**Կրթություն և զիտություն.** Մյուս կարևոր խնդիրը համալսարանները նորարարությունների զարգացման գործընթացի մեջ մտցնելը պետք է լինի: Հայկական և ոչ մի համալսարան չի մտել համաշխարհային վարկանիշավորման մեջ և զրոյական բաժին ունի համատեղ միջազգային արտոնագրման մեջ: Ապագայի տնտեսության համար հարկավոր է կրթության այլ համակարգ, որը մարդկանց ստեղծագործ է դարձնում:

Մենք կողմնակից ենք կրթության ներկայիս լճացման համակարգից սահուն, խելամիտ ձևով արդի և հեռանկարային կրթությանն անցնելուն: Հարկավոր է ստեղծել կրթության այնպիսի համակարգ, որը միտված կլինի դեպի ապագան, կընկնի արդի տնտեսության հիմքում, կլինի մրցունակ, կկարողանա իրազործել մշակութային ավանդույթներն ու ի ցույց դնել այն հատկանիշները, որոնք ունի մեր ազգը: Հարկ է խրախուսել այն գործունեությունը, որի հիմքում ընկած են անհատական ստեղծարարությունը, հմտությունն ու տաղանդը, որոնք տանում են դեպի նյութական և ոչ նյութական արժեքների, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման՝ ի հաշիվ մտավոր սեփականության մշակման և գործարկման:

Եվ այստեղ խիստ մեծ է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի դերը, արդյունավետ աշխատող գիտնականների կարգավիճակն ու իմիջը՝ նրանց դիտարկելով «տագմակարական մտավոր ռեսուրսների» մակարդակով: Հարկ է գտնել հավասարակշռված մոտեցում գիտության զարգացման համար, որը թույլ կտա արդարացնել պետության ու հասարա-

կության ակնկալիքները, հայկական գիտությունը դուրս բերել «մահվան հովտից»:

Կրթությունը, գիտությունը և բարձր տեխնոլոգիաները միասնական համալիր են արդի պայմաններում: Եվ այդ բոլոր ուղղությունները միասնական կարևորագույն ռազմավարական ուղղություն են, որը ձիցտ չէ տարանջատել միմյանցից:

**«Ուղեղների շրջապտույտ».** Հայաստանը կհասնի հաջողության, եթե ձևավորվի հասարակություն, որն ի վհաճակի կյանի իրականացնել բարեփոխումներ: Արդի տնտեսություն կարող են ստեղծել միայն ազատ ստեղծարար մարդիկ: Այսօր աշխարհն այնպես է փոխվում, որ առաջին հերթին պահանջված են ստեղծարար քննադատական մտածողություն ունեցող մարդիկ, որոնք կարող են տարբեր իրավիճակներում որոշումներ ընդունել, աշխատել խմբերում, կոլեկտիվներում, ազատ ընդունել այլ կարծիքներն ու առաջարկությունները:

Մենք պետք ենք հասնենք այն բանին, որպեսզի մարդիկ Հայաստան գան ապրելու ոչ միայն նրա համար, որ այն իրենց հայրենիքն է, այլև նրա համար, որ ՀՀ-ն երկիր է, որտեղ կաօրենք, որտեղ կարելի է գործել տնտեսական մրցակցության հավասար պայմաններում, ներդրումներ կատարել, հարստացնել և հարստանալ, ունենալ ստեղծարար հնարավորություններ: Միայն սա կկանգնեցնի արտազադրի անիվը, բայց և կշրջի այդ անիվը՝ թույլ տալով մարդկանց, ովքեր հեռացել են, վերադառնալ Հայաստան:

**Կղաստերներ.** Պետք է մտածել, թե ինչպես վերականգնենք խորհրդային շրջանի հայկական տնտեսական հզորությունը, բայց միանգամայն այլ հիմքերի վրա՝ ելնելով միանգամայն այլ իրողություններից, օգտագործելով այնպիսի երկրների փորձը,

ինչպիսին են Իսրայելը, Հարավային Կորեան, Սինգապուրը, Շվեյցարիան և այլն: Օրինակ, Իսրայելը հայտնի է աշխարհում նոր ընկերությունների ամենամեծ կենտրոնացմամբ, 2008թ. վենչուրային կապիտալի ներդրումները բնակչության մեկ շնչի հաշվով 2,5 անգամ ավելին են եղել, քան ԱՄՆ-ում և 30 անգամ ավելի, քան Եվրոպայում, *NASDAQ* հարթակներում գնանշվում են ավելի շատ իսրայելական ընկերություններ, քան Եվրոպայի բոլոր ձեռնարկությունները, իսրայելական տնտեսությունն առաջատարն է հետազոտությունների և մշակումների գծով ծախսերի տոկոսաշափով և այլն:

Ռազմավարական մոտեցման այսպիսի տրամաբանությունը կարող է բացատրվել «դասական կլաստերի» հայեցակարգի շրջանակներում: Կլաստերը ձևավորվում է մեծ համալսարանների, խոշոր ընկերությունների, սկսնակ ֆիրմաների և այն էկոհամակարգի սերտ հարևանության արդյունքում, որը միավորում է նրանց, ներառյալ ամեն ինչ՝ և՛ մատակարարողներին, և՛ տաղանդավոր ինժեներների հանրույթը, և՛ վենչուրային կապիտալը:

**Մոտիվացիան.** Ակնհայտ է, որ քաղաքակրթական ուրույն գծեր ունեցող հայկական արժեհամակարգը այն անկյունաքարերից մեկն է, որոնց շնորհիվ պահպանվել է մեր ազգային-պատմական հաջորդականությունը: Միևնույն ժամանակ, ի հետևանք վերջին երկու հարյուր տարիների աշխարհաքաղաքական և հեղափոխական գործընթացների՝ հայկական սոցիումը մի քանի անգամ փոխել է իր կեցության հասարակական-գաղափարախոսական միջավայրը:

Մենք պարտավոր ենք փաստել, որ հայ հասարակությունն ավելի քան արժանապատիվ կերպով է դիմակայել իրեն բաժին

հասած ռազմաքաղաքական և հեղափոխական փորձություններին: Պետք է որպես պատմական փաստ ընդունել, որ Առաջին Հանրապետությունը Երկրորդի հիմքն է, իսկ Երկրորդը, իր հերթին, Երրորդի, և այս հաջորդականությունը պետք է մեկնաբանել և լուսաբանել համապատասխան ձևով<sup>11</sup>:

Եվ հենց հայկական արժեհամակարգն է, որ պետք է զգուշացնի մեզ արաբական պետությունների օրինակից, որը հուշում է, որ «սթարթափերի երկրի» վերածվելուն նրանց խանգարում են «հումքային արդյունաբերությունը, քաղաքական ազատությունների սահմանափակումները, կանանց կարգավիճակը, կրթության որակը և մոտիվացիայի բացակայությունը: Այս խնդիրները ակտուալ են նաև ՀՀ-ի համար, քանի որ հանրապետության արտահանման մեջ հանքարդյունահանումը կազմում է 40%: Հարկերի մեծ մասը գոյանում է այս ճյուղում: Տարբեր գնահատականներով՝ նկատի ունենալով ստվերը, հանքարդյունահանման ավանդը ՀՆԱ-ում հավասարվում է մոտ 10%-ի: Հավանաբար, հարկ է պահպանել լեռնահանքային արտադրանքի մշակումներն ու արտահանումը, բայց նրա խոր վերամշակման պայմանով: Հարկ է ավելացնել որակյալ, առանց գենետիկ մոդիֆիկացիայի գյուղտնտարտադրանքի արտահանումը: Հարկ է սատարել նաև այլ՝ ավանդական իրերի և արտադրանքի արտահանմանը: Իսկ հետագայում պատրաստի արտահանվող արտադրանքի կազմում պետք է լայնորեն ներկայացված լինեն բարձրտեխնոլոգիական, նորարարա-արտադրական ապրանքները՝ որպես Հայաստանում իրականացված գիտական որոնումների և ինժեներական մշակումների արդյունք:

---

<sup>11</sup> Արդյունյան Դ., Критические инфраструктуры и идеологии, 2017.

Ահա թե ինչպես է բնորոշում համաշխարհային տնտեսությունում ստեղծվող իրավիճակը ՌԴ Ռազմավարական մշակումների կենտրոնի դեկավար, ֆինանսների նախկին նախարար Ալեքսեյ Կուդրինը՝ ելույթ ունենալով Մոսկվայի ֆինանսական համաժողովում. «...առաջիկա 20 տարիներին կստեղծվի համաշխարհային տնտեսության նոր մոդել, և յուրաքանչյուր երկիր պետք է պատրաստվի դրան: ...Մենք այսօր կանգնած ենք նոր տեխնոլոգիական հեղափոխության շեմին, և հարկավոր է ոչ միայն սպասել: ...Մենք պետք է հասկանանք, որ բոլոր երկրների օրակարգում կառուցվածքային բարեփոխումներն են. ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, ընդհանուր առմամբ ԵՄ, Չինաստան: Բոլորն են հասկանում, որ մենք սպառել ենք համաշխարհային տնտեսության նախկին մոդելը»<sup>12</sup>:

Հասարակությունում որակական փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ է փոխել այդ հասարակությունը կազմող մարդկանց մտածողությունը: Այս ամենը ենթադրում է մտածողության նորարարական կերպ, նորարարական մշակույթ և վարքագիծ, ընդ որում՝ որոնք կենցաղի մեջ են մտնում հենց հասարակության նախաձեռնությամբ:

**Խնդիրները.** Ի՞նչ դժվարությունների վրա պետք է ուշադրություն դարձնել և թույլ չտալ սխալներ զարգացման ռազմավարություն ընտրելիս: Առավել նկատելի կարող է դառնալ իրավիճակը կենտրոնացված շուկաներում, իսկ նման դառը փորձի Խորհրդային Հայաստանը բախվեց ԽՍՀՄ փլուզումից հետո: Այդ համատեքստում բերենք որոշ օրինակներ:

Օրինակ, Հարավային Կորեայի հաջողությունը, որը հանգեցրեց ՀՆԱ բազմակի աճի բնակչության մեկ շնչի հաշվով,

<sup>12</sup> <http://www.newsru.com/finance/23sep2016/kudrin.html?rand=1>.

ապահովում էր ի հաշիվ խոշոր առաջատար համաշխարհային բրենդների համեմատաբար ոչ մեծ թվով, ինչպիսին են *Samsung*-ը, *LG*-ն և *Hyundai*-ն: Համաձայն Կորեյակի արդյունաբերական տեխնոլոգիաների ասոցիացիայի (*Korea Industrial Technology Association*) տվյալների՝ խոշոր ընկերությունները կազմում են ԳՀՓԿԱ-ում արվող մասնավոր ներդրումների 74%-ը, այն դեպքում, երբ փոքր ու միջին ձեռնարկություններին և վենչուրային ֆիրմաներին բաժին է ընկնում համապատասխանաբար ընդամենը 13 և 11%: Փոքր ու միջին ձեռնարկությունները բախվում են դժվարությունների տաղանդավոր մասնագետների ներգրավելիս, քանի որ շրջանավարտները հիմնականում ցանկանում են աշխատել չերպում (հարավկորեական ֆինանսարդյունաբերական խմբեր):

Մյուս խնդիրը կապված է զարգացած երկրների հետ կյանքի ստանդարտների մեջ առկա խզման հետ: Որոշակի դժվարությունները կապված են այն հանգամանքի հետ, որ *IT* սեկտորն առաջ է անցել տնտեսության ընդհանուր զարգացումից: Երկրի համար վտանգավոր են կախվածությունն արտահանման շուկաներից, անվտանգության վատթարացումը տարածաշրջանում և ուղեղների անդառնալի արտահոսքը:

Հարկ է զգույշ լինել և չտրվել մոդայիկ ալոգաններին, որոնք կոչված են քողարկելու կադրերի ցածր որակավորումը: Այդ կախվածությունից ձերբագատվելու համար հարկավոր է նախ դուրս գալ մոլորություններից: Մեր ժամանակներում մոդայիկ է ձեռնածություններ անել «կրեատիվություն» և «նորարարություն» բառերով: Սակայն այս տերմինների առատ օգտագործումը հանգեցնում է ոչ թե կրեատիվ հասարակության ստեղծմանը, այլ նրա ծաղրանկարային կեղծմանը:

**Ներդրումների ակսուալ ուղղությունները. արհեստական ինտելեկտ.** 2018թ. մարտի 24-ին հանդես գալով Գլխավոր շտաբի ուսումնական ակադեմիայի ուսումնագործնական կոնֆերանսում՝ դրա պետ, ՌԴ պաշտպանության առաջին փոխնախարար Վալերի Գերասիմովը հայտարարել է, որ ոռքոտների և տիեզերական միջոցների օգտագործումը դառնալու է ապագայի կոնֆլիկտների գլխավոր առանձնահատկությունը: Տիեզերքը առավել պահանջված և «պարարտ» ոլորտն է ոռքոտացված համակարգերի կիրառման և արհեստական ինտելեկտի (ԱԻ) հնարավորությունների ներդրման համար (ԱԻ & ՌՏ/ԱԻ & *Robotics Systems*) և դրանց կիրառման բազմաթիվ հնարավոր ուղղություններից մեկը:

Իր հերթին, *MARKET FORECAST* հայտնի հետազոտական կազմակերպությունը հրապարակել է «Արհեստական ինտելեկտի և ոռքոտատեխնիկայի համաշխարհային շուկան պաշտպանական ոլորտում, և տեխնոլոգիական կանխատեսում մինչև 2027թ.» գեկույցը<sup>13</sup>: Այն ներառում է պաշտպանական արդյունաբերությունում ԱԻ և ՌՏ համաշխարհային շուկայի խորացված հետազոտություններ և կանխատեսումներ միջնաժամկետ և երկարաժամկետ շրջանների համար (*հաջորդ տասը տարվա համար*), ներկայացնում է այդ շուկայում ընկերությունների մրցակցային դիրքերը, դրանց արտադրանքը, կորպորատիվ դաշինքները, վերջին շրջանի հաջորդությունները պայմանագրեր ստանալու հարցում, այդ ընկերությունների վիճակի ֆինանսական վերլուծությունը: Սա իր տեսակի մեջ առաջին հետազո-

<sup>13</sup> Global Artificial Intelligence & Robotics for Defense, Market & Technology Forecast to 2027. Այս կազմակերպությունը պատրաստել է նաև “Global Counter-UAV (C-UAV) Systems Market Forecast to 2026” գեկույցը, <https://www.marketforecast.com/reports/global-counter-uav-c-uav-systems-market-forecast-to-2026-1059>

տուրքունն է, որն ընդգրկում է պաշտպանական ճյուղի կարևոր տեխնոլոգիական և շուկայական միտումներն ըստ տարածաշրջանների և ներկայացնում է դրա դինամիկան՝ այն գործոնների վերլուծությամբ, որոնք ազդում են նման համակարգերի պահանջարկի վրա: Զեկույցը լույս է սփռում ԱԻ և ՌՏ յոթ հիմնական տեխնոլոգիաների վրա, որոնք կգերիշխեն պաշտպանական արդյունաբերությունում հաջորդ 10 տարիներին:

Զեկույցում ներկայացված կանխատեսման համաձայն՝ արհեստական ինտելեկտի և ռոբոտատեխնիկայի համաշխարհային շուկան (*Artificial Intelligence & Robotics in the Defense Industry Market*), որը գնահատվում է \$39.22 մլրդ 2018թ., կաձի 5.04% միջին տարեկան աճի տեմպով (այսուհետ՝ *CAGR - Compound Annual Growth Rate*) և կհասնի մինչև \$61 մլրդ մակարդակի 2027թ.: Ինը տարվա ընթացքում ԱԻ և ՌՏ գլոբալ ծախսերի կուտակյային (ամփոփ) մեծությունը պաշտպանական ոլորտում գնահատվում է \$487 մլրդ:

Մեկ այլ հետազոտական կազմակերպության՝ *MarketsandMarkets™*-ի տվյալներով՝ միայն ռազմական ռոբոտատեխնիկայի շուկան 2017-2022թթ. կաձի 12.92% *CAGR* մակարդակով և կհասնի \$30.8 մլրդ-ի: Ամենից արագ կավելանա ռազմական ռոբոտների պահանջարկը, քանի որ Հնդկաստանը, Չինաստանը և գարգացող երկրները կհոգան ցամաքային ռոբոտացված բանակի ստեղծման մասին: Եվրոպան և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները չորս տարի անց առաջատար տարածաշրջանները կլինեն այս առումով, քանի որ Եվրոպայում կակսեն շուկա հանել առայժմ պիլոտային փուլում գտնվող մշակումները, իսկ Ասիայի երկրները պատրաստ կլինեն մեծ գումարներ ներդնել մարտական ռոբոտներ գնելու համար:

Ինչպես զրում են այս գեկույցի հեղինակները, շուկայի աճը կպայմանավորվի նոր սերնդի տեխնոլոգիաներում խոշոր ներդրումներով ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի և Ինդիայի կողմից, ինչպես նաև Հնդկաստանի, Սաուդյան Արաբիայի, Հարավային Կորեայի և Ճապոնիայի խոշոր գնումներով: *CAGR* ամենաքարձր մակարդակը ռազմական ռոբոտների շուկայում կանխատեսվող շրջանի ընթացքում կգրանցվի Եվրոպայում: ԱՄՆ-ը համարվում է ամենախոշոր շուկան պաշտպանական ոլորտում ԱԲ և ՌՏ-ի համար՝ շնորհիվ տեխնոլոգիական նվաճումների, աշխարհում զինված հակամարտությունների աճի, որոնց թվում է նաև պայքարն ահաբեկչության դեմ:

Զեկույցներում ներկայացվող եզրահանգումները մատնանշում են, որ պաշտպանական արդյունաբերության համաշխարհային շուկայում ռոբոտատեխնիկայի հատվածը կանխատեսվող շրջանի ընթացքում կգերակշռի ծախսերի կառուցվածքում: Սպասվում է, որ նեյրոլեզվաբանական ծրագրավորումը, համակարգչային տեսողությունը, խոսքի ճանաչումը (*Speech Recognition*) կկազմեն ծախսերի մեծությամբ երրորդ և չորրորդ հատվածները: Շուկայի մնացած բաժինը պատկանում է սոցիալական ցանցերի վերլուծությանը (*Social media Analysis*), բազմագործակալ համակարգերին (*Multi agent systems*) և զիտելիքների ու դատողությունների ներկայացմանը: Անօդաչու ռազմական համակարգերի աճող պահանջարկը և արդիականացման ծրագրերն ուղղված են զինված ուժերին (ԶՈՒ) ուժեղացված աջակցություն և տարատեսակ զինվորական գործողությունների իրականացման ժամանակ օգնություն ցուցաբերելուն: Սրանք այն գործոններն են, որոնք ազդում են պաշտպանական ոլորտում ԻԱ և ՌՏ համաշխարհային շուկայի վրա:

Ներկայում աշխարհում նորարարական տեխնոլոգիաների առաջատար պատվիրատուն, որը նախաձեռնում է ռազմական ռոբոտների, արհեստական ինտելեկտի և բիոհամակարգիչների արդյունաբերության զարգացումը, *DARPA*-ն է (ԱՄՆ պաշտպանության նախարարության հեռանկարային պաշտպանական հետազոտական նախագծերի գործակալություն): *DARPA*-ի վրա են դրված ԱՄՆ զինված ուժերի տեխնոլոգիական գերազանցության պահպանման խնդիրները, առաջավոր հետազոտություններին սատարելը, որոնք ի վիճակի կլինեն բեկում մտցնել ռազմական և այլ տեխնոլոգիաների ոլորտում, ինչպես նաև զինված ուժերում հիմնարար հետազոտությունների արտադրանքի կիրառումը:

**Ռոբոտատեխնիկայի շուկայի կանխատեսում.** Կասկածից վեր է, որ աշխարհը պատրաստ է արդյունաբերական ռոբոտացմանը: *IBM*-ը նշել է այն տեխնոլոգիաները, որոնք ամենից շատ են փոխելու կյանքը հինգ տարվա ընթացքում<sup>14</sup>, որոնց թվում են մանրադիտակ ռոբոտները՝ արհեստական ինտելեկտի հիման վրա, բլոկչեյնը, արհեստական ինտելեկտը, քվանտային հաշվարկները և կրիպտոգրաֆիան:

Ռոբոտատեխնիկայի միջազգային ֆեդերացիայի (*IFR*)<sup>15</sup> կանխատեսումներով՝ 2017թ. արդյունաբերական ռոբոտների մատակարարումների համաշխարհային շուկան կմեծանա առնվազն 18%-ով և կկազմի 346.8 հազ. վաճառքած միավոր: Հետազոտության հեղինակների կարծիքով՝ *CAGR*-ը կկազմի 15% և 2020թ. ռոբոտատեխնիկայի վաճառքը կհասնի 520.9 հազ. նոր սարքավորումների: Արդեն ձեռնարկություններում տեղադրված

<sup>14</sup> <https://www.ibm.com/blogs/research/2018/03/ibm-research-5-in-5-2018/>

<sup>15</sup> [https://ifr.org/downloads/press/Executive\\_Summary\\_WR\\_2017\\_Industrial\\_Robots.pdf](https://ifr.org/downloads/press/Executive_Summary_WR_2017_Industrial_Robots.pdf)

ոռքոտատեխնիկայի համաշխարհային շուկան կկազմի մոտ 3.1 մլն սարքավորում 2020թ. վերջի դրությամբ:

*Boston Consulting Group (BCG)*-ի գնահատականների համաձայն՝ ոռքոտատեխնիկայի համաշխարհային շուկան կանխատեսումներից ավելի շուտ կզարգանա<sup>16</sup>: Ոռքոտատեխնիկայի համաշխարհային շուկայի ծավալը 2025թ. կարող է կազմել \$87 մլրդ 2010թ. \$15.1-ի դիմաց, կանխատեսում է *BCG*-ն: Ոռքոտատեխնիկայի կիրառությունը բիզնեսում ռազմավարական լուծում է դառնում, այլ ոչ թե պարզապես կապիտալի ներդրում: *BCG*-ի վերլուծաբաններն ընկերություններին խորհուրդ են տալիս շտապ սկսել ոռքոտատեխնիկայի ներդրումը, քանի որ նոր տեխնոլոգիաները նրանց մրցակցային առավելություն են տալիս: Շատ ձեռնարկություններ արդեն սկսել են պատրաստվել ապագային:

Պետությունները նույնպես արձագանքում են այս տրենուին: ԱԻ և ՌՏ սեկտորի առաջատարներից մեկն է դառնում Չինաստանը, որը հայտարարել է, որ երկիրը 2020թ. արհեստական ինտելեկտի զարգացման գծով ԱՄՆ-ի հետ պարիտետի կհասնի, 2025թ. բեկման կհասնի և առաջինը կլինի այս ոլորտում 2030թ.: 2017թ. աշխարհում ներկայացված պատենտների բոլոր հայտերից, Մտավոր սեփականության միջազգային կազմակերպության (*WIPO*, Շվեյցարիա) տվյալներով՝ 42.8%-ը գրանցված է Չինաստանում (641 պատենտ), ԱՄՆ-ում՝ միայն 19.4% (130): Ճապոնիայում և Հարավային Կորեյում՝ 10.2-ական տոկոս: Մնում է Եվրոպան՝ 5.1% և «մնացյալ ողջ աշխարհը»՝ 15.8%<sup>17</sup>: Արդյունաբերական ոռքոտները դարձել են ազգային ռազմավարական արդյունաբերություն, և դրա համար Չի-

<sup>16</sup> <https://www.bcg.com/publications/2017/strategy-technology-digital-gaining-robotics-advantage.aspx>

<sup>17</sup> [https://ria.ru/analytics/20180414/1518627465.html?referrer\\_block=index\\_only\\_ria\\_2](https://ria.ru/analytics/20180414/1518627465.html?referrer_block=index_only_ria_2)

նաստանի կառավարությունը համակողմանի աջակցություն է ցուցաբերում դրանց և հսկայական ներդրումներ է կատարում հետազոտությունների և տեխնոլոգիաների մեջ: Մինչև 2030թ. Չինաստանը կփորձի արհեստական ինտելեկտի շուկայի արժեքը հասցնել \$150 մլրդ-ի, իսկ խառը արդյունաբերությունների արժեքը՝ \$1,5 տրլն-ի:

**Նորագույն տեխնոլոգիաները, արհեստական ինտելեկտը և ռոբոտատեխնիկան կգերիշին պաշտպանական արդյունաբերությունում.** Ռոբոտատեխնիկայի տեխնոլոգիաների ինտեգրումը և ինտելեկտուալ սարքավորումների ներդրումը, արհեստական ինտելեկտի և սենսորային տեխնոլոգիաների ոլորտի կատարելագործումները նպաստում են պաշտպանական արդյունաբերությունում սպառագինության ինքնակարգերի առաջմղմանը՝ զենք արտադրողների համար անվտանգության ապահովմանն ուղղված լուծումներ փնտրելու հնարավորություններ ստեղծելով, երկրի պաշտպանունակությունը բարձրացնելու նպատակով:

Արհեստական ինտելեկտի արագ զարգացումը, նպաստելով գիտնականների և ինժեներների առաջարկած ֆուտուրիստական տեխնոլոգիաների օգտագործմանը, կպայմանավորի զենքի հաջորդ սերնդի առաջացումը: Ռոբոտատեխնիկայի և արհեստական ինտելեկտի համադրումը դարձել է միջազգային մրցակցային պայքարի նոր ուղղություն, ռազմավարական տեխնոլոգիա, երկրի ազգային մրցունակության և ազգային անվտանգության ապահովման բարձրացման գլխավոր ռազմավարություններից մեկը:

**ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը և այլ երկրներ ակտիվորեն զարգացնում են ներդրում են ԱԻ և ՌՏ ռազմական ոլոր-**

**Առում:** Այս ուղղությամբ որոշակի քայլեր են անում նաև մեր հարևանները: Թուրքական լրատվամիջոցների տեղեկատվությամբ՝ թուրքական *Akinrobotics* ընկերությունը ծրագրում է ստեղծել ռազմական ռոբոտներ: Մարտական ռոբոտների մշակումը նախատեսվում է սկսել Քոնիա նահանգում (Թուրքիայի հարավ-արևմուտք), երկրի ռազմարդյունաբերության զարգացման շրջանակներում: Այն մեծացնում է իր պոտենցիալը ռազմական անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) արտադրման ոլորտում՝ ի հաշիվ օտարերկրյա արտադրության դրոններ գնելու և սեփական մշակումների: Թուրքիան աշխարհում վեցերորդն է դարձել, որն արտադրում և սպառագինության մեջ է մտցնում անօդաչու թռչող սարքեր: Մասնավորապես թուրքական *Baykar Makina* ընկերությունն արտադրում է հետախուզական անօդաչու *Bayraktar TB2* սարք: Թուրքիայի ռազմաօդային ուժերն իրենց սպառագինության մեջ են մտցրել երկու *Anka-S* հարվածային անօդաչու թռչող սարք, որոնք առաջին անգամ հազեցվել են արբանյակային կառավարման համակարգով<sup>18</sup>: Թուրքիայում այլ ԱԹՍ-ներ ել կան: Իհարկե, Թուրքիան հեռու է ԱՄՆ կամ Չինաստան լինելուց՝ բանակն անօդաչու սարքերով զինելու մակարդակով, բայց այդ երկիրն էական թոհջ է կատարել և հիմա արդեն այնքան ել կախված չէ արտաքին աշխարհից այդ ուղղությամբ զարգանալու առումով: Հնդացիկ տարվա մարտին, ադրբեջանական պաշտպանական գերատեսչության ղեկավարի՝ Թուրքիա կատարած այցելության ժամանակ նա, *Baykar Makina* ընկերություն այցելության շրջանակներում, մասնավորապես անդրադարձել է անօդաչու սարքերի արտադրության թեմային<sup>19</sup>:

<sup>18</sup> [www.popmech.ru](http://www.popmech.ru)

<sup>19</sup> <https://eadaily.com/ru/news/2018/04/26/vstrecha-aliev-erdogan-azerbaydzhan-proshyol-vybory-turcii-oni-predstoyat>

Նկատենք, որ Թուրքիայում զիտահետազոտական կենտրոնների թիվը հասել է 900-ի: Գիտահետազոտական կենտրոններն աշխատում են Թուրքիայի 43 նահանգներում՝ 39 ուղղություններով<sup>20</sup>: Դրանցում աշխատակիցների թիվը հասնում է 48 հազար մարդու: Թուրքիայի նորարարական տնտեսության կարևոր տարրն են դարձել տեխնոպարկերը: Պետությունը 2014 թվականից որպես անհատույց օգնություն տրամադրել է 711 մլն լիր (\$156.4 մլն) Թուրքիայում տեխնոպարկերի զարգացման համար:

**Խնդիրները Հայաստանում.** ՀՀ պաշտպանության նախարարությունը մշակել է «Ազգ-Բանակ» հայեցակարգային ծրագրերը, Բանակի արդիականացման յոթնամյա ծրագիրը 2018-2024թթ. համար (այսուհետ՝ Ծրագրեր կամ Յոթնամյա ծրագիր), որոնք հարմարեցված են նոր մարտահրավերներին և սպառնալիքներին: Նախատեսվում է տնտեսության ռազմական և քաղաքացիական ոլորտների, կրթության և զիտության պոտենցիալների մեկտեղում, ինչը թույլ կտա հանրապետությունում սկսել բարձրտեխնոլոգիական ռազմական արտադրանքի մշակումը, արտադրությունը և արտահանումը: Հայաստանի պաշտպանության նախարարությունը խոստանում է մինչև տարեվերջ հրապարակել նոր ռազմարդյունաբերական ծրագիրը<sup>21</sup>:

Որպես «Ազգ-Բանակ» հայեցակարգի տնտեսական բաղադրիչ՝ ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման, թոփշքածելու տնտեսական աճի և զինված ուժերի համակողմանի արդիականացման համար կարևոր նշանակություն ունի ռազմական տնտեսության զարգացումը: Տնտեսության ռազմարդյու-

<sup>20</sup> <https://www.aa.com.tr/ru/info/%D0%B8%D0%BD%D1%84%D0%BE%D0%B3%D1%80%D0%B0%D1%84%D0%B8%D0%BA%D0%B0/10209>

<sup>21</sup> <https://ru.armeniasputnik.am/society/20180226/10701511/minoborony-armenii-obeshchaet-do-konca-goda-novyyu-voenno-promyshlennyyu-programmu.html>

նաբերական ճյուղի կայացումը կապահովի զինված ուժերի տեխնիկական և տեխնոլոգիական արդիականացումը՝ հենվելով գիտահետազոտական և կիրառական գիտության վրա:

Գերակայությունը տրվելու է ոռորտացված և հեռահար կառավարվող զենքի արտադրությանը: Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել պաշտպանական ոլորտում ներդրումների և համատեղ ձեռնարկությունների ստեղծման խրախուսման քաղաքականություն: Նախատեսվում է ավարտին հասցնել ազգային ռազմարդյունաբերական ինովացիոն համակարգի ձևավորումը:

Յոթնամյա ծրագրում առաջադրված նպատակներն ուղղված են ավելի ընդհանուր խնդրի լուծմանը՝ կազմակերպել տնտեսության վերելքը նոր տեխնոլոգիական հիմքի վրա՝ հենվելով սեփական, ազգային ուժերի վրա: Նկատի ունենք հանրապետությունում, ինչպես վերը նշեցինք, համալիր ինովացիոն ռազմարդյունաբերական և գիտատեխնոլոգիական քաղաքականությունների անցկացումը՝ շեշտը դնելով գիտատար արտադրության և բարձր տեխնոլոգիաների վրա՝ արտահանման ուղղության գերազանցությամբ: Այն պետք է ընկած լինի ՀՀ զարգացման երկարաժամկետ ծրագրի, նրա արդիական, կայուն և դինամիկ արագացված զարգացման ռազմավարական պլանի հիմքում<sup>22</sup>:

Հարկավոր է ձևավորել նոր տնտեսական և տնտեսավարման կարգ: Նման ռազմավարության իրազործման համար հարկ է ունենալ զարգացման պետական համալիր քաղաքականություն, որը պետք է ներառի.

<sup>22</sup> A.P. Տեվիկյան, Стратегическая модель безопасности РА, 21-й ВЕК, Фонд “Нораванк”, 2016, N 3, стр. 76.

- ռազմավարական պլանավորման համակարգ, որը կկարողանա վերհանել տնտեսական աճի հետանկարային ուղղությունները, ինչպես նաև ուղղորդել զարգացման պետական ինստիտուտների գործունեությունը դրանց յուրացման ուղղվ;
- նոր տեխնոլոգիական տիպի առաջանցիկ աճին անհրաժեշտ մակրոտնտեսական պայմանների ապահովում;
- ինովացիոն և ներդրումային ակտիվության, նոր տեխնոլոգիական տիպի արտադրատեխնոլոգիական ձեռնարկությունների (համալիրների) ստեղծման և զարգացման նախագծերի իրականացման, դրանց հիման վրա տնտեսության արդիականացման խթանման մեխանիզմների ձևավորում;
- բարենպաստ ներդրումային և գործարար միջավայրի ստեղծում, որը կիրախուսի գործարար ակտիվությունը նոր տեխնոլոգիաների ստեղծման և յուրացման գործում;
- մարդկային կապիտալի ընդլայնված վերաբերման և ինտելեկտուալ պոտենցիալի զարգացման անհրաժեշտ պայմանների սատարում:

Ակնհայտ է, որ առանց պետության խթանիչ քաղաքականության անհնար է լուծել այս խնդիրները: Բացի այդ, արդյունաբերության, գիտատեխնոլոգիական ոլորտներում, առհասարակ տնտեսությունում ստեղծված իրավիճակը թույլ է տալիս միանշանակ եզրահանգում անել. երկրի զարգացման ցանկացած ծրագիր պետք է հավասարակշռվի ըստ նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների: Հետևաբար, ռեսուրսներն ուղղելով տնտեսական աճի ապահովման նպատակին՝ հարկ է, որպեսզի դրանք պլանավորվեն, ինչը ենթադրում է

ձեռնարկությունների պարտավորություններ, տնտեսական պայմանագրերի համակարգ:

Սա ՀՀ-ի համար նշանակում է ինովացիոն-տեխնոլոգիական արդյունաբերության կառուցման և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակադրման, կանխատեսման, պլանավորման և ծրագրավորման գործընթացում, օգտագործել *ռազմավարական պլանավորման* և *կանխատեսման պետական համակարգի* պայմաններում: Դրան կնպաստի ՀՀ «Ռազմավարական պլանավորման և կանխատեսման մասին» նոր օրենքի ընդունումը: Նշենք, որ պետական ռազմավարական պլանները և գերակայությունները զուտ շուկայական մեխանիզմ են, որը գործադրված է աշխարհի շատ տնտեսական համակարգերում:

Ընդհանուր իմաստով սա վերաբերում է պետական կառավարման մեջ շուկայական իսառ տնտեսության ընդունման և ներդրման ու դրա ձևավորման ուղիների, պետության և շուկայի փոխհարաբերությունների սահմանման հարցին: Կառավարությունները պետք է ստեղծեն շուկաներ և կարգավորեն դրանք: Այժմ այդ ձանապարհով են ընթանում Զինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Մալայզիան, Վիետնամը, Հարավային Կորեան և այլն:

Սակայն հարկ է հիշել, որ պետության ավելորդ միջամտությունը՝ տնտեսությանը՝ պոպուլիստական որոշումների վրա հենվելով, կարող է վնասակար լինել: Ուստի, հարկ է գործել խիստ զգուշությամբ: Դժվար է անցում կատարել նման տնտեսական քաղաքականության:

Նման ձանապարհով ընթանալով՝ մենք կկարողանանք պաշտպանական ծախսերին հատկացնել *ՀՆԱ 4%-ից ոչ պակաս*

և միաժամանակ լուծել մեր ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, երկրի անվտանգության ապահովման խնդիրները:

#### **8.4 Ռուսաստանի հետ իրավահավասար համագործակցության քաղաքականությունը և տէխնոլոգիական կոռպէրացիան**

Բարդ աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակում պատմությունն ինքն է հուշում ելքը Երևանին՝ Մոսկվայի հետ ռազմավարական միության պահպանում և խորացում։ Այստեղ խնդիրն այլ է. որքանով է Մոսկվան պատրաստ Հայաստանի հետ՝ որպես ռազմավարական դաշնակցի, *իրավահավասար և փոխահավետ համագործակցության*։ Գաղտնիք չէ, որ Ռուսաստանում կան ազդեցիկ ուժեր, որոնք գործում են ի հեճուկս հայ-ռուսական հարաբերությունների շահերի<sup>23</sup>։ Սա վերաբերում է նաև Ռուսաստանի և Հայաստանի պաշտպանական-արդյունաբերական համալիրների (ՊԱՀ) ոլորտում ինտեգրացիոն փոխգործակցության հնարավորություններին։ Սակայն սա արդեն պետության ինքնիշխանության, նրա դեկավարության՝ մարտահրավերներին պատասխանելու կարողության խնդիր է, որը կանգնած է երկրի առջև։

Օրինակ, հետաքրքիր է թվում անօդաչու թռչող սարքերի ռուս և հայ արտադրողների համատեղ աշխատանքի գաղափարը։ Սա առավել քան իրատապ է երկու երկրների համար էլ, որովհետև Ռուսաստանն այս հարցում 20 տարով հետ է ԱՄՆ-ից, իսկ Հայաստանը նման տեխնիկայի մեծ կարիք ունի<sup>24</sup>.

---

<sup>23</sup> Տե՛ս «ՀԱ»-ին ԵԱՏՄ ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Լեպեխինի տված հարցազրույցից, <http://www.golosarmenii.am/article/64323/sistema-zashchity>

<sup>24</sup> <https://regnum.ru/news/polit/2444666.html>

Չատ կարևոր է, որպեսզի նման առաջարկությունները չկառուցվեն որպես ռուսաստանյան ղեկավարությանը օգնության խնդրանք առանձին ուղղությունների վերաբերյալ: ՀՀ-ի համար կարևոր է, որպեսզի *հայկական շահերն առաջին պլանում լինեն:* Նման հարաբերությունների շրջանակներում է հնարավոր գտնել ազգային տնտեսության ավելի լիակատար ինքնիշխանության կայացման հարցի լուծումը:

Նման նախագծերի աջակցման համար՝ դրանց իրագործման հեռանկարով, ՀՀ պաշտպանության նախարարությանն առընթեր ստեղծվում է Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ (*DARPA*-ի նման): Այն կնպաստի Հայաստանի ռազմարդյունաբերության տեխնոլոգիական զարգացմանը, ավելի լայնորեն կօգտագործվի առկա գիտական և տնտեսական պոտենցիալը ռազմական արդյունաբերությունում: Եվ *DARPA*-ի նման՝ որպես ռազմարդյունաբերական համալիրի ուղեղային կենտրոն, կսահմանի գերակայությունները և, հետևաբար, կձևավորի պահանջարկը հետագայի համար:

Ռուսաստանի հետ տեխնոլոգիական և ԳՀՓԿԱ շղթայի մեջ մտնելով և նման համագործակցության հենքի վրա պետական-մասնավոր գործընկերություն ստեղծելով՝ հնարավորություն կառաջանա կարգավորելու տեխնոլոգիական կոռպերացիան արտադրության, կիրառական գիտության, ինժեներական մշակումների, սպառագինության ոլորտներում: Անհրաժեշտ է վերականգնել գիտատար արտադրանքի մշակման և արտադրության տեխնոլոգիական շղթաները: Այստեղ, ըստ առանձին, շատ նեղ ուղղությունների, կարող ենք ունենալ գերակայություն: Չպետք է մոռանալ, որ Ռուսաստանը ևս ինժեներական և ինովացիոն մշակումների ու արտադրության հսկայական պահանջարկ ունի

արդյունաբերության տարբեր ուղղություններում, որոնցում այսօր նրանք դեռևս զիջում են արևմտյան երկրներին:

ՀՀ-ի համար, իր տնտեսական քաղաքականությունն իրականացնելիս, սատար կարող են հանդիսանալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) որոշումները, որում վերլուծել են *արդյունաբերական կոռպերացիայի և սուրկոնտրակտացիայի (արտադրական/արդյունաբերական առևտուրսինգ)* ստեղծման և զարգացման համաշխարհային փորձը: Համաշխարհային շուկայի ուսումնասիրումը հաստատում է, որ արդյունաբերական համագործակցության այդ ձեր խոշոր ձեռնարկությունների և մանր արտադրողների միջև, որը լայնորեն օգտագործվում է զարգացած երկրներում, նպաստում է արդյունաբերական արտադրության բարձր արդյունավետության և մրցունակության հասնելուն:

2016թ. սեպտեմբերի 6-ին ԵԱՏՀ-ն հավանություն տվեց ԵԱՏՀ Խորհրդի «Գերակա Եվրասիական տեխնոլոգիական պլատֆորմների ստեղծման մասին» նախագծին: Սահմանվել են 11 տեխնոլոգիական պլատֆորմներ գերակա 8 տեխնոլոգիական ուղղությունների գծով: Դրանք միավորում են Միության ավելի քան 400 առաջատար ազգային և արդյունաբերական կազմակերպություններ: Այդ կազմակերպությունների պլաններում ներառված է մոտ 140 համատեղ ինովացիոն կոռպերատիվ նախագծերի իրականացումն առավել հեռանկարային ձյուղերում: Նման նախագծերին մասնակցությունը իրական հնարավորություններ է բացում ՀՀ-ի՝ ժամանակին լավ հայտնի ինժեներական դպրոցի վերականգնման համար:

Ո՞Դ-ի հետ դաշնակցային հարաբերություններ զարգացնելով՝ մենք պետք է պահպանենք և խորացնենք տնտեսական,

կրթական և մշակութային հարաբերություններն Արևմուտքի երկրների հետ: Հայկական ընկերությունների մասնակցությունը Ռուսաստանում և Արևմուտքում ներդրումային նախագծերին նոր հեռանկարներ է բացում մեր բիզնեսի աշխարհագրական ընդլայնման համար: Բացի այդ, դա նաև եզակի հնարավորություն է՝ յուրացնելու կորպորատիվ կառավարման նրանց մշակույթը, միջազգային գործընկերության և կոնսորցիումների ձևավորման պրակտիկան, այդ շուկաներ մտնելու արժեքավոր փորձ ձեռք բերել: Սա է վստահության ձևավորման մեխանիզմը մեր և օտարերկրյա ձեռնարկությունների և գործարար շրջանակների միջև, և շատ բան նման վստահությունից է կախված: Դա, ի վերջո, նշանակում է նաև «փափուկ ուժի» գործիքակազմի ընդլայնում, քանի որ բիզնեսի հետևից կարող է և պետք է ընթանա համագործակցության ակտիվացումը կրթության, գիտության, մշակույթի և այլ ոլորտներում:

### *8.5 Տնտեսական գաղափարախոսություն և տնտեսական զարգացում*

Հայաստանում, ինչպես և բոլոր հետխորհրդային երկրներում, 1990-ականներից որդեգրվել է ազատական տնտեսական գաղափարախոսության վրա հիմնված տնտեսական զարգացման մոդել, որը հիմնված է այն պոստուլատի վրա, որ ազատական և օրենսդրորեն հավասար մրցակցային պայմաններում բիզնեսն ունակ է լավագույն կերպով որոշելու իր համար առավել գրավիչ ոլորտները, ոիրքավորվելու այնտեղ և զարգանալու շուկայի թելապրանքով: Իսկ տնտեսական ոլորտում պետության ֆունկցիաներն են՝ բիզնեսի զարգացման համար ազատական տնտեսական դաշտի ինստիտուցիոնալ կազմավորումը և օրի-

նականության պահպանումը։ Զարգացման տեսությունները պնդում են, որ եթե բույլ զարգացած երկիրն իրականացնի այդ սկզբունքային դրույթները, ապա կկրկնի ներկայիս զարգացած երկրների ուղին և, ի վերջո, կհասնի նույնպիսի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության մակարդակի։

Վերջին առնվազն 20 տարիների ընթացքում ՀՀ-ն իրականացրել է նշված դրույթները։ Ընդ որում, բոլոր միջազգային տնտեսական կառույցները, որոնք օժանդակել և վերահսկել են այդ գործընթացը, Հայաստանում ազատական տնտեսական պայմանների կազմավորման տեմպերին և բովանդակությանը պարբերաբար տվել են բարձր գնահատականներ։ Սակայն ՀՀ տնտեսությունն այդպես էլ չկարողացավ տեղափոխվել զարգացման որակապես ավելի բարձր նիշա։ Ի՞նչն է պատճառը։

Ներկայում որպես դրա հիմնական պատճառներ նշվում են կոռուպցիայի բարձր մակարդակը, տնտեսության և բիզնեսի սերտածումը, մենաշնորհների առկայությունը և դատական իշխանության կախվածությունն իշխանությունից։ Համարվում է, որ դրա արդյունքում է, որ օտարերկրյա ներդրումները Հայաստան չեն ներհոստում, իսկ տեղական կապիտալն արտահոսում է։

Սակայն նման բացատրության ընդունման դեպքում առաջանում են մի քանի սկզբունքային հարցեր։ Ինչո՞ւ այդ ընթացքում կոռուպցիան չխոչընդոտեց, որպեսզի ֆրանսիական կապիտալը ձեռք բերի (ուղղակի ներդրումներ կատարի) զլորալ շուկայում Հայաստանի ամենամրցունակ արտադրությունը՝ Երևանի կոնյակի գործարանը, ինչո՞ւ կոռուպցիան չխոչընդոտեց, որպեսզի օտարերկրյա կորպորացիաները ձեռք բերեն Հայաստանի տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող և,

միաժամանակ, գերշահութաբեր բոլոր ենթակառուցվածքները, ինչո՞ւ կոռուպցիան չխոչընդոտեց օտարերկրյա ներդրումների ներհոսքին պղնձամոլիբդենային հումքի և ուկու արդյունահանման ոլորտ<sup>25</sup>: Եվ ինչո՞ւ, եթե 2001-2008թթ. Հայաստան ներհոսեցին զգալի «ազատ» ֆինանսներ, դրանք չներդրվեցին բարձրտեխնոլոգիական ոլորտներում, որոնք ապագայում կապահովեին և՝ գերբարձր շահույթներ, և՝ ամրող տնտեսության անցումը որակապես ավելի բարձր նիշա: Հիշենք, որ բոլոր միջազգային տնտեսական կազմակերպությունները, օտարերկրյա գործարները, Հայաստանի իշխանությունները և տնտեսական ինստիտուտների կառավարիչները նշում էին և շարունակում են նշել, որ Հայաստանի կարևորագույն ռազմավարական և հեռանկարային ռեսուրսը մարդկանց ուղեղներն են և որակյալ աշխատանք կատարելու հմտությունները: Ինչո՞ւ այդ ֆինանսները ներդրվեցին հիմնականում Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնում կիստար շենքերի կառուցման ոլորտում:

Պատմական սոցիոլոգիան և մակրոսոցիոլոգիական առավել հեղինակավոր տեսությունները տասնյակ տարիներ առաջ տվել են այդ հարցերի պատասխանները: Դրանք ցույց են տվել, որ արդի աշխարհում, թույլ զարգացած երկրները չեն ունեցել արդյունաբերական և, առավել ևս, բարձրտեխնոլոգիական արդյունաբերության զարգացում, եթե այդ նպատակով կիրառել են ազատական տնտեսական գաղափարախոսությունների վրա հիմնված քաղաքականություն [1- 4]: Ազատական տնտեսական գաղափարախոսությամբ առաջնորդվելու դեպքում թույլ զար-

<sup>25</sup> Այստեղ բաց ենք թողնում մեկ այլ, նույնքան սկզբունքային հարց՝ գուցե կոռուպցիան նպաստեց, որպեսզի օտարերկրյա ուղղակի ներդրումները ներհոսեն դեպի այդ ոլորտները:

գացած երկրները պարզապես ընդգրկվել են աշխարհամակարգում որպես զարգացած երկրներին հումք մատակարարող երկրներ: Հնդ որում, այդ երկրներում առավել շահութաբեր տնտեսական ոլորտներն անցել են միջազգային կամ զարգացած երկրներին պատկանող խոշոր կորպորացիաներին: Դրա ամենաակնառու օրինակն է Լատինական Ամերիկայի երկրների 200-ամյա տնտեսական պատմությունը՝ սկսած 19-րդ դարի սկզբից մինչև օրս [5-7]: Արդեն 200 տարուց ավելի է՝ այդ երկրներն ունեն ժողովրդավարական կառավարման համակարգեր և ազատական տնտեսություններ, որոնք կազմավորվել են ավելի վաղ, քան Գերմանիայում, Բելգիայում կամ Ավստրիայում: Սակայն մինչև օրս Լատինական Ամերիկայի երկրների տնտեսությունների զարգացման մակարդակները շատ հեռու են զարգացած երկրների տնտեսություններից, ունեն մեծաթիվ աղքատ բնակչություն, հսկայական սոցիալական անհավասարություն և իրենց աշխարհագրական տարածքների տնտեսական զարգացման խիստ անհամամասնություններ:

Մյուս կողմից՝ աշխարհի տնտեսական զարգացման պատմությունը ցույց է տվել, որ թույլ զարգացած երկրների արդյունաբերական զարգացման փորձերը հաջողություններ են ունեցել միայն տնտեսության կառավարմանը պետության իրական և էական մասնակցության դեպքում, որը, որպես կանոն, ուղեկցվել է առավել շահութաբեր տնտեսության ոլորտների ազգայնացմամբ՝ լինեն դրանք նավթի արդյունահանում, հանքագործություն, թե կարևորագույն ազգային ենթակառուցվածքներ: Այդպիսին է եղել ԽՍՀՄ տնտեսական թոփշքը 1930-ականներին, Թուրքիայի արդյունաբերական զարգացումը՝ սկսած 1930-ականներից, արարական երկրների զարգացումը՝

սկսած 1950-ականներից [8, 9]: Հարկ է նշել, որ որոշակի հաջողություններից հետո, եթք այդ երկրները՝ հիմնականում զարգացած երկրների և միջազգային ֆինանսական կառույցների հորդորների կամ ձնշումների ազդեցությամբ, անցել են լիբերալ տնտեսական գաղափարախոսությունների վրա հիմնված զարգացման քաղաքականությունների, նրանք ոչ միայն նորից են հետ մնացել իրենց զարգացման ընթացքում, այլև հաճախ կորցրել են իրենց տնտեսական և արդյունաբերական նվաճումները և տնտեսական սուվերենությունը և ստիպված են եղել միջազգային կորպորացիաներին զիջել (օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով) իրենց կարևորագույն տնտեսական ոլորտների կարևորագույն ձեռնարկությունները, իսկ երբեմն հանգել են տնտեսական աղեսի:

Այսինքն՝ հասարակագիտական տեսությունն ուղղակիորեն բացատրում է, որ *Հայաստանի տնտեսական պատմությունը, սկսած 1990-ականներից մինչև օրս, ոչ թե բացառություն է, այլ օրինաչափություն*:

Այստեղ, ըստ Էռլյան, կրկնվել է տնտեսական պատմության առնվազն 200-ամյա համաշխարհային փորձը՝ Հայաստանում միջազգային կորպորացիաների վերահսկողությանն են անցել գունավոր մետաղների բոլոր նշանակալի հանքերը և ազգային մասշտարի ենթակառուցվածքային ձեռնարկությունները: Իսկ 2001-2007թթ. գլոբալ տնտեսական բարենպաստ պայմանների ժամանակահատվածում բիզնեսն ինքնուրույն է սահմանել իր գործունեության գերակա ոլորտը՝ շինարարությունը, որտեղ հնարավոր էր արագ, առանց տնտեսական ոիսկերի և գերշահույթով վերադարձնել ներդրումները և անցնել ռանտեղի կարգավիճակի: Բիզնեսը դիրքավորվել է այնտեղ և

ստացել է իր շահույթը: Սակայն բարենպաստ գլոբալ տնտեսական կոնյունկտուրայի ավարտից հետո, երբ սկսվեց գլոբալ տնտեսական ճգնաժամը, ավարտվեցին «տաք փողերը» և ՀՀ տնտեսությունը ունեցավ 14% անկում, ստացանք այն, ինչ ունենք ներկայում՝ դեխնդուստրիալիզացված տնտեսություն, շատ բարձր գործազրկություն և խիստ անբարենպաստ միջրացիոն սալդո: Տեխնոլոգիական զարգացման հնարավորությունն անհետացավ, իսկ որպես զարգացման ուղի մնաց այն, ինչը Հայաստանի համար նախանշել էին դեռ 1990-ականներին միջազգային տնտեսական կառույցները՝ հանքագործությունը, գյուղատնտեսությունը և տուրիզմը:

Հետևաբար, եթե Հայաստանի համար բարձր գերակայությամբ նպատակ է ժողովրդագրական վիճակի բարելավումը, հատկապես բնակչության արտահոսքի հաղթահարումը, և դրա համար հանգուցային նախապայմաններ են գիտության, տեխնոլոգիաների, կրթության և արտահանմանն ուղղված գիտատար արդյունաբերության զարգացումը, որն, ի դեպ, սահմանված է որպես Հայաստանի արդյունաբերական քաղաքականության հիմնական նպատակ, ապա պարտադիր է դառնում հրաժարումը դասական ազատական տնտեսական գաղափարախոսությունից ու պետության իրական և էական, այդ թվում նաև ֆինանսական մասնակցությունն իր իսկ սահմանած գերակա բարձրտեխնոլոգիական ոլորտների զարգացմանը [10]: Այսպիսով, պետության մասնակցությունը բարձրտեխնոլոգիական տնտեսության կազմավորմանը նախ և առաջ ենթադրում է «Բարձրտեխնոլոգիական տնտեսության հեռանկարային պլանավորում»:

## 8.5 ենթագլիքի գրականություն

1. *Paul A. Baran*, The Political Economy of Growth (New York: Monthly Review Press, 1957).
2. *Мюрдал Г.*, «Роль политического фактора в развитии экономической теории» (1930).
3. *Gunnar Myrdal*, Asian Drama: An Inquiry into the Poverty of Nations, (1968).
4. *Иммануил Валлерстайн*, «Анализ мировых систем и ситуация в современном мире», СПб.: Университетская книга, 2001, 413 ст.
5. *Пребиш Рауль*, Периферийный капитализм: Есть ли ему альтернатива, Сокращенный перевод с испанского, Москва, ИЛА РАН, 1992.
6. *Selso Furtado*, Obstacles to Development in Latin America. N.Y. 1970;
7. *Aníbal Quijano Obregón*, Nationalism & capitalism in Peru: a study in neo-imperialism. Monthly Review Press, New York. 1971.
8. *Самир Амин*, «Арабская экономика сегодня» (L'économie arabe contemporaine, 1980).
9. *Самир Амин*, Африка: Жизнь на грани, <http://left.ru/2006/3/amin137.phtml>
10. Ուսումնակարություն՝ Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության: Հավելված՝ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N49 արձանագրություն, <http://mineconomy.am/media/2017/03/1471.pdf>

# ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ԵՎ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նախագծի հեղինակ և գլխավոր խմբագիր՝  
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝  
Խոնարհիկ ՔԱՐԱՌՈՒՂԼԱՆՅԱՆ  
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս/Փաքս՝ + (374 10) 44 04 73

---

Թուղթ՝ օֆսեթ, ծավալ՝ 25 տպ.մամուլ:  
Տպաքանակ՝ 150: Տառատեսակը՝ Sylfaen:  
Տպագրվել է «ԱԶ Վարդան Մկրտչյան» տպագրատանը: